



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

Է. Ա. ԶՈՂԲԱԲՅԱՆ

ՆԱԽԻՋԵՎԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՐՅԸ

ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԳԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ»

(1918թ. դեկտ. - 1920թ. ապրիլ)

Երևան 2002

ՀՏԴ 941 (479. 25)
ԳՄԴ 63.3 (23)
Զ - 768

Զոհրաբյան Է. Ա.,
Զ - 768 Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918թ.դեկտ.-1920թ. ապրիլ), Եր., 2002թ., էջ. 265

Աշխատության մեջ առաջին անգամ լուսաբանվում են Նախիջևանյան հիմնահարցում Հայաստանի «դաշնակիցների» Անտանտի տերությունների վարած քաղաքականությունը: Ճանաչելով հանդերձ Հայաստանի անվիճելի իրավունքը Շարուր-Նախիջևանի վրա, թե՛ Անգլիան և թե՛ ԱՄՆ-ը գործնականում ոչինչ չարեցին այդ իրավունքը կյանքում իրագործելու ուղղությամբ:

Անգլիական գեներալ-նահանգապետության ստեղծում, երկրամասի կառավարման հարկադրական հանձնում Հայաստանին, թուրք-ադրբեջանյան գործակալների հրահրած հակահայկական ապստամբություններ և Հայաստանի շրջափակում, ամերիկյան գեներալ-նահանգապետություն ստեղծելու փորձի ծախսողում, ազգամիջյան կռիվներ ու հայկական կոտորածներ Շարուրում, Նախիջևանում, Գողթանում և այլն: Ահա ոչ լրիվ ցանկը այն իրադարձությունների, որոնք լուսաբանվում են աշխատության էջերում: Զգալի տեղ է հատկացված նաև հիմնահարցին առնչվող խնդիրներին, Հայաստանի կառավարության ռազմական և դիվանագիտական գործունեությանը:


Գիրքը նախատեսված է պատմաբանների, միջազգայնագետների, քաղաքագետների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

Զ 0503020913 2002թ.

ԳՄԴ 63.3 (23)

704(02)

ISBN 5-8084-0416-9 © Զոհրաբյան Է.Ա. 2002թ.



ԷԳԻԿ ԱՐՏԵՄԻ ԶՈՂՐԱԲՅԱՆ
Պարմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Երևանի պետական համալսարանի միջազգային
հարաբերությունների ֆակուլտետի դեկան

Հայ դիվանագիտության պատմության ճանաչված մասնագետ է: Հեղինակ է Հայաստանի 1918-1922թթ. միջազգային դրության և արտաքին քաղաքականության ամենաբարդ ու խճճված հիմնահարցերին նվիրված հինգ մենագրությունների և հիսուսից ավելի գիտական հոդվածների:

Նախիջևանյան հիմնահարցին նվիրված եռամաս ուսումնասիրության երկրորդ գիրքն է սա (առաջինը՝ «Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918թ.», լույս է տեսել 2000թ.): Երրորդ գիրքը («Նախիջևանյան հիմնահարցը թուրք-խորհրդային հարաբերություններում 1920-1921թթ.»), որով և կավարտվի հիմնահարցի ուսումնասիրությունը, հեղինակը ծրագրել է լույս ընծայել 2003թ-ին:

վրայով թուրքիան կարող է ձեռք մեկնել Ադրբեջանին: Բայց Յայստանն էլ Նախիջևանի հարցում շահագրգռված կողմ է, որի համար հիմք է ծառայում:

ա) անվիճելի պատմական իրավունքը, որը չի հերքվել ոչ ռուսների և ոչ էլ 1919-1920թթ. Անդրկովկասում տեր ու տնօրեն անգլո-ամերիկացիների կողմից

բ) աշխարհագրական խիստ կարևոր դիրքը և Յայստանի հետ նրա տնտեսական կապվածությունը:

Անհիշելի ժամանակներից կազմելով պատմական Յայստանի անբաժանելի մասը Շարուրը և Նախիջևանը հին և միջին դարերում ամբողջովին հայաբնակ էին: Հույն աշխարհագետ Ստրաբոնը (մ.թ.ա. I դար) վկայում է, որ արդեն Արտաշեսի և Ջարեհի ժամանակներում (մ.թ.ա. 2-րդ դար) Յայստանի բնակչությունը խոսում էր մեկ լեզվով այսինքն հայերենով: Ուրեմն Շարուրում և Նախիջևանում ևս խոսում էին հայերենով: Խորենացու ասյած ժամանակներում (մ.թ. 5-րդ դար) ևս Շարուրը և Նախիջևանը ամբողջովին հայաբնակ գավառներ էին: Իսկ Գողթան գավառը (ներկայիս Նախիջևանի Հանրապետության Օրդուբադի շրջան) հայ երաժշտության կարևոր օջախներից էր: Հենց Գողթան երգիչներից էր Խորենացին լսել ու նրանցից քաղել իր վիպական երկերի նյութը: Ըստ «Աշխարհացույցի» (6-րդ դար) Նախիջևանը կազմել է Վասպուրականի նախարարական տան հասանելիքը, իսկ ահա Բագրատունիների օրոք (9-11-րդ դդ.) նա կոմսախնձոր էր Այունյաց և Արծրունյաց նախարարական տների միջև: Թուրք-սելջուկյան և մոնղոլական արշավանքների շրջանում ևս Շարուր-Նախիջևանի երկրամասը շարունակում էր մնալ հայաբնակ: Ղա արդեն հաստատում են ոչ միայն պատմիչները, այլև այն բազմաթիվ հուշարձանները, որ դեռ մնացել են Նախիջևանի Հանրապետության ամբողջ տարածքում¹: Սակայն սկսած այդ դարերից և հատկապես թուրքմենական ցեղախմբերի տիրապետության շրջանից, երկրամասում աստիճանաբար հաստատվում են նաև թուրքալեզու տարրեր, որոնց թիվը սկզբնական շրջանում առանձնապես մեծ էր: Երկրամասի համար առանձնապես կործանարար եղան 16-17-րդ դարերի թուրք-պարսկական երկարատև պատերազմները և հատկապես 17-րդ դարի սկզբին Շահ-Աբասի կազմակերպած հայ ազգաբնակչության բռնագաղթը

1. Տես Ա.Այվազյան, Նախիջևան, գիրք հուշարձանաց, Եր., 1990թ.:

Պարսկաստան: Առավել ևս, որ Իրանի հյուսիսային շրջաններից աստիճանաբար ներհոսք էր կատարվում դեպի լքված վայրերը, որի հետևանքով երկրամասի ազգագրական դիմագիծը կամաց-կամաց ենթարկվում է փոփոխության: Այնպես որ, երբ թուրքմեն-չայի ռուս-պարսկական պայմանագրով (1828թ.) Նախիջևանի խանությունը անցավ Ռուսաստանին, մահմեդականներն (թուրքեր, պարսիկներ, քրդեր) արդեն թվական որոշ գերազանցություն ունեին հայերի նկատմամբ: Չնայած դրան, ցարական վարչությունն արդարացիորեն երկրամասը համարում էր հայկական, որի համար էլ այն մտցրեց նորաստեղծ հայկական մարզի մեջ: Իսկ երբ 1849թ. կազմավորվեց Երևանի նահանգը, ապա երկրամասը դարձյալ նրա կազմում էր: Այդ վիճակը պահպանվեց ընդհուպ մինչև Անդրկովկասում անկախ պետությունների կազմավորումը:

Շարուր-Նախիջևանի աշխարհագրական դիրքը խիստ կարևոր է ոչ միայն պանթուրքիզմի ախտով տառապողների, այլև Յայստանի համար: Նա սեպի պես խրված է Յայստանի սիրտը և նրան դարձնում է խոցելի հարավ-արևելքից: Այդ տարածքը կարող է ռազմա-ստրատեգիական հարմար հենակետ լինել Յայստանի թշնամիների համար: Նա նաև Ձանգեզուրը կտրում է Արարատյան դաշտից, զրկում հաղորդակցության կարծ ու հարմար ճանապարհներից: Այդ երկրամասով են անցնում նաև Յայստանից Իրան տանող ուղիները, որի հետ Յայստանը աշխույժ առևտրական կապեր էր պահպանում դեռ մինչև Ռուսաստանյան կայսրության կործանումը¹:

Տնտեսապես Նախիջևանի երկրամասը երբեք կապված չի եղել Ադրբեջանի հետ, նույնիսկ խորհրդային իշխանության տարիներին: Դառնալով ինքնավար հանրապետություն Ադրբեջանի կազմում, բայց տարածքային առումով կտրված լինելով նրանից, Նախիջևանը տնտեսապես շարունակում էր կապված մնալ Յայստանի հետ: Այլ կերպ լինել չէր էլ կարող, քանի որ նախ այն երեք կողմից շրջապատված է հայկական տարածքով և հետո, չափազանց մոտ է Յայստանի կենտրոնական շրջաններին, որոնց հետ կապված է հարմարավետ ճանապարհներով: Ազգաբնակչությունն իր գյուղատնտեսական արտադրանքը իրացնում էր Երևանում ու Յայստանի մյուս քաղաքներում, այդտեղ

1. Տես Է.Ա.Ձոհրաբյան, Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները (1920-1922), Եր., 1985, էջ 12-13:

էլ ձեռք բերում արդյունաբերական ապրանքներ: Նույնիսկ մեր օրերում, երբ Հայաստանի հետ կապը վերացել է, Ադրբեջանի հետ տնտեսական կապերի մեջ մտնել չի կարող: Ճիշտ է, ԽՍՀՄ փլուզումից հետո Նախիջևանը հնարավորություն է ստացել կապվելու Իրանի և Թուրքիայի հետ, սակայն գյուղատնտեսական մթերքների պահանջարկի տեսակետից հազիվ թե Հայաստանի շուկային հավասարազոր շուկա գտնի այդ երկրներում:

* * *

Ռուսաստանյան կայսրության կործանումը, դրան հաջորդած բուլշևիկյան հեղաշրջումը և Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից ու անկախ պետությունների կազմավորումը նպաստավոր պայմաններ ստեղծեցին պանթուրքիզմի պլանների իրագործման համար:

Ահա ինչու Նախիջևանի երկրամասի աշխարհաքաղաքական դիրքն իսկույն իր վրա բևեռեց երիտթուրքերի և նրանց կովկասյան արբանյակների ուշադրությունը: 1918թ. հունիսի 4-ին Հայաստանին պարտադրած Բաթումի պայմանագրով Օսմանյան Թուրքիան ի թիվս այլ շրջանների Հայաստանից անջատեց նաև Շարուր-Նախիջևանը և օկուպացրեց այն, որն ուղեկցվում էր հայ ազգաբնակչության ջարդով ու բռնագաղթով: 2000թ. լույս տեսած մեր «Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918թ.» խորագիրը կրող աշխատությունը նվիրված է հենց այդ և դրան նախորդած իրադարձություններին: Նրանում ցույց է տրված, որ **այն, ինչ կատարվեց Շարուր-Նախիջևանի հայ ազգաբնակչության նկատմամբ թուրքական օկուպացիայի շրջանում, ոչ այլ ինչ էր, եթե ոչ ցեղասպանություն իր բոլոր դրսևորումներով:**

Շարունակելով թեմայի ուսումնասիրությունը, այժմ ընթերցողի դատին ենք հանձնում այս նոր գիրքը, որը նվիրված է առաջին աշխարհամարտից հետո նախիջևանյան հիմնահարցում տեղի ունեցած վայրիվերումներին: Ժամանակագրական առումով այն ընդգրկում է շուրջ մեկ և կես տարի, կարճ մի ժամանակահատված, բայց չափազանց հարուստ դեպքերով և իրադարձությու-

յուններով: Այդ ընթացքում մուսավաթական Ադրբեջանը՝ փորձելով ստանձնել պատերազմում պարտված և Անդրկովկասից հետքաշված Թուրքիայի դերը, հնարավոր բոլոր միջոցները գործադրեց Շարուր-Նախիջևանին տիրանալու համար: Իսկ Անդրկովկասում տեր ու տնօրեն Անտանտի հաղթական տերությունները՝ Հայաստանի «ղաշնակիցները», ղեկավարվելով «բաժանիր, որ տիրես» սկզբունքով, նախ Շարուր-Նախիջևանում անգլիական գեներալ-նահանգապետություն ստեղծեցին (1919թ. փետրվար), այնուհետև ձախողվելով նրա կառավարման գործում՝ մայիսին այն հանձնեցին Հայաստանին, բայց դրա հետ մեկտեղ թույլ չտվեցին ոչ մեծաքանակ զորք մտցնել նահանգը հնազանդ պահելու համար, ոչ էլ ազգաբնակչությանը զինաթափել, թեև Հայաստանի Փարիզի վեհաժողովի որոշումով, անգլիական փոքրաթիվ ուժերն էլ դուրս բերվեցին տարածաշրջանից: Օգտվելով ստեղծված նպաստավոր պայմաններից, թուրք-ադրբեջանական ուժերը հուլիսին ապստամբեցին և երկրամասը անջատեցին Հայաստանից: Մեր «ղաշնակիցները» բավարարվեցին միայն դիտողի դերով և կոնկրետ քայլեր չձեռնարկեցին երեք կողմերից հարձակման ենթարկված Հայաստանի Հանրապետությանն ամենաչնչին օգնություն հասցնելու համար: Իսկ Փարիզի վեհաժողովի որոշումով Հայաստանի գերագույն կոմիսար նշանակված ամերիկացի գեղապետ Հասկելը, թեև խոսքով ընդունում էր, որ Շարուր-Նախիջևանը Հայաստանի մաս է, բայց խոսքը գործի վերածելու համար ձեռքի տակ ռեալ ուժ չունենալով, Ադրբեջանի և Հայաստանի միջև իր միջնորդական առաքելությունը ի վերջո ավարտեց երկրամասում ամերիկյան գեներալ-նահանգապետություն ստեղծելու մասին որոշումով, բայց հաջողություն չունեցավ: Դաշնակիցների անգորությունը և նրանց խոսքի ու գործի միջև եղած հակասությունը վաղուց հասկացած Նախիջևանի մահմեդականները հոկտեմբերին մերժեցին ընդունել ամերիկյան նահանգապետին, իսկ ղեկտեմբերին էլ հայաթափեցին նաև Գողթանը կոտորելով վերին ու Ներքին Ազուլիսների և շրջակա հայկական գյուղերի անմեղ ու անզեն բնակիչներին:

Ինչպե՞ս և ինչո՞ւ այդ ամենը կատարվեց, ընթերցողը կարող է տեսնել այս գրքում: Նաև ասենք, որ հիմնահարցի ուսումնասիրությունը գրքում հասցվում է մինչև 1920թ. ապրիլ: Ադրբեջա-

նուն խորհրդային իշխանության հաստատումով և քեմալ-բոլշևիկյան համագործակցության ձևավորումով Նախիջևանյան հիմնահարցը թևակոխեց մի նոր փուլ, որտեղ գլխավոր դերակատարներն արդեն խորհրդային Ռուսաստանը և քեմալական թուրքիան էին: Իսկ դա արդեն առանձին ուսումնասիրության խնդիր է:

Մնում է ավելացնել, որ բացի բուն Շարուրում ու Նախիջևանում ծավալված իրադարձությունների ուսումնասիրությունից, ինչը մեր հիմնական խնդիրն է, գրքում անհրաժեշտաբար անդրադարձել ենք նաև Վեդիբասարի, Ջանգիբասարի և Սուրմալուի կոիվներին, քանի որ այդ շրջանների մահմեդական տարրերը, որպես Շարուր-Նախիջևանի թրքության առաջապահներ, ըստ էության գործում էին նրանց հրահանգով և նյութական ու բարոյական աջակցությամբ: Ընթերցողին նաև ուզում ենք հիշեցնել, որ Նախիջևանյան հիմնահարցի և նրան առնչվող մյուս հարցերի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար անհրաժեշտաբար պետք է կարդալ նաև նրա առաջին փուլին նվիրված մեր նախորդ գիրքը, որը, ինչպես վերը նշվեց, կրում է «Ազգամիջյան կոիվները Երևանի մահանգում 1918թ.» խորագիրը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԻՋԵՎԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԶԱՐՅՈՒՆ ԶԵՏՊԱՏԵՐԱԾԱՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ: ԱՆԳՆԱԿԱՆ ՊԵՆԵՐԱՆՆԱԿԱՆ ԳՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՏԵՂՈՒՄԸ

«Դաշնակիցներն» Անդրկովկասում, տարածքային վիճելի հարցերում նրանց որդեգրած քաղաքականությունը:

Դեպի Շարուր հայկական զորքերի դեկտեմբերյան առաջխաղացումը և Պարսկաստանը: Պարսկական պատվիրակությունը Երևանում, Շարուր-Նախիջևանը զենքի ուժով չգրավելու առաջարկությունը: Անդրկովկասի նկատմամբ Պարսկաստանի տարածքային հավակնությունները, Փարիզի վեհաժողովին ներկայացրած հուշագրի մերժումը: Անգլիայի և ԱՄՆ-ի դիրքորոշումը: Պարսիկների գաղտնի գործունեությունը Նախիջևանում, Հայաստանի կառավարության բողոքը:

«Արաքսյան հանրապետությունը», գաղթականության վերադարձին և հայկական զորքին նրա ցույց տված դիմադրությունը: Բրիտանական հրամանատարության միջամտությունը, կապ. Լաուրոնի միսիան Նախիջևանում, զինադադարի նրա մշակած պայմանները: Չեզոք գոտի ստեղծելու գաղափարը, Հայաստանի կառավարության դժգոհությունը և բողոքը:

Հայաստանի դեմ Դավալուի և Վեդիբասարի մահմեդականների ապստամբությունը և բրիտանական հրամանատարությունը: Շարուր-Նախիջևան

*նում անգլիական գեներալ-նահանգապետություն
ստեղծելու բրիտանական հրամանատարության
որոշումը, Հայաստանի կառավարության հետ նրա
ստորագրած փետրվարի 4-ի համաձայնագիրը:
Դավալուի և Վեդիբասարի շրջաններում ապա-
ռազմականացված գոտու ստեղծումը:*

Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության կրած պարտությունը, թուրքական զորքերի հեռանալը Անդրկովկասից և դաշնակիցների մուտքը՝ հանձին բրիտանական օկուպացիոն զորքերի, դաշնակիցներ, որոնց հաղթանակը պատերազմում ապահովելու համար փոքրաթիվ հայ ժողովուրդն այնքան մեծ գոհողություններ էր արել¹, երևանում ցնծությամբ դիմավորվեց: Թվում էր, թե վերջապես տարածաշրջանում կհաստատվի բաղձալի խաղաղությունը, վերջ կգտնեն ազգամիջյան հակամարտությունները և տարածքային վիճելի հարցերի արդարացի լուծման հնարավորություն կստեղծվի:

Եիշտ է, Սուրբուսի զինադադարը որոշ չափով զգաստացրեց հայ քաղաքական և պետական գործիչներին, բայց և այնպես, մեծ էր հավատը «դաշնակիցների» նկատմամբ, ինչի մասին է վկայում Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանի 1918թ. դեկտեմբերի 7-ին Ստամբուլ ուղարկած նամակ-հրահանգը: Կառավարության ցուցումով դեկտեմբերի 5-ին ժամանելով Բաթում՝ դաշնակիցների միսիային դիմավորելու, Ջամալյանը այստեղից Ստամբուլ՝ Հայաստանի պատվիրակ Թախթաջյանին գրում է.

«Որպեսզի Դուք կարողանաք Ձեր անմիջական անելիքները որոշել և ըստ այնմ անհրաժեշտ քայլերն անել, հարկ են համարում կետ առ կետ դնել Ձեր առաջ մեր ժողովրդի վիճակը և նրանից բխող կարիքները:

1. Առաջին աշխարհամարտի ամենատարբեր ճակատներում ռազմական գործողությունների մասնակցել են ռուսական բանակների կազմում շուրջ 250 հազար, Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի զորքերում ավելի քան 50 հազար հայ զինվորներ: Կամավորական խմբերի մեջ ընդգրկվել էին շուրջ 6 հազար մարտիկներ: Եղեռնի զոհերի թիվը հասնում է շուրջ 1,5 միլիոնի:

1. Հայ ժողովրդի մեջ սաստիկ հիասթափություն է առաջացել, որ դաշնակիցները, Տաճկաստանի հետ զինադադար կնքելիս, ոչ միայն որևէ շոշափելի պահանջ չեն ներկայացրել Տաճկաստանի վերաբերմամբ, այլև Ղարսի շրջանի էվակուացիայի հարցը բաց են թողել¹:

2. Տաճիկները, որ համաձայն Ձեզ հայտնի պաշտոնական հայտարարության պետք է սկսած հոկտեմբերի 24-ից վեց շաբաթույթ ընթացքում դատարկեին մեր երկիրը մինչև Բրեստի սահմանները համաձայն իրենց եավաշ-եավաշի քաղաքականութեան դեռ մնում են մեր երկրի շատ վայրերում:

3. Թուրքերը մեր երկրի որոշ մասերից յետ քաշուելով՝ իրենց յետելից թողնում են լիակատար ամայութիւն: Նրանք տարել են բառիս բուն նշանակութեամբ ամեն ինչ, լինի այդ ինչը պետական, հասարակական թե մասնաւոր: Նրանք տարել են ամբողջ հացը, անասունները, պատրաստի վառելիքը, պահեստների և խանութների ապրանքները, տների կահկարասին, պատուհանների փեղկերը, վառարանները, երկաթուղու սիմաֆորները, լապտերները, հեռագրաթելերը, շատ տեղերում հեռագրասյուները եւն, եւն. մի խոսքով տարել են այն ամենը, ինչ որ որևէ արժեք ներկայացնում է մեր ժողովրդի կամ պետութեան համար:

4. Գաղթականների վիճակը ուղղակի յուսահատական է. նրանց մի մասը չի կարող վերադառնալ երկիրը, որովհետև թուրքերը դեռ այնտեղ են և նրանց սարսափը մեծ է. այդ գաղթականներն են Տաճկահայաստանցիք, Ղարսեցիք և Էջմիածնի, Սուրմալուի, Շարուրի, Նախիջևանի և Ախալքալաքի որոշ մասերից եկած ժողովուրդը: Գաղթականների միւս մասը, որ կարողացել է վերադառնալ և վերադարձել է իր բնակավայրը, դատապարտուած է սովամահ կամ ցրտահար լինելու, որովհետև ինչպես յիշատակել են վերևը, թուրքերը տարել են ապրուստի և վառելիքի բոլոր պաշարները և ավերել են նրանց բնակարանները:

5. Հաղորդակցութեան դժարութիւնները Անդրկովկասի սահմաններում անօրինակ չափեր են ընդունել. Բագու գնալը մեզ համար սխրագործութիւն է համարում. Գանձակ գնալ նույնպես չենք կարող առանց մեր կեանքը ռիսկի ենթարկելու: Ղարաբաղից կտրուած ենք գրեթե մի տարուց ի վեր, Թիֆլիս գնալ-գալը կարե-

1. Հայերեն բնագրերից կատարված այս և հետագա բոլոր մեջբերումները գրքում ներկայացված են առանց փոփոխության և խմբագրական միջամտության:

լի է 5-6 ձեւականութիւն կատարելու պայմանով, սակայն 3-4 շաբաթը հազիւ մի գնացք է գնում-գալիս Թիֆլիս-Երևան: Հաղորդակցութեան այս դժվարութիւնները ուղղակի անհնարին կացութիւն է ստեղծում մեզ համար ոչ միայն տնտեսական գործառնութիւնների տեսակետից, այլև այն տեսակետից, որ գաղթականութիւնը և պատերազմական մեր գերիները չեն կարողանում օր առաջ իրենց տեղերը վերադառնալ:

6. Հայաստանի պարենաւորման վիճակը սարսափելի է: Հաց չենք կարողանում ստանալ ոչ Վրաստանից և ոչ մանավանդ Ադրբեջանից, ուր հացի հսկայական պաշարներ կան, որովհետև վրացիք և ադրբեջանցիք թույլ չեն տալիս գնումներ կատարել և արտահանել: Հաց չենք կարողանում ստանալ և Հիւսիսային Կովկասից կամ Ուկրաինայից, ուր գնումներ կատարելու հնարավորութիւն կայ, որովհետև նախ հաղորդակցութիւնն է խիստ դժվարին, երկրորդ ռուսական դրամներ դժվարութեամբ ենք ճարում, իսկ մեր Անդրկովկասեան բռնաները այնտեղ չեն վերցնում և երրորդ վրացիք տրանզիտի մեծ դժարութիւններ են հարուցանում: Վերջին ժամանակներս նրանք ահագին ձգձգումներից հետո թույլ են տւել մեզ տրանզիտով Հայաստան տեղափոխելու մոտ 100.000 փութ ցորեն, սակայն դա մի կաթիլ է մեր կարիքների ծովի մեջ:

7. Հայ ժողովրդի քաղաքական տրամադրութիւնը որոշուում է ի միջիայլոց և այն յոշոտմամբ, որին ենթարկուած է Հայաստանը: Բաւական չէ որ Տաճկահայաստանի հարցը օդումն է կախուած դեռ, բաւական չէ, որ Բրեստի սահմանագծից այն կողմը գտնուած մեր երկիրը դեռ թողնուում է թիւրքերի իշխանութեան տակ, այլև վրացիք շարունակում են գրաւած թողնել Ախալքալաքն ու Լոռայ որոշ մասերը, իսկ ադրբեջանցիք Ղարաբաղն ու Գանձակի նահանգի մեր միւս հայկական գաւառները:

Արանք են մեր վիճակը բնորոշող գլխաւոր մոմենտները ներկայումս»¹:

Հայաստանի տնտեսական ու քաղաքական վիճակի Ա.Ջամալյանի այս հակիրճ ու դիպուկ բնութագրութիւնը անթերի է: Իսկապես որ ստեղծված էր այնպիսի մի վիճակ, երբ հայ ժողովրդի այն վերջին բեկորները, որոնք կենտրոնացած էին Հայաստանի Հան-

րապետութեան անձուկ սահմաններում, կարող էին հիմա էլ ոչնչանալ սովից ու համաճարակային հիվանդութիւններից: Արդեն այդ օրերին ամեն առավոտ Երևանի փողոցներից մի քանի տասնյակ դիակներ էր հավաքվում: Միմիայն կտրուկ միջոցները և արտաքին շտապ օգնութիւնը կարող էր վիճակը շտկել: Բայց որտեղի՞ց սպասել այդ օգնութիւնը, եթե ոչ «դաշնակիցներից»: Եվ Ջամալյանը Թախթաջյանին հանձնարարում է, որ «այս վիճակից ելնելով հարկաւոր է հաշվի առնելով տեղի և ժամանակի հանգամանքները, դաշնակիցների առաջ դնել հետևյալ կոնկրետ պահանջները.

1. Առանց սպասելու, որ Տաճկահայաստանում նախապես խառնակութիւններ լինեն՝ գրավել դաշնակից զօրքերով այդ տեղերը¹, որպեսզի տաճկահայ գաղթականութիւնը, որ այսօր ծանրացած է մեր վրա, վերադառնա այնտեղ:

2. Ամբիջապես դատարկել տալ Ռուսահայաստանը մինչև 1914թ սահմանները տաճկական զօրքերից և իրաւունք տալ հայ զօրքերին գնալ և գրավել այդ երկիրը:

3. Ամենախիստ ճնշում գործ դնել Թուրքիայի վրա, որպեսզի նա՝ ա. դադարեցնի մեր երկրի թալանն ու աւերը (այս տեսակետից ամենավատ դերը կատարում է Ղարսում նստող թիւրք հրամանատար Շևքի փաշան,

բ. վերադարձնի մեզ մեր երկրից արտահանուած և արտահանուող պաշարներն ու այլ ապրանքները:

4. Այս վերջին կետի իրագործման համար հարկաւոր է, որ եթե մեր երկրի դատարկումը թուրքերից իսկույն կատարելու հնար չլինի, դաշնակիցները կոնտրոլի կայաններ հաստատեն Բաթումում, Օլթիում, Սարիղամիշում, Կաղզւանում, Իգդիրում և թուրքական այլ ճանապարհների վրայ, որպեսզի նրանք թալանը յետ խլեն և վերադարձնեն օրինաւոր տերերին:

5. Հացով, հագուստով և դրամով օգնել մեր գաղթականներին համապատասխան մարմինների միջոցով տեղաւորելու իրենց վայրերում և վերաշինելու երկիրը:

6. Վերականգնել հաղորդակցութեան միջոցները և հարթել տրանզիտի դժարութիւնները թե Անդրկովկասի առանձին մասե-

1. Ակնարկված է Մուղրոսի գինադարի 24-րդ հոդվածը, որտեղ ասված է, որ «Հայկական վիլայեթներից (որևէ) մեկում անկարգութիւններ ծագելու դեպքում, դաշնակիցները իրենց վերապահում են նրանց մի մասը գրավելու իրաւունքը»:

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 145, ք. 16:

րի և թե Անդրկովկասի ու Ռուսաստանի միջև:

7. Ուղարկել դաշնակիցների մի տղիղ միասիա Երևան՝ տեղն ու տեղը ծանոթանալու մեր ժողովրդի վիճակին և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու ժողովրդի հրատապ կարիքները բավարարելու համար»¹:

Նամակի վերջին մասում հատուկ զգուշացնում է, թե «այս պահանջների չկատարելը կամ դրանց բավարարման յապաղումը սպառնում է մեր ժողովրդին մասսայական մահացու թիվերի և մեր երկրին լիակատար անարխիա: Արդեն այսօր մեր օրական կորուստները հարիւրներով է հաշվում, իսկ մի քանի ժամանակ առաջ յուրահատուած ամբոխը էքսցեսներ էր կատարում նույնիսկ Երևանում՝ փրկութեան մի ճար գտնելու համար: Պետք է աչքի առաջ ունենալ, որ եթե մեզ ժամանակին ցորեն չհասցնեն դաշնակիցները, մեր տառապանքները կշարունակվեն և յաջորդ տարի, որովհետև մեր նույնիսկ ո՛չ գաղթական գիւղացին իր սերմացուն է ուտում այսօր» և ավելացնում, թե «խնդրում եմ իմ այս գրութեան պատճենը ուղարկեք Փարիզ՝ Նուբար փաշային և պ. Միքայել Վարանդեանին, Լոզան՝ բժ. Օհանջանեանին և Ամերիկա՝ պ. Գ.Բաստրմաճեանին»²:

Կարծում ենք հարկ չկա ապացուցելու, որ Ջամալյանի առաջ քաշած պահանջների զգալի մասը իրատեսական չէին (Թուրքահայաստանի անհապաղ գրավում, ժողովրդի հրատապ կարիքների բավարարում և այլն) և հազիվ թե ինքն էլ հավատար դրանց իրագործմանը, բայց և այնպես պահանջում էր՝ հավանաբար կատարելով կառավարության հրահանգները: Իսկ կառավարությունը իսկապես լավատեսորեն էր տրամադրված, մանավանդ, որ անգլիացիների առաջին քայլերն Անդրկովկասում խոստումնալից էին. Էնգելիից Բաքու եկած անգլիական զորքերի գլխավոր հրամանատար գեմ. Թոմսոնի առաջին քայլերից մեկն այն եղավ, որ կարգադրեց բանտերից ազատել օսմանյան զորքերի կողմից Բաքուն գրավելուց հետո քաղաքում կազմակերպված հայկական ջարդերի օրերին (1919թ. սեպտեմբերի 15-17) ձերբակալված հայերին, ձերբակալել ջարդերի կազմակերպիչներին, ինչպես նաև պարզել հայերին

հասցված նյութական վնասների չափը՝ արժանի հատուցում տալու նպատակով: Դեռ մինչ այդ կովկասյան մամուլի (վրացական, ադրբեջանական) էջերում հայտնվել էին հողվածներ, որոնցում անթաքույց նախանձով էր խոսվում այն մասին, որ դաշնակիցների հաղթանակը դա հայոց հաղթանակն է, որ հայերի համար նոր դարաշրջան է սկսվում, որ այժմ արդեն Կովկասում հայոց շահերը գերակայություն կստանան և այլն, և այլն: Իսկ Թոմսոնի առաջին քայլերը, որոնց մասին վերը նշեցինք, էլ ավելի ամրապնդեցին այդ հավատը: Սակայն ոգևորությունը կարճ տևեց. շատ շուտով ամենքի համար պարզ դարձավ, որ իսկապես «Անգլիան չունի մշտական բարեկամներ ու մշտական թշնամիներ, այլ ունի մշտական շահեր», ինչպես լորդ Պալմերստոնն էր բարբառում իր ժամանակին:

Ռազմական միմիստր գեմ. Չախվերդյանը դառնությամբ է հիշում, թե «Թոմսոնը չէր շտապում ժամանել Երևան, մինչդեռ Չայաստանի կառավարությունը հատկապես սպասում էր նրան որպես Չամաձայնական տերությունների ներկայացուցչի, արդարացիորեն ենթադրելով, որ հայ ժողովուրդը՝ որպես թշնամու դեմ մինչև վերջ պայքարած և դաշնակիցներին հավատարիմ մնացած, թվում է, ամենից շատ իրավունք ուներ դաշնակիցների կողմից հատուկ վերաբերմունքի: Միմիստրների ժամանակ Քաջագունին բացահայտ արտահայտեց դա: Թոմսոնը բավականին կտրուկ առարկեց, թե իրենք ավելի կարևոր գործեր ունեին, քան ուղղակի համակրանք արտահայտելն է: Բայց հետո, Քաջագունուց լսելով կառավարության մոտակա ծրագրի մասին, Թոմսոնը զայրույթը փոխեց ողորմածության և հայտարարեց, որ ինքը հաճելիորեն զարմացած է կառավարության սթափ հայացքներից»¹: Խոսքը, անշուշտ, տարած-քային հարցերում Քաջագունու չափավոր հայացքների մասին է, ինչը արձանագրում է նաև Չախվերդյանը. «Պետք է ասել, - ասված է շարունակության մեջ, - որ այդպիսի սթափ հայացքները վերաբերում են Չայաստանի գոյության առաջին շրջանին, Քաջագունու վարչապետության ժամանակին: Հետագայում Չայաստանի արտաքին քաղաքականության թվացող հաջողություն-

1. ՀՀ ՊԿ ՊԱ, ֆ. 200, ց. 1 գ. 145, թ. 16-17:

2. Նույն տեղում, թ. 17:

1, Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 3:

ների և Քաջագնունու հեռանալու հետ մեկտեղ, կուսակցության տաք գլուխների կողմից ղեկավարվող կառավարության հայացքները և մտածողությունները դարձան առավել ագրեսիվ»¹:

Ինչ խոսք, սխալվում է գեներալը Քաջագնունուն հաջորդած կառավարությունների քաղաքականությունը ագրեսիվ համարելով, առավել ևս դա բնորոշ չէր Ալ. Խատիսյանի վարչապետության շրջանին, որի արտաքին քաղաքականությունը ևս աչքի էր ընկնում չափավորությամբ և շրջահայացությամբ: Հայաստանի արտաքին քաղաքականությունը կոշտ բնույթ ստացավ (կոշտ, բայց ոչ ագրեսիվ) միմիայն հանրապետության գոյության երրորդ շրջանում «բյուրո-կառավարության» օրոք:

Վերադառնալով Անդրկովկասում Անգլիայի շահադիտական քաղաքականությանը, հարկ է նշել, որ դրա առաջին ապացույցը Լոռու չեզոք գոտու ստեղծումն էր հայ-վրացական պատերազմից հետո, երբ ամբողջովին հայերով բնակեցված Լոռին՝ հակառակ նրա բնակչության կամքի, հայտարարվեց չեզոք գոտի անգլիացի նահանգապետի գերիշխանության տակ: Բրիտանական հրամանատարության վարքագիծը շատ ավելի զայրացուցիչ էր Ադրբեջանի և Հայաստանի միջև վիճելի հռչակված Լեռնային Ղարաբաղի, Չանգեզուրի և Նախիջևանի հարցում: Բացահայտորեն բռնելով Ադրբեջանի կողմը նա ամեն կերպ փորձեց Լեռնային Ղարաբաղը և Չանգեզուրը ենթարկել Ադրբեջանին՝ դարձյալ ղեկավարվելով բացառապես բրիտանական շահերով (նավթը և բոլշևիկյան Ռուսաստանի դեմ պատնեշ ստեղծելու ցանկությունը)²: Դա այնքան բացահայտ էր կատարվում, որ երբեմն-երբեմն առաջ էր բերում նույնիսկ դաշնակիցների դժգոհությունը: Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Թեքինսկին իր կառավարությանն ուղարկած մայիսի 20-ի հեռագրում այդ կապակցությամբ գրում է. «Ինձ մոտ ճաշի ժամանակ Հայաստանում Ֆրանսիայի ներկայացուցիչն իր դժգոհությունն արտահայտեց անգլիացիների քաղաքականությունից, որն ուղղված է բացառապես հօգուտ Ադրբեջանի, և գլխավորապես Թոմսոնի քաղաքականությունից, որը ճարպիկ զեկույցներով հասավ Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելուն, ինչը, ֆրանսիացիների

կարծիքով, բացահայտ անարդարություն է: Այնուհետև ասաց, որ մյուս դաշնակիցների գալով քաղաքականությունը պետք է փոխվի: Բացահայտորեն արտահայտեց ֆրանսիացիների համակրանքը հայերի նկատմամբ՝ անվանելով նրանց յուրային»¹: Սակայն հավանաբար ըստի ազդեցության տակ անկեղծության պոռթկում էր սա, քանի որ ոչ Ֆրանսիայի և ոչ էլ մյուս տերությունների (ԱՄՆ, Իտալիա) դիրքը և Անդրկովկասում վարած քաղաքականությունը ևս առանձնապես չէր տարբերվում Անգլիայի քաղաքականությունից տարածքային վիճելի հարցերում: Ուրեմն կարող ենք արձանագրել, որ առաջին աշխարհամարտի ավարտից և Անդրկովկասից թուրքական զորքերի հեռանալուց հետո հայության բաղձանքների իրականացման համար առանձնապես նպաստավոր պայմաններ չստեղծվեցին: Ե՛հ չէ, հանրապետության Բաթումի պայմանագրով զծված անծուկ սահմանները որոշ չափով ընդարձակվեցին և իրենց մեջ ներառան նաև Արարատյան դաշտի մնացած մասերը, Սուրմալուի, Ալեքսանդրապոլի գավառները և Կարսի մարզը (ոչ ամբողջովին)՝ հանրապետության տարածքը 12000 քառ. կմ-ից հասցնելով շուրջ 45000 քառ. կմ-ի, բայց և այնպես ամբողջ Ռուսահայաստանը ընդգրկող տարածք ստեղծել այդպես էլ չհաջողվեց (նրանից դուրս մնացին Ջավախքը և Լոռու չեզոք գոտին, Լեռնային Ղարաբաղը և Շարուր-Նախիջևանը): Եվ դա Անդրկովկասում «դաշնակիցների» տիրապետության պայմաններում: Դե, եթե հայաբնակ Ջավախքը, Լոռին, Լեռնային Ղարաբաղը և Չանգեզուրը չէին տալիս մեզ մեր «դաշնակիցները», ապա էլ ի՞նչ կարելի էր սպասել նրանցից խառը բնակչությամբ տարածքների հարցում: Հոգ տանելով մեծ և հզոր Ադրբեջան ստեղծելու մասին, որն իբր թե պետք է կանգնեցներ ռուսների առաջխաղացումը դեպի Անդրկովկաս, նրանք զարմանալիորեն ոչինչ չէին անում կայուն և ուժեղ Հայաստան ստեղծելու ուղղությամբ: Եվ դա այն դեպքում, երբ քաջ գիտեին, որ Կովկասում միմիայն հայ ժողովուրդը կարող էր հավատարիմ դաշնակից լինել, ինչպես եղավ առաջին աշխարհամարտի բոլոր տարիներին: Ավելին, բրիտանական իշխանությունները նույնիսկ չէին փորձում մատ թափ տալ մահմեդական այն ըմբոստ շրջանների վրա, որոնք իրենց ավազակային գործողություններով

1. Նույն տեղում, ք. 3-4:

2. Մանրամասն տես է. **Զոհրաբյան**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997, էջ 79-84:

1. **ՀՀ ՊԿՊԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 358, ք. 25:

խարխլում էին հանրապետության ներքին կյանքը, կառավարությանը պահում հարատև լարվածության մեջ, պատճառում մարդկային և նյութական մեծ վնաս: Հայ ժողովուրդը դարձյալ միայնակ մնաց մահմեդական ծով ալիքի դեմ, դարձյալ ստիպված եղավ լարել իր տկար ուժերը՝ ծառացող այդ ալիքներին կուլ չգնալու համար:

* * *

1918 թ. նոյեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետության ներքին գործոց նախարարը մի կարգադրություն է ստորագրում Թուրքիայի կողմից դատարկված տարածքների, այդ թվում՝ Նախիջևանի գավառում կոմիսարներ և կոմիսարների օգնականներ նշանակելու մասին: Նրանում ասված էր. «Ի նկատի ունենալով, որ մոտերս Թուրքիայի կողմից դատարկվելու են որոշ հողամասեր, որոնք նրա կողմից գրավված են պատերազմի իրավունքով և այն, որ այդ հողամասերը կցվելու են Հայաստանի Հանրապետության տերիտորիային, նոցա վարչական կառավարության համար նշանակվում են...

5.Նախիջևանի գավառում՝ պորուչիկ Գարեգին Տեր-Հարությունյանը գավառական կոմիսար, կապիտան Վահան Գալստյանը՝ վերջինիս օգնական, Գևորգ Հակոբ-Շահինյանը՝ առաջին գավառակի կոմիսար, պողպորուչիկ Բարդուղիմեոս Տոշյանը երկրորդ գավառակի կոմիսար, պողպորուչիկ Վասիլ Կախյանը՝ երրորդ գավառակի կոմիսար»¹: Իսկ դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության տարածքում հաշտարար բաժանմունքների և քննչական մասերի վերակազմության և նորերի բացման մասին Հայաստանի Խորհրդի ընդունած օրենքի համաձայն հաշտարար բաժանմունքներ ու քննչական մասեր էին հաստատվում նաև Շարուր-Նախիջևանում: Ըստ որում Շարուրի գավառում հաստատվում էր մեկ հաշտարար բաժանմունք և մեկ քննչական մաս Բաշ-Նորաշենում, իսկ Նախիջևանի գավառում երկու քննչական մաս համապատասխանաբար Նախիջևան և Օրդուբադ քաղաքներում²:

1. Բանբեր Հայաստանի արխիվների, 1993 թ. N 1-2, էջ 58:
2. Նույն տեղում, էջ 59:

Սակայն շուտով (արդեն դեկտեմբերին) դեպքերը տարածաշրջանում այնպիսի զարգացում ստացան, որ բոլոր այս նշանակումները մնացին թղթի վրա: Եվ դա ոչ այնքան տեղական թուրքերի դիմադրության, որքան բրիտանական իշխանությունների վարած քաղաքականության պատճառով: Բայց նախ ծանոթանաք Նախիջևանի հարցում Պարսկաստանի վարած քաղաքականության հետ:

1918 թ. ուշ աշնանը, Անդրկովկասից թուրքական զորքերի հեռանալուն զուգընթաց, արևելյահայ գաղթականները սկսեցին վերադառնալ իրենց հարազատ վայրերը: Դա կատարվում էր այնպիսի հապճեպությամբ, այնքան արագ, որ հաճախ ազգաբնակչությունն առաջ էր անցնում հայկական զորքերից: Այդպես էր գործը Արարատյան դաշտում, Սուրմալուում, Շիրակում: Վերադառնալ սկսեցին նաև Շարուր-Նախիջևանի գաղթականները: Հասկանալի է, որ դա առաջ էր բերում նաև կոնֆլիկտներ, քանի որ թուրք ազգաբնակչությունը, որն արդեն տիրացել էր հայերի հողին ու գույքին, ամեն կերպ աշխատում էր խոչնդոտել նրանց վերադարձը՝ ձեռք բերած բարիքներից չզրկվելու համար: Նոյեմբերին դեպի Շարուր շարժվեցին նաև որոշ հայկական զորամասեր՝ Շարուր-Նախիջևան-Ջուլֆա երկաթգիծը բացելու և նրա աշխատանքը կարգավորելու նպատակով՝ Պարսկաստանի հետ տրանսպորտային հաղորդակցությունը վերականգնելու համար: Սակայն հայկական զորքերի առաջխաղացումը մի այնպիսի սարսափ առաջացրեց տեղի մահմեդականների մեջ, որ նրանց մի մասը խուճապով անցավ Արաքսը և բռնեց Մակվի և Թավրիզի ճանապարհները: Եվ, թեև այդ սարսափը անտեղի էր, քանի որ հայկական զորքերը ոչ մի բռնություն չէին գործադրել և չէին էլ կարող գործադրել, որովհետև դեռ չէին հասցրել խորանալ երկրամասում, մահմեդական մտավորականությունը՝ հավատարիմ իր բնությանը, աջ ու ձախ հեռագրեր տեղալով մի այնպիսի աղմուկ բարձրացրեց հայերի կողմից իրագործվող ջարդերի մասին, որ շարժում առաջ բերեցին ոչ միայն Թավրիզում, Թեհրանում և Բաքվում, այլև Կովկասի բրիտանական հրամանատարության մոտ: «1918թ. նոյեմբերի վերջերին, - գրում է դաշնակցական հայտնի գործիչ, դեպքերի ականատես Սամսոնը՝ «Դեպքերը հայ-պարսկական սահմանի

վրա» հողվածում, - արտաքին գործոց նախարարության (Պարսկաստանի - է.Ջ.) թավրիզի ներկայացուցչի հրաւերով տեսակցութիւն է տեղի ունենում Ատրպատականի¹ Հայոց առաջնորդ Ներսէս Արքեպ. Մելիք-Թանգեանի և նահանգապետ Սուքառամ Ուլ-Սուլքի միջեւ, ուր նահանգապետն յայտնում է, թէ **Նախիջևանից ու Շարուրից աւելի քան վաթսուն հազար մահմեդականները հայկական զօրքերի ճնշման տակ, սարսափահար փախչում են դեպի Պարսկաստան** և թէ այդ առթիւ թագաժառանգը հեռագրով խորհրդակցութիւն է ունեցել Շահի հետ: Նահանգապետը մտերմօրէն հաղորդում է նաև, թէ անգլիացիները խորհուրդ են տւել **Շարուր-Նախիջևանի շրջանի թուրք ազգաբնակչութեան զինաթափ չլինել ու տեղի չտալ հայերի առջև, այլ սպասել հաշտութեան վեհաժողովի վճռին: Նահանգապետը աւելացնում է, որ թագաժառանգի ու Թեհրանի կառավարութեան տեսակետն էլ նույնն է»²** (ընդգծումը մերն է - է.Ջ.): Անգլիացիների դիրքորոշմանը Նախիջևանի հարցում մենք դեռ կանդրադառնանք: Այստեղ ընթերցողի ուշադրությունը ուզում ենք հրավիրել նահանգապետի օգտագործած խիստ ուռճացված ու ֆանտաստիկ թվերի վրա՝ Պարսկաստան փախչողների հարցում: Իրականում փախչողների թիվը մի քանի տասնյակի էլ չէր հասնում: Սրբազանը, հասկանալի է, փորձում է համոզել նահանգապետին, որ բարձրացված աղմուկը անհիմն է, որ իրականությունը բոլորովին այլ է, որ Հայաստանը ձգտում է բարեկամական կապեր հաստատել Իրանի հետ և այլն: «Ապա Սրբազանը՝ նահանգապետի ընկերակցությամբ տեսակցութիւն է ունենում թագաժառանգի հետ, և այս վերջինս յայտնում է, թէ ինքը որոշել է Հայաստան ուղարկել մի պատւիրակութիւն՝ յայտնելու համար Պարսկաստանի բարեկամական զգացմունքները Հայաստանի կառաւարութեան և կարգադրելու երկու երկրներու միջև առկա մնացած քաղաքական և քաղաքացիական խնդիրները: Թագաժառանգը առաջարկում է պատւիրակութեան միացնել և առաջնորդի ներկայացուցչին»³:

1. Հայերենում այդպես է կոչվում Իրանի հյուսիսարևմտյան ընդարձակ շրջանը, որի կենտրոնը թավրիզ քաղաքն է (արաբ. և պարս. Ադրբեյդաճան, Ազերբայջան):

2. Վեմ, 1935, թիվ 4, էջ 2-3:

3. Նույն տեղում, էջ 3:

Պատվիրակությունը թավրիզից դուրս եկավ դեկտեմբերի սկզբին երկու կառքով և 100 ձիավոր զինվորների ուղեկցությամբ: Իսկ դեկտեմբերի 6-ին Մելիք-Թանգեանը «Հայոց հանրապետութեան բոլոր անձանց, որոնք գտնվում են Ջուլֆա-Երևան գծի վրա և հայ հանրապետութեան» ուղղված նամակում գրում է. «Հինգ օր է, որ շարունակ տեղում է Ն.Ջուլֆայից, Նախիջևանից, Օրդուբատից, Շահթախտից, Շարուրից հեռագիրներ թավրիզ՝ պարսից թագաժառանգ Հազրաթ Վալայի անունով, խնդրելով օգնություն, միջնորդություն, որ հայերը չկոտորեն իրանց, որ հայերի սոսկալի ջարդերից ազատեն իրանց: Թագաժառանգը, որը պատուական մարդ է, հայերին միշտ պաշտպանել է և նեղ ժամանակ շատ պաշտպանեց, կամենում է անպայման վերջ դնել կռիվներին և հայ ու թուրքի մեջ սեր և խաղաղութիւն հաստատել . այս մտքով ուղարկում է պատգամաւորութիւն բաղկացած երկու բարձրաստիճան պարսիկ պաշտոնեաներից, որոնցից մեկն է Մարանդ-Ջուլֆայի սահմանապահ նահանգապետը և միւսը՝ Սակուի Սարդարի եղբորորդին և երկու հայից, առաջնորդական փոխանորդ Կարապետ աւագ քահանայից և Գրիգոր Աղաջանեանից, որոնք պետք է խնդրեն պահել բարեկամական, եղբայրական յարաբերութիւն, չ'կռուել, չ'կոտորել միմիանց, այլ զիջողաբար վերաբերուել միմիանց՝ հաստատելով իրար մէջ դարերից ի վեր ամրապնտուած հարևանութիւնը»¹:

Բաքում ավելի հեռուն գնաց, արդեն հոկտեմբերին, դեռ աշխարհամարտը չավարտված, «արտակարգ քննչական հանձնաժողովներ» ստեղծեց, որոնք սկսեցին նյութեր հավաքել Ելիզավետպոլի և Բաքվի նահանգներում «հայերի կողմից մուսուլմանների նկատմամբ կիրառված բռնությունների մասին»: Հավաքված նյութերը պետք է ուղարկվեին պատերազմից հետո գումարվելիք հաշտության կոնֆերանսին: Հասկանալի է, համաշխարհային հանրության ուշադրությունն իրենց կատարած հանցագործություններից շեղելու և դահիճին որպես զոհ ներկայացնելու նպատակով: Անհետաքրքիր չէ և այն փաստը, որ այդ աշխատանքներին օբյեկտիվության շղարշ հաղորդելու նպատակով, հանձնաժողովները համալրվել էին հիմնականում այլազգիներով՝ մեծիմասամբ ռուսներով²: Այստեղ են ասել, թէ

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 212, թ. 5:

2. Տես՝ նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 78, թ. 30-31:

սելը չի ճռում, սելվորն է ճռում: Հայաստանի կառավարության մտքովն անգամ չէր անցնում նման քայլ ձեռնարկել: Եվ միայն այն բանից հետո, երբ իմացվեց Ադրբեջանի այդ քայլի մասին, Հայաստանում ևս որոշ քայլեր ձեռնարկվեցին հայոց նկատմամբ ինչպես օսմանյան, այնպես էլ կովկասյան թուրքերի բռնությունների մասին նյութեր հավաքելու: Բայց այդ աշխատանքները լայն ծավալ չստացան, որի պատճառը ֆինանսական միջոցների սղությունն էր: Սակայն դառնանք պարսից թագաժառանգի ուղարկած պատվիրակությանն ու հետապնդած նպատակներին:

Ատրպատականի հայոց թեմական առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի վերը հիշատակված դեկտեմբերի 6-ի նամակում ասված է. «Թագաժառանգի խնդիրը ու պատուերն է չկռուել, սպասել կոնֆերենցիայի վերջնական որոշման երկու հանրապետութեան սահմանների վերաբերմամբ: Խաղարարար յանձնաժողովին յանձնարարում է տեղեկանալ առ տեղիում այս ընդհարումների պատճառների մասին, որոնցից մեկը, ինչպես լսեցինք, է այն, որ հայերը գալիս են բռնելու իրանց բնիկ գիւղերը և տեղական թուրքերը խանգարում են այդ գործողութիւններին»:

Միանգամայն լիայոյս, որ Հայոց հանրապետութիւնը և պաշտոնիաները ընդառաջ կերթան հայասեր թագաժառանգի հաշտարար և խաղաղասեր քայլին և ուղարկած յանձնաժողովի առաջարկին, այս նամակով խնդրում եմ սիրով ընդունել սրանց, տալ արժանահարկ պատասխան թագաժառանգին, բացատրելով կռուի պատճառը, ընդունել սիրով նրա ուղարկած պատգամաւորութիւնը և ճանապարհել յետ՝ գոհ կացուցանելով նրանց»¹:

Դեկտեմբերի առաջին օրերին պարսից պատվիրակությունը արդեն Նախիջևանում էր, որտեղ սակայն նրան անակնկալ էր սպասում. տեղական խաները, որոնք այնքան մեծ աղմուկ էին բարձրացրել ու ողողել Թավրիզը օգնության մասին խնդրագրերով, հանկարծ հայտարարում են, թե «շնորհիվ իրենց քաջամարտիկ զինւորների դիմադրութեան, հայկական զորքերը նահանջել են և իրենք այլևս հագիստ են և միջամտութեան պէտք

չունեն»¹:

Դժվար է ասել, Նախիջևանում գիտեի՞ն, թե չգիտեին, որ հայկական զորքերի հետ քաշվելու պատճառը ոչ թե իրենց «քաջամարտիկ զինվորների» դիմադրությունն էր, այլ հայկրացական սահման փոխադրվելը, որտեղ մթնոլորտը օր օրի վրա շիկանում էր և պատերազմի հոտ էր փչում: Բայց նրանք չէին կարող չհասկանալ, որ դա ժամանակավոր երևույթ է, որ հայկական զորքերը կրկին կվերադառնան: Հետևապես ինչո՞ւ էին խուսափում պարսից միջնորդությունից: Մնում է ենթադրել, որ նրանք մեկ այլ՝ ավելի զորեղ միջնորդի հույս ունեին: Իսկ դա միմիայն անգլիական հրամանատարությունը կարող էր լինել. չէ՞ որ հենց անգլիացիներն էին, ինչպես վերը նշվեց, նախիջևանցիներին խորհուրդ տվել «զինաթափ չլինել և տեղի չտալ հայերի առջև, այլ սպասել հաշտության վեհաժողովի վճռին»: Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ իսկապես սկզբնական շրջանում անգլիացիները մտադիր չէին Նախիջևանը հանձնել Հայաստանին, այլ ուզում էին մի ինչ-որ չեզոք գոտի ստեղծել՝ իրենց տիրապետության տակ:

Պարսից պատվիրակությունն իրեն ուղեկցող ջոկատը թողնելով Սադարակում, 4 անգն զինվորների ուղեկցությամբ, սպիտակ դրոշակ պարզած հասավ Դավալու (այժմ Արարատ), որտեղ գնդ. Դուլուխանյանի զորամասը հանդիսավոր ընդունելություն էր կազմակերպել: Հայաստանի կառավարությունը հատուկ զնաքք ուղարկեց պատվիրակությանը երևան բերելու համար²: Կայարանում պատվիրակությանը դիմավորում են քաղաքի պարետ Արշ.Շահխաթունին, պարսից հյուպատոսը և առաջնորդում «Օրխանտ» հյուրանոց: Բանակցությունները վարվում էին արտգործնախարար Ս.Տիգրանյանի հետ, իսկ երկու օր հետո պարսից պատվիրակությանը ընդունեց նաև վարչապետ Հ.Քաջազունին: Ահա այն գրությունը, որ պատվիրակության նախագահ Վրսուղ-ուլ-Մամալիքը ներկայացրել էր վարչապետ Քաջազունուն. «Մի քանի օր առաջ Նախիջևանի,

1. Վեմ, 1935, թիւ 4, էջ 4:

2. Ըստ «Ձանգ» օրաթերթի պարսից պատվիրակությունը Դավալու է հասել միայն դեկտ. 27-ին (տես «Ձանգ», 29.12.1918): Սամսոնը գրում է, թե պատվիրակությունը երևան հասավ դեկտեմբերի 9-ին: Եթե ընդունենք, որ այստեղ հին և նոր տոմարների հարց կա, դարձյալ որոշ անհամապատասխանություն է առաջանում:

1. Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 212, թ. 5:

Շարուրի և գավառների բնակիչները գրավոր և հեռագրային բողոքներով դիմեցին Նորին Մեծություն Պարսկաստանի գահաժառանգին խնդրելով նրա պաշտպանությունը, իսկ օրերս նման շատ հաղորդագրություններ ստացվեցին պարսկական սահմանի պետերից, առ այն, որ Դարալազյազի և Գառնիբասարի շրջանում և Նախիջևան գյուղում, կանայք և երեխաներ, երիտասարդներ և ծերեր, ոտքով հայկական զորքերից սարսափահար, անընդհատ անցնում են պարսկական սահմանը: Հնարավոր է, որ նրանց թիվը կաճի, դրա համար էլ մենք չորսս՝ Հաջի Սամսամ-ուլ-Մյուլկ Սակվեցի, Մարանդի նահանգապետ Վըսուդ-ուլ-Մամալիք, Տեր-Կարապետ Մանուկյան և Գրիգոր Աղաջանյան, Նորին Մեծություն Վալիաբթի և մինիստրների խորհրդի նախագահի հրամանով եկել ենք այստեղ, որպեսզի ստուգենք հաղորդագրությունները և ժողովրդի բողոքները, այնուհետև տեսնվենք Ձեզ հետ ու ուրիշ պետերի հետ, որպեսզի վերջ դրվի այդ անկարգություններին և համազուտություն ու վստահություն մտցվի երկու կողմերի կյանքում»¹:

Ինչպես տեսնում ենք, սովորական բլանկի վրա ներկայացված այս գրության մեջ խոսք չկա հայկական զորքերի առաջխաղացումը կանգնեցնելու մասին: Սակայն հանդիպման ընթացքում հայ-պարսկական բարեկամական հարաբերությունների մասին ընդհանուր հայտարարություններից զատ, պարսիկ պատվիրակներ Վըսուդ Մամալիքը և Հաջի խանը ավելի շատ խոսում էին Նախիջևանը հայկական զորքերով չգրավելու և Փարիզի վեհաժողովի վճռին սպասելու անհրաժեշտության մասին: Նրանք միաժամանակ հավաստիացնում էին, որ «պարսիկ կառավարության այս միջնորդությունը լուկ բարեկամական մի քայլ է և պաշտոնական հանգամանք չունի», բայց դրա հետ մեկտեղ «յոյս էին յայտնում, որ Հայաստանի կառավարությունը չի մերժի իրենց խնդրանքը»²: Սակայն, ինչպես վերը տեսանք, Նախիջևանն արդեն պարսից միջամտությունից հրաժարվում էր: Հետևապես, համառորեն առաջ տանելով երկրամասը զենքի ուժով չգրավելու գաղափարը, պարսիկները, անշուշտ, ելնում էին սեփական

շահերից՝ այն է, կոնֆերանսից պահանջել կցելու Շարուր-Նախիջևանը Պարսկաստանին: Այս հարցին դեռ կանոնադառնանք, իսկ հիմա նախ ծանոթանանք պարսիկների առաջարկության նկատմամբ Հայաստանի կառավարության դիրքորոշմանը:

Նախ ասենք, որ պարսից պատվիրակության Հայաստանում գտնվելու ժամանակամիջոցը զուգահեռաբար հայ-վրացական պատերազմին: Ահա ինչու, թեև առաջին հանդիպման ժամանակ վարչապետ Քաջազնունին հայտարարեց, որ Նախիջևանը Հայաստանի անբաժանելի մասն է կազմում, բայց և այնպես, ինքը պարսից կառավարության խնդրանքը առաջիկայում անպայման կդնի նախարարների խորհրդի քննության և վերջնական պատասխան կտա պատվիրակներին, բայց ամբողջովին կլանված լինելով պատերազմական հոգսերով, հարցի քննարկումը հետաձգեց ընդհուպ մինչև դեկտեմբերի 30-ը մինչև Վրաստանի հետ զինադադարի հաստատման վերաբերյալ համաձայնության կայացումը: Իսկ մինչ այդ տեղի ունեցավ պարսից պատվիրակության երրորդ հանդիպումը արտգործնախարար Ս.Տիգրանյանի հետ, որի ընթացքում Շարուր-Նախիջևանի հարցի հետ մեկտեղ քննարկվեց նաև տնտեսական կապերի հաստատման հարցը: Ըստ որում, եթե Հայաստանին հետաքրքրում էր Սակուի խանությունում և Թավրիզի նահանգում գյուղատնտեսական մթերքներ գնելու հնարավորությունը, ապա պարսիկներին Հայաստանի վրայով դեպի Թավրիզ նավթ արտահանելու խնդիրը: Հայտնելով Հայաստանի պատրաստակամությունը ընդառաջելու պարսից կողմին, Ս.Տիգրանյանը կարևորում է Շարուր-Նախիջևանի դիրքը տրանսպորտային կապի հաստատման գործում ու նաև տեղեկացնում, որ Հայաստանի կառավարությունը մտադիր է ներկայացուցչություն ուղարկել Թեհրան, որը և լիազորված կլինի բանակցել Իրանի կառավարության հետ երկու կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող բոլոր հարցերի շուրջ: Վերջապես դեկտեմբերի 30-ին, կառավարության նիստում վարչապետ Ռ.Քաջազնունին հաղորդելով անգլոֆրանսիացիների միջնորդությամբ Վրաստանի հետ զինադադար

1. ՀՀ ՊԿ ՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 212, ք. 9:

2. Վեմ, 1935, թիւ 4, էջ 5-6:

հաստատելու մասին, որն ուժի մեջ էր մտնելու դեկտեմբերի 31-ին գիշերվա ժամը 24-ին, այնուհետև գեկուցում է պարսից պատվիրակության հետ վարած բանակցությունների մասին և առաջարկում քննարկել: Արդյունքում ընդունվում է հետևյալ որոշումը.

«2. Պարսից գահաժառանգի կողմից Թավրիզից եկած ներկայացուցիչների հետ Շարուր-Նախիջևան գավառների մասին բանակցելիս Մինիստր-Նախագահին յանձնարարել դեկավարվելու հետևյալ հիմունքներով.

ա. որ կառավարությունը համարում է այդ գավառները Հայաստանի տերիտորիայի մասը,

բ. հայկական զորքերը առ այժմ կանցնեն մինչև «Գայլի դռները»,

գ. հայկական կառավարությունը մտցնելու է կարգ ու իշխանութիւն այդ գաւառներում խաղաղ ճանապարհով և հավասար վերաբերմունք է ցույց տալու դեպի բոլոր ազգութիւնները: Կարգ ու իշխանութիւն մտցնելը անհրաժեշտ է նաև այն պատճառով, որ հայ գաղթականութիւնը Նախիջևան՝ իրենց գիւղերը գալուց յետոյ հնարաւոր լինի և թուրք ազգաբնակչութեան մեջ բարի-դրացիական յարաբերութիւններ վերսկսելն ու պահպանելը,

դ. դիմել պարսից կառավարութեան ներկայացուցիչներին, որ ի նկատի առնելով մեր խաղաղասիրական ձգտումները, նոքա ևս իրանց կողմից համոզեն Շարուրի և Նախիջևանի թուրքերին ենթարկելու հայկական կառավարութեանը՝ մինչև խաղաղութեան խորհրդաժողովում սահմանների խնդրի վերջնական լուծումը,

ե. **առաջարկել Պարսից կառավարութեանը իր կոնսուլները նշանակել այդ գաւառներում, հայտնելով միաժամանակ, որ մեր կողմից դիմումն է լինելու անգլիացիներին երկաթուղու ընթացքով անգլիական զորքի պահակներ նշանակելու,**

զ. ցանկանալով սերտ առևտրական յարաբերութեանց մեջ մտնել Պարսկաստանի հետ, իսկ դրա համար անհրաժեշտ է երկաթուղու շուրջ գտնված այդ երկու գաւառներում կարգ և խաղաղութիւն լինի և երկաթուղու գիծը ազատ որևէ պատա-

հարից, որպիսի նպատակի ձգտում է մեր կառավարութիւնը»¹ (ընդգծումը մերն է- է.2.):

Ինչ խոսք, որ եթե Հայաստանի կառավարությունը տեղյակ լիներ Արևելյան Անդրկովկասի և հատկապես Նախիջևանի նկատմամբ Իրանի հավակնություններին և այդ շրջանում արդեն ծավալված դիվանագիտական գաղտնի գործունեությանը, ապա հազիվ թե նրան առաջարկեր հյուպատոսներ նշանակել Նախիջևանում:

Պարսիկ պատվիրակները՝ ստանալով Քաջագունու կառավարության դեկտեմբերի 30-ի որոշումը և մասնակցելով նաև նոր տարվա առթիվ Հայաստանի խորհուրդում կազմակերպված հանդեսին, հունվարի սկզբին բռնեցին տունդարձի ճանապարհը: ՀՀ պետական պատմական արխիվում պահպանվող մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ 1919թ. հունվարի 7-ին կառավարության նիստում քննարկվել է «Պարսկաստան պատվիրակություն ուղարկելու մասին» հարցը և ընդունել այսպիսի որոշում.

«3. ա) Ուղարկել Պարսկաստան 2 անձից բաղկացած մի պատվիրակություն,

բ) Պատվիրակներ նշանակել Գ.Տեր-Ղուկասյանին և գնդապետ Շահբազյանին,

գ) Պատվիրակությանն իբր դրագոման տալ թուրք Սիր-Բաղիրովին,

դ) հանձնարարել արտաքին գործերի մինիստրին տալ պատվիրակությանը համապատասխան հավատարմագրեր և հրահանգ համաձայն մինիստրների խորհրդի դեկտ. 30-ի օրագրական որոշումների: **Ի փոփոխումն գենրի ուժով «Գայլի դռներին» տիրապետելու որոշման, հանձնարարել պատվիրակությանը թուրք ազգաբնակչության հետ այդ առթիվ խաղաղ համաձայնության գալ»**² (ընդգծումը մերն է - է.2.):

Ինչպես տեսնում ենք, 1919 թ. հունվարի սկզբին «Գայլի դռները» դեռևս գրավված չէր, ասել է թե հայկական զորքերը դեռևս չէին թափանցել Շարուր, մինչդեռ Ադրբեջանի կառավարությունը աջ ու ձախ բողոքներ էր տեղում և Հայաստանի կառավարության

1. ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 199, ց.1, գ.11, ք. 41:

2. Նույն տեղում, գ. 43, ք. 4:

այդ նույն նիստում քննվեց նաև «Ադրբեջանի Արտաքին գործերի մինիստրի հեռագիրը, որով բողոք է հայտնում Շարուրում և Նախիջևանում թուրք ազգաբնակչության դեմ իբր թե գործ դրվող բռնի միջոցների համար» և որոշվեց «հեռագիրն առնել ի նկատի և հանձնարարել Արտաքին գործերի մինիստրին տալ հեռագրին պատասխան»¹:

Ի դեպ, հունվարի 1-ին Երևան էր եկել նաև վեդիբասարցիների լիազոր Ալի Այվազովը և պարսից պատվիրակությանը հանձնել մի գրություն, որով խնդրում էր միջնորդել Հայաստանի կառավարությանը վերջ տալու Վեդիբասարի լեռնային գյուղերում Մուշեղի և Մարտիրոսի խմբերի կողմից կատարվող բռնություններին: Եվ, դատելով գնդ. Դուլուխանյանի հունվարի 3-ի հեռագրից, պարսիկները այդ դիմումը անհետևանք չեն թողել: «Այսօր Յապոնից սուրհանդակ է եկել և այսօր էլ ետ է վերադառնում: Յապոնը Խաչիկում է և հայտնում է, որ պարսկական պատվիրակության նամակի հետևանքով դադարեցրել է թաթարների դեմ ռազմական գործողությունները: ... Սասունցիները գտնվում են Շահաբլու, Կաղըլու, Կարայան, Սինդազասլու և Բիրալու գյուղերում: Նրանցից մնացել է մոտ երկու հարյուր մարդ, մնացածները բարիքներ թալանելով, հեռացել են իրենց ընտանիքները: Ես հրաման ուղարկեցի սասունցիներին և Յապոնին մնալ տեղերում և սպասել հրամանի Շարուրի վրա հարձակման ...»²: Այսպես հայկական կողմը ընդառաջում էր պարսիկներին, փորձում հարցը խաղաղորեն լուծել: Մինչդեռ այդ նույն օրերին պարսիկները Միջին Ասիայի, Անդրկովկասի և Միջագետքի մի շարք ընդարձակ տարածքներին տիրանալու պլաններ էին մշակում: Փետրվարի 4-ին Փարիզ հասած պարսից պատվիրակությունը հրապարակային հայտարարություն արեց կոնֆերանսին ներկայացվելիք իրենց պահանջների մասին և շուտով մի հուշագիր ներկայացրեց բաղկացած երեք մասերից: Առաջին մասում ներկայացված էին Պարսկաստանի անկախության քաղաքական, իրավական և տնտեսական հիմքերը, երկրորդում տարածքային պահանջները, իսկ երրորդում պատերազմի պատճառած վնասների դիմաց հատուցման իրավունքը: Առաջին և երրորդ մասերին մենք չենք անդրադառնա: Ինչ վերաբերում է երկրորդին՝ տարածքային պա-

1. Նույն տեղում:

2. Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 212, թ. 12:

հանջներին, ապա այնտեղ ուղղակի ասված էր. «Պարսկաստանը բնական սահմաններ ունեցող աշխարհագրական միաւոր է, նա տարածում է Ամու-Դարիա գետի, Կովկասեան լեռների, Եփրատ և Տիգրիս գետերի և Պարսից ծոցի միջև: Ազգային տեսակետից նա միշտ մեծ մասամբ բռնված է եղել միևնույն իրանական ցեղին պատկանող ժողովուրդներով: Այս տարածութեան վրա հիմնւած կայսրութիւնները միշտ կրել են իրանական բնոյթ: Այս հողամասին միշտ տիրել են պարսիկները: Միայն 19-րդ դարից սկսած, ներքին քաղաքացիական կռիւներից տկարացած Պարսկաստանը, ստիպված եղավ տեղի տալ հիւսիսից Ռուսաստանի և արևմուտքից Թիւրքիայի առջև»¹: Այնուհետև ներկայացնելով այդ պատերազմների հակիրճ պատմությունը, հուշագրով Պարսկաստանը «յանուն իրաւունքի և արդարութեան պահանջում է իրեն վերադարձնել բռնութեամբ և անարդար կերպով խլւած հողամասերը: Նա պահանջում է, որ իր սահմանները որոշւեն իրաւունքի և բնութեան կանոնների համաձայն, այնպես, որ այսուհետև նա պաշտպանւած լինի իր հարևանների ներխուժումներից»²:

Իսկ որո՞նք էին Պարսկաստանի կոնկրետ պահանջները: Մի կողմ թողնելով Միջին Ասիայի և Զրդստանի նկատմամբ պարսկական հիմնավորումները՝ մեջբերենք Անդրկովկասի նկատմամբ հուշագրում ասվածը բառացի .

«բ) Հիւսիսում ռուսական պատերազմների հետեւանքով Պարսկաստանից խլւած քաղաքներն ու նահանգները: Կը յիշենք Բագուն, Շիրվանը, Դերբենտը, Շաքին, Շամախին, Գեանջան (Ելիզավետպոլ) Ղարաբաղը, Նախիջեւանը, Երեւանը:

Այս շրջանները պետք է վերադարձւին Պարսկաստանին, որովհետեւ նրանք առաջ էլ կազմել են այս երկրի մասը: Նրանց բնակիչները ճնշիչ մեծամասնութեամբ մահմեդականներ են և մեծ մասը ծագումով ու ցեղով պարսիկ: Վերջապես ամեն տեսակից պատմական, աշխարհագրական, տնտեսական, առևտրական, կրոնական, մշակութային նրանք կապւած են Պարսկաստանին: Ի վերջոյ, բոլորովին վերջերս այս շրջանների բնակիչների մեծ մասը դիմեց Թեհրանի կառավարութեան՝ խնդրելով նրա

1. «Վեմ», 1934, թիվ 5, էջ 109-110:

2. Նույն տեղում, էջ 110:

հովանավորութիւնը և բաղձանք յայտնեց վերադառնալու Պարսկաստանին»¹: Հուշագրին կցված էր նաև մի քարտեզ, որի վրա կարմիր գույնով նշված էին պարսիկների պահանջած տարածքները և կապույտով՝ բոլոր այն շրջանները, որոնց կցուցնում էր Պարսկաստանին ցանկալի էր համարվում: Առաջինի մեջ մտնում էին.

«ա) ամբողջ Անդրկասպյան երկիրը՝ սկսելով Արալի ծովի հյուսիս-արևմտյան անկյունից, Ամու-Դարիայի հովտով մինչև Բուխարայի և Աֆղանստանի միացման վայրը, հարավում՝ գրեթե Հերաթի մոտ, հյուսիսում՝ ուղիղ գծով Արալի հյուսիս-արևմտյան անկյունից դեպի Կասպից ծովը:

բ) Կովկասում ամբողջ Ադրբեջանը, Դերբենտից սկսած, Ջաքաբալայի վրայով դեպի Լոռի ու Շիրակ, Կարսի արևելքով դեպի 1914 թ. սահմանագիծը մեջը առնելով Կաղզվանից արևելք ընկած բոլոր հողամասերը, այսինքն ամբողջ Ռուսահայաստանը:

գ) Սուլեյմանիեի շրջանը:

Երկրորդ կարգի հողերի մեջ մտնում են թիրքիահայաստանի մեծ մասը և գրեթե ամբողջ Քիւրտիստանը: Սահմանագիծը սկսում է Սուլեյի հիւսիսից, մինչև Խարբերդի հիւսիսակողմը, ապա Եփրատով իջնում է հարաւ և Սամարայից վեր կտրելով Տիգրիսը՝ գնում միանում է պարսկական սահմանին Սերիպուլի շրջանում»²:

Մնում է զարմանալ, թե այդպիսի մեծ ախորժակ ցուցաբերած մարդիկ ինչո՞ւ էին մոռացության տվել թիֆլիսն ու Արևելյան Կրաստանը: Բայց դե դա նրանց գաղտնիքն է:

Մենք այստեղ կանգ չենք առնի հուշագրում առաջ քաշված պատմական, առևտրական, մշակութային և մյուս այն փաստարկների վրա. որոնցով պարսից կառավարությունը փորձում էր հիմնավորել իր իրավունքը Անդրկովկասի ընդարձակ տարածքների վրա: Իսկապես որ դրանք նույնիսկ ուշադրության արժանի չեն: Օրինակ, ինչպե՞ս կարելի է ասել, թե Անդրկովկասը բնակեցնող ժողովուրդների «մեծ մասը ծագումով ու ցեղով պարսիկ» են, կամ թե կրոնով ու մշակութով կապված են Պարսկաստանի հետ: Կարծես թե Եվրոպայում չգիտեին, թե կովկասյան ժողովուրդները ինչ ծագում ունեն, և ինչ կրոն են դավանում, կամ էլ անտեղյակ էին, որ դարերի ընթացքում Անդրկովկասի նշված շրջանների

1. Նույն տեղում, էջ 110-111:

2. Նույն տեղում, էջ 112:

վրա իր տիրապետությունը Պարսկաստանը նմանապես զենքի ուժով է հաստատել, ինչպես որ Ռուսաստանը 19-րդ դարում: Բայց ամենատարօրինակը վերջին տողերն են, որտեղ ասված է, թե իբր այդ տարածաշրջանի բնակիչների մեծ մասը դիմել է Թեհրանի կառավարությանը՝ խնդրելով նրա հովանավորությունը և բաղձանք հայտնել վերադառնալու Պարսկաստանի գիրկը: Մենք արդեն վերը տեսանք, որ անգամ փոքրիկ Նախիջևանը, որը սկզբում հայկական զորքերի առաջխաղացումից սարսափած դիմել էր Պարսկաստանի միջնորդությանը (միջնորդությանը և ոչ հովանավորությանը), այնուհետև հրաժարվեց դրանից հենց որ հայկական զորքերը կանգնեցրին իրենց առաջխաղացումը:

Թե իրենց «խիզախ», ինչպես «Վեմն» է բնութագրել, պահանջները իրականություն դարձնելու ուղղությամբ պարսիկները դիվանագիտական ինչպիսի գաղտնի գործունեություն ծավալեցին Լոնդոնում, Վաշինգտոնում և Փարիզում, դժբախտաբար ամբողջովին վերհանել հնարավոր չէ պարսկական արխիվների անմատչելիության պատճառով: Բայց ծեռքի տակ եղած նյութերն էլ բավարար են լիարժեք պատկերացում կազմելու Իրանի արտգործնախարար Նուրեթեղ-Դուլեի պատվիրակության գործունեության մասին: Պարզվում է, որ ներկայացնելով նման ընդարձակ պահանջներ, պարսից կառավարությունը հույսը դրել էր ոչ այնքան բրիտանական կառավարության (հուշագրի պահանջները մեծապես շոշափում էին վերջինիս շահերը)¹, որքան Ամերիկայի Միացյալ Նահանգների դիվանագիտական աջակցության վրա, որն այդ շրջանում արդեն որոշակի քայլեր էր անում Իրանում իր ազդեցությունն ամրապնդելու ուղղությամբ: Դեռ 1918թ. աշնանը պարսից կառավարությունն այդ նպատակով բանակցություններ էր սկսել Թեհրանում ամերիկյան դեսպան Կոլդուելի հետ, որն արդեն նոյեմբերի 15-ին իր կառավարությանն ուղարկած հեռագրի մեջ առաջարկում էր ընդառաջել Իրանի ղեկավար շրջանների ցանկությանը և պարսկական պահանջատիրության հարցի լուծման նախաձեռնությունն իր ձեռքը վերցնել: ԱՄՆ-ում Իրանի լիազոր ներկայացուցիչ Ալի Դուլի խանը նոյեմբերի 21-ին

1. Հուշագրում կային նաև այնպիսի պահանջներ, ինչպիսիք էին 1907թ. անգլո-ռուսական պայմանագրի, կոնցեսիաների, կապիտուլյացիոն ռեժիմի վերացում և այլն:

նույնպիսի մի գրությանը դիմել է ԱՄՆ-ի պետական քարտուղարին խնդրելով աջակցություն Փարիզի կոնֆերանսում Իրանի իրավունքները պաշտպանելու հարցում¹: ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը խոստացավ աջակցել, և իսկապես այդ ուղղությամբ որոշ քայլեր կատարեց, բայց որևէ արդյունքի չհասավ, քանի որ Լլոյդ Ջորջը բոլորովին այլ դիրքորոշում ուներ: Արտահայտելով անգլիական կառավարող շրջանների տրամադրությունը՝ «Թայմսը» այդ օրերին հեզմանքով գրում էր, թե «ծայրագավառների նկատմամբ խնամակալության ձգտելուց առաջ Պարսկաստանը պետք է ապացուցի, որ ինքն ի վիճակի է պաշտպանելու իր սեփական տարածքները»²:

Անգլիայի նման դիրքորոշումը կանխորոշեց պարսկական պահանջների մերժումը: Կոնֆերանսը նույնիսկ հարկ չհամարեց առանձին քննարկման նյութ դարձնել Նօսրեթ Էդ-Դոուլեի հուշագիրը համարելով այն անլուրջ: Գործին չօգնեց նաև Իրանի կառավարող շրջանների կողմից հակախորհրդային խաղաքարտը օգտագործելու փորձը: Վըսուդ Էդ-Դոուլեի և նրա շրջապատը փորձեցին Արևմուտքին ու հատկապես Անգլիային ներարկել այն միտքը, թե միայն մեծ և հզոր Իրանը ի վիճակի կլինի կանգնեցնել բոլշևիզմի տարածումը դեպի Արևելք: Ահա ինչու 1919թ. առաջին ամիսներին Իրանում հակախորհրդային նկրտումները խիստ ուժեղանում են. ամռանը սպանվում է Թեհրանում խորհրդային Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ի.Օ.Կոլոմիյցևը, իսկ ՌԽՖՍՀ-ում իրանական դիվանագիտական ներկայացուցչությունը փակվում է:

Սակայն Վըսուդ Էդ-Դոուլեի կառավարության բոլոր ջանքերը ապարդյուն անցան: Անգլիան, անտարակույս, ամեն միջոց գործադրում էր բոլշևիզմի տարածումը դեպի Արևելք կանխելու համար, բայց ոչ երբեք Իրանը հզորացնելու և նրա նման համեղ պատառը ձեռքից տալու գնով: Այս է, որ չէին հասկացել Իրանի կառավարող շրջանները: Անհաջողության մատնվելով Փարիզի կոնֆերանսում, պարսից կառավարող շրջանները հարկադրված եղան այլևս հանդես չգալ ընդարձակ պահանջներով, գործել զգույշ ու քողարկված և բավարարվել Նախիջևանի նկատմամբ

իր իրավունքները ճանաչել տալու խնդրով: 1919թ. ամռանը մի կողմից լայն աշխատանք տանելով Փարիզում՝ գոնե Նախիջևանի վրա իր իրավունքները ճանաչել տալու ուղղությամբ, մյուս կողմից Նախիջևանի տարածքում իր գործակալների միջոցով գաղտնի աշխատանք էր տանում ազգաբնակչությանը իր օգտին տրամադրելու նպատակով: Իսկ երբ 1919թ. ամռանը Նախիջևանում Հայաստանի դեմ ապստամբություն ծագեց, պարսից կառավարությունը պահը հարմար համարեց, մի հատուկ նիստում քննեց Նախիջևանը Իրանին միացնելու հարցը և Փարիզի իր պատվիրակությանը հանձնարարեց համապատասխան աշխատանք տանել այդ ուղղությամբ: Բայց Երևանում այդ մասին բավականին ուշ իմացվեց՝ 1920թ. սկզբին, և Հովսեփ Արղությանին՝ Թեհրանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչին, հանձնարարվեց պարզել իրողությունը: Վերջինս անմիջապես հանդիպում է Իրանի արտգործնախարարի հետ և բացատրություն պահանջում: «Պարսից արտաքին գործերի մինիստրի հետ երեկ տեսնվեցա, - հայտնում է Հ.Արղությանը 1920թ. փետրվարի 20-ի հեռագրում, - նա ինձ պաշտոնապես հավաստիացրեց, որ պարսկական կառավարությունը այդպիսի մտադրություն չունի»¹:

Արղությանը այնուհետև գրում է, որ ինքը հարցով դիմել է նաև Ատրպատականի թեմական առաջնորդին Մելիք-Թանգյանին, բայց անորոշ պատասխան ստացել: «Ստույգ աղբյուրներից առնված տեղեկությունները նմանապես բացասական են և ապացուցանում են, որ Պարսկաստանը այդպիսի քայլ չէ արել, - ասված է նամակի շարունակության մեջ: Շարուրի և Նախիջևանի շրջանները պառակտված են Հայաստանի կողմից սպասելիք հարձակման սարսափից: Նախիջևանի թուրքերը դիմել են և արձագանք են գտել Թավրիզի կողմնակիցներից: Ինչպես երևում է հարցը լուրջ չէ, շարունակվում է ստուգումը: Բողոքիս հետևանք Նախիջևանի հյուպատոս Խաուս-բեյը, որ շատ վնասակար անձնավորություն է, հեռացվեց և նրա փոխարեն նշանակված է նորը»²:

Սակայն հետագա «ստուգումները» ցույց տվեցին, որ Պարսկաստանը ոչ միայն «այդպիսի քայլ արել է», այլև դեռ

1. Stu Papers Relating to the Foreign Relations of the United States, 1919. The Paris Peace Conference, Washington, 1942, vol. 1, p. 256-257
2. **И.А.Юс, пов.** Установление и развитие советско-иранских отношений (1917-1927), Ташкент, 1969, с. 55.

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, ք. 10:
2. Նույն տեղում:

շարունակում է հույսեր կապել Փարիզի խորհրդաժողովի հետ: Արդությանի հետ հաջորդ հանդիպումների ժամանակ, հավանաբար փաստերի ճնշման տակ, աստիճանաբար պարսից արտգործնախարարը տեղի է տալիս և ընդունում նման մտադրության առկայությունը: Մարտի 17-ին Երևան ուղարկած հեռագրում Արդությանն արդեն ասում է, թե «արտաքին գործոց մինիստրն ինձ ասաց, որ այդ խնդիրների լուծումը պատվիրակությունը (կառավարությունը - Է.Ջ.) թողնում է կոնֆերանսին, իսկ անգլիական դեսպանը ավելի բացորոշ ասաց, որ անկարելի է դաշնակիցները թույլ տան Պարսկաստանին Արաքսից այն կողմն անցնելու»¹: Այս վերջին նախադասությունից երևում է, որ անհանգստացած Արդությանը այդ հարցով դիմել էր նաև Թեհրանում անգլիական դեսպանին: Վերջինիս պատասխանը կարող էր ինչ-որ չափով հանգստացնել թե Արդությանին և թե Հայաստանի կառավարությանը, բայց ոչ Պարսկաստանին: Ուստի գործի են դրվում այլ միջոցներ ևս, մասնավորապես նախիջևանցիներին համոզելու և Պարսկաստանի կողմը գրավելու միջոցը: 1920թ. մարտի 4-ին Թավրիզից Երևան վարչապետ Խատիսյանին ուղարկած նամակում Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը գրում է. «Նախիջևանը Թավրիզին միացնելու հարցը սրությունից ընկավ, պարսկական ճանապարհով են կամենում խնդրին մոտենալ, նրանք մեզ առաջարկում են հաշտեցնել Նախիջևանը Հայաստանի հետ առանց կռվի ու արյունի: Մենք պատասխանեցինք, որ մենք իբրև պարսից հպատակ իրավունք չենք համարում խառնվել Հայաստանի գործերում, մենք կողմնակից լինելով հաշտության, կարող ենք ձեր ցանկության արտահայտիչը լինել Հայաստանի առաջ, որ Նախիջևանը ենթարկվի Հայաստանին, վեճ չանի, Հայաստանն էլ նրանց կարող է հարգել, նրանցից պաշտոնյաներ նշանակել թե Նախիջևանում, թե Օրդուբադում, թե Շարուրում: ...**Սրանց կողմից երկու մարդ նշանակվել են Մակու և Նախիջևան գնալու միացման գործը Թավրիզի հետ գլուխ բերելու համար, դեռ ձգձգվում է, մենք երբ հարցրինք այդ մասին,**

1. Նույն տեղում, գ. 543, ք. 20:

նրանք ուրացան, իսկույն տոնը փոխեցին, տեսնենք»¹ (ընդգծումը մերն է- Է.Ջ.):

Այսպիսին էր պարսից քաղաքականությունը Նախիջևանի հարցում: Այն այլ կերպ չենք կարող որակել, բացի երկդիմից: Հավակնելով Նախիջևանի վրա պարսից կառավարությունը, քաղաքական ու պետական գործիչները միաժամանակ չէին հանդգնում բացեիբաց հանդես գալ, գերադասում էին կեղծիքն ու գաղտնի գործունեությունը: Ի՞նչն էր պատճառը, արդյոք վախը իրանում տեր ու տնօրեն անգլիացիներից, թե՞ Հայաստանի հետ հարաբերությունները չփչացնելու ցանկությունը: Այդ հարցին դժվար է պատասխանել:

* * *

Պարտվելով առաջին աշխարհամարտում և Մուդրոսի զինադադարի համաձայն (1918թ. հոկտեմբերի 30) ստիպված լինելով թողնել Անդրկովկասի օկուպացված տարածքները, որոնց թվում նաև Շարուր-Նախիջևանը, Օսմանյան Թուրքիան չէր մոռացել «հոգալու» երկրամասի ապագայի մասին և հապճեպորեն կազմավորել էր այսպես կոչված Արազդայանի և Նախիջևանի հանրապետությունները, որոնք հետո միավորվեցին Արաքսյան անվանված հանրապետության մեջ²: Այս վերջինն իր կազմի մեջ էր համարում ոչ միայն Շարուր-Նախիջևանը, այլ նաև Վեբիդասարն ու Ջանգիբասարը, անգամ ամբողջ Սուրմալուի գավառը: Նպատակը պարզ էր, ինքնորոշման շղարշ տալով այս կազմավորմանը՝ խոչընդոտել պանթուրքիզմի պլանների տեսակետից խիստ կարևոր նշանակություն ունեցող այս տարածքների միացմանը Հայաստանի Հանրապետությանը և պահպանել հնարավորություն՝ ապագայում կրկին դրանց տիրանալու, կամ հակառակ դեպքում՝ Ադրբեջանին միացնելու համար: Լավ հասկանալով նաև այդ կազմավորումների ռազմական պաշտպանվածության անհրաժեշտությունը՝

1. Նույն տեղում, գ. 499, ք. 62:

2. Նման մի բան էլ ստեղծել էին Կարսի մարզում և անվանել Հարավ-արևմտյան հանրապետություն:

թուրքերը տարածաշրջանում թողել էին նաև մեծ քանակությամբ զենք, զինամթերք, մի խումբ սպաներ՝ Խալիլ-բեյի գլխավորությամբ, ավելի քան 300 փորձված, հմուտ զինվորներ, որոնք շարունակում էին կազմավորել ու մարզել դեռևս օգոստոսին զինակոչվածներին, կատարում նոր զորակոչ և այլն: Կազմավորված պետության տեսք տալու նպատակով ստեղծվել են նաև մեջլիս, կառավարություն, ոստիկանություն և գանձատուն:

Ինչպես արդեն նշել ենք, Արարատյան դաշտավայրից և Շարուր-Նախիջևանից օսմանյան զորքերի հեռանալուն զուգընթաց, հայկական զորքերն ու նրանց հետ նաև գաղթականները շարժվեցին դեպի Շարուր-Նախիջևան: Եվ, չնայած Վեդիբասարի ու Արազդայանի թրջության դիմադրությանը, արդեն դեկտեմբերի սկզբին հայկական զորամիավորումները հասել էին Արարատյան դաշտը Շարուրից բաժանող «Գայլի դրունք» կոչված վայրին: «Մեր զորքերը համարյա առանց արգելքի շարժվում են դեպի Շարուր, - կարդում ենք «Ջանգ» թերթում տպագրված հաղորդագրության մեջ: Ղանարլույում արդեն ստեղծված է իշխանություն և հետզհետե կարգը վերականգնվում է: Արարատ կայարանում տաճիկները թողել են երկու մեծ շոգեշարժ մեքենա և մի քանի վագոն: Վերանորոգվում է հեռագրաթելը և երկաթուղին: Քրդական խոշոր հրոսակախմբեր հավաքված են Արաքսի ափին և Ղավալուի մոտ: Նրանք դիմադրություն ցույց տվին մեր զորքին: Սկսվեց թնդանոթածություն: Մենք ունեցանք երեք վիրավորներ: Բոյուքվեդու շրջանի թուրքերը սկզբում մերժեցին զինաթափ լինել և փորձում էին դիմադրել, բայց հետո հանձնեցին իրենց զենքերը: Սաղարակը մեր ձեռքին է: Շարուրից լուրեր են հասել, որ թուրքերը պատրաստվում են լուրջ դիմադրության, տաճկական էմիսարները և բեյերը զրգռում են ժողովրդին հայերի դեմ»¹: Իսկ գեն.Սիլիկյանին և ներքին գործոց մինիստր Արամ Մանուկյանին ուղարկած հեռագրում Ղարալագյազի զորամասի հրամանատար Յապոնը գրում է. «Դեկտ.13-ին, թուրքերի կողմից ցույց տված համառ դիմադրությունից հետո գրավեցինք Ամաղու գյուղը: Վաղը

կշարժվենք դեպի Յայջի և Շարուր»¹: Դեկտեմբերի 29-ի համարում «Ջանգը» նորից անդրադառնում է Շարուր-Նախիջևանի շրջանում ծավալված մարտական գործողություններին և հայտնում, որ «Դեկտեմբեր 20-ին երկրորդ գնդի գումարտակը զինաթափ է արել Յայջի գյուղի բնակիչներին: Մինչ դեկտեմբեր 22-ը անձնատուր են եղել Շարուրի բնակիչները և կամավոր կերպով հանձնել իրենց զենքերը: Նախիջևանի և Շահթաթի բնակիչները, դժգոհ զինաթափությունից, վճռել են հարձակվել երրորդ գնդի վրա, բայց, կրակի հանդիպելով, ցրվել են լեռներում: Ժամը 2-ին խուզարկության ուղարկված մի վաշտ նկատեց թաթարների մի խումբ, որը պատրաստվում էր հարձակվել Բաշ-Նորաշենի վրա: Վաշտին օգնության ուղարկվեց մի գումարտակ՝ երկու վաշտով: Թաթարները բարձրացրին սպիտակ դրոշակ, բայց երբ վաշտը մտավ գյուղ, թաթարները բաց արին կրակ: Սպանված են վաշտի հրամանատարը ու շատ զինվորներ»: «Ջանգի» նույն համարում տպագրված է նաև Յապոնի հետևյալ հեռագիրը. «Դ. գնդից և Շարուրից եկած թուրքերը գրավել են Ուլիա-Նորաշենի և Յայջիի լեռները և ես ստիպված եմ ժամանակավորապես կանգնեցնել առաջ-խաղացունը: Թուրքերը որոշել են համառ դիմադրություն ցույց տալ: Անդրանիկի առաջխաղացման լուրը Սիսիանից Նախիջևան չի ճշտվում»²:

Ինչ խոսք, եթե Անդրանիկը իր զորամասով Սիսիանից շարժվեր դեպի Նախիջևան, ինչի հնարավորությունը նա ուներ Ջաբուղի ձորից վերադառնալուց հետո, ապա դրանով մեծապես կնպաստեր ոչ միայն երկրամասում Հայաստանի իշխանության հաստատմանը, այլև Մեղրիում կենտրոնացած գաղթականության առաջխաղացմանը դեպի հայրենի օջախ: Բայց անհասկանալի կերպով նա տեղից չշարժվեց և Նախիջևանի թուրքերը՝ Ջանգեզուրի կողմից վտանգ չտեսնելով, օգնության շտապեցին Շարուրի իրենց զինակիցներին: Սակայն ոչ այնքան թուրքերի դիմադրությունը, որքան հայ-վրացական պատերազմի (1918 թ. դեկտ. 13-31) ընթացքում ծագած դժվարությունները հարկադրեցին հայկական հրամանատարությանը զորքերի մի մասը շտապ փոխադրել Հայաստանի հյուսիսային շրջանները:

1. Տես՝ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1-2, էջ 75:

1. Նույն տեղում:

2. Նույն տեղում, էջ 77:

Տեղում մնացած փոքրաթիվ հայկական ուժերը պատահականություններից խուսափելու համար, հետ քաշվեցին մինչև Ղափալու: Դա բավական ծանր վիճակ ստեղծեց գաղթականության համար: Երևանից և նրա շրջակայքից տեղաշարժված գաղթականները (ավելի քան 5000 հոգի) ստիպված եղան կանգ առնել Ղանարլուում, Ղարալագյազում ապաստանածները մնանապես չկարողացան անցնել Նախիջևան, նույնը Ջանգեզուրում և այլ վայրերում:

1918թ. դեկտեմբերի 27-ին Մեղրու շրջանի լիազոր ներկայացուցիչները գեմ. Անդրանիկին ուղղված խնդրագրում ասում են. «Գողթանի և Նախիջևանի գաղթականությունը օրեցօր կենտրոնանում է Մեղրու շրջանում, որպեսզի Արաքսի ափով, որ միակ հարմար և մոտիկ ճանապարհն է, հայրենիք վերադառնա: Գողթանի հայ ազգաբնակչությունն՝ 6-7 հազար հոգի, տառապում է սովի ծիրաններում, և մահվան դեպքերը քանի գնում շատանում են: Գողթանի թուրք ազգաբնակչությունը, որի ձեռքին է այժմ հացը, հաց չի մատակարարում հայ ազգաբնակչությանը: Ղափանի և Մեղրու հայ ազգաբնակչությունը ճանապարհ չունի օգնություն հասցնելու սովում տառապող իր ազգակիցներին, որովհետև Օրդուբադի շրջանի թրքությունը փակել է և շարունակում է փակել Մեղրի - Օրդուբադյան, Օրդուբադ - Նախիջևանյան ճանապարհ (ներ)ը:» Հայտնելով վերոհիշյալի մասին, **խնդրում ենք Ձերդ գերագանցությանը միջնորդել, որ անկե անհապաղ բացվեն հիշյալ ճանապարհները:** Ջանգեզուրի ազգային խորհրդին ներկայացված է Գողթանի ազգային խորհրդի արձանագրության և դիմումի պատճեն, որպես ապացույց մեր գրածների»¹ (ընդգծումը մերն է. - Է.Զ.): Մնում է գուշակել, թե Անդրանիկը որտե՞ղ և ո՞ւմ առաջ պետք է միջնորդեր, որպեսզի Օրդուբադ-Նախիջևանի ճանապարհները բացվեր: Թե՞ մեղրեցիներն իրենց այդ առաջարկով Անդրանիկին անուղղակի կերպով փորձում էին հասկացնել, որ անհրաժեշտ է շարժվել դեպի Նախիջևան և սեփական ուժերով բացել այդ ճանապարհը ու դրանով իսկ փրկել գաղթականությանը սովամահությունից: Մենք հակված ենք այդ փաստաթղթի իմաստը հենց այդպես մեկնաբանելու, որովհետև եթե իսկապես միջնորդության հարց կար (ասենք դաշնակիցների առաջ), ապա

մեղրեցիները կդիմեին Հայաստանի կառավարությանը և ոչ Անդրանիկին:

«Ջանգ» թերթը 1918թ. դեկտեմբերի 5-ի համարում գրում է. «Սարդարապատի, Սուրմալուի, Շարուրի և Նախիջևանի շրջանում ապրող թուրքերը կազմել են «Արաքսի հանրապետություն» և հայտարարել են իրենց անկախ: Նրանք հայտնել են Հայաստանի կառավարությանը, թե իրենք թույլ կտան վերադառնալ հայ գաղթականներին, բայց պայմանով, որ լինեն անզեն և բնակվեն այն տեղերը, որ իրենց ցույց կտրվի: Տաճկահայ գաղթականներին և Հայաստանի զորքերին նրանք թույլ չեն տա մտնել «Արաքսի հանրապետության» սահմանները»: Թերթը նաև տեղեկացնում է, որ «Վերադարձող հայ գաղթականների նկատմամբ գործ են դրվում բռնություններ, եղել են հայ աղջիկների առևանգման և բռնաբարման դեպքեր» ու հետևություն անում, թե «անշուշտ Հայաստանի կառավարությունը չի հանդուրժի իր պետության սահմաններում այսպիսի ըմբոստացում կտրուկ միջոցներ ձեռք կառնի այդ գավառներում կարգ ու կանոն հաստատելու համար»: Բայց կտրուկ միջոցներ ձեռք առնելու համար զինվորական ուժ էր պետք, մինչդեռ զորքերը, ինչպես նշեցինք, փոխադրվել էին վրացական ճակատ: Եվ վրա հասած ծմեռվա պայմաններում գաղթականության վիճակը ավելի վատացավ, սովը և համաճարակային հիվանդությունները իրենց սև գործն էին անում: Ահա, օրինակ, ինչ է ասված 1919թ. հունվարի առաջին օրերին Ղանարլուից ստացված հաղորդագրություններում այնտեղ կենտրոնացած Նախիջևանցի գաղթականների դրության մասին. «սննդակայանները քիչ են, պետք է շատացնել ..., մահացությունը գնալով մեծանում է, օրական 70 հոգու է հասնում, ...օգնություն գոնե մեռելները թաղելու համար, որ այնքան շատ են ու թաղողներ էլ չկան և այդ բոլորը Նախիջևանցիներ են»: Այդ նույն փաստաթղթերում խոսվում է նաև այն մասին, որ տեղական թուրքերը, որոնք հայերի գաղթելուց հետո տիրացել էին նրանց գույքին, արտերին ու հունձին, հրաժարվում են որևէ բան վաճառել հայերին՝ անգամ երբ հայերը ավելի բարձր գին են առաջարկում վերջիններիս, սովամահ անելու նպատակով: Ասված է նաև, որ «նրանք՝ քրդերի

1. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1-2, էջ 76:

հետ միանալով, դեռ հարձակումներ էլ են անում գաղթականության վրա» և որ «թուրքերը անգլիական միսիային կտրուկ հայտնել են, որ հայերին չեն թույլ տա իրենց գյուղերը գալու» և այլն¹: Խնամատարության նախարարությունը բոլոր այս տեղեկությունների հիման վրա կազմած զեկուցագիրը ներկայացնելով կառավարության ուշադրությանը, միաժամանակ անում է հետևյալ առաջարկությունները. «Փրկության միակ միջոցն է, որ մեր կառավարությունը կտրուկ միջոցներ ձեռք առնի ստեղծած ծանր դրությունը բարվոքելու, իսկ միջոցներից գլխավորներն են, **նախ՝ մեր օրինավոր պահանջը իրականացնել, այսինքն, գաղթականությունն իրենց հայրենիքն ուղարկել և դրանով հաստատուն կյանք ստեղծել,** փոխանակ մշտափոփոխ գաղթականական ծփանքի. **երկրորդ, ինչ գնով էլ լինի, հարևանների ունեցած հացի առատ պաշարից, որ մեծ մասամբ հենց մեր ժողովրդի ցանածն ու հասցրածն է, գոնե մի քանի ամիս գոյություն պահպանելու չափով առնել և դրանով ապահովել նոցա ֆիզիկական գոյությունը և երրորդ՝ վերջնականապես թաթարական անարխիային վերջ տալ մեր երկրում, որը օսմանական կառավարության ստեղծածն է:** Դրանից հետո միանգամայն պետք է հավատալ, որ թաթար ժողովուրդը կսկսի մեր ժողովրդի նման խաղաղ աշխատանքի լծվել և արդար վաստակով ապրել»² (ընդգծումը մերն է - Է.Ջ.):

Հասկանալի է, որ այս առաջարկությունները կյանքում իրագործելու համար անհրաժեշտ քանակությամբ զինվորական ուժ էր պետք և, Հայաստանի կառավարությունը՝ հայ-վրացական պատերազմի ավարտից անմիջապես հետո, ցուցում է տալիս իր հրամանատարությանը զորքեր կենտրոնացնել Դավալուում: Սակայն Արաքսի հանրապետության ղեկավարությունը դիմում է դիվանագիտական խորամանկության: Սկսելով բանակցություններ՝ նրա ներկայացուցիչները հայտնում են իրենց հպատակությունը և համոզում Հայաստանի կառավարությանը զորքերը առաջ չչարժել, 8-10 օր ժամանակ տալ իրենց ժողովրդին համոզելու, որ դիմադրություն ցույց չտա և խաղաղորեն ընդունի հայկական վարչությունը: Հունվարի 13-ին գնդ. Դուլուխանյանը Դավալուից հեռագրում է, թե «փոխզնդա-

պետ Շահբաղովից ստացել են նամակ հետևյալ բովանդակությամբ. «Խնդրում են ձեզ հայտնել կառավարությանը, որ Սադարակի և Գայլի դրունքի մաքրման մասին բանակցությունները հաջողությամբ են ընթանում: Նախիջևանցիները և շարուրցիները համաձայն են Հայաստանի համար անհապաղ ուղարկել հաց, բրինձ և այդ շրջաններում եղած մանուֆակտուրան: Մանրամասն տեղեկություններ կհաղորդի Նախիջևանի հատուկ սուրհանդակը, որին սպասում են հունվարի 14-15-ին»¹: Նման հաղորդումները Հայաստանի կառավարությանը հավատ ներշնչեցին թուրք ներկայացուցիչների նկատմամբ և զորքերին հրամայվեց առաջ չչարժվել Դավալուից և սպասել նոր կարգադրությանը²: Կառավարությունը այնքան էր հավատացել ձեռք բերված համաձայնությանը, որ հունվարի 14-ի նիստում լսում է Նախիջևանում գեներալ-նահանգապետ նշանակելու հարցը և որոշում «նշանակել գեներալ) - մայոր Գրիգոր Հարությունի Շելկովնիկյանին Նախիջևանի գեներալ) - նահանգապետ 1919թ. հունվարի 14-ից»³: Մինչ հայոց կառավարությունը հանգիստ սպասում էր Շարուր-Նախիջևանցիների հրավերին, վերջիններս մի կողմից ամրապնդում էին իրենց պաշտպանությունը, իսկ մյուս կողմից գաղտնի բանակցություններ վարում Կովկասի բրիտանական հրամանատարության հետ՝ խնդրելով թույլ չտալ հայերի մուտքը երկրամաս: Հունվարի 8-ին գնդ. Դուլուխանյանը երևան դիվիզիայի հրամանատարին հեռագրում է, թե «Յապոնը հայտնում է, որ ըստ հետախուզական տվյալների Պարսկաստանից, Օրդուբադից, Նախիջևանից եկած թաթարական ուժերը կենտրոնանում են Շարուրում: Բացի այդ ուժերից, Շարուրում են գտնվում յոթ հարյուր թուրք ասկյարներ Խալիլ-բեյի և Յուսուֆ-բեյի հրամանատարության տակ»⁴: Ինչ վերաբերում է բրիտանական հրամանատարությանը, ապա նա չէր ուզում և չէր էլ կարող ճանաչել Արաքսյան հանրապետությանը՝ դա թուրքամետության բացահայտ դրսևորում կնշանակեր, բայց Լոռու չեզոք գոտու նման մի չեզոք գոտի ստեղծել այստեղ,

1. Տես ԳԳ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 212, թ. 90:
2. Նույն տեղում, թ. 91:

1. Նույն տեղում, գ. 212, թ. 14:
2. Տես նույն տեղում, գ. 193, 1-ին մաս, թ. 63:
3. «Բանքեր Հայաստանի արխիվների», 1993, թիվ 1-2, էջ 61:
4. ԳԳ ՊԿՊԱ, ֆ.200, ց. 1, գ. 212, թ. 13:

որտեղ տեր ու տնօրենը ինքը կլինի, ուզում էր և այդ առիթը բաց չթողեց: Շուտով տարածաշրջան եկավ անգլիական զինվորական մի պատվիրակություն՝ իբրև թե իրադրությանը տեղում ծանոթանալու համար, բայց տեղ հասնելուն պես պարզ դարձավ, որ նրա իրական նպատակը հայերի առաջխաղացումը կանգնեցնելն է:

1919 թ. նարտի 6-ին Փարիզ՝ Ավետիս Ահարոնյանին ուղարկած Ս.Տիգրանյանի մի նամակում այսպես են ներկայացված այդ իրադարձությունները. «Մեր զորամասերը առաջ էին ընթանում դեպի Շարուր, Նախիջևան, Ջուլֆա՝ օսմանեան զորքերի դատարկած այդ վայրերը գրավելու: Թուրքերը դիմադրում էին: Վօլչյի Վարօտայից (Երևանի և Շարուրի ուեզդների սահմանագիծ) մեր զորամասը ետ եկաւ մինչև Դաւալու (Յայ-վրացական պատերազմի ժամանակ), յետոյ պատրաստեց նորից առաջ գնալ: Եկան Շարուրի և Նախիջևանի թուրքերի ներկայացուցչները, մեր կառաւարութեան հետ բանակցեցին, համաձայնեցինք, թե **8-10 օր մեր զօրքը Դաւալուից առաջ չի շարժվի մինչև որ նրանք կերթան կպատրաստեն խաղաղ թուրք ժողովուրդը, թե հայոց զօրքը իրենց որևէ վնաս չի հասցնելու, և կգան ընդառաջ հայ զօրքին ու հայ ադմինիստրացիան խաղաղ և հաշտ ընդունելու: Բայց վրա հասաւ անգլիական կապիտան Լօտենը, անցավ Նախիջևան տեսնելու ինչ կայ, ինչ չկայ...** և իր զեկուցման հետևանքով նշանակւեց Նախիջևանի Բրիտանական զորական նահանգապետ և փոխ-գնդապետ, յետով եկաւ Երևան պահանջելու որ մեր զօրքերը յետ քաշենք նույնիսկ Դաւալուից հիւսիս ...»¹ (ընդգծումն մերն է - Է.Զ.):

Իսկ ահա ինչպես է ներկայացնում գործը Անդրկովկասում բրիտանական զորքերի ընդհանուր հրամանատար Ֆորեստյե Ուոքերը Յայաստանի Յանրապետության վարչապետին ուղարկած հունվարի 26-ի նամակում.

«1. Արտաքին գործերի մինիստրի անթվակիր հեռագիրը ստացւեց 21-ին (ամսիս), որով տեղեկացնում էր, որ Նախիջևանի գաւառը իրականապես գրաւած չլինելու, Ձեր կառաւարութիւնը պատասխանատու չի կարող լինել այդ շրջանում կատարւած

դեպքերին:

2. Ես, այդ պատճառով, հրամայեցի կապ. Լաութոնին բրիտանական զօրքերի պահակով (escorte) գնալ վայրը և տեղեկացնել ինձ գործի հանգամանքները:

Իր տեղեկագիրը բերում է նույն եզրակացութիւնը, ինչ որ յիշած է վերոգրեալ հեռագրի մեջ: Նա տեղեկացնում է, որ իր հասնելու ժամանակ կռիւը շարունակոււմ էր և որ նա կարգադրել է իր կողմից նախագծւած մի զինադադար երկու կողմերի զօրախմբերի միջև:

3. **Սույն զինադադարի պատճենն կցոււմ է ի տեղեկութիւն Ձեզ: Այդ զինադադարը որոշում է ընդհանուր կերպով սահմանագիծը երկու կողմերի զօրախմբերի միջև:**

4. Նկատի ունենալով այս փաստը (fact) և հիմնելով այն իրաւասութեան վրայ, որ ինձ տրւած է Բրիտանական գլխավոր հրամանատարի կողմից իբր Դաշնակից պետութիւնների ներկայացուցիչ, Անդրկովկասում կարգն ու օրենքը պահպանելու համար, ես **տեղեկացնում եմ ֆորմալ կերպով Յայկ. Յանրապետութեան կառավարութեանը, որ մտադիր եմ վերցնել կառավարութիւնն այն երկրամասին, որ ինկած է յիշեալ գծի հարավային կողմը և թիրքական սահմանի հիւսիսում**, մինչև որ խաղաղութեան կոնֆերանսը կորոշի նրա ապագան:

5. Խնդրոյ առարկայ եղող գաւառը պետք է կառավարւե իմ (հսկողութեան) տակ կապ. Լաութոնի կողմից գնդապետ-լեյտենանտի աստիճանով, որին աջակցելու է իր կողմից ընտրւած վարչական կազմը:

6. **Չինտրական նահանգի (governership) ծշգրիտ սահմանները պիտի որոշվի լեյտ. գնդապետ Լաութոնի կողմից գլխաւորապես նկատի ունենալով այն գաւառները ուր մուսուլման և ոչ - հայ բնակչութիւնը կազմում է մեծամասնութիւն:** Սույն սահմանները պարտաւորիչ չեն, այլ գծվում են ժամանակավորապես 3-րդ պարագրաֆի մեջ յիշած զինադադարի տրամադրութեանց համաձայն: Սահմանների մանրամասնութիւնները պետք է հաղորդւի գնդ. լեյտ. Լաութոնի կողմից հայկական կառաւարութեան և պետք է ենթարկւի իմ որոշման, լսելէ յետոյ այն առարկութիւնները, որ Ձեր

1. ԳՅ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, 1-ին մաս, ք. 63: Տես նաև Ս.Վրացյան, Յայաստանի Յանրապետութիւնը, էջ 258:

կառավարութիւնը կարող է անել:

7. Շուտով կուղարկեմ Նախիջևանի գաւառի բրիտանական զինուոր-կառավարչին, բրիտանական զորամասերից մի վաշտ և ես կարծում եմ, որ այդ ուժը առայժմ բավական կլինի կարգը պահպանելու համար:

8. Սույն քայլը, որի անհրաժեշտութեան, ես հաւատացած եմ որ ինձ հետ Յայկ. կառավարութիւնն էլ համաձայն կլինի, ինչպէս ասացի, պարզապէս մի ժամանակաւոր կարգադրութիւն է և չի կարող անվաւեր դարձնել այն պահանջին (claim), որ Յայկ. կառավարութիւնը արել է և կամ կարող է անել խաղաղութեան կոնֆերանսին սույն գաւառը հանրապետութեան սահմանների մէջ պահելու համար:

9. Ինձ յայտնի է, որ ես կարող եմ վստահութեամբ հաւատալ, որ Յայկ. կառավարութիւնը իր տրամադրելի բոլոր ոյժով կաջակցի ինձ պահպանելու կարգը սույն ժամանակաւոր զինուորական նահանգի սահմաններում»¹ (ընդգծումը մերն է - է. Ձ.):

Ոչ մի հիմք չկա կասկածելու ազգամիջյան ընդհարումներից վերջ տալու բրիտանական զորահրամանատարի բարի ցանկությանը: Համենայն դեպս նրա նամակը այդ է վկայում: Բայց նաև կյանքում հաճախ է պատահում, որ բարի նպատակով միջնորդությունը վեր է ածվում իր հակադրությանը, կրքերը հանդարտեցնելու փոխարեն, ավելի է այն բորբոքում: Այդպէս եղավ և այս անգամ, քանի որ Նախիջևան ժամանած անգլիական միսսիան ոչ թե հնազանդության քարոզ էր անում ճանաչելու Յայաստանի իշխանությունը և հաստատելու խաղաղություն, այլ խոստանում էր անգլիական վերահսկողությամբ առանձին գեներալ-նահանգապետություն ստեղծել, ինչը ավելի էր նպաստում անջատողական տրամադրությունների: Այդ է պատճառը, որ անգլիական միսսիայի տարածաշրջան ժամանելուց հետո իսլամի հետևորդները ավելի հանդուգն ու սանձարձակ կեցվածք ընդունեցին, նորից սկսեցին գեներ ճոճել ու հարձակումներ գործել հայկական գյուղերի և զորամասերի վրա: Միաժամանակ, ձգտելով ստեղծվելիք նահանգի համար ավելի լայն սահմաններ ապահովել, հունվարի 27-ին ապստամբություն բարձրացրին հայկական զորքերի կողմից վերահսկվող Վերիբասարի և Դավալուի շրջաններում: Բայց, մինչև դրան անցնելը, նախ ասենք, որ կապիտան Լաութոնի

գլխավորած միսսիան, հունվարի 19-ին անցնելով դեպի Նախիջևան, և Երևանում հանդիպելով Յայաստանի կառավարությանը, այնուհետև կապ չէր պահպանել ու համագործակցել նրա հետ այդ խիստ կարևոր գործի հաջողությունն ապահովելու համար: Նրա վարքագիծը ինչ որ չափով նաև արհամարհանքի դրսևորում էր Յայաստանի կառավարության հանդեպ, որպիսի հանգամանքը, ինչ խոսք, խրախուսում էր մահմեդականներին: Դա նաև գաղութարարներին բնորոշ գիծ է. պարտադրվում են զինադադարի պայմաններ, անջատվում ամբողջ գավառներ, գծվում սահմաններ՝ առանց սակայն Յայաստանի կառավարության կարծիքը հաշվի առնելու: Բրիտանական իշխանություններն իրենց իրավունք են վերապահում Յայաստանից անջատել բոլոր «այն գավառները, ուր մուսուլման և ոչ- հայ բնակչությունը կազմում է մեծամասնություն» և միայն «ֆորմալ կերպով տեղեկացնել Յայկ. հանրապետութեան կառավարութեանը» այդ մասին: Բայց նույն կերպ չէին վարվում ոչ Վրաստանի և ոչ, առավել ևս, Ադրբեջանի հետ: Ամբողջովին հայաբնակ Ախալքալաքը այդ նույն հունվար ամսին դրվեց Վրաստանի գերիշխանության տակ՝ հաշվի չառնելով ժողովրդի կամքը, իսկ Լոռին չհանձնվեց Յայաստանին: Վրաստանից չանջատվեցին ոչ վրացական բնակչությամբ մյուս տարածքները ևս: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա նրան ավելի էին սիրաշահում ոչ միայն Շարուր-Նախիջևանի հարցում, այլև Լեռնային Ղարաբաղի և Չանգեզուրի, որի հայ ազգաբնակչությանը այդ նույն օրերին հրամայում էին ենթարկվել Ադրբեջանի գերիշխանությանը և արյունարբու խոսրով-բեկ Սուլթանովին նշանակում նահանգապետ: Ստացվում է, որ հայերի վրա մահմեդական նահանգապետ նշանակել կարելի էր, իսկ մահմեդականների վրա հայ նահանգապետ՝ ոչ: Այս էր բրիտանական իշխանությունների մտայնությունը:

Բնական էր, որ Յայաստանի կառավարությունը բողոքեր ու բողոքում է, որն իր արտահայտությունն էր գտել արտգործմինիստր Սիրեկան Տիգրանյանի՝ Անդրկովկասում բրիտանական զորքերի ընդհանուր հրամանատարին ուղարկած հունվարի 23-ի նամակում: Նախիջևանի հարցում Յայաստանի կառավարությանը չեզոքացնելու, միակողմանի զինադադարի պայմանների մշակման և մի շարք այլ խնդիրների կապակցությամբ Տիգրան-

1. Նույն տեղում, գ. 209, ք. 24-25:

յանի առաջ քաշած հարցերին Ֆորեստյե Ուոթերը պատասխանում է հունվարի 29-ին զինվորականներին բնորոշ ոճով, կետ առ կետ հարցադրումներով .

«1. Ստացել եմ Ձեր հուն. 23 թևակիր N 103 գրութիւնը: Այդ նամակին մասամբ պատասխանած է իմ 27. 1-ին (պետք է լինի 26. 1-ին -է. Ձ.) N 127/3 Հայկ. հանրապ. վարչապետին ուղղված գրութեամբ:

2. Ինչպես երևում է սակայն, ինչ որ թիրիմացութիւն է պատահել կապ. Լաուրոնի Նախիջևանում կատարած գործերի առթիւ:

Ի ներքոյ տալիս եմ իմ կողմից կապ. Լաուրոնին տւած հրահանգների մանրամասնութիւնները՝ գործին լուսաբանութեանը օգնելու համար:

3. Կապ. Լաուրոնի Նախիջևան ուղարկելու իմ նպատակն այն էր, որ նա ճշտեր այդտեղի դրութիւնը, վերադառնար որքան կարելի է շուտ Թիֆլիս և զեկուցաներ ինձ: Նրան, սակայն, հրահանգւած էր, եթե պետք լինի իմ հեղինակութիւնը ի կետ արկանել առանց ինձանից խորհուրդ հարցնելու: Գործելով ըստ այս հրահանգների, **կապ. Լաուրոնի համար բացարձակապես անկարելի էր տեղեկացնել Հայկ. կառավարութեան երևանում յուն. 19-ին այն գործի (action), որ նա կարող էր անել Նախիջևան հասնելուն, որովհետև իրեն իսկ անհայտ էր այն գործը, որի կատարումն ինքն անհրաժեշտ պիտի գտներ:**

4. Նախիջևան հասնելուն կապ. Լաուրոնն տեսաւ, որ իրականապես պատերազմական դրութիւն ուներ Հայաստանի և Նախիջևանի մուսուլման բնակիչների միջև: Գործելով այն իրաւասութեամբ, որ ես իրեն տւել էի անմիջապես միջոցներ ձեռք առաւ և կայացրեց զինադադարի այն պայմանները, որի պատճենը Ձեր գերագանցութեանը ուղարկւած է: Բոլորովին հասկանալի է, որ **այդ զինադադարի պայմանները կայացնելիս կապ. Լաուրոնը չէ խորհրդակցել Հայկ. կառավարութեան հետ այն պատճառով, որ նա ինձանից հրաման ուներ միանգամայն վերջ տալ իր անձնական ազդեցութեամբ այն կռիւն, որ կարող էր տեղի ունեցած լինել:**

Ձեր գերագանցութիւնը կարող է հասկանալ, որ զինադադարի պայմանները նույն բնույթը չունեն ինչ որ հաշտութեան պայման-

ները և կարող է, ինչպես և հաճախ պատահել է, կնքվել երկու կողմի ստորագիր զինուորական հրամանատարների միջև:

5. Ցաւալի է, որ Լաուրոն Ֆարրիլը չէ կարողացել անձամբ տեղեկացնել Հայկ. կառավարութեան Նախիջևանի դրութեան մասին: Այդպիսի հրաման իրեն տրւած չէր, անտարակույս այն պատճառով, որ նախապես մանրամասն զեկուցում պրն. Սարգսեանի միջոցով Ձեր գերագանցութեանը տրւած կլիներ:

6. Վերջացնելով ուզում եմ վստահացնել Ձեր գերագանցութեանը, որ **կապ. Լաուրոնի Նախիջևանում կատարած գործը իմ կատարեալ հաւանութեամբ եղած է:** Սակայն և այնպես ցաւում եմ, որ այդ գործը կատարւած է եղել առանց Հայկ. կառավարութեան հետ նախապես խորհրդակցելու: Ձեր գերագանցութիւնը **կարող է, սակայն, հեշտութեամբ ըմբռնել այն դժվար հանգամանքները, որոնք այդ զանցառութիւնը հրամայողական դարձրին»**¹(ընդգծումը մերն է - է. Ձ.):

Ինչպես տեսնում ենք, Անդրկովկասում բրիտանական զորքերի ընդհանուր հրամանատարը անվերապահորեն արդարացնում է Լաուրոնի գործելակերպը և Հայաստանի կառավարությանն էլ հավատացնում, որ կատարվածը անհրաժեշտություն էր: Մինչդեռ իրականում Լաուրոնի գործունեությունը այնքան էր խրախուսել մահմեդական անջատողականներին, որ նրանք որոշեցին հայերին դուրս քշել նաև Դավալուի և Վերիբասարի շրջաններից և հունվարի 27-ին ընդհանուր ապստամբություն սկսեցին վերոհիշյալ շրջաններում: Այդ օրը՝ երեկոյան ժամը 7-ին, փոխգնդապետ Կարաքեշիշևը Դավալուից հեռագրում է դիվիզիայի հրամանատարին, որ «Շիրազլու, Օվչար, ճաթղառն, Կարալար, գյուղերի թաթարները օգնություն ստանալով Բեյուկվեդիից, Շիխլարից և Շիղուից, մոտ ժամը 16-ին հանկարծակի հարձակվեցին այդ պունկտերում գտնվող միլիցիայի և զորամասերի վրա: Այդ պունկտերի պարետների հաղորդմամբ, այդ գյուղերում մարտը ընդունելու անհնարինության և մութը վրա հասնելու պատճառով, մեր զորամասերը քաշվել են ծայրամասերը և ամրացել այդ տեղերում: Դրությունը վերականգնելու նպատակով այստեղից ուղարկել եմ օգնություն, իսկ Ղանարուից 2-րդ գնդի մի վաշտ: Խնդիր եմ դրել լուսաբացին վերականգնել դրությունը: ... Ընդհա-

1. Նույն տեղում, գ. 212, թ. 51-52:

նուր վիճակից ելնելով անհրաժեշտ են համարում զրահապատ գնացքի ուղարկելը»¹: Հայաստանի Հանրապետության ռազմական մինիստր գեմ. Հախվերդյանը՝ արտգործմինիստր Ս.Տիգրանյանին ուղարկած մարտի 16-ի գրության մեջ անդրադառնալով հունվարի 27-ին Դավալուի շրջանում ծագած ընդհանուր ապստամբությանը², գրում է. «Հունվարի վերջին օրերին, թաթարները, որոնք մինչ այդ սահմանափակվում էին միայն հաց չվաճառելով հայերին, սկսեցին հայկական իշխանությունների նկատմամբ իրենց պահել բացահայտորեն գրգռիչ տոնով ու խիստ կասկածելի, ուղղակի հայտարարելով Հայաստանի Հանրապետությանը չենթարկվելու իրենց ցանկության մասին: Նրանց գյուղերում հայտնվեցին քրդեր և թուրքերի նահանջից հետո մնացած ասկյարներ: Գիշերները ինչ-որ ժողովներ էին տեղի ունենում, ըստ որում տղամարդիկ, հաճախ զինված, ամբողջ խմբերով հայտնվում էին տների կտուրներին: Եվ որպես նկարագրված դրության բնական շարունակություն, թաթարների տրամադրվածությունն ավարտվեց մի քանի ծիավոր սասունցիների սպանությամբ և այնուհետև Դավալուի շրջանի բոլոր գյուղերում միաժամանակյա հանկարծակի զինված հարձակումով հայկական զորամասերի վրա»: Այնուհետև մշելով, որ այդ նախապես ծրագրված ու պլանավորված մի շարժում էր, ինչի մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ նախապես կանանց, երեխաներին և գույքը փոխադրել էին Արաքսի աջ ափը և որ ապստամբությունը բոլոր գյուղերում սկսվել է նույն օրը, նույն ժամին (հունվարի 27-ին ժամը 16-ին), գեմ. Հախվերդյանը շարունակում է. «Երբ հունվարի 30-ին երեկոյան կողմ Նախիջևանից եկավ դաշնակից տերությունների ներկայացուցիչ փոխգնդապետ Լաուբենը և ռազմական գործողությունները մեր կողմից ամբողջովին դադարեցվեցին, թաթարները բոլորովին չմտածելով անել նույնը, դիմեցին ոչ միայն մասնակի ելույթների և հարձակումների, այլ նույնիսկ փետրվարի 1-ին Ենգիջա գյուղի կողմից հարձակում սկսելով մեր Ղամարլուի ջոկատի վրա, փորձեցին շրջանցել նրան թևից և թիկունք անց-

1. Նույն տեղում, ք. 36:

2. Ապստամբության ծագման բոլոր հանգամանքները պարզելու նպատակով գեմ. Հախվերդյանը գործուղել էր գեմ. Բեյ-Մամիկոնյանին, սակայն թուրքերը հրաժարվել էին որևէ բացատրություն տալ և վերջինս ստիպված եղավ բավարարվել միմիայն հայերի տված վկայություններով:

նել, որի համար էլ մենք հարկադրված եղանք՝ հնարավոր անակնկալները կանխելու համար, ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները»¹:

Երբ ռազմական մինիստրը խոսում է հունվարի 27-ի ապստամբության հանկարծակիության մասին, ապա մեզ թվում է, թե դա ինքնաարդարացման համար է արվում այն պարզ պատճառով, որ շրջանում տիրող իրադրության մասին ինֆորմացիա երևանը միշտ էլ ստանում էր: Ահա, օրինակ, ինչ է ասված Սասունի գնդի հրամանատար Կարապետ Մանուկյանի՝ ապստամբության նախօրեին «Երևան, ռազմական և ներքին գործերի մինիստրներին, գեներալներ Սիլիկովին, Փիրումովին և Դրոին» ուղարկած գեկուցագրում. «Կրկին հարկադրված ենք գեկուցել Ձեզ իրերի դրության մասին: Մեր ուժերի փոքր մասը ներկայումս դիրքեր ունի բռնած Ջինջիրլու, Կաղըլու, Կարախաչ և Շահաբլու գյուղերի մոտ, իսկ մեծ մասը գտնվում է Ձխնիի կիրճում: Հարձակումներ մեզ վրա լինում են համարյա ամեն օր: Օրինակ, այս հունվարի 20-ին, երեկոյան մոտ ժամը 9-ին, թուրք ասկյարների, քրդերի և տեղական թաթարների զգալի ուժեր հարձակում գործեցին Չիմանքենդի կողմից: Մենք կորցրեցինք սպանվածներ 10 մարդ և վիրավոր 12 մարդ: Հարձակումը հետ շարտվեց և մենք քշեցինք նրանց մինչև Չիմանքենդ գյուղը, բայց Ձեր տված հրահանգների համաձայն՝ չմտնելով գյուղ ետ վերադարձանք: Մեր հետախույզների տեղեկություններով Սադարակ գյուղում թաթարական մեծ թվով ուժեր կան: Նրանց հետախույզները երևացել են Քյարքիում: Մեր վերջին խոսքն է. եթե Ձեր կողմից շտապ կարգադրություն չլինի, ապա մենք հարկադրված կլինենք թողնել Ջինջիրլու, Կաղըլու, Կարախաչ և Շահաբլու գյուղերի մեր դիրքերը և հետ քաշվել դեպի Ձխնիի կիրճը: Վերոհիշյալ չորս գյուղերում ապրում են մոտ 4000 բնակիչներ, որոնք, մեր հեռանալուց հետո, բնականաբար այնտեղ մնալ չեն կարող և բացի այդ, պետք է ենթադրել, որ մեր հեռանալով վտանգի է ենթարկվում նաև Դավալու գյուղը: Ձեկուցելով այս մասին, խնդրում ենք շտապ կարգադրություն, հակառակ դեպքում մենք հարկադրված ենք թողնել այդ դիրքերը և վայր դնել մեզանից հնարավոր հետևանքների համար պատաս-

1. Տես՝ ԳՅ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1. գ. 209, ք. 88-89:

խանատվությունը»¹:

Նման փաստաթղթերը արխիվում եզակի չեն և վկայում են, որ ապստամբության նախօրյակին իրադրությունը բավականին շիկացած էր և հայկական ուժերը պետք է մարտական դրության մեջ լինեին: Բարեբախտաբար պահպանվել են նաև ապստամբության ընթացքի և ռազմական գործողությունների մասին երկու համառոտ ամփոփագրեր, որոնք և ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը: Դրանցից առաջինը վերաբերում է հունվարի 28-ի դեպքերին, նրանում ասված է. «Հունվարի 28-ին թաթարները կենտրոնացան Խալիսա գյուղում, դիրքեր գրավեցին և կրակ բացեցին մեր զորքերի վրա: Թշնամական գործողություններին վերջ տալու առաջարկը թաթարները մերժեցին: Բեյուք - Վեդի գյուղի կողմից թաթարական զինված ավազակախմբերը գրավեցին նշված գյուղից հարավ գտնվող սարալանջերը և հրացանածոթյուն սկսեցին մեր զորամասերի հետ: Նույն օրը, Շիրազլու, Ավշար, Ճաթղոան, Կարալար, ինչպես նաև Բեյուք-Վեդի, Շիմխոր և Շիդլու գյուղերից թաթարական զինված ավազակախմբերի հարձակման հետևանքով, որով սպառնալիք էր առաջանում Ղավալուի մեր ջոկատի թիկունքի համար, ռազմական միմիստրը Հայկական դիվիզիայի պետին հրամայեց մաքրել նշված գյուղերը զինված ավազակախմբերից և գրավել դրանք մեր զորամասերով: Այդ հրամանի մասին հայտնվեց արտաքին գործերի միմիստրին, որպեսզի տեղեկացվի Կովկասում Բրիտանական հրամանատարությանը: ... Հունվարի 28-ի առավոտյան կռիվ էր գնում Կարալար գյուղի մոտ: Մեր կորուստները կազմում են 5 սպանված և 3 վիրավոր: Առաջ շարժվել հնարավոր չէ, քանի որ թաթարները օգնություն ստացան: Կարալարի պահակակետ եկած փոխգնդապետ Ալեքսանյանցի լրացուցիչ տեղեկություններով, գյուղ մտած գումարտակը թողել է այն: Վիրավորվել է կապիտան Իոանիսյանցը: Մեր զորամասերը կանգնեցվել են Յուվա գյուղից մեկ վերստ առաջ գտնվող դիրքերում: Հայկական 3-րդ գնդի հրամանատարի լրացուցիչ տեղեկություններով մեր զորքերը վերցրել են Խալիսա գյուղը: Թաթարները փախել են դեպի Շիդլու գյուղը և Արաքս հետապնդվելով հրետանային և հրացանային կրակով: Շրջանը թաթարական հրոսակախմբերից մաքրել ա-

1. Նույն տեղում, գ. 212, ք. 33:

ռայժմ հնարավոր չէ՝ մեր այնտեղ գտնվող զորամասերի փոքրաթիվության և ռազմաճակատի մեծության պատճառով»¹:

Մյուս համառոտ ամփոփագիրը վերաբերում է հայկական զորքերի՝ հունվարի 29-30-ի գործողություններին: «Հունվարի 29-ին մեր կորուստները կազմել են 4 զինվոր սպանված և 8 վիրավոր, - ասված է նրանում: Հունվարի 29-ին ժամը 8-ի մոտ Կարալար գյուղը գրավվեց մեր միլիցիոներների կողմից, բայց կայազորի փոքրաթիվ լինելու պատճառով հարկադրված էին հետ քաշվել: Ժամը 15-ին գրահագնացքի ժամանելուց հետո, Կարալարը վերջնականորեն անցավ մեր ձեռքը: Լրացուցիչ տեղեկություններով հունվարի 28-ին Խալիսայից և Շիդլուից փախած թաթարները անցել են Արաքսի մյուս ափը և անցնելու ժամանակ ենթարկվել են քրդերի դիմահար կրակին: Նկատվել է թաթարների մասսայական շարժում դեպի Սադարակ Արաքսի այց ափով:

Հունվարի 30-ին կռիվը ընթանում էր Կարաբաղլարի շրջանում: Հարձակվում են սասունցիները, Կաֆիևի մարդիկ դարաբաղցիների հետ և երկու թնդանոթով հարձակվում են Ենգիջայի վրա: Ճանապարհը դեպի Ղավալու բացված է: 3-րդ զուգնը առաջավոր մասերով առաջ է քաշված դեպի Ենգիջա գյուղը: Մեր հրետանին հրետակոծում է Թոթանը՝ Բեյուք-Վեդիի մոտ: Շիխլարից և Կարալարից դուրս քշված թաթարները ամրանում են գերեզմանոցում: Թաթարների մեծ կուտակումներ են նկատվել Բեյուք-Վեդի-Ենգիջա-Թոթանի շրջանում և Բոզ-Բուրունի արևելյան լանջին: Մեր զրահագնացքը զբաղված է երկաթգծի նորոգումով Կարալարի մոտ, որտեղ թաթարների կողմից երեք կամուրջ է հրդեհվել»²:

Ինչպես արդեն նշել ենք, հունվարի 30-ին երեկոյան, երբ Լաութոնը ժամանեց Ղավալու, հայկական ուժերը հրաման ստացան դադարեցնել ռազմական գործողությունները: Փոխգնդապետ Շենուրի մի զեկուցագրից տեղեկանում ենք, որ 31-ի առավոտյան մեր զորամասերը տեղաբաշխված են եղել հետևյալ կերպ. այց թևում՝ Քյուչուկ-Վեդիում, միլիցիայի պահեստային վաշտն է, կենտրոնում՝ խճուղու վրա, Յուվայի մոտ, պահեստային վաշտը 2 թնդանոթով և Մարտիրոսի հեծյալ հարյուրակը, երկաթգծի վրա, Յուվայից երկու վերստ հարավ, Ենգիջայի դեմ՝ փոխգնդապետ

1. Նույն տեղում, ք. 42:
2. Նույն տեղում, ք. 44:

Կաֆիւնը դարաբաղցիների գումարտակով, Բոզ-Բուրունի վրա փոխգնդապետ Ալեքսանյանցը Ղամարլուի վաշտով, Կարալարում և Շիզնուզում Նախիջևանի միլիցիան (պորուչիկ Նօդէհ) և մի հեծյալ հարյուրակ¹: Այդ նույն զեկուցագրում նաև ասված է, որ հունվարի 31-ի առավոտյան «գեներալ Փիրումովը մեկնեց Դավալու՝ Անգլիական միսիայի հետ բանակեցելու: Այդ նույն ժամանակ, առավոտյան ժամը 9-ին մոտ, թաթարները հարձակվեցին Խալիսայի վրա: Անգլիական միսսիան տեղեկանալով, որ Խալիսան թաթարական է, առաջարկեց հայկական զորքերը հեռացնել այնտեղից, բայց գեներալ Փիրումովը հայտարարեց, որ դա հնարավոր չի համարում, ուժեղացրեց Խալիսան 1-ին գնդի մեկ վաշտով, որից հետո թաթարները ետ շարվեցին: Անգլիական պատվիրակությունը հայտարարեց (և ցույց տվեց փաստաթղթեր), որ դաշնակիցները անգլիացիներին հանձնարարել են Կովկասում խաղաղություն հաստատել, որի իրագործման համար Կովկասում անգլիական զորքերի գլխավոր հրամանատարը հանձնարարել է փոխգնդ. Լաուրենին **ստեղծել գեներալ-նահանգապետություն այն շրջաններում, որոնք զբաղեցված չեն հայկական բնակչությամբ, հենց այնտեղ, որտեղ գտնվում են հայերին թշնամի մուսուլմաններ և ուրիշ ժողովուրդներ**: Փոխգնդապետ Լաուրենը առաջարկեց զորքերը տանել Դավալուից հյուսիս Յուվա: Դրան գեներալ Փիրումովը նմանապես պատասխանեց, որ առանց իր կառավարության կարգադրության այդ անել չի կարող, քանի որ Դավալուի բնակչությունը կմորթվի թաթարների կողմից: **Այդժամ փոխգնդ. Լաուրենը առաջարկեց Դավալուից հայկական բնակչությունը գաղթեցնել դեպի հյուսիս**: Եվ դրան էլ գեներալ Փիրումովը պատասխանեց, որ նման կարգադրությունները, որոնք հանգեցնում են բնակչության քայքայմանը և ունեն պետական նշանակություն, կարող են կատարվել միմիայն Հայաստանի կառավարության կարգադրությամբ: 31-ի երեկոյան գեներալ Փիրումովը ջոկատի հրամանատարությունը հանձնելով գնդապետ Կարաքեչիշևին, անգլիական միսսիայի հետ մեկտեղ ճանապարհվեց Երևան»² (ընդգծումը մերն է - Է. Ձ.):

Ահա այսպես. բրիտանական հրամանատարությունը ոչ միայն

1. Տես նույն տեղում, գ. 209, թ. 33:

2. Նույն տեղում:

բոլոր ոչ հայկական բնակչությամբ շրջաններում գեներալ-նահանգապետություն է ստեղծում, այլև փորձում է Դավալուից հայ ազգաբնակչությանը գաղթեցնել և դրանով իսկ ստեղծվելիք նահանգապետության սահմաններն ընդարձակել, միատարր մուսուլմանական բնակչությամբ տարածք ստեղծել: Սակայն անհաջողության մատնվելով գեներալ Փիրումովի հետ բանակցություններում, շտապում է Երևան կարծելով, թե կառավարությանը ավելի հեշտ կհամոզի: Համաձայնել դրան կառավարությունը չէր կարող, քանի որ դա կհանգեցներ այդ ընդարձակ շրջանի (Դամարլուից մինչև Գայլի դուրը) փաստական անջատման համար նախադրյալներ ստեղծելուն: Ուստի կառավարությունը՝ երկար վիճաբանություններից հետո համաձայնելով իր զորքերի դուրս բերմանը այդ տարածքից, միաժամանակ պահանջում է, որ նախ անգլիացիները ապահովեն հայ ազգաբնակչության անվտանգությունը և հետո, շրջանի համար ստեղծվելիք քաղաքական վարչությունը լինի հայկական: Իսկ Լաուրենի կողմից ներկայացված առաջարկությունների փաթեթն այսպիսին էր.

«Առաջիկայում, մինչև հայ-մուսուլմանական հարաբերությունների և այդ ազգությունների կողմից զբաղեցված տարածքների սահմանների մասին հարցերի վերջնական լուծումը, կապիտան Լաուրենից¹ և պորուչիկ Ֆարենից կազմված անգլիական միսսիայի կողմից առաջարկվում են հետևյալ պայմանները .

1. Երկու կողմերի զորքերը՝ բնավ առաջ չչարժվելով, պետք է կանգնեն այնտեղ, որտեղ կանգնած են այժմ, այսինքն, մուսուլմանական զորամասերը պետք է կանգնեն Արազդայան կայարանում և Սադարակում, իսկ հայկական մասերը՝ Արաքսի ռազմաճակատում Յայջի գյուղում: Դարալազյազի ռազմաճակատում մուսուլմանները զբաղեցնում են Դանգիկ, Չիվա և Դարալազյազի Յայջի գյուղերը, իսկ հայերը՝ Արփա, Ամաղու և Խաչիկ գյուղերը:

2. Երևան-Ջուլֆա երկաթգիծը պետք է անհապաղ

1. Ա. Ահարոնյանին ուղարկած Ս.Տիգրանյանի նամակից երևում է, որ նշանակվելով Նախիջևանի գեներալ-նահանգապետ, կապիտան Լաուրենին շնորհվել է փոխգնդապետի աստիճան: Որոշ փաստաթղթերում նույնիսկ գնդապետ է անվանված, անգամ գեներալ: Շուրջանդական ծագումով այդ զինվորականի անունը ևս փաստաթղթերում միատեսակ չի հնչում. որոշ փաստաթղթերում նա Լաուրեն է, մյուսներում՝ Լաուրեն, անգամ՝ Լոթոն:

բացվի, ըստ որում շարժման և ճանապարհի անվտանգության պահպանումը ընկնում է այդ երկու ազգութունների վրա՝ յուրաքանչյուրի տարածքի սահմաններում:

3. Կողմերից յուրաքանչյուրի մուտքը մյուս կողմի տարածք պետք է միանգամայն ազատ լինի, ազատորեն պետք է իրականացվի նաև առևտուրը կողմերի միջև, ըստ որում բոլոր ապրանքները, որոնք առևտրի առարկա են կազմում, արտահանվում և ներմուծվում են այդ երկու ժողովուրդների տարածքում, պետք է ազատ լինեն մաքսային հարկերից:

4. Հեռագրագիծը պետք է վերականգնվի, ըստ որում գիծը մինչև Յայջի պետք է նորոգվի հայերի հաշվին, Արազդայան-Ջուլֆա գիծը ինչպես ռուսական, այնպես էլ հնդեվրոպական, անգլիական կառավարության հաշվին: Ծառայողները այդ վերջին սահմաններում Արազդայանի և Ջուլֆայի շրջաններում, նշանակվում են անգլիական կառավարության կողմից, ըստ որում ծառայության կրնդունվեն նաև տեղական մասնագետները՝ մուսուլմանները:

5. Արազդայան-Ջուլֆա երկաթգծի շահագործումը ժամանակավորապես անցնում է անգլիական կառավարությանը:

6. Այն տեղերում, որտեղ անհրաժեշտություն կառաջանա մուսուլմաններից ժամապահներ նշանակել, նրանց մեջ պետք է լինեն նաև անգլիական զինվորներ (Արազդայան-Ջուլֆա շրջանում):

7. Տաս հազար փութ ցորենը, որ նախատեսված էր Ամերիկյան միսսիայի համար Երևանում, պետք է հաճնվեն մոտակա ժամանակներում՝ փութը 50 ռուբլի Նիկոլաևյան փողերով և Արազդայան կայարանում փողը և պարկերը ք. էլդերոմ հասցնելուն պես:

8. Մուսուլման փախստականներին անհապաղ օգնություն ցույց տալու համար Նախիջևան քաղաքում պետք է ստեղծվի կոմիտե, որը պետք է մատակարար-

վի Ազգային խորհրդի կողմից»¹:

Փաստաթղթի վերջում կա նաև ծանոթագրություն, որտեղ ասված է, որ 5-րդ կետը հանված է:

Այս պայմանները չէին կարող չառաջացնել Հայաստանի կառավարության դժգոհությունը և վերջինս բուռն կերպով բողոքեց և պահանջեց փոփոխություններ կատարել նրանում: Սակայն շատ բան փոխել այդպես էլ չհաջողվեց: Ահա թե ինչ էլ ասել այդ մասին մինիստր-նախագահ Բ.Քաջազունին Հայաստանի խորհրդին տված զեկուցման մեջ. «Նախիջևանի անգլիական զինուորական նահանգապետը պահանջել էր, որ մեր զորքերը յետ քաշենք մինչև Իւվա: Գնդապետ Լաութենը այդ պահանջը դրել էր Արտաքին գործերի և Զինուորական մինիստրներից, որոնք մի շարք պատճառաբանություններ են բերել, որ իրենք չեն կարող այդ պայմանները ընդունել:

Ի վերջոյ նրանք պատասխանել էին գնդապետ Լաութենին, որ այդ հարցը կառաւարութեան գործն է:

Այդ հարցը տուեց կառաւարութեան խորհրդակցութեանը, որտեղ ներկայ էր նաև գնդապետ Լաութենը: Մտքերի երկար փոխանակութիւնից յետոյ գնդապետ Լաութենը յետ վերցրեց իր առաջարկը և նոր առաջարկ արեց, որը կառաւարութեան համար ընդունելի էր և որը երկու կողմից ստորագրեց: Ընդհանուր տեսակետները արգելք էին հանդիսանում յարմար բանակցութիւններին: Անգլիական կառավարութիւնը ուզում էր հիմնել Նախիջևանի համար մի ժամանակաւոր կարգ գնդապետ Լաութենի հրամանատարութեան ներքոյ: **Պայմանագրում սահմանները չէր որոշւած. արտոնութիւն էր տրւած գնդապետ Լաութենին այդ գեներալ-գուբերնատորստոյի սահմանների մեջ մտցնել այն բոլոր մուսուլման ազգաբնակչութիւնը, որ չի ենթարկուում հայկական կառաւարութեանը:** Այս տեսակետից գնդապետ Լաութենը **ամբողջ Վեդիբասարի շրջանը համարում էր իր գեներալ-գուբերնատորստոյի մեջ, ուրեմն և այդ տեղերից հայկական զորքերը պետք է յետ քաշւեին:**

Հայաստանի կառաւարութիւնը այդ պայմանների հետ հաշտվել չէր կարող, որովհետև փաստորեն վերոհիշյալ շրջաններում մեր ադմինիստրացիան է գործում և դա մեր տերիտորիան է:

Երկար վիճաբանութիւններից յետոյ Հայաստանի կառավա-

րությունը հաշտվեց այն դրության յետ, որ անգլիական զորքը կարող է լինել որոշ շրջաններում ժամանակավորապես կարգ հաստատելու համար, միաժամանակ և Հայաստանի կառավարությունը պնդում է, որ վերոհիշեալ շրջաններում հայկական զորքեր էլ պետք է լինեն ի նշան նրա, որ դրանք Հայաստանին են պատկանում: Եւ դա պետք է տարածի մինչև Գայլի դրունք: Այդ տեղերում Հայաստանի վարչութիւն պետք է լինի: Մինչև Շարուր երկաթուղային գիծը անցնում է մեր ձեռքը:

Գնդապետ Լաուբենը ասաց, որ ինքը կաջակցի գաղթականների վերադարձին Պարսկաստանից Նախիջևանի վրայով, ինչ վերաբերում է հացի ներմուծմանը, նա խոստացաւ, որ 10.000 փութ հացը կուղարկի և հաղորդակցութիւնը կվերականգնի»¹ (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Նույն, բայց ավելի ընդգծված շեշտադրումով է ներկայացված հունվարի 21-ին կայացած համաձայնությունը Փարիզ ուղարկած մարտի 6-ի վերը նշած նամակում. «Ոչ առանց դժարութեան համաձայնութեան եկանք երիտասարդ փոխգնդապետի հետ, որ մինչև Վոլչի-Վարոտան մնա մեր ադմինիստրացիան, բայց մեր զորքը յետ կբերենք այդ շրջանից, թողնելով մի փոքրիկ խումբ (50 հոգի) Դավալուում: Բրիտանական մի զորամաս կլինի այդ տեղ, որը կպաշտպանե կարգը և խաղաղութիւնը: Ուրեմն Շարուրն ու Նախիջևանն էլ մեր ձեռքից գնաց (թող ժամանակաւորապես), դառավ Բրիտանական Զօրական նահանգապետութիւն (Կարսի օրինակով) և **մենք պարտաւորեցինք նույնիսկ դրան սահմանակից մեր տերիտորիայում (Վեդիբասար) զօրք չպահել**»² (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Ընդգծելով այս վերջին տողերը, ուզում ենք ընթերցողի ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, թե անգլիական հրամանատարությունն ինչպես էր հոգում Շարուր-Նախիջևանի մասին նրա սահմանի վրա բավականաչափ ընդարձակ ապառազմակա-նացված գոտի ստեղծելով: Դրանով իսկ նա ոչ միայն թուլացնում ու զրոյի էր հասցնում Հայաստանի ազդեցությունը այդ տարածաշրջանի վրա, այլև Վեդիբասարի ենթակայությունը Հայաստանին դարձնում էր խիստ ձևական, քանի որ առանց զինվորական

ուժի առկայության մուսուլմանական ազգաբնակչությանը հնազանդ պահել հնարավոր չէր, և չեղավ էլ ինչպես հետագա դեպքերը ցույց տվեցին: Հայաստանի կառավարությունը չէր կարող անտարբեր անցնել այս հարցի կողքով և հունվարի 30-ին մի հատուկ նիստում քննել էր ստեղծված իրավիճակի հարցը և կայացրել այսպիսի որոշում .

«2. **Լսեցին** - Ձինվորական մինիստրի գեկուցումը **Ղամարլուի և Դավալուի շրջանում թուրքերի զինված** հարձակումների մասին և ներքին գործոց մինիստրի գեկուցումը թուրքական այն ընդհանուր շարժման մասին, որ նկատվում է ոչ միայն մեր հանրապատության սահմաններում, այլ նաև Վրաստանի:

2. **Որոշեցին** . -

ա). Հանձնարարել արտաքին գործերի մինիստրին, որ մեր սահմաններում թուրքերի շարժման և մեր զորքերի վրա նոցա հարձակումների մասին տեղեկացնել Անգլիական գլխավոր հրամանատարությանը Անդրկովկասում և խնդրել մի անգլիական սպա ուղարկել մեր զինվորական մինիստրության մոտ իբր ներկայացուցիչ անգլիական զորահրամանատարության:

բ). Ձեռք առնել հարկավոր միջոցներ մեր սահմանների պահպանության համար, առաջին հերթին զորահավաք անել Էջմիածնի, Երևանի և Ղազախի գավառներում 25-30 տարեկանների, որի համար հանձնարարել Ձինվորական մինիստրին կազմել շտապով մի օրինագիծ Հայաստանի խորհրդի հաստատությանը ներկայացնելու համար:

գ). Սուրմալուի գավառում և Դավալուի շրջանում խմբերը առժամանակ պահել, մինչև որ հարկավոր կլինի այդ տեղերում զորամասեր ուղարկել»¹:

Այս միջոցները սակայն բավարար չէին Դավալուի ու Վեդիբասարի շրջանի թուրքերին զսպելու և Հայաստանի իշխանությունը ճանաչել տալու համար, քանի որ այդ շրջաններում զօրք պահելու իրավունք նա չուներ: Դա պետք է աներ բրիտանական հրամանատարությունը, որը Հայաստանի կառավարության հետ կայացրած համաձայնությամբ դիմել էր Վեդիբասարի և Դավալուի ազգաբնակչությանը հետևյալ հայտարարությամբ. «Սրանով տեղեկացնում են, որ Արաքս գետի հովիտը ժամանակավորապես

1. **ՀՀ ՊԿՊԱ**, ֆ. 198, ց. 1, գ. 15, ք. 105:

2. Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 193 | մաս, ք. 63:

1. «**Բանբեր Հայաստանի արխիվների**», 1993, N 1-2, էջ 62 .

վերցված է Բրիտանական կառավարության տնօրինության տակ օրինականություն և կարգ հաստատելու համար:

Երևանի կառավարությունը Բրիտանական գերագույն ղեկավարության տակ, կառավարում է շրջանը Յուվայից մինչև Երևանի գավառի հարավային սահմանը:

Այդ սահմանից մինչև Ջուլֆա կկազմակերպվի մուսուլմանական վարչություն Բրիտանական վերահսկողությամբ:

Հայկական կառավարությունը անհապաղ հետ կքաշի իր զորքերը (բացառությամբ մի փոքրիկ հետևակային ջոկատի Դավալուում):

Բրիտանական զորքերի մի ջոկատ կտեղակայվի Դավալուում:

Ամեն մի գյուղ ընտրում է իր ավագին, որը պատասխանատու կլինի համապատասխան գյուղի բնակիչների վարքագծի համար:

Բոլոր բնակիչները **մուսուլմանները և հայերը, պարտավոր են, վերոշարադրյալի համաձայն, պահպանել խաղաղություն և ապրել փոխադարձ բարեկամական հարաբերություններով:**

Բոլոր թյուրիմացությունները կլուծվեն Բրիտանական կառավարության կողմից և բոլորը պարտավոր են անառարկելիորեն ենթարկվել նրա վճռին:

Ամեն մի անհնազանդություն և խաղաղության ամեն մի խախտում ամենախիստ միջոցներով կպատժվի»¹ (ընդգծումը մերն է - Է.Ջ.):

Փետրվարի 3-ի նիստում Հայաստանի կառավարությունը կրկին անդրադարձավ Լաութոնի հետ վարած բանակցությունների հարցին, լսեց մինիստր-նախագահի զեկուցումը կայացված համաձայնության մասին և հավանություն տվեց դրան: Դրան հետևեց փետրվարի 4-ին համաձայնագրի ստորագրումը Հայաստանի Հանրապետության արտգործ-մինիստր Ս. Տիգրանյանի և Նախիջևանի շրջանի բրիտանական զինվորական պարետ Ֆ. Լաութոնի միջև: Ահա նրա բառացի բովանդակությունը. «Հայկական կառավարությունը՝ բրիտանական վերահսկողության տակ կկառավարի Ուվաչայ (պետք է լինի Յուվաչայ - Է. Ջ.) գետից մինչև Երևանի գավառի հին

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1. գ. 209, ք. 59:

հարավային սահմանն ընկած շրջանները պայմանով, որ յուրաքանչյուր գյուղ ընտրում է իր համար ավագ և բրիտանական, այլ ոչ թե հայկական զորքերը պետք է պահպանեն օրինականությունը և կարգը: Այդ նպատակով բրիտանական զորքերի մի ջոկատ կտեղավորվի Դավալուում, իսկ հայերը հետ կքաշեն իրենց բոլոր զորքերը Ուվաչայից հյուսիս՝ բացառությամբ մի փոքրիկ ջոկատի (50 մարդ չգերազանցող), որը կմնա Դավալուում և ներկայումս չի գնա մուսուլմաններով բնակեցված գյուղերը առանց բրիտանական լիազորի կարգադրության:

Երևանի կառավարությունը կվերականգնի գիծը՝ Երևան քաղաքի և սահմանի միջև հեռագրական կապը պահպանելու համար»¹:

Ինչպես տեսնում ենք, այս համաձայնագիրը չունի դասական համաձայնագրին բնորոշ ձև, նրանում չկա պրեամբուլա, չկան հոդվածներ: Ուղղակի խառը ձևով ներկայացված են կողմերի պարտավորությունները. և այն էլ բավականին անհաջող ձևակերպումներով: Օրինակ. ոչինչ չի ասված, թե հայկական զորքերը ե՞րբ պետք է հեռանան այդ շրջանից, համաձայնագիրը ստորագրելուց անմիջապես հետո՞, թե ինչ-որ մի ժամանակամիջոցում: Այդ է պատճառը, որ կողմերը սկսեցին յուրովի մոտենալ այդ հարցին. անգլիացիները սկսեցին պնդել, թե հայերը պետք է անմիջապես զորքերը հետ քաշեն, իսկ հայկական կողմը պահանջում էր նախ ապահովել տեղում մնացող հայերի անվտանգությունը: Փետրվարի 8-ին փոխգնդապետ Շենուրը Դավալուից հեռագրում է գնդապետ Ջինկևիչին, թե «անգլիացիները համառորեն պնդում են կատարել փետրվարի 4-ին հաստատված պայմանը զորքերի հետ քաշելու մասին: Այդ պայմանը նրանք չեն վերացնում: Այժմ անգլիական սպան թաթար ներկայացուցիչների հետ շրջում է գյուղերում: Այսօր թաթարները վերադառնում են իրենց գյուղերը: Երեկ հեռագրով ցուցում էր տրված, որ 3-րդ գնդի հետքաշումը պետք է հետաձգել մինչև այսօր՝ փետրվարի 8-ը, հետագայի մասին (ոչինչ) չի ասված: Ցանկալի է ստանալ կոնկրետ ցուցումներ հետագա օրերի մասին, որպեսզի հատուկ

1. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1-2, էջ 80:

մատնանշենք դա անգլիացիներին»¹: Այդ նույն օրը նման բովանդակությամբ մի հեռագիր էլ Ձինկեհիջը ստացավ գնդ. Կարաքեշիչեհից. «անգլիական վաշտի հրամանատարը նորից հայտնում է մեր հեռանալու ժամկետի մասին և հայտնեց, որ ժամանած (Դավալու) գեներալը մեկնել է Նախիջևան: Գեներալը հաստատել է, որ ոչ մի փոփոխություն չի լինի և փետրվարի 8-ի երեկոյան պետք է թողնենք 50 մարդուց բաղկացած խումբ...»²: Սակայն հայկական զորքերի հեռանալը և փախած թաթարների վերադարձը խիստ վտանգալից վիճակ էր ստեղծում Դավալուի և մյուս հայկական գյուղերի համար: Փետրվարի 8-ին գեներալը հայտնեց, որ հայտնում է, որ Նախիջևանից Դավալու է եկել փոխգնդապետ Լաութունը և պնդում է կառավարության հետ իր կնքած համաձայնագրի անհապաղ կատարման վրա ու պահանջում, որ մեր զորքերը հետ քաշենք մինչև Ղամարլու: Բայց «քանի որ համաձայնագրի իրագործման ժամկետը չէր որոշված, - ասված է նրանում, - ուստի փոխգնդապետ Լաութունի հեռանալու ժամանակ ես նրա հետ խոսակցություն ունեցա, ըստ որում ես հայտարարեցի, որ մենք զորքերը կհեռացնենք այն ժամանակ, երբ փոխգնդապետ Լաութունը կընդունի, որ իր ձեռնարկած միջոցներով ապահովված է Դավալուի շրջանում հայ բնակչության հանգիստն ու անվտանգությունը: Մինչդեռ ստացված են տեղեկություններ, որ բնակչությունը միանգամայն արդարացի վախենալով թաթարների բռնարարքներից լքում է շրջանը և վերաբնակվում հյուսիսում: Նման դրությունը կհանգեցնի նրան, որ Ղամարլուից հարավ ամբողջ շրջանը կմաքրվի հայ բնակչությունից և փաստորեն կդառնա բացառապես թաթարական, այսինքն կիրականանա այն, ինչին ձգտում է Նախիջևանի վարչությունը»: Այնուհետև կարծիք հայտնելով, որ նման անցանկալի երևույթի առաջն առնելու համար անգլիական հրամանատարությունը պետք է ուժեղացնի Դավալուի անգլիական ջոկատը և այն տեղադրի շրջանի բոլոր հայկական վայրերում, գեներալը հայտնեց, որ Նախիջևանը և շրջանը կառավարվում է բանակցել բրիտանական հրամանատարության Երևանի ներկայացուցչի հետ «պարզելու այդ հարցը և հաստատելու պայմաններ, որի դեպքում մենք

1. ԳԳ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 209, ք. 47:

2. Նույն տեղում, ք. 48:

կկարողանայինք հանել մեր զորքերը Դավալուից»¹:

Այս ամենի արդյունքը լինում է այն, որ փետրվարի 9-ին անգլիական ջոկատի հրամանատարը փոխգնդապետ Կարաքեշիչեհին գրավոր կերպով տեղեկացնում է, որ հայ ազգաբնակչության պաշտպանությունը իր վրա է վերցնում, անգլիական պահակազոր է տեղադրում Ռեհանլուում, իսկ հայկական գնդի հեռանալուց հետո պահակազոր կհաստատի նաև Դավալուում: Նույն օրը երեկոյան այս մասին հեռագրելով դիվիզիայի հրամանատար գեներալին Սիլիկյանին, փոխգնդապետ Կարաքեշիչեհը նաև հայտնում է, որ գունդը հեռանում է փետրվարի 10-ի լուսաբացին՝ Դավալուում թողնելով 12-րդ վաշտը շտաբս-կապիտան Տեր-Իոանիսյանի հրամանատարությամբ²:

Հայկական գնդի հեռանալուց հետո փախած թուրքերը սկսեցին վերադառնալ իրենց գյուղերը և՛ նախկինից ավելի հանդուգն ու լկտի վարքագիծ դրսևորելով, ոչ միայն կազմալուծում էին հայկական քաղաքացիական վարչության աշխատանքները, այլև բացեիբաց հայտարարում, որ իրենք երբեք չեն հաշտվի հայերի հետ ու շուտով Ադրբեջանի, Մակվի ու Նախիջևանի հետ մեկտեղ պատերազմ կսկսեն Հայաստանի դեմ: Փետրվարի 18-ին գավառի կոմիսար Լ. Ամիրխանովը Ներքին գործոց մինիստրին հայտնում է, որ թուրքերը խանգարում են հայկական վարչության ստեղծմանը և այդ հարցում անգլիացիները ևս իրեն ոչնչով չեն օգնում: Փետրվարի 25-ին կոմիսար Ամիրխանովը դարձյալ գեկուցում է ներքին գործերի մինիստրին, որ «թաթարները հրաժարվում են ճանաչել Հայաստանի կառավարությունը», որ ինքը այդ հարցով դիմել է անգլիական կառավարության ներկայացուցչին, բայց ոչ մի պատասխան չի ստացել: Անգլիական իշխանությունների անտարբերությունը այդ ամենի նկատմամբ այնքան ակնառու էր, որ փետրվարի 21-ին Հայաստանի կառավարությունը հարկադրված անդրադառնում է այդ հարցին և ընդունում որոշում «դիմել բրիտանական գեներալներ Լաութունին և Ասսերին այն առթիվ, թե բրիտանական հրամանատարության համաձայնությամբ հայոց զորամասերը դուրս են բերված այն շրջաններից, որոնց մեջ թրքական բնակչությունը չի կամեցել ենթարկվել Հայաստանի կառավարությանը, այն պայմանով, որ բրիտանական հրամանա-

1. Նույն տեղում, ք. 41:

2. Տես նույն տեղում, ք. 51:

տարրությունը, գրավելով այդ շրջանները, ազդե թուրքերին ընդունելու մեր ադմինիստրացիան և այսու խնդրել **բրիտանական հրամանատարությանը հնարավոր ազդեցություն գործադրելու թուրքերի վրա Դավալուի, Սադարակի և Բեուկ-Վեդիի շրջաններում մեր իշխանությունը ծանաչելու համար»¹** (ընդգծումը մերն է - Է. Չ.): Թե անգլիական հրամանատարությունը ինչպես էր վերաբերվում Հայաստանի կառավարության խնդրանքներին և որքանով էր կատարում այն, վկայում է թեկուզ այն փաստը, որ վերոհիշյալ որոշումը կայացնելուց ընդամենը 7 օր հետո փետրվարի 28-ին, Հայաստանի կառավարությունը հարկադրված է լինում մի անգամ էլ քննել Դավալուի թուրքերի կողմից Հայաստանի իշխանությունը ծանաչելու, այնտեղ երեք հայերի սպանության հարցը և որոշելու «դիմել Լաուբենին և Չարլսին կարգը վերահաստատելու համար միջոցներ ձեռք առնելու մասին» և այս անգամ դիմելու նաև գեներալ Ուոկերին²:

Ինչո՞վ բացատրել բրիտանական իշխանությունների նման վարքագիծը, ինչո՞ւ էին նրանք հանդուրժողաբար վերաբերվում մահմեդականների հակահայկական խժոժություններին: Եվ հետո, հասկանո՞ւմ էին արդյոք հայ քաղաքական ու պետական գործիչները Անդրկովկասում բրիտանական քաղաքականության նման ելևէջներն ու շարժառիթները, թե ոչ:

Բոլոր փաստերը (հատկապես արխիվային) վկայում են, որ շատ լավ էլ հասկանում էին, բայց չունենալով ուրիշ մի հենարան, հակազդեցության այլ միջոցներ, դարձյալ փարվում էին բրիտանական նենգ ու խարդախ իշխանություններին, փորձում նրանց օգնությամբ լուծել իրենց առաջ ծառայած բարդագույն խնդիրները: Դրանում հանդգնելու համար դարձյալ դիմենք Փարիզ՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին ուղարկած 1919 թ. մարտի 6-ի նամակին. **«Անդրկովկասի թուրքությունը Բրիտանական զորահրամանատարության օրով աւելի նպաստաւոր պայմանների մեջ է գտնուում, քան գերման-օսմանյան յաղթական օկուպացիայի ժամանակ:** Փաստեր ու հանգամանքներ են սրանք, որոնք լուրջ մտածումների ու ծանր մտատանջությունների տեղիք են տալիս մեզ ...»:

1. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1-2, էջ 64:
2. Նույն տեղում, էջ 65:

Անշուշտ, **գլխաւորագույն պատճառը անգլիական զինւած ուժերի թուլութիւնն է այստեղ:** Ինչպես Գերմանիան ամռանն ու աշնանը տեղի էր տալիս թուրք հրամանատարության պահանջների ու քմահաճույքների առաջ, այնպես էլ այժմ անգլիական զենեքաւորներն են նահանջում օսմանեան օֆիցերների այս նաճողական ծրագիրների ու գործողութիւնների առաջ ..., որովհետև արձանագրածս փաստերը հայերի հաղթահարումը չէ միայն, այլ աւելի ևս Անգլիայի: Նահանգապետութիւնները լոկ մի քող են, նուրբ ու թափանցիկ, որի տակից պարզ երևում է իրական թուրքական իշխանութիւնն ու ոյժը:

Սակայն թում է, թե մի ուրշ պատճառ էլ կայ: Անգլիացին չէ հաւատում հային՝ աւանդաբար համարելով սրան անուղղելի ռուսասեր, ռուսական օրիենտացիայի անհողողող հետամտող...: Բնորոշ է, որ գեներալ Ֆորեստիե Ուոկերի պահանջով կամաւորական Ձորաբանակի ներկայացուցիչը հեռացաւ Երևանից դեպի Եկատերինոպոլ. այդ մի նոր փաստ է ապացուցելու Անգլիայի ունեցած վերաբերմունքը դեպի Ռուսիայի ներկայութիւնը Անդրկովկասում: **Այն համարումն ու այս վերաբերմունքն է, որ տրամադրում է բրիտանական զօրահրամանատարութեանը չնպաստել մեր ուժերի կազմակերպմանը ու գորեղացմանը թուրքութեան դեմ Անդրկովկասում, որովհետև թուրքն է նրա աչքում ամենավստահելի պատաւարը Ռուսաստանի դեմ այստեղ:** Նա զիջում էր մեզ Կարսը, բայց հենց որ տեսաւ, որ այնտեղ ավելի վստահելի և ոչ աննշան հակառուսական ոյժ կա հանձին թրքութեան, իսկույն շտապեց ուղղել իր այդ սխալը. Կարսը տուեց թուրքերին¹..., և ոչ միայն Կարսը» (ընդգծումը մերն է - Է. Չ.): Այնուհետև նշելով, որ անգլիական հրամանատարությունը Կարսի նահանգում 1000 հոգուց բաղկացած միլիցիա է կազմակերպում օսերից, ռուսներից և այլն, բայց հայ չեն ընդգրկում պատճառաբանելով, թե տեղական թուրքերը գրգռված են հայերի դեմ,

1. Նամակագիրը նկատի ունի այն իրողությունը, որ Կարսի մահմեդականության ըմբոստության պատճառով Հայաստանի կառավարության նշանակած նահանգապետը իր պաշտոնյաների հետ մեկտեղ ստիպված եղավ հեռանալ Կարսից, իսկ անգլիական հրամանատարությունը հաշտվեց դրա հետ՝ հայ նահանգապետին մեղադրելով անտակտության և վախկոտության մեջ (Քաջագունու և Ուոկերի միջև կայացած սկզբնական համաձայնությամբ Կարսում բրիտանական զինվորական նահանգապետ պետք է լիներ, բայց քաղաքացիական վարչությունը պիտի նշանակվեր Հայաստանի կառավարության կողմից):

նամակագիրը շարունակում է . «թվում է, թե **Անգլիան չի ուզում յենել որևէ հայ ուժի վրա, որովհետև իր կարծիքով (և դժբախտաբար ոչ միայն նրա կարծիքով) հայն ավելի է ռուս, քան ռուսն ինքը և չէ կարելի յենել հայի վերայ, երբ Ռուսիայի դեմ բան է ծրագրվում»¹ (ընդգծումը մերն է - է. Ջ.) :**

Դե ինչ, լավ է ասված և որ առավել կարևոր է, ճշմարիտ է ասված: Անգլիայի քաղաքականությունն Անդրկովկասում իսկապես որ չի կարելի որակել այլ կերպ, քան թուրքամետ: Ղարաբաղի և Ջանգեզուրի հարցում նրա դիրքորոշումը, մեծ Ադրբեջան ստեղծելու նրա քաղաքականությունը, դրա վառ ապացույցն են: Ասենք, Կարսի և հատկապես Շարուր-Նախիջևանի հարցում էլ նրա դիրքորոշումը առանձնապես հայանպաստ չէր: Եվ, եթե ի վերջո նա համաձայնեց, որ այս վերջիններս միացվեն Հայաստանի Հանրապետությանը, ապա դա կատարվեց ոչ այն բանի համար, որ Հայաստանի Հանրապետությունը ամրապնդվի և հզորանա, այլ ուղղակի հանգամանքները հարկադրեցին կատարել այդ քայլը, ինչի մասին դեռ կխոսենք հետագա շարադրանքում: Ուղղակի նամակագրի բերած պատճառաբանություններին կուզենայինք ավելացնել մեկը ևս՝ Բաքվի նավթը, այդ սև ոսկին, որի բուրմունքից մարդիկ գլխապտույտ էին լինում: Նավթը քաղաքականություն էր նաև այն հեռավոր ժամանակներում (ինչպես և մեր օրերում), և կանխորոշում էր վարքագիծը վիճելի հարցերում: Սակայն դառնանք վերը վկայակոչված չափազանց հետաքրքիր նամակին և տեսնենք, թե ի՞նչ դեղատոմս է առաջարկված նրանում. «Անհրաժեշտ են համարում, - ասված է նամակի վերջնամասում, - որ Դուք փորձեք մեր ռուսական օրինատացիան անփոփոխելի և խոտելի համարողներին (անգլիացի, ֆրանսիացի և ուրիշ ազգերի) բացատրել, որ հայերի այդ օրինատացիան իր էությանը բոլորովին նույնն է ինչ որ էր (և թերևս է իսկ) վրացիներինը, որ եթե մեր մեջ աւելի էր (և է) շեշտած, դրա պատճառը Հայաստանի աշխարհագրական դիրքն էր (և է), որ զորաւոր և նաղդի պաշտպանի աւելի է կարօտ, քան Վրաստանը, որ մեզ հովանաւոր - պահապան է պետք թրքութեան դեմ և մենք յարել ենք Ռուսիային, որովհետև սրան համարել ենք գոնե **որոշ չափով** այդպիսի պահապան և **մեկ ուրիշ** հովանի Հայաստանի համար հրա-

պարակում չենք տեսել («Անգլիայի զրահապատ նաւերը Հայաստանի լեռները մագլցել չէին կարող»): Եւ ահա այսօր, երբ այս զրահապատները Դարդանել-Բոսֆոր-Բաթում են, և անգլիական զօրքը, թեև փոքրաթիւ, Անդրկովկասում, մենք այդ հովանին ու պաշտպանութիւնը չենք զգում և չենք տեսնում... չնայած որ այնքան թախանձագին սպասում էինք և ցանկանում ենք նաև այսօր:

Ամեն կողմից մեզ շրջապատել է թուրքական վտանգը, սպառնական և յանդուգն. մեր քաղաքական ծրագրերին ի հակառակ Թուրքիան առաջ է տանում իր ծրագրերը Հայաստանի վերաբերմամբ, որոնց մեզ հայ տարրի ֆիզիկական բնաջնջումը էական և հիմնական կետն է հանդիսանում և **մենք ոչինչ գրաւական ու վստահութիւն չունենք, թե անգլիական զորահրամանատարութիւնը ցանկութիւն ու կարոտութիւն ունի մեզ փրկելու այդ վտանգից, որը, կրկնում են ու պնդում, - այսօր էլ իրական է և սպառնական ոչ պակաս, քան ամիսներ առաջ:**

Բրիտանական զորահրամանատարութիւնը արգելեց մեզ գրաւել Անդրկովկասում որոշ կարևոր վայրեր, կարևոր թե ստրատեգիական, թե ռազմամթերքի (Կարսի պահեստները) տեսակետով: Այդ բոլորը մնաց թուրքերի ձեռքին, մեր քայլերն ու ընթացքը կաշկանդված են, թուրքերինը՝ ազատ, մեզ օգնող չկայ, թուրքերին աջակից են և դեկաւոր Թուրքիան իր օֆիցերներով (նույնիսկ բարձրաստիճան), ռազմամթերքով և ռազմական ամեն տեսակ գործիքներով...:

Կառաւարութեան կողմից Ձեր յատուկ ուշադրութիւնը հրաւիրելով այս փաստերի և հանգամանքների վրայ, խնդրում են, որ ամենալուրջ դիմումներով ուր հարկն է, աջողեցնեք որպեսզի.

1. Անդրկովկասից և Թուրքիայի նախկին վիլայեթներից հեռացնեն շուտափույթ թուրքական ուժերն ու զորականներն՝ սպառնալով, որ այդ ուժերի կողմից որևէ զինւած գործունեութեան դեպքում պատիժ և պատասխանատւութիւն կկրի Թուրքիան:

2. Թեկուզ փոքր զորամասեր (անգլիական, ֆրանսիական, ամերիկեան (ուղարկւեն Տրապիզոն-Էրզրում-Սարիղամիշ-Կարս-Նախիջևան-Ջուլֆա-Շուշա: (Կարսում և այլ տեղերում եղած անգլիական զօրախմ-

1. ԳԳ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, I մաս, ք. 64:

բերը դեմոքրիլիզացիայի են ենթակայ և հեռանում են):

3. Աջակցեն մեր զորքերի կազմակերպմանը (փամփուշտ, հրացան, զնդացիր):

4. Հայաստան փոխադրեն հայ զորամասերին և զօրականներին՝ զանազան երկրներում ներկայումս գտնվող օժտելով նրանց հարկ եղած ռազմական միջոցներով և նիւթերով:

Այս մասին Ձեզ նաև հեռագրում ենք խնդրի ստիպողականութիւնը աչքի առաջ ունենալով»¹ (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Տարօրինակ է, բայց փաստ. Ա.Ահարոնյանին տրված առաջադրանքները չեն համապատասխանում նամակի բուն բովանդակությանը, չեն բխում նրանից: Խոսում է Անգլիայի թուրքամետ քաղաքականության մասին, բայց և խնդրում նրա օգնությամբ հեռացնել թուրքական ուժերը ոչ միայն Անդրկովկասից, այլ նաև Արևմտյան Հայաստանից, հայտնում է Անդրկովկասից բրիտանական զորքերի դեմոքրիլիզացիայի ու հեռանալու մասին, բայց, միաժամանակ, խնդրում, որ նրանք զորքեր ուղարկեն Տրապիզոնից մինչև Շուշի ընկած հսկայական տարածություններում տեղադրելու, դժգոհում է, որ Կարսի զինապահեստները չեն տվել իրենց², բայց զենք ու զինամթերք է խնդրում: Արդյոք սա չի՞ նշանակում, որ Ահարոնյանին կանխապես անիրականաճալի առաջադրանքներ են տրված, որ նրան համձնարարվում է ծեծել դռներ, հայտնապես իմանալով, որ դրանք չեն բացվելու: Բայց ուրիշ ի՞նչ կարող էին անել Հայաստանի Հանրապետության ղեկավարները, ո՞ւմ դիմեին և ինչպե՞ս երկիրը դուրս բերեին այն անել վիճակից, որում հայտնվել էր նա 1919 թ. առաջին ամիսներին: Այս է խնդիրը. սեփական ուժերը անբավարար էին, «դաշնակիցները» անգութ, անասելիորեն դաժան ու անզիջում:

1. Նույն տեղում, թ. 64 - 65:

2. Արխիվային բազմաթիվ փաստաթղթերից տեղեկանում ենք, որ անգլիացիները ոչ միայն Կարսի զինապահեստները հայերին չէին տվել, այլև նրանցում եղած զենքն ու զինամթերքը դուրս էին տարել: Դուրս էին տարել նաև բերդում եղած թնդանոթների զգալի մասը, թեև Հայաստանի կառավարությունը բազմիցս բողոքել էր ու պահանջել վերջ տալ թալանին:

Ամփոփելով այս գլխի բովանդակությունը՝ կարող ենք արձանագրել, որ

1.1918թ. ավարտին Հայաստանի Հանրապետությունը գտնվում էր տնտեսական ու քաղաքական ծայրահեղ ծանր պայմաններում: Թուրքական օկուպացիոն զորքերը, հետ քաշվելով գրաված տարածքներից, իրենց հետ տարել էին այն ամենը, ինչը որևէ արժեք կարող էր ունենալ: Հանրապետությունը կտրված էր դրսի աշխարհից և ներմուծելու հնարավորությունից: Սովը և վարակիչ հիվանդությունները հազարավոր զոհեր էին տանում: Էլ ավելի ծանր էր գաղթականների վիճակը, որոնց մի զգալի մասը վաղուց ոչնչացել էր, իսկ մնացած մասը՝ հուսով սպասում էր հայրենիքի դռները բացվելուն:

2. Օսմանյան կայսրության պարտությունն առաջին աշխարհամարտում և նրա զորքերի հեռանալը օկուպացված տարածքներից թեև որոշակիորեն թեթևացրեց Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական կացությունը և նաև տարածքային ընդարձակման հնարավորություն տվեց, բայց մուսուլմանական շրջաններից բխող վտանգն այդպես էլ չվերացավ: Հեռանալով Անդրկովկասից՝ թուրք նվաճողները ոչ միայն մեծ թվով զինվորականներ, զենք ու զինամթերք էին թողել մուսուլմանաբնակ շրջաններում, այլև Շարուր-Նախիջևանում ստեղծել էին այսպես կոչված «Արաքսյան Հանրապետությունը»՝ նպատակ ունենալով խոչընդոտել պանթուրքիզմի ծրագրերի տեսակետից խիստ կարևոր այդ երկրամասի միացմանը Հայաստանի Հանրապետությանը: «Արաքսյան Հանրապետությունը» իր կազմի մեջ էր համարում նաև Սուրմալուի գավառը, Վեդիբասարը, անգամ Ջանգիբասարը:

3. Շարուր-Նախիջևանի մուսուլմանական իշխանությունը արգելակում էր հայ գաղթականների վերադարձը հայրենի օջախներ, մինչդեռ ցուրտը, սովը և համաճարակային հիվանդությունները հարյուրավոր մարդկանց կյանք էին խլում: Գաղթականների համար ճանապարհ բացելու նպատակով 1918թ. դեկտեմբերի սկզբին դեպի Շարուր հայկական զորքերի

առաջին առաջխաղացումը կանգնեցվեց սկսված հայ-վրացական պատերազմի պատճառով: Գործին միջամտեց նաև այդ նույն օրերին երևան հասած պարսկական պատվիրակությունը, որն իր կառավարության անունից Հայաստանի կառավարությանն առաջարկեց հրաժարվել գեներալ ու ժով Շարուր-Նախիջևանը գրավելուց և հարցի լուծումը թողնել Փարիզի վեհաժողովին:

4. Անդրկովկասի և մասնավորապես Նախիջևանի նկատմամբ տարածքային հավակնություններ ցուցաբերեց նաև Իրանը: Տարածաշրջանից Ռուսաստանի և ապա Թուրքիայի հեռացումով պայմանավորված նոր իրադրությունը պարսից կառավարությանը հույս էր ներշնչել, թե կարող է ետ ստանալ 19-րդ դարի ռուս-պարսկական պատերազմների հետևանքով կորցրած տարածքներն Անդրկովկասում: Այս ոգով հուշագիր ներկայացվեց Փարիզի վեհաժողովին և գաղտնի բանակցություններ վարվեցին թե՛ Լոնդոնում և թե՛ Վաշինգտոնում: Անհաջողության մատնվելով ընդարձակ պահանջների հարցում, պարսիկներն այնուհետև կենտրոնացան Նախիջևանի վրա: Ըստ որում, դա արվում էր խիստ զգուշավոր ու գաղտնի, առանց այդ մասին որևէ հրապարակային հայտարարության:

5. Հայ ժողովրդի ոգևորությունը կապված Դաշնակցային տերությունների հաղթանակի և Անդրկովկաս նրանց մուտքի հետ, կարճ տևեց: Տարածաշրջանում կայուն խաղաղություն հաստատելու և տարածքային վիճելի հարցերին արդարացի լուծում տալու նրա հույսերը հօդս ցնդեցին: Շատ շուտով Հայաստանի կառավարությունը առիթ ունեցավ համոզվելու, որ արևմտյան տերություններն Անդրկովկասում հետապնդում են միայն սեփական շահերը: Հայ ժողովրդին համարելով անուղղելի ռուսասեր՝ Անդրկովկասում տեր ու տնօրեն բրիտանական հրամանատարությունն ավելի շատ օժանդակում էր տարածաշրջանի հակառուսական ուժերին: Ամբողջովին հայաբնակ Ախալքալաքի շրջանի հանձնումը Վրաստանին և Լոռու չեզոք գոտու ստեղծումը, Լեռնային Ղարաբաղն ու Զանգեզուրը Ադրբեջանին ենթարկելու փորձերը այդ քաղաքականության կոնկրետ դրսևորումներն էին: Իսկ պատերազմին ակտիվ մասնակցած ու մեծապես տուժած «փոքր

դաշնակցի»՝ հայ ժողովրդի շահերը մոռացության էին տրվել: Բրիտանական հրամանատարությունն անգամ Կարսի մարզը և Շարուր-Նախիջևանը սկզբնապես Հայաստանի Հանրապետությանը հանձնելու մտադրություն չունեցրեց:

6. Հայ-վրացական պատերազմի ավարտից հետո հայկական զորքերը շարժվեցին դեպի Շարուր՝ գաղթականության համար ճանապարհ բացելու նպատակով: Սակայն գործին միջամտեց բրիտանական հրամանատարությունը և որոշեց այստեղ ևս չեզոք գոտի ստեղծել անգլիացի զեներալ-նահանգապետի ղեկավարությամբ: Սա երկրորդ չեզոք գոտին էր Հայաստանի մարմնի վրա:

Ամբողջովին հայաբնակ Լեռնային Ղարաբաղը դնելով Ադրբեջանի գերիշխանության տակ՝ բրիտանական հրամանատարությունը հարմար չգտավ խառը բնակչությամբ Նախիջևանը հանձնել Հայաստանի Հանրապետությանը: Ավելին, բրիտանական հրամանատարությունը հոգ էր տարել նաև Նախիջևանի անգլիական զեներալ-նահանգապետության մասին և հարկադրել, որ Հայաստանի կառավարությունն իր զորքերը հետ քաշի Գայլի Դրունքից մինչև Ղամարլու՝ դրանով իսկ ստեղծելով ընդարձակ ապառազմականացված գոտի Վեդիբասարի ու Դավալուի շրջաններում:

ՉԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉՍԽՈՂՈՒՄԸ ՇԱՐՈՒՐ - ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՐՅՈՒՄ: ԵՐԿՐԱՄԱՍԻ ՄԻԱՅՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Նախիջևանի բրիտանական հրամանատարության համակրական վերաբերմունքը տեղական իշխանությունների ադրբեջանամետ զործունեության նկատմամբ: Օսմանյան սպաների գլխավորությամբ զինված խմբերի ստեղծումը, հակահայկական խժդժությունները տարածաշրջանում, թալանն ու սպանությունները: Կարգն ու անվտանգությունն ապահովելու բրիտանական հրամանատարության անկարողությունը, զինվորների տրտունջն ու դժգոհությունը: Հայաստանի կառավարության բողոքը և վճռական միջոցներ կիրառելու պահանջը, Նախիջևանի վրայով Ադրբեջանի և Թուրքիայի միավորման վտանգի մատնանշումը:

Փետրվարի 4-ի համաձայնագիրը վերանայելու և երկրամասի կառավարումը Հայաստանին հանձնելու գեն. Թոմսոնի ապրիլի 6-ի առաջարկությունը: Հանրապետությունների միջև սահմանագծման վերաբերյալ Թոմսոնի ապրիլի 14-ի գրությունը:

Շարուր-Նախիջևանի մահմեդական ազգաբնակչությունը չզինաթափելու և տարածաշրջան սահմանափակ թվով հայկական զորք մտցնելու բրիտանական հրամանատարության պահանջը: Շարուր-Նախիջևանի երկրամասը վարչական նոր միավորների բաժանելու մասին Հայաստանի

կառավարության ապրիլի 29-ի որոշումը: Նախիջևանի հարցը Ադրբեջանին Ղարաբաղի ենթարկությամբ պայմանավորելու բրիտանական հրամանատարության փորձը: Գեն. Թոմսոնի և Ալ. Խատիսյանի բանակցությունները Թիֆլիսում: Հայկական զորքի և վարչության մուտքը տարածաշրջան: Վարչապետ Ալ. Խատիսյանը Նախիջևանում և Ջուլֆայում: Ազգամիջյան համերաշխություն հաստատելուն ուղղված քայլերը. սննդակայանների, հիվանդանոցների, ակրադացների բացումը: Դժվարությունները զաղթականության տեղավորման հարցում: Հայկական վարչությունը վարկաբեկելուն ուղղված մուսուլմանական խորհրդի և խան-բեգական շրջանների զործունեությունը:

Նախիջևանի գեներալ-նահանգապետությունում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Բ.Բահաթյանը, ՀՀ Արտգործմինիստրին հասցեագրած 1919 թ. փետրվարի 28-ի զեկուցագրում անդրադառնալով Նախիջևանի խաների հետ նահանգապետ Լաութոնի մի հանդիպման, գրում է. «Նահանգապետը բերեց Հայաստանի քարտեզը, նոցա ցույց տվեց և ավելացրեց, որ յուր ունեցած տեղեկությունների համաձայն, մեր Փարիզի պատգամավորները ապագա Հայաստանն ընդունում են այժմյան Արարատյան հանրապետությունը Տաճկահայաստանի վիլայեթների հետ և, մատիտով գծեց ապագա Հայաստանի սահմանները, որից դուրս էին ընկնում Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը»¹ (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Թե որտեղից էր քաղել Լաութոնը Փարիզի մեր պատգամավորների պահանջների մասին այդ աղճատված տեղեկությունը, դժվար է ասել: Բայց նաև սխալ կլինի կարծել, թե Շարուր-Նախիջևանը Հայաստանի սահմաններից դուրս տեսնելը միմիայն Լաութոնի սուբյեկտիվ ցանկությունն էր: Ըստ երևույթին նման մտայնություն կար նաև Անդրկովկասի բրիտանական հրամանատարության, իսկ գուցե նաև կառավարող շրջաններում: Արդեն վերը նշել ենք, որ Լեռնային Ղարաբաղի և Ջանգեզուրի հարցում

Անգլիան վճռականորեն բռնել էր Ադրբեջանի կողմը: Ճիշտ է Շարուր-Նախիջևանի հարցում որևէ կոնկրետ հայտարարություն չէր արվել, բայց հենց այն հանգամանքը, որ այնտեղ Հայաստանի գերիշխանությունը հաստատել տալու փոխարեն ստեղծեցին առանձին գեներալ-նահանգապետություն, խոսում է այն մասին, որ սկզբնապես՝ 1919 թ. առաջին ամիսներին (հունվար - մարտ), բրիտանական իշխանությունները երկրամասը Հայաստանի կազմում տեսնել չէին էլ մտածում: Իհարկե, դա նաև չի նշանակում, թե նրանք մտադիր էին Շարուր-Նախիջևանը հանձնել Ադրբեջանին: Բայց քանի որ տեղական խան-բեգական շրջանների ադրբեջանամետ գործողություններին հակահարված չէին տալիս, ուստի դրանով իսկ խրախուսում ու նպաստում էին մուսավաթական նկրտումներին: Բահաթրյանի վերը վկայակոչված գեկուցագրում ասված է, որ Նախիջևանի խաները՝ հայերի հետ հաշտվելու և նրանց ցորեն մատակարարելու մասին Լաութոնի առաջարկին որպես պատասխան՝ առաջ էին քաշել հետևյալ պայմանները.

«1. Հայաստանի հանրապետությունը պիտի հրաժարվի Նախիջևանի շրջանից, նույնիսկ և Ղարաբաղից, և Ջանգեզուրից, որոնք անբաժան մասն են կազմում Ադրբեջանի հանրապետության:...

2. Հայկական հանրապետությունը պիտի զինաթափանի բոլոր տաճկահայ փախստականներին և հեռացնի յուր տերիտորիայից:

3. Երևանում պիտի հաստատեն կարգ և կանոն, պատժելով Դալի Ղազարին և նորա քսան ընկերներին, որոնք մուսուլմանների վրա սարսափ են ազդում կորզելով նոցանցից դրամ:

4. Հայերը պիտի վերադարձնեն հասանցիների մոտ գտնված 300 մուսուլման կանանց:

5. Ցորեն կարող են մատակարարել հայերին, եթե փոխարենը ստանան կերոսին և շաքար»¹:

Ահա այսպիսի հանդուզն առաջարկներ, որոնք վերջնագիր են հիշեցնում: Իսկ նահանգապետը հարկ չէր համարել սաստել նրանց թեկուզ առաջին երեք պայմանների հարցում, որոնք

1. Նույն տեղում :

արդեն միջպետական հարաբերությունների ոլորտին վերաբերող խնդիրներ են: Եվ դա նրա համար, որ թեև «թե՛ Անգլիայի և թե՛ յուր դաշնակիցների համար պարզ է, որ Կովկասի թաթարները տաճիկներին օգնել են, բայց այժմ Անգլիան մեծահոգությամբ ցանկանում է մոռանալ այդ բոլորը, կարգ ու խաղաղություն է ցանկանում մտցնել Կովկասում»¹: Սակայն մեծահոգությունը իսլամի աշխարհում, ինչպես նշել ենք, հարգի չէր և այն դիտվում էր որպես թուլության նշան: Այդպես եղավ և այս անգամ. «Նախիջևանը թեև հայտարարված է անգլիական նահանգապետություն, - ասված է Բահաթրյանի գեկուցագրում, - բայց իրոք կառավարվում է տեղական խաների և բեգերի միջոցով: Գեներալ-նահանգապետի շատ կարգադրությունները նոքա անտես են անում զանազան պատրվակներով: Նախիջևանի շրջանը պատրաստվում է միանալու Ադրբեջանի հետ, կատարում է ընտրություններ պատգամավորներ ուղարկելու Ադրբեջանի պառլամենտ: Այժմ Նախիջևանում գտնվում են Ադրբեջանից եկած տասնմեկ սպա մի գնդապետի ղեկավարությամբ, որոնք տաճիկների թողած ենթասպաների հետ վարժեցնում են նորակոչ զինվորներին»²: Հենց փետրվարյան այդ նույն օրերին էր, որ Շարուրում կանգնած մուսուլմանական ջոկատի հրամանատար Բահրամ-խանը ճանապարհորդեց Թիֆլիս-Ելիզավետպոլ-Բաքու՝ նպատակ ունենալով նախնական բանակցություններ վարել Շարուր-Նախիջևանը Ադրբեջանին միացնելու ուղղությամբ: «Թիֆլիսում Բահրամ խանը ներկայացավ անգլիական միսսիային որպես «Հարավ-արևմտյան Ադրբեջանի» ներկայացուցիչ և անգլիացիների կողմից բավականին սիրալիք ընդունելության արժանացավ, - ասված է հատուկ բաժնի պետի 1919թ. մարտի 13-ի գաղտնի գեկուցագրում: Մեր ունեցած հետախուզական տվյալներով Նախիջևանի կառավարության մտադրությունները սկզբունքորեն անգլիացիների կողմից համակրությամբ է ընդունվել»³: Բայց առավել տարօրինակը վրաց կառավարող շրջանների վերաբերմունքն էր: Վրաստանի վարչապետը և արտաքին գործոց մինիստրը ոչ միայն ընդունեցին Բահրամ խանին, այլև «շնորհավորեցին նրան Հայաստանի հանրապետության դեմ պայքարում Նախիջևանի կառավարության հաջողությունների կապակցությամբ»

1. Նույն տեղում, էջ 85:

2. Նույն տեղում, էջ 81:

3. ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 200, ց. 1, գ. 212, թ. 75:

յամբ և խնդրեցին իրենց անունից ողջունել քաջարի թաթարական զորքերին»։ Սա նշանակում է, որ վրացիները ևս, ինչպես և Անդրկովկասի մահմեդականությունը, Շարուրի սահմանից հայկական զորքերի հետ քաշվելը դիտում էին որպես Հայաստանի պարտություն։

Այդ նույն փաստաթղթում նաև ասված է, որ Նախիջևանի թուրքերը խիստ անվստահությամբ են վերաբերվում անգլիացիներին, թեև արտաքուստ սիրալիր են։ Նախիջևանում տիրող դրության մասին Հայաստանի ռազմական շտաբ ներկայացրած հետախուզական ծառայության մարտի 1-ի գաղտնի զեկուցագրում կարդում ենք. «**Վերաբերմունքը ... Անգլիայի նկատմամբ բավականին անբարյացակամ է։ Բնակչությունը և կառավարությունը որոշակի հայտարարում են, որ ներքին գործերին անգլիացիների միջամտությունը խիստ հակահարված կստանա։ Անգլիայի ազդեցության ոլորտ անվերապահորեն ճանաչվում է միմիայն երկաթգծի գոտին**»¹(ընդգծումը մերն է - է. Չ)։

Նախիջևանցիների նման վերաբերմունքը չէր կարող երկար ժամանակ աննկատ մնալ, չէր կարող առաջ չբերել անգլիացիների դժգոհությունը և նրանց նկատմամբ վերաբերմունքի փոփոխության նախադրյալներ չառաջացնել։ Առավել ևս, որ փետրվար-մարտ ամիսների ընթացքում անգլիացիները բոլոր հնարավորությունները ունեցան համոզվելու, որ չարիքի աղբյուրը մահմեդականությունն է, որ տարածաշրջանում իրադրության լարվածությունը հետևանք է նրանց գործունեության, և ոչ հայերի։ Արգելելով հայ գաղթականների վերադարձը իրենց հայրենի օջախներ, դրանով իսկ նրանք անգլիական իշխանությունների համար լրացուցիչ հոգս ու բարդություններ էին ստեղծում, շարունակելով ավազակային հարձակումները հայերի վրա ոչ միայն Նախիջևանի տարածքում, այլև Դավալուի շրջանում, դրանով իսկ ցուցադրում էին իրենց անհնազանդությունը անգլիական իշխանություններին ու վարկաբեկում վերջիններիս ժողովրդի աչքում։ Երևանի գավառական կոմիսարի 1919 թ. փետրվարի 25-ի զեկուցագրում ներկայացված ներքին գործոց մինիստրին, ասված է, թե « Լաուրթունը վճռել է... վերացնել թաթարական զինված ուժերը, որոնք գլխավորապես տեղադրված են Բեյուք-Վեդի և Սադարակ գյուղե-

1. Նույն տեղում, թ. 61:

րում և արգելակում են հայերի և թաթարների միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը»¹։ Բայց Լաուրթունը իր այդ մտադրությունը իրագործել չկարողացավ անհրաժեշտ քանակությամբ զինված ուժեր չունենալու պատճառով։ Իսկ Վեդիի թուրքերը՝ անտեսելով անգլիական փոքրիկ պահակազորի ներկայությունը, շարունակում էին թշնամական գործողությունները հայերի նկատմամբ։ Փետրվարի 28-ին սպանեցին Չինջիրլուից վերադարձող 3 հայերի, մարտի 7-ին ճանապարհի մոտ հայտնաբերվեցին 9 դիակ, իսկ 7 հոգի էլ այդ օրը անհայտ կորել էին²։ Բայց ավելի լավ է ծանոթանանք այն ամփոփագրին, որ մարտի առաջին շաբաթվա համար կազմել էր փոխգնդապետ Կարաբեշիչևը ՀՀ ռազմական մինիստրի համար, իսկ վերջինս էլ կարգադրել էր ուղարկել այն արտաքին գործոց մինիստրին ի գիտություն.

«1. Ըստ Դավալուի վաշտի հրամանատարի հաղորդման, չնայած անգլիացիների ձեռնարկած միջոցներին, շաբաթվա ընթացքում մշտապես նկատվել են թաթարների զինված խմբեր Ավշար և հատկապես Շիրազլու ու ճաթղրան գյուղերում։ Այդ գյուղերում նույնիսկ նկատվել է թաթարների զորաշարային պարապմունք։

2. Մարտի 4-ին շտաբ-կապիտան Տեր-Իոանիսյանցը (12-րդ վաշտի հրամանատար) սպասավորի հետ Ավշարով անցնելիս կանգնեցվել է մի քանի զինված թաթարների կողմից, որոնց մեջ է եղել թուրք Բաշ-Չաուշը, որը պահանջել է շտաբ-կապիտան Տեր-Իոանիսյանցից անցագիր։ Դրան չտ. կապիտան Իոանիսյանցը պատասխանել է, որ ճանապարհը պետք է ազատ լինի, այստեղ պետք է միայն անգլիական պահակակետեր լինեն, որին Բաշ-Չաուշը հայտարարեց, որ ոչ մի անգլիացի չի ճանաչում։

3. Ղանարլուից Դավալու վաշտի համար մթերքներ տանող սայլակառքերը զինված թաթարների կողմից կանգնեցվել են Շիրազլու գյուղում և երբ թաթարները

1. Նույն տեղում, գ. 209, թ. 130:

2. Նույն տեղում, թ. 220:

ցանկացան խուզարկություն կատարել, 12-րդ վաշտի զինվոր ավագ ուղեկցորդը հայտարարեց, որ նրանք այդ իրավունքը չունեն: Այնուամենայնիվ թաթարները խուզարկեցին սայլակառքերը և հետո միայն թույլ տվեցին անցնել: Այդ մասին հայտնվեց անգլիացիներին և նրանք խոստացան միջոցներ ձեռնարկել, բայց դրանից մի օր հետո էլ թաթարները կանգեցրին սայլակառքերը և խուզարկություն կատարեցին:

4. Մարտի 6-ին Ղամարլուից Դավալու ուղարկվեցին մթերքներով բարձրագույն երկու սայլակառքեր՝ եզներով: Դավալուից այդ սայլակառքերի վերադարձի ճանապարհին Ավշարում զինված թաթարները խլեցին գնդին պատկանող մեկ զույգ եզներ: Այդ մասին հայտնվել է անգլիացիներին, վերջիններս խոստացան վերադարձնել եզները, բայց մինչև այժմ եզները չեն վերադարձվել:

5. Ավշար գյուղում թաթարները բռնել են դավալուեցի մի հայ պատանու, տանջել են և մահվան սպառնալիքի տակ պահանջել հայտնելու, թե հայերը ինչ ուժեր ունեն և ինչ զորամասեր են տեղաբաշխված: Պատանուն նրանք բաց թողեցին միայն մեկ օր հետո:

6. Մարտի 7-ին Դավալուից Ձինջիրլու տանող ճանապարհին, երկու վերստի վրա այնտեղից, որտեղ մեկ շաբաթ առաջ սպանվել էին երեք հայ բնակիչներ, թաթարները շրջապատեցին 20 հայերի (որոնց թվում մեկ կին) անզեն (այդ 20 հայերը ունեին մեկ հրացան) և սկսեցին գնդակահարել նրանց, նրանցից 4 մարդ փրկվեցին փախչելով Արարատ կայարան և հայտնեցին անգլիացիներին: Անմիջապես դեպքի վայր մեկնեցին տեղամասային կոմիսարը և անգլիական սպա զինվորներով: Պարզվեց, որ սպանվել են 9 մարդ (այդ թվում 1 տղա և 1 կին), վիրավորվել է մեկը, մնացածը փրկվել են փախչելով: Անգլիացիները դա բացատրում են թաթար ավազակների վրեժառությանը հայերից, իսկ թաթարները փորձում են ապացուցել, թե դրանք քրդեր էին:

7. Փոխգնդապետ Լաութոնը մարտի 7-ի գիշերը Նախիջևանից եկավ Արարատ կայարան և անմիջապես ճանապարհվեց Երևան: Օրեցօր թաթարների գրգռիչ թշնամական տրամադրությունը նշանակալիորեն ուժեղանում է, խմբերով համարյա բացահայտ զորաշարային պարապմունքներ են կատարում: Թաթարական առաջապահ ջոկատը շարունակում է մնալ Սադարակում՝ հրետանավոր սպա, Քերբալայ-խան Նախիջևանսկու հրամանատարությամբ...»¹:

Հասկանալի է, որ առանց Նախիջևանի խաների օգնության Դավալուի թուրքերը այդքան սանձարձակ չէին պահի իրենց ու այդքան լարված իրադրություն չէին ստեղծի: Հարկավոր էր կտրուկ ու վճռական միջամտություն, այլապես անպաշտպան մնացած ու հուսահատ հայ բնակիչները կլքեին իրենց օջախները՝ ավելի ապահով բնակավայր փոխադրվելու նպատակով: Մարտի 8-ին ներքին գործոց մինիստրի պաշտոնակատարը Դավալուի շրջանում կատարված բռնությունների մասին փաստաթղթերի պատճենները ուղարկելով արտգործմինիստրին, միաժամանակ, խնդրում է շտապ կարգով դիմել Թիֆլիսի և Երևանի անգլիական ներկայացուցչություններին՝ պահանջելով ճնշում գործադրել այդ շրջանի մահմեդականների վրա՝ դադարեցնելու հարձակումները հայերի վրա, կամ էլ թույլ տալ հայկական զորքերի մուտքը տարածաշրջան՝ ապահովելու հայ ազգաբնակչության անվտանգությունը²: Մարտի 10-ին ներքին գործոց մինիստրի կարգադրությամբ կոմիսար Լ. Ամիրխանովը Արարատ կայարանում ներկայանում է փոխգնդապետ Լաութոնին և իր դժգոհությունը հայտնում շրջանում տիրող անիշխանության կապակցությամբ և նաև այն բանի համար, որ մեկ շաբաթվա ընթացքում 12 հայերի սպանության առթիվ անգլիական հրամանատարությունը բավարարվել էր միայն տուգանք նշանակելով, որն, ի դեպ, թուրքերը չէին էլ շտապում վճարել: Եիշտ է, նա հրաման էր արձակել, որով բնակիչներին արգելում էր զենքով շրջել, բայց դարձյալ դա մահմեդականները անտես էին անում: Այստեղ տեղի է նաև ասել, որ Հայաստանի Հանրապետությունում ընդունված զենքի ազգայնացման մասին օրենքով ազգաբնակչությունը ամենուրեք զինա-

1. Նույն տեղում, ք. 90:

2. Տե՛ս՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 59, ք. 23:

թափվում էր, մինչդեռ Դավալուի շրջանում անգլիացիները այն չէին իրագործում, թեև շրջանը ճանաչել էին որպես Հայաստանի Հանրապետության մաս: Ավելին, վերջին սպանությունների կապակցությամբ իբրև թե ձեռնարկելով միջոցներ, նա ավելի շատ սահմանափակում էր հայերին, քան մահմեդականներին: Այսպես, նա արգելեց ազատ երթևեկությունը Դավալու-Ձինջիրլու ճանապարհահատվածում, որով ավելի շատ հարվածում էր հայերին, քան թուրքերին (շաբաթը միայն մեկ անգամ կարելի էր երթևեկել անգլիական պահակախմբի ուղեկցությամբ, այն էլ այն դեպքում, եթե հավաքվեն 40 հոգուց ոչ պակաս), քանի որ Դարալագյազի շրջանը և Կարախաչի համայնքի վեց գյուղերը Երևանի հետ կապը պահպանում էին այդ ճանապարհով: Նա նույնիսկ սահմանափակեց հայ միլիցիոներների ազատ երթևեկությունը: «Մարտի 14-ին ինձ մոտ Դավալու եկավ Արարատ կայարանում տեղակայված անգլիական վաշտի հրամանատար լեյտենանտ Բաուտոնը, - ասված է ներքին գործոց մինիստրին ներկայացրած կոմիսար Ամիրխանովի մարտի 17-ի զեկուցագրում, - և հայտարարեց գեներալ-նահանգապետ Լաութոնի անումից, որ Յուլա-Գայլի Դրունք շրջանում անգլիական զինվորներից պահակակետեր են հաստատված, որոնք կզինաթափեն այդ ճանապարհով բոլոր երթևեկողներին, ովքեր էլ որ դրանք լինեն և, որ այդ կարգադրությունը վերաբերում է նաև ծառայության գործերով մեկնող միլիցիոներներին»¹: Իսկ Դավալուի և Դամարուի պահակակետեր ազատորեն միաժամանակ մեկնել կարող էին միայն երկու զինված միլիցիոներներ: Հայտնելով այս ամենի մասին, զեկուցագրի վերջում կոմիսարը միանգամայն արդարացի հետևություն է անում, թե «ստացվում է տպավորություն, որ զինվածության մասին կարգադրությունը արված է ոչ թե ամբողջ ազգաբնակչության, այլ հայերին և մեր իշխանություններին նեղելու համար»² (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Ստեղծվել էր չափազանց լարված իրադրություն, Հայաստանի Հանրապետության կառավարությունը կամ պետք է «վճռական ու համարձակ» պահանջներ ներկայացներ անգլիական իշխանություններին՝ տարածաշրջանում կարգն ու օրինականությունը պահպանելու ուղղությամբ, կամ էլ վերջնականա-

1. Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 209, թ. 95:
2. Նույն տեղում:

պես վարկաբեկվեր սեփական ժողովրդի աչքում: Ուստի 1919 թ. մարտի 13-ին ՀՀ արտգործմինիստր Ս.Տիգրանյանը մի վճռական գրությամբ դիմում է Երևանում բրիտանական զինվորական ներկայացուցիչ գնդ. Ս. Տենպերլեյին, նկարագրում Դավալուի շրջանում հայ բնակչության համար ստեղծված դժոխային վիճակը և պահանջում վճռական միջոցներ ձեռնարկել: «Անհրաժեշտ է, - ասված է այդ գրության մեջ, - որ Բրիտանական հրամանատարութիւնը կտրուկ և գործոն միջոցներով հաստատէ և պահպանէ այդ վայրերում օրենքն ու կարգը և պաշտպանէ բնակչութեան կեանքն ու ստացւածքը ինչպէս որ յանձն առել է և կամ պետք է, որ այդ հրամանատարութիւնը չընդդիմանայ Հայկ. կառավարութեան, որ նա ուժեղացնէ իր զօրախմբերը այդ վայրերում այն դեպքում, երբ ստիպւած կլինի պետք եղած միջոցները և ուժը գործադրելու՝ զսպելու համար, օրենքի սահմանի մեջ, զինւած, խառնակիչ և ավազակային տարրերին»: Ս. Տիգրանյանը նաև «համարձակվում» է նրբորեն մեղադրել Նախիջևանի գեներալ-նահանգապետին ստեղծված դրության համար և հռչակել նրան գլխավոր պատասխանատու: «Երախտապարտ կլինեի Ձերդ գերազանցութիւն, - ասված է գրության շարունակության մեջ, - եթե հաճեիք ինձ տեղեկացնել Ձեր փոխգնդապետ Լաութոնի հետ ունեցած տեսակցութեան հետևանքի մասին և ինձ իմացնեիք պ. գնդապետի այս առթիւ ունեցած տեսակետը, ինչպես նաև այն միջոցները, որ նա մտածում է ձեռք առնել այս առթիւ: **Արդարև պ. Լաութոնն է առաջին և անմիջական պատասխանատուն այս գործի մեջ, և նրան է պատկանում գործել ըստ հանգամանքի:** Բայց քանի որ յիշեալ շրջանը անվիճելի մասն է կազմում Հայ. հանրապետութեան տերրիտորիային և այդպես էլ ճանաչված է Բրիտանական հրամանատարութիւնից, և նկատի առնելով, որ Ձերդ գերազանցութիւնը նշանակւած է Զինւորական ներկայացուցիչ Հայաստանի կառավարութեան մօտ, կարծում եմ, որ Ձերդ գերազանցութիւնը մասնակից պետք է լինի այս կարևոր խնդրի առթիւ ձեռք առնելիք կարևոր գործին մեջ»¹ (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Կարգն ու օրինականությունը տարածաշրջանում վերականգնելու համար ուժ էր պետք, զինվորական ուժ: Մինչդեռ

1. Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 59, թ. 40-41: Տես նաև «Բանբերի» նշված համարը, էջ 87-88:

Անդրկովկասի բրիտանական հրամանատարությունը ոչ միայն չէր կարող նոր զորախմբեր ուղարկել տարածաշրջան անհրաժեշտ քանակությամբ զինվորներ չունենալու պատճառով (ի դեպ էլ ասել, որ Անդրկովկասում գտնվող անգլիական զորքերի մեծագույն մասը ծագումով հնդիկ էին և միայն սպաներն էին անգլիացի), այլև արդեն դժվարանում էր եղածներին տեղում պահելու հարցում, քանի որ օր օրի վրա մեծանում էր նրանց տրտուկն ու բողոքը տարիներ շարունակ հայրենիքից հեռացված լինելու համար: Այս առումով հետաքրքրական է այն գրույցը, որ տեղի է ունեցել Լաուրոնի օգնականի և Բահաթյանի միջև և որի մասին պատմում է վերջինս ՅՅ արտգործմինիստրին ներկայացրած մեզ հայտնի զեկուցագրում. «Խաների գնալուց հետո ես նկատեցի գնդապետի օգնականին, որ թուրքերի հետ նոքա շատ մեղմ են վարվում, որ անգլիացիների կարգադրությունները չեն կատարվում, որ խոստացած տասը հազար փութ ցորենը մինչև օրս չեն տվել ոչ անգլիացիներին և ոչ էլ ամերիկացիներին: Կապիտանը ինձ ասաց հետևյալը. «Ահա հինգերորդ տարին է հեռացել ենք հայրենիքից: **Չինադադարից հետո կարծում էինք, որ մեզ կուղարկեն հայրենիք, բայց վերցրել ուղարկել են ավելի հեռու, և դրա համար տրտուկն կա թե սպայության և թե զորքի մեջ: Դրանից ավելի կտրուկ լինել չենք կարող, մեր ցանկությունն է, որ հայերը մի կերպ հաշտվեն թուրքերի հետ**»¹ (ընդգծումը մերն է է. Չ.):

Հաշտվել բայց ինչպե՞ս. արդյո՞ք ընդունելով Լախիջևանի խաների առաջ քաշած պայմանները, թե՞ համաձայնելով, որ հայ գաղթականները վերադառնան իրենց տեղերը, բայց առանց զենքի, այն դեպքում, երբ իրենք թուրքերը, շրջում էին զենքը ձեռքներին: Հայաստանի կառավարությունը առանց այդ էլ բավականին հանդուրժող ու մեղմ քաղաքականություն էր որդեգրել, որը չէր կարող անսահման լինել, մանավանդ, որ թուրքերը ոչ միայն նույնով չէին պատասխանում, այլև ավելի ու ավելի էին սաստկացնում հակահայկական խժոժությունները: Իսկ Ադրբեջանի կառավարությունը նույնիսկ փորձում էր այդ ամենի համար մեղադրել Հայաստանի կառավարությանը, որի կանոնավոր գործերը իբրև թե ոչնչացնում են մուսուլմանական գյուղերը, բնաջն-

1. Տես՝ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1-2, էջ 85:

ջում խաղաղ բնակիչներին, բռնաբարում կանանց ու աղջիկներին և այլն: Հավատարիմ «բռնեցե՛ք գողին» սկզբունքին, որով սովորաբար առաջինը աղմկելով կատարված հանցագործության մասին գողերը փորձում են հեռացնել իրենցից կասկածը, Ադրբեջանը աջ ու ձախ հեռագրեր էր տեղում, մեղադրում Հայաստանին ինչ-որ տարածքներ «մաքրագործելու» մեջ: Մարտի 25-ին Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը ՅՅ արտգործմինիստրին ներկայացրած նոտայում Հայաստանին մեղադրում էր ոչ միայն մի շարք գյուղեր բնաջնջելու (Կարախաչ, Շահաբլու, Կաղըլու, Վերին Ղարաբաղլար, Աղասիբեկլու և այլն) և «մի քանի հարյուր ամենագեղեցիկ կանանց և աղջիկների» գերեվարելու մեջ, այլև պահանջում էր անմիջապես «խառը հանձնաժողով ստեղծել անգլիացիներից, մուսուլմաններից և հայերից» պարզելու համար մուսուլմաններին հասցված նյութական վնասի չափը ու բավարարելու Ադրբեջանի «արդարացի պահանջները»¹:

Ադրբեջանի նման ակտիվությունը հարկադրեց Հայաստանի կառավարությանը, որ ինքն էլ համապատասխան քայլեր ձեռնարկի՝ բրիտանական հրամանատարության ուշադրությունը հրավիրելու բոլոր այն նեգատիվ երևույթների վրա, որ տեղի էին ունենում Շարուր-Նախիջևանում ու Վեդիբասարի շրջանում, ինչպես նաև այն վտանգալից իրադրության վրա, որ կարող էր ունենալ Ադրբեջանի և թուրքիայի միավորումը տարածաշրջանի վրայով: Այս ուղղությամբ Հայաստանի վարչապետը մարտի վերջերին Թիֆլիսում մի շարք առանձնագրույցներ ունեցավ բրիտանական հրամանատարության և մասնավորապես գեմ. Թոմսոնի հետ: Վերոհիշյալ հանգամանքները, ինչպես նաև բրիտանական հրամանատարության անկարողությունը տարածաշրջանում կարգն ու անվտանգությունը պահպանելու հարցում, անգլիացի զինվորների տրտուկն ու հայրենիք վերադառնալու պահանջը, համոզեցին Թոմսոնին, որ անհրաժեշտ է վերանայել քաղաքականությունը Շարուր-Նախիջևանի հարցում և վերջինիս կառավարումը հանձնել Հայաստանին: Արդեն ապրիլի 3-ին արտգործմինիստրության գլխավոր քարտուղար Ա. Տեր-Ակոպովը տեղեկացնում է Ներքին գործոց նախարարությանը, որ «զենեքալ Թոմսոնի հետ մինիստր-նախագահի գրույցից պարզվել է, որ անգլիա-

1. Տես՝ ՅՅ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 40, թ. 41:

կան հրամանատարությունը սկզբունքորեն համաձայն է վերանայելու Վեդիբասարի և Նախիջևանի շրջանների վերաբերյալ զնդապետ Լաուրոնի հետ հայկական կառավարության ստորագրած համաձայնագիրը»¹:

Այնուհետև հայտնելով, որ այդ ուղղությամբ արդեն թոմսոնի կողմից լիազորություններ են տրված գնդ. Տեմպերլեյին ու Լաուրոնին փոխարինած գնդ. Սիմիսոնին² և, որ Տեմպերլեյի՝ Ջոզ գյուղից վերադառնալուց հետո հերթի կղրվի համաձայնագրի վերանայումը, խնդրում է տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որ ներքին գործոց մինիստրությունը կուզենար մտցնել այդ համաձայնագրի մեջ: Իսկ ապրիլի 6-ին, Թիֆլիսում տեղի ունեցած խորհրդակցությունից հետո, գեմ. Թոմսոնը հատուկ գրություն է ուղարկում Հայաստանի Հանրապետության վարչապետին Կարսի և Նախիջևանի գաղթականների վերադարձի մասին: Նրանում ասված էր.

«1. Ժողովրդի վերադարձը Կարսի և Նախիջևանի նահանգների գյուղեր, ամենակարևոր հարցն է հանդիսանում: Այնտեղ, որտեղ հնարավոր չի լինի նրանց վերադարձնել սեփական գյուղերը, նրանց պետք է բնակության տեղ հատկացվի, ինչպես նաև պետք է հնարավորություն տրվի զբաղվելու գյուղատնտեսությամբ:

Նրանց վերադարձի ժամանակ ընդհուպ մինչև հին ռուսական սահմանը, բրիտանական հրամանատարության կողմից ամեն հնարավոր պաշտպանություն կցուցաբերվի առանց ազգության և հավատի տարբերության: Բայց նրանք, որոնք կանցնեն հին սահմանը և Թուրքահայաստան, կանեն դա սեփական ռիսկով. ես նրանց որևէ պաշտպանություն չեմ կարող տալ:

2. Գաղթականների վերադարձից հետո, որը, ես հուսով եմ, կավարտվի այս ամսվա վերջին, **անգլիական զորքերը հետ կկանչվեն Կարսից և Նախիջևանից, բայց անգլիական միսսիան կմնա:** Դրա համար էլ մինչև մայիսի 1-ը վարչություն պետք է կազմակերպվի ամեն մի շրջանում և պահպանվի անհրաժեշտ քանակությամբ

1. Տես Բանբեր Հայաստանի արխիվների, 1993, N 1-2, էջ 88:

2. Արխիվային փաստաթղթում (տես ԳԳ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 45 II մաս, թ. 623) ոչ թե Սիմիսոն, այլ Սիքստոն է անվանված:

հայկական զորքով: **Կառավարության ձևը, որ հաջողությամբ հաստատված է Շուշիում**, առաջարկվում է և, ես բարեհաճ եմ հաստատելու նմանատիպ կառավարություններ Կարսում և Նախիջևանում նույն անվանմամբ, ինչ որ Շուշիում»¹ (ընդգծումը մերն է - է. Ջ.):

Հասկանալի է, որ առանց զորքերի առկայության անգլիական միսսիան որևէ կերպ ազդել իրադրության վրա չէր կարող: Հետևապես տարօրինակ է, որ շտապում է զորքերը հանել Նախիջևանից և Կարսից, մինչդեռ Ղարաբաղից զորքերը հանելու մասին այդ ամիսներին ընդհանրապես խոսք չկար: Տարօրինակ է նաև, որ Շուշիում հաստատված կառավարման ձևը հաջողված է համարում այն դեպքում, երբ Ղարաբաղի հայությունը բողոքում ու չէր ճանաչում արյունարբու քուրդ խոսրով-բեկ Սուլթանովի իշխանությունը, երբ վերջինս, հատկապես 1919 թ. առաջին ամիսներին, առանց անգլիական ուժերի աջակցության, Ղարաբաղում դիմանալ չէր կարող: Ինչևէ. գրության հաջորդ երկու կետերում գեմ. Թոմսոնը դատողություններ անելով այն մասին, որ գաղթականների վերադարձը պետք է կատարվի առանց բռնությունների ու արյունահեղության, որ գեմ. Դեվին գտնվում է Կարսում և նախապատրաստական աշխատանքներ է տանում հայկական զորքերի առաջխաղացումն ապահովելու համար, միաժամանակ շեշտում է, որ Բաթումի նահանգում նախկինի պես կկառավարի Կուկ Կոլիսը, իսկ «Ղարաբաղը մնում է Բաքվի հրամանատարության և Ադրբեջանի կառավարության ենթակայության տակ»²:

Ինչպես տեսնում ենք, ապրիլի 6-ի իր այս գրությամբ գեմ. Թոմսոնը փաստորեն տարածքային սահմանագծումներ է անում Հայաստանի և Ադրբեջանի միջև: Ճիշտ է, նրանում բացակայում էր Ջանգեզուրի անունը, բայց քանի որ խոսրով-բեկ Սուլթանովի նշանակման մասին Ադրբեջանի կառավարության որոշման մեջ ասված էր, որ նա նշանակվում է Ղարաբաղի և Ջանգեզուրի նահանգապետ, ուստի պետք է ենթադրել, որ «Ղարաբաղ» ասելով Թոմսոնը հասկացել է նաև Ջանգեզուրը: Ինչևէ, Հայաստանի կառավարությունը պետք է արձագանքեր անգլիացիների առաջարկին, մանավանդ, որ ինչպես նահանգապետ Վարչամյանն է հե-

1. Տես «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1-2, էջ 89:

2. Նույն տեղում, թ. 90:

տագայում նշում «նրանց առաջարկությունը կրում էր վճռական բնավորություն. պատասխանի համար տրված էր շատ կարճ ժամանակամիջոց: Եվ, միաժամանակ, նրանք պարզ ու որոշակի հայտնել էին, որ եթե հայկական կառավարությունը չհամաձայնի ընդունել այդ առաջարկը, նրանք ստիպված կլինեն շրջանը հանձնել Ադրբեջանին: Այդպիսով կառավարության առաջ դրված էր երկընտրանք. համաձայնություն տալ անգլիական առաջարկին, կամ գրկվել այն խոշոր քաղաքական ու տնտեսական առավելությունից, որ տալիս էր այդ առաջարկը»: Փորձելով հիմնավորել այդ առավելությունները, Վարչամյանը շարունակում է. «Հայաստանն ամեն կողմից կտրված էր, դրսի աշխարհի հետ ոչ մի կապ չուներ: Ջուլֆա-Նախիջևանի երկաթուղային գիծը նրան միացնում էր Պարսկաստանի հետ և հնարավորություն էր տալիս այդ վերջինի հետ սերտ առևտրական կապ պահպանել, Պարսկաստանի միջով Եվրոպայի վաճառականական աշխարհի հետ հարաբերություն ստեղծելու, ապահովելու տրանզիտը: Հնարավորություն էր տալիս 50-60 հազար գաղթականության վերադարձնել իրենց բնակավայրերը և անմիջական կապ էր հաստատում Ջանգեզուրի հետ: Անգլիացիք երաշխավորում էին, որ երկրի ազգաբնակչությունը չի անի ոչ մի փորձ ապստամբության և խոսք էին տալիս իրենց զորամասերը պահել այնքան ժամանակ, որքան կպահանջի հայկական կառավարությունը: Այդ պայմաններով կառավարությունը տվեց իր համաձայնությունը»¹:

Նահանգապետ Վարչամյանի ասածների մեջ միակ իրականությանը չհամապատասխանողը անգլիական զորքերի պահելուն վերաբերող մասն է. մենք արդեն վերը տեսանք, որ Թոմսոնը հայտնել էր խատիսյանին, որ մայիսի վերջին զորքերը կհանեն Նախիջևանից ու այնտեղ կթողնեն միայն անգլիական միսսիան: Թոմսոնի առաջարկությունը հատուկ քննարկման առարկա դարձավ Հայաստանի կառավարության ապրիլի 12-ի նիստում հետևյալ ուշագրավ ձևակերպումով.

«**1. Լսեցին** - Ղարսի, Շարուրի և Նախիջևանի ռայոնները գրավելու Տոմսոնի առաջարկության հետ կապված մի քանի հարցեր:

2. Որոշեցին - Ընդունել Տոմսոնի հիշյալ վայրերի՝ զորքերով և գաղթականներով գրավելու առաջարկու-

յունը, ցանկություն հայտնելով անգլիական զորքերի ավելի երկար մնալու նկատմամբ ...»:

Որոշման մեջ խոսվում է նաև այդ նպատակի համար ռազմական միմիստրությանը հինգ միլիոն ռուբլի հատկացնելու մասին անհրաժեշտ ծախսերի համար, նոր զորամասեր ստեղծելու, ինչպես նաև միմիայն այն գաղթականների վերադարձը թույլատրելու, որոնք տվյալ վայրերի բնակիչներ են և այլն¹:

Ապրիլի 14-ին Վրաստանի կառավարության նախագահին և Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին ուղարկած գրության մեջ Թոմսոնը հայտնում է իր վճիռը նաև Վրաստանի և Հայաստանի միջև տարածքային սահմանագծման կապակցությամբ: «Ձեր միջև վիճելի գոտում սահմանների ժամանակավոր որոշման և վարչության նշանակման վերաբերյալ, - ասված է նրանում, - ուղարկում են Ձեզ իմ որոշումը, որին Դուք համաձայնել եք ենթարկվել Ձեր կառավարություններից ստացած լիազորությամբ:

1. Ախալքալաքի գավառը կլինի Վրաստանի կառավարման տակ:
2. Արդահանի գավառի մի մասը, որը գտնվում է Քուռ գետի ձախ կողմում, ներառյալ և Արդահան քաղաքը, նմանապես կլինի Վրաստանի կառավարման տակ:
3. Բորչալուի գավառի մի մասը՝ ջրբաժանից դեպի Սևքար, ներառյալ Ալավերդի գյուղը և երկաթուղային կայարանը, կլինի Վրաստանի կառավարման տակ:
4. Իսկ Բորչալուի գավառի մյուս մասը, որ գտնվում է ջրբաժանից հարավ, ներառյալ Սանահին կայարանը, կլինի Հայաստանի կառավարման տակ:
5. Կարսի և Կաղզվանի մարզերը կլինեն Հայաստանի կառավարման տակ:
6. Նախիջևանի գավառը՝ սահմանափակված հյուսիսային և հարավային ջրբաժաններով, ընդհուպ մինչև Ջուլֆա կայարանը, կլինի Հայաստանի կառավարման տակ:
7. Օլթիի օկրուգը և Արդահանի մի մասը, որը գտնվում է Քուռ գետի աջ ափին, կենթարկվեն Բաթումի զինվորական նահանգապետին:
- 8) Սահմանները նշված են կցված քարտեզի վրա»²:

1. Տես՝ «Հառաջ», 29 հոկտեմբեր 1919 թ.:

1. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 43, թ. 65:

2. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1-2, էջ 90-91:

Այնուհետև նշելով, որ այս մարզերում կառավարումը պետք է մտցվի մայիսի 1-ից, թոմսոնը միաժամանակ զգուշացնում է, որ կառավարումը նրանցում պետք է կրի բացառապես քաղաքացիական բնույթ, որ այդ տեղերում պետք է պահվեն միայն մինիմում քանակությամբ զորքեր՝ կարգը պահպանելու համար և որ այս նոր սահմաններում ֆինանսական ու մյուս հարցերը կարգավորվում են հաշտարար հանձնաժողովների հունվարի 18-ի որոշումներով: Վերջին՝ 12-րդ կետում թոմսոնը հույս է հայտնում, որ շուտով կստանա նրանց համաձայնությունը վերը շարադրված պայմանների նկատմամբ:

Դժվար չէ նկատել, որ թոմսոնի կողմից գծված Հայաստանի Հանրապետության սահմանները ավելի նեղ են, քան բուն Ռուսահայաստանն է: Նրանից դուրս էին մնում Ջանգեզուրն ու Ղարաբաղը, Ալավերդու շրջանը, Ախալքալաքը, Արդահանի շրջանի մի զգալի մասը և Օլթիի գավառը: Ճիշտ է, թոմսոնը դա համարում էր ժամանակավոր՝ մինչև Փարիզի կոնֆերանսի որոշումը, բայց եթե Անդրկովկասի բրիտանական իշխանությունները այդ շրջանները չէին ուզում Հայաստանի Հանրապետության կազմում տեսնել, ապա ի՞նչ երաշխիք կար, որ Փարիզի կոնֆերանսը այլ որոշում կընդունի:

Անհետաքրքիր չէ այն փաստը, որ Կարսը և Շարուր-Նախիջևանը Հայաստանին հանձնելու վերաբերյալ թոմսոնի որոշման մասին Ադրբեջանում ժամանակին չէին իմացել: Ապրիլի 18-ին Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Ռեքինսկին Բաքու՝ իր կառավարությանն ուղարկած գաղտնի հեռագրում հայտնում է. «Ըստ լուրերի անգլիացիները Կարսը տվել են հայերին և պատրաստվում են հայերին հանձնել Շարուրը և Նախիջևանը: Խնդրում են ստուգել և հարցում անել անգլիացիներին և եթե դա ճիշտ է, ապա կարծում են անհրաժեշտ է բողոքել Հնդկաստանի, Թուրքեստանի, Աֆղանստանի, Մալայան կղզիների և Կովկասի ամբողջ մուսուլմանական աշխարհի առաջ, ինչպես նաև հաշտարար կոնֆերանսի առաջ՝ մի քանի միլիոն մուսուլմանների կես միլիոն հայերին ենթարկելու անգլիացիների ցանկության դեմ»¹:

Մի կողմ թողնելով Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի կողմից ազգագրական տվյալների խիստ խեղաթյուրման

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 358, թ. 6:

փաստը, ասենք, որ այս անգամ Ադրբեջանի կառավարության բողոքները էապես չազդեցին թոմսոնի վճռի վրա, թեև վերջինս վճռականորեն դեմ արտահայտվեց մեծ թվով հայկական զորքեր մտցնելու Շարուր-Նախիջևան և այն ռազմական օկուպացիայի ենթարկելու Դրոյի կազմած ծրագրին: Ապրիլի 24-ին գեմ. Դևիս¹ Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղարկած նամակում գրում է, որ «գեներալ թոմսոնը համաձայն չէ այդ (Դրոյի) առաջարկության հետ հետևյալ պատճառներով.

ա. Ուժը չափազանց մեծ է, այսինքն չափազանց շատ է զորքը.

բ. Դա կարող է բախումներ առաջացնել.

գ. Բնակչությանը զինաթափելու առաջարկը անիրազործելի է և չպետք է փորձել այն իրականացնել»²:

Ի դեմս թոմսոնի այս առարկությունների՝ մենք դարձյալ գործ ունենք մահմեդական արևելքը չհասկանալու և չըմբռնելու հետ: Դրոն լավ էր հասկանում, որ առանց ռեալ ուժի առկայության հնարավոր չի լինի կազմակերպել հայ գաղթականների վերադարձը և հնազանդ պահել երկրամասը, առավել ևս եթե այն զինված է: Ուրեմն, առարկելով մեծաթիվ ուժեր մտցնելու և մահմեդական բնակչությանը զինաթափելու առաջարկի դեմ, թոմսոնը դրանով իսկ, կամա թե ակամա, հարցականի տակ էր դնում Նախիջևանի երկրամասը մեկընդմիջտ Հայաստանին հանձնելու հարցը, նախադրյալներ ստեղծում Հայաստանի դեմ ըմբոստությունների ծագման համար: Ճիշտ է, նա խոստանում էր սկզբի համար անգլիական պահակազորեր (յուրաքանչյուրում 100 զինվոր) պահել Դավալուում, Սադարակում, Յայջիում և Ջահրիում, ինչպես նաև մի փոքրիկ ջոկատ Նախիջևանում, բայց դա միայն ժամանակավորապես, մինչև գաղթականության տեղավորումը և վարչական ապարատի ստեղծումը: Դրա համար էլ նամակի վերջում խնդրում է ընտրել և նախապատրաստել ընդունակ վարչական աշխատողներ այդ նպատակի համար: Հայաստանի կառավարությունն էլ կատարելով թոմսոնի առաջարկությունը, արդեն

1. Թարգմանիչի մեղքով (անգլերենից ռուսերեն) թե հեղինակի անունն է սխալ նշված (Դեվիսի փոխարեն Դեվիս) և թե հասցեատիրոջ պաշտոնը. «միմիստր-նախագահ» կամ «վարչապետ» բառերի փոխարեն օգտագործված է «պրեզիդենտ» բառը:

2. «Բանբեր Հայաստանի արխիվների» նշվ. համարը, էջ 92:

ապրիլի 26-ին քննում է այդ հարցը և որոշում «Նախիջևանի և Շարուրի գավառների ադմինիստրացիան կազմակերպել էջմիածնի գավառի օրինակով»¹: Իսկ 27-ին քննարկում է խնամատարության և աշխատանքի նախարարության ներկայացրած օրինագիծը՝ Նախիջևանի և Շարուրի շուրջ 50 հազար գաղթականների վերադարձը կազմակերպելու և նրանց պետական օգնություն ցույց տալու մասին և որոշում. «Խնամատարության և աշխատանքի մինիստրին 18013600 ռուբլի վարկ բանալ՝ Նախիջևանի և Շարուրի փախստականների ներգաղթի ժամանակ և վերջինիս հաջորդող երեք ամսում խնամելու համար»²: Վերջապես 29-ին կառավարությունը լսում է «ներքին գործերի մինիստրի գեկուցումը՝ Շարուր-Նախիջևանի շրջաններից ստեղծվելիք վարչական նոր միավորների սահմանների մասին» և որոշում «սահմանել 3 գավառ.

- ա). Գողթանի գավառ, գավառ(ային) քաղաք՝ Ագուլիս,
- բ). Նախիջևանի - // - // - Նախիջևան
- գ). Շարուրի - // - // - Բ(աշ) - Նորաշեն
և հավանություն տալ սահմաններին»³:

Այսպես Հայաստանը պատրաստվում էր իր գերիշխանությունը հաստատել տարածաշրջանում, իսկ Ադրբեջանը այդ նույն օրերին արդեն դավեր էր նյութում դեռևս չհաստատված այդ գերիշխանության դեմ: Ապրիլի 29-ին Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Թեքինսկին երկու գաղտնի հեռագրեր է ուղարկում իր կառավարությանը, որոնցից առաջինի մեջ հայտնում է, որ մայիսի 3-ին Հայաստանի կառավարությունը հայտարարություն կիրառարակի դաշնակիցների համաձայնությամբ Նախիջևանը գրավելու մասին⁴, իսկ երկրորդում հայտնում է, թե «եթե Նախիջևանը դիմադրություն ցույց տա հայկական զորքերին, ապա ի՞նչ օգնություն ցույց կտա կառավարությունը և կուղարկի՞ զորք թեկուզ կամավորների անվան տակ: Այսօր կգա գեներալ Միլնը, շտապ հեռագրեցեք, սպասում եմ պատասխանի»⁵: Մայիսի 1-ին կրկին Երևանից երկու հեռագրեր թռան Բաքու: Առա-

1. Նույն տեղում, էջ 66:
2. Նույն տեղում, էջ 96:
3. Նույն տեղում:
4. **ՀՀ ՊԿՊԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 358, ք. 8:
5. Նույն տեղում, ք. 9:

ջինում Թեքինսկին հայտնում է գեներալներ Միլնի և Թոմսոնի Թիֆլիս վերադառնալու մասին և խնդրում խոսել նրանց հետ Նախիջևանի մասին և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, քանի որ իր բողոքները «անօգտակար կլինեն և մինչև մայիսի 3-ը ժամանակավրեպ, քանի որ դեռ անզլիական գեներալ Դևիի և Երևանի ջոկատի հրամանատար Դրոյի ստորագրությամբ հրամանը՝ Նախիջևանի օկրուգի վերաբերյալ, չի հրապարակվել»¹: Երկրորդում տեղեկացնում է, որ ապրիլի 30-ին Երևան են եկել Մակինսկին (Գանիզադե) և Նախիջևանսկին, բայց Թոմսոնը թույլ չի տվել Մակինսկուն անցնել Նախիջևան, ուստի վերջինս Նախիջևանի համար բերած գումարները հանձնել է իրեն և այժմ ինքը սպասում է ցուցումների, թե ինչպես վարվել այդ գումարների հետ²:

Սակայն Թեքինսկու թափած ջանքերը ապարդյուն են անցնում. Ադրբեջանը բացահայտորեն ընդդիմանալ բրիտանական հրամանատարությանը և զորք ուղարկել Նախիջևան դեռևս չէր կարող: Եվ մայիսի 3-ին Թեքինսկին Բաքվից ստանում է հետևյալ հրահանգը. « Նախիջևան զորամասեր և կամավորներ ուղարկելու մասին ներկայումս խոսք լինել չի կարող, այդ հարցը եռանդուն կերպով քննարկվում է կառավարությունում ...: Արդյունքի մասին կհայտնեմ, եռանդագին բողոքեցեք Նախիջևանի շրջանի գրավման ուղղությամբ ամեն կարգի գործողության և Ադրբեջանի սուլվերեն իրավունքների նսեմացման (դեմ)»³:

Այսպես բողոքում էր Ադրբեջանը, աջ ու ձախ հեռագրեր տեղում թե անզլիացիներին, թե Հայաստանի կառավարությանը, իսկ Մ. Խան-Թեքինսկին նույն մայիսի 3-ին Հայաստանի արտգործմինիստրին ներկայացրած նոտայում նույնիսկ հնարավոր է համարում գրել, թե «Իմ կառավարության հանձնարարությամբ ես բողոքում եմ Հայաստանի հանրապետության զորքերը Նախիջևանի շրջան ուղարկելու դեմ, որը կազմում է և Ադրբեջանի հանրապետության անբաժանելի մասը: **Ես ուզում եմ հավատալ, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հնարավոր չի համարի երկու հարևան հանրապետությունների սահմանների մասին հարցը լուծել միաժամանակ և՛**

1. Նույն տեղում, ք. 10:
2. Տես՝ նույն տեղում, ք. 11:
3. Նույն տեղում, ք. 12:

զենքի ուժով, և՛ իր ներկայացուցիչների միջոցով Կովկասյան կոնֆերանսում»¹, որի գլխավոր խնդիրներից մեկը խաղաղ ճանապարհով բոլոր տարածքային վիճելի հարցերի լուծումն է հանդիսանում...»² (ընդգծումը մերն է - Է. Ձ.): Կարծես թե Ադրբեջանը շատ էր հաշվի առել Հայաստանի կարծիքը ամբողջովին հայաբնակ Լեռնային Ղարաբաղում զեներալ-նահանգապետ նշանակելիս, և զորքեր մտցնելիս, կարծես թե այն ժամանակ Հայաստանն ու Ադրբեջանը հարևաններ չէին և միայն Հայաստանն է պարտավոր հաշվի նստել հարևանների կարծիքի հետ, իսկ հարևանները՝ ոչ: Հենց այդ մտայնությամբ չէ՞ր ղեկավարվում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը, երբ արդեն հաջորդ օրը՝ մայիսի 4-ին, չսպասելով Հայաստանի կառավարության պատասխանին, հեռագրում էր Բաքու, թե «շտապ պատասխանեցեք իմ ապրիլի 29-ի N 72 հեռագրին: Նախիջևանցիները ինձ հարցնում են ինչպե՞ս վարվել և կգա՞ արդյոք Ադրբեջանը իրենց օգնության, եթե նախիջևանցիները հայերին դիմադրություն ցույց տան»³: Այդ նույն օրը Թեքինսկին մի ուրիշ շտապ հեռագիր էլ էր ուղարկել Բաքու՝ մինիստր-նախագահին, որում ասված էր. «Հայկական զնդերը շարժվեցին Նախիջևանի կողմը: Որպեսզի Հայաստանի վրա ճնշում գործադրվի, անհրաժեշտ են համարում անհապաղ մեր զնդերը կենտրոնացնել Հայաստանի սահմանների վրա: Նախիջևանի շրջանի բնակչությունը պատրաստ է դիմադրություն ցույց տալու, բայց վախենում է անգլիացիների ակտիվ միջամտությունից հօգուտ Հայաստանի: Մայիսի 2-ին զեներալ Դևին Երևանից ճանապարհվեց Նախիջևան: Դիլիջանում կանգնած է միայն չորրորդ գունդը՝ ոչ լրիվ կազմով»⁴:

Այսպես էր գործում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ.Խան-Թեքինսկին Երևանում⁵. մի կողմից Հայաստանի կառավարությանը հարցը խաղաղությամբ լուծելու կոչ անելով,

1. Գումարվել է Թիֆլիսում Վրաստանի նախածեռնությամբ 1919 թ. ապրիլի 25-ին և ընդմիջումներով շարունակվել մինչև հունիսի առաջին կեսը: Ավարտվել է անարդյունք:

2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 212, ք. 98:

3. Նույն տեղում, գ. 358, ք. 14:

4. Նույն տեղում, ք. 13:

5. Ս.Վրացյանը վկայում է, որ Հայաստանի կառավարությանը հայտնի էր Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության ծածկագիրը, հետևապես և հեռագրերի բովանդակությունը: Ադրբեջանի խորհրդայնացումից հետո դրանք հրապարակվել են առանձին գրքույկով և

մյուս կողմից իր կառավարությունից պահանջում էր ռազմական գործողություններ սկսել Հայաստանի դեմ՝ նրա թույլ պաշտպանված սահմանում, Դիլիջանի հատվածում: Դե ինչ, ճիշտ է ասված, որ դիվանագետից բարոյականություն պետք չէ սպասել:

* * *

1919թ. մայիսի 3-ին անգլիական զեներալ Դևին և Երևանի շրջանի զորապետ Դրոն ստորագրեցին հրաման (հայերեն և ռուսերեն լեզուներով) ուղղված Նախիջևանի շրջանի ազգաբնակչությանը շրջանը Հայաստանի Հանրապետությանը միացնելու և նրանում կարգ ու կանոն հաստատելու մասին: Ըստ որում, թեև հրամանի տակ առաջինը դրված է անգլիացի զեներալի ստորագրությունը, բայց փաստորեն դա Դրոյի կոչն է Նախիջևանի ազգաբնակչությանը, հրամանը կազմված է նրա անունից: «Ձեզ եմ դիմում, Նախիջևանի շրջանի բնակիչներ, - ասված է հրամանում: **Ես իմ զորքերով մտայ այս շրջանը իմ Կառավարության և Դաշնակիցների հրամանով** իրենց տուն վերադարձնելու համար իրենց բնակավայրերից կտրված ինչպես հայ, այնպես և մահմեդական գյուղացիներին: Դարավոր հարևանները նորեն պիտի վերադառնան բարեկամական կենակցութեան»¹ (ընդգծումը մերն է - Է. Ձ.):

Ձգտելով մեղմել կրքերը և երաշխավորել հայ և թուրք ժողովուրդների «բարեկամական կենակցությունը», հրամանում հատկապես ընդգծված է, թե «Յիշեցեք, որ **մեր պետությունը անվանվում է Հայաստանի հանրապետություն, այսինքն Հայաստանում ապրող բոլոր ժողովուրդների հանրապետություն:** Կառավարության գլխավոր նպատակն է ստեղծել ազատ կեանք հանրապետության բոլոր ժողովուրդների համար: **Մեր ժողովուրդները հավասար են, ինչպես քրիստոնիայի, այնպես և**

«Յառաջ»-ի մի շարք համարներում: Մենք օգտագործել ենք արխիվային բնագրերը, նախ որովհետև որոշ տարբերություններ կան բնագրերի և հրապարակված տեքստերի միջև և հետո թարգմանությունը զերծ չէ թերություններից:

1. «Աշխատավոր», 3 մայիսի 1919 թ.:

մահմեդականի համար: Ով էլ որ խախտի օրենքը, նա հավասարապես պատժում է ամենքին էլ» (ընդգծումը մերն է - Է. Ջ.): Այնուհետև անդրադառնալով ամենացավոտ հարցին՝ մահմեդականների կողմից զավթված հողերը վերադարձնելուն, Դրոն զգուշացնում է, որ ով «կը համարձակվի հակառակել ամբողջ աշխատավոր ժողովրդի այս ամենօրինական պահանջի անհապաղ կատարմանը, իմ կողմից ձեռք կը առնվեն ամենավճռական միջոցներ մինչև մահապատիժ: Այն գյուղերն ու ավանները, որոնք դիմադրություն ցույց կտան, կը համարվեն օրենքից դուրս և կրակի ու սրի կը մատնվեն»¹:

Սակայն ոչ մայիսի 3-ին և ոչ էլ հաջորդ օրը հայկական զորքերը տեղից չչարժվեցին և Նախիջևանի տարածք չմտան: Պատճառը անգլիական հրամանատարության փորձն էր օգտագործել Նախիջևանի հարցը Ղարաբաղը Սուլթանովին ենթարկելու համար: Դեռ երևանում մայիսի 1-ին, Թոմսոնը հայտնել էր Հայաստանի կառավարությանը, որ հայկական զորքերին թույլ չի տա մտնել Նախիջևան, մինչև որ Ղարաբաղի հայոց ազգային խորհուրդը չկատարի զեն. Շատելվորտի պահանջը ղարաբաղցիներից թե Ադրբեջանի գերիշխանությունը ճանաչելու, թե քոչվորներին դեպի յայլաղները ճանապարհի տալու հարցում: Եվ քանի որ զենեթրալներ Թոմսոնը և Միլնը շտապով մեկնել էին Թիֆլիս, ուստի այնտեղ զնաց նաև վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանը² այդ հարցում պարզություն մտցնելու նպատակով: Մինիստրների խորհրդին ներկայացրած նրա զեկուցումից երևում է, որ Թիֆլիս է հասել մայիսի 3-ի առավոտյան ժամը 11-ին և արդեն 12-ին դիվանագիտական ներկայացուցիչ Եվանգուլովի հետ մեկտեղ մասնակցել Թոմսոնի գումարած խորհրդակցությանը, որին ներկա էին նաև զենեթրալներ Բիչը, Բրոֆը և Դեվին՝ իրենց շտաբների պետերի հետ միասին: Նախ կարդացվեց Ղարաբաղի մասին զեն. Շատելվորտի քսան կետերից բաղկացած զեկուցագիրը, որում Հայաստանը մեղադրվում էր ղարաբաղցիներին Ադրբեջանի դեմ գրգռելու, զինված կազմավորումներ ստեղծելու, քոչվորների ճանապարհները փակելու և բազմաթիվ այլ մեղքերի մեջ, որոնք, իբրև թե, Ջանգեզուրում Հայաստանի լիազոր կապիտան Արսեն

1. Նույն տեղում:

2. Հայաստանի խորհրդի և կառավարության որոշումով Գ. Քաջազնունին գործուղվել էր Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

Շահմազյանի գործունեության արդյունք են: Ուստի զեկուցագրի ընթերցումից հետո Թոմսոնը հայտարարեց, թե «զեկուցումից երևում է, որ Հայաստանը Ղարաբաղի գործերին իր միջամտությամբ կարծես թե պատերազմ է հայտարարում Անգլիային, որ Սուլթանովը իրեն կոռեկտ է պահում, բնակչությունը խաղաղ է ապրում և գրգռվում է միայն Հայաստանի կառավարության գործակալների կողմից, այդ ամենը առիթ է տվել կանգնեցնելու մեր զորքերի առաջխաղացումը դեպի Նախիջևան: Այդ առաջխաղացումը հնարավոր է միմիայն հետևյալ պայմանների կատարման դեպքում:

1. Շահմազյանը և բոլոր մյուս ագիտատոր-դեյեգատները պետք է հետ կանչվեն Ղարաբաղից:
2. Հայաստանի կառավարության անունից Ղարաբաղի մասին թռուցիկ-հայտարարություն, որտեղ կառավարության նկատմամբ ամեն մի ընդդիմություն անթույլատրելի է և որ եթե հայերը հակազդեն, ապա կտուժեն գաղթականները:
3. Քոչվորներին պետք է ճանապարհի տալ (դեպի յայլաղները - Է. Ջ.):
4. Այդ պայմանները կատարելուն պես շարժումը դեպի Նախիջևան անմիջապես կսկսվի»¹:

Խատիսյանը Թոմսոնի այս պահանջներին պատասխանեց մեկ և կես ժամ տևած մի ճառով, որում զարգացնում էր այն միտքը, որ Հայաստանը Ղարաբաղը համարում է իր անբաժանելի մասը, և որ ճիշտ կլինի մինչև Փարիզի կոնֆերանսի որոշումը երկրամասի կառավարումը իրականացնել անգլիացի զենեթրալ-նահանգապետի և հայ ու մուսուլմանական ազգային խորհուրդների միջոցով՝ առաջինը հայկական մասում, իսկ երկրորդը՝ մուսուլմանական (Ասկերանից արևելք ընկած շրջանում): Իսկ գործակալներին հետ կանչել չի կարող, քանի որ այդպիսիք չունի այնտեղ և ընդհանրապես ղարաբաղցիների վրա ազդել չի կարող, որովհետև ինքը չի կառավարում Ղարաբաղը, բայց կարող է խորհուրդ տալ քոչվորների հարցում, եթե վերջիններիս ուղեկցեն անգլիական զինվորներ և հայ ու մուսուլման հսկիչներ: Անդրադառնալով Նախիջևանի գաղթականների հարցին, Խատիսյանը

1. «Բանբեր»-ի նշվ. համարը, էջ 99: Տես նաև ԳՂԳՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 42, ք. 77:

հայտարարեց, որ նրանց «վերադարձը Նախիջևանի շրջան Ղարաբաղի հարցի հետ կապելը հավասարազոր կլինի թուրքական քաղաքականության սկզբունքներին՝ պատասխանատվություն դնել անմեղ մարդկանց վրա երրորդ անձանց գործունեության համար, ներկա դեպքում Հայաստանի կառավարության ենթադրյալ գործողությունների համար»: Նա պնդեց, որ «գործը և գաղթականներին անհրաժեշտ է շարժել դեպի Նախիջևան չորս պատճառներով.

ա. գաղթականների անտանելի վիճակը, 18.000 մարդուց 8 000-ը մահացել է.

բ. թաթարների տրամադրությունը կարող է փոխվել.

գ. գործի տրամադրությունը կարող է էքսցեսներ առաջ բերել.

դ. նման արգելքը անհամատեղելի է ռազմական պլանների իրագործման հետ:

Իսկ Ղարաբաղցիներին ուղղված առաջարկվող կոչը տպագրել չենք կարող 3 պատճառներով.

ա. մենք նրա հետ համակարծիք չենք ըստ էության.

բ. բնակչությունը նրա հետ համակարծիք չէ.

գ. մեր արժանապատվությունը և պատիվը դա թույլ չեն տալիս, դրա համար էլ մենք ենթարկվում ենք կարգադրությանը՝ չշարժվել դեպի Նախիջևան, բայց կոչը չենք ստորագրի»¹:

Եթե գնահատելու լինենք Ա.Խատիսյանի վարքագիծը այս խորհրդակցության ժամանակ, ապա պետք է ասենք, որ բոլոր կողմերով այն անթերի էր: Դրսևորելով դիվանագիտական ճկունություն ու հաստատակամություն, նա իր հստակ ու խիստ տրամաբանված հարցադրումներով անգլիացի զեներալներին ծանր կացության մեջ դրեց և հարկադրեց փոխել իրենց նախնական տրամադրվածությունը: Ճիշտ է, նրա ելույթից հետո Թոմսոնը, կարծես թե իներցիայով, դեռ շարունակեց դատողություններ անել Շահմազյանին Ձանգեզուրից հետ կանչելու և քոչվորների հարցը լուծելու անհրաժեշտության մասին, միաժամանակ վկայաբերելով Ադրբեջանի բողոքները ինչպես Նախիջևանը հայերին հանձնելու, այնպես էլ անգլիացիների հայասիրական տրամադ-

1.Նույն տեղում, էջ 100-101:

րությունների կապակցությամբ: Բայց նրա խոսքում արդեն նահանջի շեշտադրություն կար, նա այլևս չէր խոսում Ղարաբաղի մասին: Ահա ինչու լսելով Խատիսյանի պատասխանը այն մասին, որ Շահմազյանին արդեն հետ է կանչել զեկուցման համար, իսկ քոչվորների հարցը կկարգավորվի, եթե նրանք ենթարկվեն Հայաստանի կառավարության մշակած կանոններին, Թոմսոնը՝ խորհրդակցելով իր զեներալների հետ, հայտարարեց. «Ես կշռադատեցի ամենը և վճռեցի, որ Ձեր պատասխանները համապատասխանում են իրականությանը, և **դեպի Նախիջևան հայկական զորքերի և գաղթականների առաջ չշարժելու մասին իմ պահանջը հետ են վերցնում**»¹ (ընդգծումը մերն է - է. Ջ.):

Խորհրդակցությունից անմիջապես հետո, նույն օրը, հեռագիր հղվեց Երևան՝ Դրոյի և անգլիական ներկայացուցիչ Չարլսի անունով, դեպի Նախիջևան զորքերի առաջխաղացումը թույլատրելու մասին: Երկու օր հետո մայիսի 5-ին Ղամարլուի մոտ՝ Յուվա գյուղում, տեղի ունեցավ զորքերի բարի երթի հանդիսավոր արարողություն, որին մասնակցելու համար Երևանից ժամանել էին մեծ թվով պառլամենտականներ, կառավարության անդամներ, դաշնակցական հայտնի գործիչներ (Ռ. Տեր-Մինասյանը, Ս. Վրացյանը, Ա. Ջամալյանը) և Նախիջևանի նահանգապետ նշանակված Գ. Վարշամյանը: Դրոյի և մյուսների խրախուսական խոսքից հետո զորքը շարժվում է Դավալու, այնտեղից էլ Գայլի դրունք: Մայիսի 8-ին Բաշ-Նորաշենից «Աշխատավոր» թերթին ուղարկած «Դեպի Շարուր-Նախիջևան» խորագրով թղթակցության մեջ Արամ Մակարյանը հետևյալ կերպ է ներկայացրել այդ առաջխաղացումը. «Չորքի տրամադրությունը չափազանց բարձր էր և ոգևորված: Գնացքը մոտենում էր Դավալու գյուղին ...: Ահագին մի բազմություն է հավաքվել գյուղի առաջ, ուր կանգ է առնում մեր գնացքը: Գյուղը լցվել է Շարուր-Նախիջևանի շրջանների գաղթականներով, որոնք լուր առնելով մեր զորքերի առաջ խաղացման մասին, շտապել են իջնել Դարալազյազի գյուղերից, ուր նրանք պատսպարվել են ահա մի տարի է, հայրենիք վերադառնալու համար:

Արագդայան կայարանը և նրան կից բոլոր շինությունները քարուքանդ են արված: Հեռագրասյուները ու թելերը, երկաթու-

1.Նույն տեղում, էջ 101:

դու գիծը և նրա տակի տախտակները վերանորոգման և շինելու ահազին աշխատանք են պահանջում: Գնացքը մեծ զգուշությամբ էր շարժվում, վաղուց անգործության մատնված գիծը հազիվ է դիմանում գնացքի ահազին ծանրությանը:

Ահա վերջապես Գայլի Դարպասը, որը կարծես իբրև մի դուռ փակում է ամբողջ Շարուրի հարթավայրը: Մենք անցնում ենք անարգելք: Հեռվում երևում են մեր զորքերի շղթաները, որ փռված կանաչ ու ծաղկած դաշտում, կամաց-կամաց առաջ են ընթանում: Զորքերի գլխավոր ուժերը մի երկու ժամ առաջ են անցել արդեն: Հեռվում նշմարվում է Բաշ-Նորաշենը... Հայկական գյուղերը՝ Ուլիա-Նորաշենը, Խանլուխլարը և ուրիշներն ավերված են: Քանի որից անցնում ենք Նախիջևան»¹:

Մինչդեռ այդ նույն օրերին՝ մայիսի 8-ին և 9-ին, Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Թեքինսկին իր կառավարությանն ուղարկած հեռագրում շարունակում էր ռազմական օգնություն պահանջել հավաստիացնելով, թե Նախիջևանցիները հայերին թույլ չեն տալիս անցնել սահմանը: Մայիսի 8-ին նա գրում է. «Մինչև մայիսի 7-ը հայկական զորքերը չեն անցել սահմանը, այն է՝ Գայլի դրունքը, իսկ մուսուլմանները գնդացիրներով պաշտպանում են Գայլի դրունքը Սադարակ գյուղի մոտ»²: «Մայիսի 8-ին հայկական զորքերը դեռ չեն անցել Գայլի դրունքը, որտեղ կանգնած են մուսուլմանները հայերին դիմադրություն ցույց տալու նպատակով, եթե անգլիացիներն անցնեն հայերի կողմը, - ասված է մայիսի 9-ի հեռագրում: Հայերը շարունակում են զորքեր կենտրոնացնել Դավալուում: Հայերը նույնիսկ վարչություն են նշանակել Նախիջևանի համար, բայց նրանց ավանտյուրան չստացվեց շնորհիվ ժամանակին ձեռք առած միջոցների...»³:

Ահա այսպես կեղծ ու պատիր հաղորդումներով, մերթ իրեն, մերթ Նախիջևանցիներին հերոսականություն վերագրելով, Թեքինսկին աշխատում էր դրդել իր կառավարությանը ակտիվ ռազմական գործողությունների, մինչև որ Բաքվից ստացավ հետևյալ հեռագիրը. «Ստեղծված իրադրության պայմաններում մոտ ապագայում Նախիջևանցիները չեն կարող մեզանից իրական օգնութ-

1. «Աշխատավոր», 16 մայիսի 1919 թ.:
2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 358, թ. 17.:
3. Նույն տեղում, թ. 18:

յուն սպասել զորքերով: Եթե տեղական բնակչությունը չի կարող կանգնեցնել հայկական զորքերի առաջխաղացումը, ապա դա կհանդիպի Ադրբեջանի ցավակցությանը, առավել ևս, որ Ղարաբաղի հայերը կտրականապես արգելակվում են այնտեղ Ադրբեջանի իշխանության հաստատմանը՝ չնայած անգլիական ներկայացուցիչների ներկայությանը, որոնք Ղարաբաղ են մեկնել մեզ օժանդակելու համար»¹:

Մայիսի 12-ին հայկական զորքերը անգլիական փոքրաթիվ ուժերի ուղեկցությամբ Բաշ-Նորաշենից առաջ շարժվեցին դեպի Նախիջևան: Գնացքով Նախիջևան մեկնեցին նաև կառավարության նախագահ Ալ.Խատիսյանը, անգլիական գեներալ Դևին, Նախիջևանի նահանգապետ Գ.Վարշամյանը իր վարչության անդամներով և ուրիշներ: Շահթախթիում գիշերելուց հետո, մայիսի 14-ին Ալ.Խատիսյանի գնացքը հասավ Նախիջևան: Կայարանում Խատիսյանին դիմավորելու էին եկել Շարուր-Նախիջևանի իսլամական զինված ուժերի ընդհանուր հրամանատար Քերբալայ Ալի-խան Նախիջևանսկին, Նախիջևանի մուսուլմանական ազգային խորհրդի անդամներ և պաշտոնական այլ անձինք: Ընդունելությունը տեղի ունեցավ Խատիսյանի վագոն-սալոնում, իսկ հաջորդ օրը Խատիսյանը և գեներալ Դևին հրավիրվեցին ճաշի Քերբալայ Ալի-խանի մոտ: Այդ նույն օրը Խատիսյանը, Դևին և նրանց ուղեկցող անձինք ճանապարհվեցին դեպի Ջուլֆա»²:

Ականատեսը վկայում է, որ երբ պատվիրակությունը հասավ Արաքսի ափին գտնվող Ջուլֆայի կայարանը, ապա գեներալ Դևին դիմելով վարչապետ Խատիսյանին, ասել է «Ահա Արաքսը ձեր սահմանն է և համաձայն հրամանի ես Ձեզ եմ հանձնում»³: Այստեղից Խատիսյանը մի հեռագիր ուղարկեց պարսից շահին, որում մասնավորապես ասված էր. «Նախիջևանի և Շարուրի գավառների սեփականատերը դառնալով և առաջին անգամ Հայաստանի կառավարության կողմից գալով ազնիվ և բարեկամ Պարսկաստանի սահմանի մոտ, որը ամենադժվար պահերին եղել է հայերի բարեկամը, ես պատիվ ունեմ հավաստիացնելու Ձերոց կայսերական մեծությանը, որ այս նոր հարևանությունը կծառայի դարեր ի վեր բարեկամ այս երկու ժողովուրդների երջանկությանը»⁴:

1. Նույն տեղում, թ. 24:
2. Տես «Աշխատավոր», 22 մայիսի 1919 թ.:
3. «Հառաջ», 29 հոկտեմբերի 1919 թ.:
4. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 13, թ. 20:

Նույն օրը գիշերը Խատիսյանը և նրան ուղեկցող անձիք վերադարձան Նախիջևան, ապա հաջորդ օրը մուսուլմանական ազգային խորհրդի նիստին մասնակցելուց հետո ուղևորվեցին դեպի Երևան:

Խատիսյանին և ընդհանրապես հայկական վարչությանը ցույց տված ընդունելությունը պատշաճ էր, արևելյան կեղծ սիրալիրությամբ համենված: Գուցե իսկապես Նախիջևանի թրքության շարքային մասսան, աշխատավորական խավը առանձնակի թշնամություն չտածեր հայերի նկատմամբ, եթե խան-բեգական շրջանները չգրգռեին ժողովրդին ընդդեմ Հայաստանի: Արամ Մակարյանը, որ ուղեկցել էր Խատիսյանին դեպի Նախիջևան ճանապարհորդության ժամանակ, գրում է. «Աշխատող ժողովուրդը ուրախ է, որ վերջապես լուծվեց այս վերջին շրջանի անորոշ դրությունը և հայ-թրքական հարաբերությունները կամաց-կամաց իրենց նորմալ ընթացքը կը ստանան: Նույն տրամադրության չեն զինվորական, խանական, բեգական և այլ դրանց նման տարրերը, որոնք իրենց բավական ընկճված են զգում:

Շարուր-Նախիջևանի թրքական կառավարության զինված ուժերը, իրենց թնդանոթներով և ռազմամթերքով, անցել են պարսկական ափը և մի մասն էլ լեռները. նրանք, տեղացիների պատմելով, սպասողական դիրք պիտի բռնեն և հետևեն հայկական կառավարության քաղաքականությանը դեպի թուրք ժողովուրդը:

Եթե վերաբերմունքը դեպի թուրքերը լինի բացասական, այն ժամանակ լեռներում ապաստանած զինված ուժերը՝ ավազակային խմբերի վերածված, պիտի հարձակուն կատարեն ...»¹:

Ինքը՝ Նախիջևանի զինված ուժերի հրամանատար Զերբալայ Ալի խանը, ընդունելության ժամանակ խոսքն ուղղելով Խատիսյանին, ասել էր. «Նախիջևանի թրքությունը հրաման է ստացել անգլիական բարձր հրամանատարությունից ընդունել հայկական իշխանությունը: Խոնարհվելով դաշնակիցների կամքի առաջ, մենք խնդրում ենք հայկական կառավարությունից

ա. զինաթափ չանել ժողովրդին,

բ. վարչության շարքերում հայերին հավասար ընդունել նաև թուրքերին,

գ. ոչ մի թուրք իւր անցյալ գործունեության համար

1. «Աշխատավոր», 22 մայիսի 1919 թ.:

չպետք է պատասխանատվութան ենթարկվի, դ. թուրք զաղթականությունը՝ թվով 60.000 խնամել և կառավարության հաշվով վերադարձնել իրենց բնակատեղը» (զաղթականության մեծ մասը Ջանգեզուրի և Դարալագյազի շրջանից էին, կային և Երևանից ու Բայազետից):

Զինաթափության հարցը ամենամտահոգիչն էր վարչապետի համար: Եվ դա ոչ միայն նրա համար, որ զինված թուրքը ինքնըստինքյան վտանգ է, այլև նրա, որ հանրապետությունում գործում էր զինաթափության մասին օրենքը: Դժբախտաբար այս հարցում Դևին պաշտպանում էր նախիջևանցիներին՝ հայտարարելով, թե «իրենք երաշխավորում են, որ ազգաբնակչությունը ոչ մի զինված ցույց չի անի հայկական կառավարության դեմ»¹: Այնուամենայնիվ նա համաձայնվեց, որ նահանգապետը մի որոշում հրապարակի, որով տեղեկացվում էր ազգաբնակչությանը, որ զենք կրելու համար հատուկ թույլտվություն պետք է ստանալ նահանգապետից: Սակայն այս որոշումն էլ կյանքում չիրականացվեց, քանի որ անգլիական միսսիայի պետի պաշտոնում Դեվիին փոխարինած Պլաուդենը բոլորովին այլ դիրքորոշում որդեգրեց: Նահանգապետ Վարշամյանը պատմում է, որ երբ զենք կրելու որոշման համաձայն ոստիկանությունը Նախիջևանում մի քանի հրացաններ ու ատրճանակներ էր բռնագրավել, ապա «Գնդ. Պլաուդենն անմիջապես կարգադրեց վերադարձնել գրաված զենքերը և դադարեցնել գրավումը: Երբ նրան նկատեցին, որ այդ արվում է անգլիական միսսիայի հրապարակած պարտադիր որոշման հիման վրա, նա պատասխանեց, որ գլխավոր միսսիայի պետն այժմ ինքն է, նախկին որոշումները նրա համար նշանակություն չունեն, այժմս միայն ինքը կարող է որոշումներ ու համաձայնություն տալ և որ իշխանությունը պարտավոր է իր ցուցմունքներով ղեկավարվել»²: Հիշատակելով այս միջադեպը, Վարշամյանը նաև շեշտում է, որ այն խիստ բացասաբար ազդեց թե՛ ոստիկանության և թե՛ ազգաբնակչության վրա, և որ Նախիջևան ժամանած Դրոն այս առթիվ Պլաուդենի հետ վարած բանակցություններից հետո արձակեց մի հրաման, որում ասված էր. «Անհրաժեշտ խուզարկություններ, շուրջկալներ, բանտարկություններ և

1. «Հառաջ», 29 հոկտեմբերի 1919 թ.:

2. «Հառաջ», 21 նոյեմբերի 1919 թ.:

այլն կատարելու ժամանակ խիստ կերպով ղեկավարվել բրիտանական հրամանատարության հետ բերանացի կապած համաձայնությանը, որի հիման վրա **խուզարկություններ, շուրջկալներ, բանտարկություններ և այլն պետք է կատարեն անգլիական զինվորական ներկայացուցչի և մուսուլմանների ներկայացուցչի գիտությամբ ու ներկայությամբ»**¹ (ընգծումը մերն է - Է. Ջ.):

Կարծում ենք, ընթերցողն էլ կընդունի, թե նման պայմաններում որքան ձևական ու անզոր էր դառնում իշխանությունը և որքան վարկաբեկվում էր այն ժողովրդի աչքում:

Նախիջևանի նորահաստատ հայկական իշխանությունների համար դժվարագույն խնդիրներից մեկը վերադարձող գաղթականության ընդունումը և տեղավորումն էր: Արդեն մայիսին մի քանի հազար հայ գաղթականներ, որոնք ապաստանել էին Դարլազյազում, Ջանգեզուրում և այլ տեղերում, բռնեցին տունդարձի ճանապարհը: Դրանք մեծի մասամբ սովահար, առանց գույքի, անասունների և ապրուստի այլ միջոցների մարդիկ էին, որոնց անհրաժեշտ էր ապահովել հողով, տուն ու տեղով, այլև ապրուստի միջոցներով առաջիկա երկու-երեք ամիսների համար: Շարուր-Նախիջևանի շրջանների ընդհանուր տեսուչ Արամ Մակարյանը այդ շրջաններում հնամատարության նախարարության գործունեության մասին մայիսի 28-ին կազմած տեղեկագրում գրում է, որ «Գաղթականական գործը հիշյալ շրջաններում ավելի լավ հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ է մի քանի հարցերի լուծում և կարգադրություն:

1. Կարևոր խնդիրներից մեկը պարենավորման գործն է:

...Հազարավոր գաղթականության պարենավորման գործը կատարված է մեծ դժվարություններով, խնամատարության միմիստրության միջոցներով:

2. 2-րդ կարևոր խնդիրը դա սերմացուի հարցն է: Գաղթականությունը ահա երկու շաբաթ է, որ հաստատված է իրենց գյուղերում և անհամբեր սպասում է սերմացուի և երկրագործական գործիքների...:

3. Չափազանց լուրջ խնդիր է նաև ցանքսերի խնդիրը, այսինքն այն ցանքսերի, որ թուրքերը կատարել են հայապատկան հողերի վրա: Եվ այժմ, երբ հայ գյուղացիությունը վերադառնում է իր վայրերը, անհրաժեշտ է

այս խնդրի անմիջական լուծումը, որովհետև անորոշ դրությունը կարող է հայ-թուրքական հարաբերությունների մեջ անցանկալի դրություն ստեղծել:

4. Կարդինալ խնդիրներից մեկն է նաև վերաշինության գործը: Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ վերահարձած գաղթականությունը կանգնած է գյուղերում հայրենի օջախների ավերակների առաջ, անհրաժեշտ է անմիջական օգնություն այժմ և եթ, քանի դեռ եղանակները տաք են...:

5. Անհրաժեշտ մի կարիք է նաև կապել ամաններ պատրաստելու մի շարք արհեստանոցներ բանալը: Ինչպես հայտնի է, վերադարձող ժողովուրդը բոլորովին զուրկ է կժերից, թասերից, կարասներից և այլն...»¹:

Տեղեկագրից նաև իմանում ենք, որ կարճ ժամանակամիջոցում երկրամասում բացվել է հիվանդանոց, գործարկվել է ջրաղաց, ալրաղաց, բացվել են մի քանի սննդատու կայաններ Բաշ-Նորաշենում, Խանլուխլարում, Նախիջևանում և այլն: Հետաքրքրականն այն է, որ այդ ամենը ոչ միայն հայերի, այլև թուրքերի համար: «Մայիսի 15-ին Նախիջևանում բացված է սննդակայան, - կարդում ենք «Աշխատավոր» թերթի 1919 թ. հունիսի 14-ի համարում, - որից օգտվում են 150 թուրք և 150 հայեր»: Այդ նույն տեղում նաև ասված է, որ Խանլուխլարի սննդակայանից օգտվում են նաև ասորական Սիագութ գյուղի 176 գյուղացիներ: Ծիշտ է, այդ օգնության չափերը մեծ չէին (շնչին տրվում էր օրական 1,5 ֆունտ հաց և 1 ձուկ), բայց խնդիրը չափերի մեջ չէ, այլ վերաբերմունքի:

Ընդհանրապես արխիվներում շատ փաստաթղթեր են պահպանվել, որոնք վկայում են, որ իր ձեռքն առնելով Նախիջևանի երկրամասի կառավարման գործը, ՀՀ կառավարությունն իրոք իրենից կախված ամեն ինչ արեց, որպեսզի ապահովի և՛ իրավահավասարությունը հայերի և թուրքերի միջև, և՛ նպաստի քայքայված տնտեսության վերականգնման գործին: Արդեն վերը տեսանք, որ Դրոյի և Դևիի հրապարակած մայիսի 3-ի հրամանում խոսվում էր հանրապետության տարածքում բնակվող բոլոր ժողովուրդների իրավահավասարության մասին, հայտարարվում, որ «Ժողովուրդների փորձությունները վերջացան: Նորեն հասել է

1. Նույն տեղում:

1. «Աշխատավոր», 17 հունիսի 1919 թ.:

խաղաղ կենակցության ժամանակը, առանց ազգի և կրոնի խտրության լինի նա հայ, թե քյուրդ, թաթար, թե ռուս, հույն, թե եզդի...»¹: Իսկ Նախիջևանում եղած ժամանակ վարչապետ Խատիսյանը մուսուլմանական ազգային խորհրդի նիստում խոստացավ նաև տնտեսական օգնություն ցույց տալ, հատկապես գյուղատնտեսական աշխատանքներում: «Ցանքսի խնդիրը այն հարցերից մեկն է, - գրում է Արամ Մակարյանը, - որ մեծ մտատանջության մեջ է ձգում թուրք ազգաբնակչության: Նրանք դիմեցին Ա. Խատիսյանին այդ առթիվ: Մինիստր-նախագահը պատասխանեց, որ Հայաստանի կառավարությունը ամեն միջոց ձեռք կառնի այդ հարցը այնպես վճռելու, որ թե թուրքերը, թե հայերը դժգոհ չմնան»²:

Հայ-թուրքական համերաշխության հաստատելուն ուղղված կառավարության ձեռնարկած քայլերը և լավատեսական տրամադրությունները համակել էին նաև հայ հասարակությանն ընդհանրապես: Մայիսի 10-ին «Աշխատանքը» գրում է. «Արդարութեան և իրավունքի յաղթանակը սկսեր է իր արշաւը: Երեկ Կարսի, այսօր Նախիջևանի, վաղը Թուրքահայաստանի դուռները, որոնք փակեցան մեր առջև, ահաւոր եղեռն է մը ետք, կը բացւին մէկիկ մէկիկ, և կը բանան նոր կեանքի, ստեղծագործ և շինարար աշխատանքի, հաշտ և համերաշխ կենցաղի ամիսուն ասպարեզ:

Թող ոգեպնդի մեր կառավարութիւնն և ունենայ ճշմարիտ գիտակցութիւնը իր ստանձնած այնքան ծանր և պատասխանատու գործին: Թող անիկա քաղաքական իմաստութիւն ունենայ ըմբռնելու, որ այն պետական շենքը, որուն ձեռնարկած է նա, պէտք է հիմնէ բոլոր տարրերու հաւասարութեան և եղբայրութեան յաղթանակին համար և որ մենք կրնանք ստեղծել Հայ հայրենիք մը, ուր հայի կողքին թուրքն ալ, քիւրտն ալ պիտի զգան ինքզինքնին երջանիկ, նւիրելով խաղաղ կուլտուրական և օրինաբեր աշխատանքին»: Եվ կառավարությունը, կարծես թե ընդառաջելով հասարակական կարծիքին, որոշում է կազմակերպված բնույթ տալ այդ աշխատանքին: Հայաստանի վարչապետին ուղարկած զեկուցագրում, ներքին գործոց մինիստրը՝ հիմնավորելով հանրա-

1. Նույն տեղում, 3 մայիսի 1919 թ.:

2. Նույն տեղում, 22 մայիսի 1919 թ.:

պետությանը նոր միացված տարածքների այլազգի բնակչության մեջ տարվող աշխատանքների հրատապ անհրաժեշտությունը, գրում է. «Առաջարկում եմ Ներքին գործերի մինիստրության մեջ հիմնել մի ճյուղ հետևյալ ֆունկցիաներով կամ ծրագրով.

1. Ուսումնասիրություն թե տեսական և թե գործնական բոլոր Հայաստանաբնակ օտարազգիների, նրանց պատմության, կրոնի, քաղաքական մտորումների, զինվորական ուժերի, իրար անմիջական հարևան օտարազգիների փոխհարաբերության, օտար պետությունների նրանց վրա ունեցած ազդեցությունների, նրանց և հայության մեջ եղած հակամարտության (եթե կա) պատճառների, նրանց տնտեսական դրության, շահերի, ծգտումների, տեղական, կրոնական կազմակերպության (րՏՐՏը), զանազան ցեղապետերի և անհատների ազդեցության և այլն:

2. Հնարավոր կապեր հաստատել այդ ցեղերի հետ նրանց ղեկավարների միջոցով կամ անմիջական ըստ կարիքի և հնարավորության, աշխատելով այդ կենդանի կապերի միջոցով չեզոքացնել վնասակար գաղափարներն ու անհատները, նպաստել երկրի ընդհանուր տնտեսական կյանքի բարգավաճմանը, դյուրացնելով ապրանքների փոխանակությունն ու ճանապարհների ապահովությունը:

3. Կապել որոշ անհատներին պետականության գաղափարների հետ և աշխատել նոցա միջոցով պետականության գաղափարը տարածել ժողովուրդների մեջ և այդ իմաստով պրոպագանդա մղել:

4. Աշխատել ցեղերի մեջ աշիրեթական բնազդները, վրեժխնդրության և այլն - թուլացնել, եթե հնարավոր է՝ արմատախիլ անել:

5. Մաքառող և կռվող ցեղերին հաշտեցնել, նոցա պետականության գաղափարին անաչառ և չեզոք լինելու մտքին ընտելացնելու համար:

6. Այն ցեղերը, որոնք ընդունակություն ցույց կտան պետականության գաղափարը ընդգրկելու, խրախուսել և

աշխատել շուտով անցկացնել նոցա մեջ պետական և մասնավորապես դպրոցական բարենորոգումները»¹:

Այնուհետև ելնելով ֆինանսական նեղ հնարավորությունից, առաջարկում է այդ գործը կազմակերպելու համար բավարարվել երեք հոգուց բաղկացած կենտրոնական մեկ գրասենյակով, կամ դիվանով ինչպես փաստաթղթում է ասված (1 դիվանապետ և 2 գրագիր), իսկ տեղերում (Նախիջևան, Սուրմալու, Կաղզվան, Կարս և Ջանգեզուր) ունենալ մեկական գործակալ՝ յուրաքանչյուրին տալով մեկ գրագիր: Այլ կերպ ասած, այլազգիների հետ տարվող այդ հսկայական աշխատանքի համար ներքին գործոց մինիստրը պահանջում է ընդամենը 13 հաստիք՝ ընդհանուր դեկավարությունը վերապահելով իրեն: Ինչ խոսք, որ ժամը բեռ էր ստանձնում ներքին գործերի նախարարը, մանավանդ եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ նա ստիպված էր լինում լուծելու նաև ֆինանսատնտեսական բնույթի հարցեր: Այսպես. մայիսի 27-ին նահանգապետ Վարչամյանը հեռագրում է ներքին գործոց նախարարին. «Սորանով հաղորդում եմ, որ այսօր ներկայացավ ինձ տեղիս քաղաքագլուխը և ողջունեց հայերի մուտքը Նախիջևանի նահանգում, հայտնելով տեղիս ազգաբնակչության և քաղաքային ինքնավարության խորին հարգանքը և պատրաստակամությունը հպատակության հայկական ինքնավարության: Նա խնդրեց պարզել քաղաքային ինքնավարության դրությունը: Ես առաջարկեցի շարունակել իրենց գործունեությունը մինչև նոր ընտրությունները, միայն այն պայմանով, որ 8 թուրք ձայնավորների հետ նշանակվելու են քաղաքային ինքնավարության գործում նաև 8 հայ ձայնավորներ: Միաժամանակ նա խնդրեց քաղաքային ինքնավարության կողմից հատկացնել 15000 ռուբլի՝ քաղաքի հայկական թաղամասի ջրանցքը, որը կիսատ է մնացել, վերսկսելու:

Հայտնելով ի գիտություն, խնդրում եմ հարգել քաղաքային ինքնավարության խնդիրը, հատկացնելով վերոհիշյալ գումարը, որը կգործադրվի իմ հսկողության տակ»²:

Ի դեպ, քաղաքի հայկական թաղամասի մասին. ականատեսը գրում է. «Հայկական վարչությունը պաշտոնապես մայիսի 13-ին

մտավ քաղաք, որը թողնում էր շատ տխուր, մեռած տպավորություն: Հայկական մասը, ուր գտնվում էին գլխավորապես եվրոպական ձևի տներ, ամբողջը ավերակի կույտ էր ներկայացնում: Թուրքերը քանդել տարել էին ոչ միայն տան փայտեղենը, այլև քարերն ու աղյուսը, չէին խնայել դպրոցները, հիվանդանոցներն ու եկեղեցիները, որոնք թե քաղաքում և թե գյուղերում ոչ միայն ավերված դրության մեջ էին, այլև սրբադժված, պատերի վրա արյան նշաններ կային, կարծես թալանչիները աշխատել էին ոչ միայն քանդել, այլև սրբապղծել: Նույն դրության մեջ էր և քաղաքում եղած միակ ռուսական եկեղեցին»¹: Հետաքրքրությունից զուրկ չէ այն փաստը, որ հայկական թաղամասի ավերումը կատարվել է կազմակերպված ձևով մայիսի 3-ից հետո, երբ Նախիջևանում իմացան, որ երկրամասը հանձնվում է Հայաստանին: Դա կատարվել է հայերի վերադարձը դժվարացնելու նպատակով: Իսկ Նախիջևանի անգլիական իշխանությունները, որոնց աչքի առաջ կատարվում էր այդ բարբարոսությունը, չէին փորձել կանխել, այլ բավարարվել էին տեղի մուսուլմանական խորհրդին ներկայացրած գրությամբ, որում ասված էր, որ կատարվածի պատասխանատվությունը կրնկնի խորհրդի անդամների վրա:

Նահանգապետ Վարչամյանի խնդրանքին, և ընդհանրապես Նախիջևանի ներքին կյանքին առնչվող մի շարք այլ հարցերի կառավարությունը անդրադարձավ հունիսի 6-ի նիստում և ընդունեց հետևյալ որոշումը.

«ա). թույլ տալ Նախիջևանի նահանգապետին գրավել այն պետական շենքերը և գույքը, որոնք տրված են եղել ուրիշին «Շուրայի» ինքնավարության կամ տաճկական իշխանության կողմից,

բ). պետական կարիքների համար բնակարանների ժամանակավոր ռեկվիզիցիայի իրավունք տալ,

գ) թույլ տալ վարչական կարգով տուգանել հանցավորներին 10 000 ռ. կամ ենթարկել երեք ամսվա բանտարկության,

դ). միացնել Դարալագյազի գավառը Նախիջևանի նահանգապետության հետ, և

ե). համաձայն 1919 թ. հունիսի 5-ի օրենքի, բանալ ներ-

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 621, ք. 2-3:

2. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1-2, էջ 105-106:

1. «Հառաջ», 29 հոկտեմբերի 1919 թ.:

քին գործերի մինիստրությանը 15000ռ. վարկ Լախիջևանի քաղաքային ինքնավարությանը փոխարինաբար տալու համար»¹:

Մի քանի օր հետո՝ հունիսի 14-ին, կառավարությունը նորից անդրադարձավ Լախիջևանի հարցին և որոշեց Լախիջևանի և Շարուր-Դարալազյազի գավառներից ստեղծել մի գեներալ նահանգապետություն և այդ պաշտոնին նշանակել գեներալ-մայոր Գ. Շելկովնիկյանին: Ինչ նկատառումներով էր ստեղծվում գեներալ-նահանգապետությունը և ընդարձակվում նրա սահմանները, փաստաթղթում ոչ մի բացատրություն չկա: Բայց որ այն հապճեպ որոշում էր և չի արդարացրել իր գոյությունը, վկայում է թեկուզ այն փաստը, որ 20 օր անց՝ հուլիսի 3-ին, կառավարությունը կրկին անդրադարձավ այդ հարցին և լսելով զինվորական ու ներքին գործոց մինիստրների զեկուցումները, որոշեց «վերացնել Լախիջևանի գեներալ-նահանգապետությունը ս. թ. հուլիսի 10-ից»: Ինչ խոսք, որ նման արագ փոփոխությունները չէին նպաստում վարչական իշխանության ամրապնդմանը երկրամասում: Առավել ևս, որ խան-բեգական շրջանները և մուսուլմանական ազգային խորհուրդը ոչ միայն չէին աջակցում, այլև ամեն առիթ օգտագործում էին հայկական վարչությունը վարկաբեկելու համար: Ի դեպ, նրանք հենց սկզբից հրաժարվել էին մասնակցելու վարչության կազմավորման աշխատանքին՝ մերժելով թեկնածություններ առաջադրելու վերաբերյալ նահանգապետ Վարչամյանի առաջարկությունը: Իսկ երբ վերջինիս, այնուամենայնիվ, հաջողվեց կազմավորել վարչական ապարատը՝ պաշտոնների 50-60 տոկոսը հատկացնելով թուրք մտավորականության ներկայացուցիչներին² և աշխատանքը կարծես թե կարգավորվում էր, մուսուլմանական ազգային խորհուրդը, փորձելով խանգարել դրան, նահանգապետին առաջարկեց արձակել թուրք պաշտոնյաներին, պատճառաբանելով, թե նրանք չեն վայելում ժողովրդի համակրանքը, ու խոստացավ պաշտոնների համար թեկնածությունների ցուցակ ներկայացնել: Յետո պարզվեց, որ ցուցակում ընգրկ-

1. «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1-2, 1993, էջ 68:

2. Ոստիկանությունը կազմվել էր խառը սկզբունքով՝ հայերից ու թուրքերից: Թրքաբնակ շրջաններում կոմիսարները թուրք էին, տեղակալները՝ հայ, իսկ հայաբնակ շրջաններում՝ հակառակը: Դատական իշխանության մեջ ևս թուրքերին մեծ տեղ էր հատկացված, նահանգի դատախազը թուրք էր:

վածների մեծ մասը բացահայտ կամ գաղտնի գործակալներ են: Լպատակը պարզ էր. վարկաբեկել հայկական իշխանությունները տեղական ազգաբնակչության աչքում, բայց այդ նպատակի դեմ պայքարելն էր դժվար: Ջորջերի Երևանյան խմբավորման հրամանատար Դրոն հուլիսի 3-ին ներքին գործերի մինիստրին ուղարկած հատուկ գրության մեջ հայտնում է, թե «մինչև այժմ Շարուրում վարչությունը չի կազմակերպված հարկավոր ձևով. կոմիսարը ֆիզիկապես հնարավորություն չունի այցելելու մեծ տարածության վրա ցրված գյուղերը, քանի որ նրա տրամադրության տակ կան 10 ձիավոր միլիցիոներներ և այն էլ նվազած ձիերով:

Շարուրում դատական իշխանությունների դատախազի, քննիչի, դատավորների լրիվ բացակայությունը բնականաբար տանում է դեպի այն, որ մուսուլմանները աստիճանաբար կորցնում են վստահությունը գրաված երկիրը կառավարելու մեր ընդունակության նկատմամբ: **Միմիայն տեղում իշխանության արագ կազմակերպումը, որը պատշաճ կերպով ապահոված կլինի ինչպես անձնակազմով, այնպես էլ ամեն մնացյալով, կբարձրացնի մեր կառավարության հեղինակությունը մուսուլմանների աչքում:**

Վերջին հանգամանքը ներկա պահին ես հատկապես կարևոր եմ համարում»¹ (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Անշուշտ, ճիշտ է Դրոն գրաված տարածքներում ամուր իշխանության հաստատման հարցում, ճիշտ էր ու տեղին նաև նրա պահանջը, բայց արդեն ուշացած: Մահմեդական մասսան ամենուրեք պատրաստվում էր զինված ելույթի: Մնում է ավելացնել, որ վարչության թուլության պատճառներից մեկն էլ այն շտապողականությունն էր, որ ցուցաբերվեց վարչական կառավարում մտցնելու գործում անգլիացիների պահանջով: Նահանգապետ Վարչամյանը իր հուշերում այդ կապակցությամբ գրում է. «Մայիսի առաջին կեսին մեր զորքերը առանց միջադեպի մտան Շարուր: Անգլիական հրամանատարությունը չսպասելով մինչև զորքի ուժեղանալը և ամրապնդվելը, առաջարկեց անմիջապես մտցնել վարչություն: **Գե՛ն. Դևին հայտնեց, որ իւր կառավարությունից հրաման է ստացել իսկույն և եթ, առանց հապաղելու անձամբ հանձնել կառավարության այդ շրջանները ու հաստատել վարչություն: Նրա պահանջը այնքան շտապողական էր, որ**

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 45 II մաս, ք. 719:

նույնիսկ հնարավորություն չեղավ լրիվ վարչություն կազմել: Կառավարության բոլոր առաջարկություններին, որ թույլ տրվի զորքը հասցնել իւր տեղը, ուժեղացնել և ապա վարչությունը մտցնել, առարկում էր, թե **դուք զենքի ուժով չէ, որ տիրելու եք այդ երկրին, այլ կոնֆերանսի թույլտվությամբ և մեր աջակցությամբ ու երաշխավորությամբ.** մեր զորքերը, կարծում եմ, բավական ուժեղ են, որպեսզի ապահովեն ձեր վարչությունը և բարձր պահեն ձեր իշխանության վարկը: Դուք հաստատեցեք իշխանությունը, մնացածը թույլ տվեք մեզ»¹ (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Թե ինչպես կատարեցին անգլիացիները իրենց խոստումը, կտեսնենք հաջորդ գլխում, երբ կժանոթանանք Շարուրում և Նախիջևանում ծագած հակահայկական ապստամբությանը:



Հարցի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ

1. Անգլիական նահանգապետի իշխանությունը Նախիջևանում ձևական բնույթ էր կրում. մահմեդական վերնախավը անտեսում էր նրան, հրամաններն ու կարգադրությունները չէին կատարվում, հակահայկական խժոժությունները, թալանն ու կողոպուտը վերջ չէին գտնում: Խոչընդոտվում էր հայ գաղթականների վերադարձը: Այդ ամենը հեղինակագրկում էր բրիտանական իշխանությունը մասսաների աչքում: Մի կողմից այդ, մյուս կողմից բրիտանական զորքերն Անդրկովկասից դուրս բերելու մասին Փարիզի վեհաժողովի որոշումը, հարկադրեցին բրիտանական հրամանատարությանը վերանայել քաղաքականությունը Շարուր-Նախիջևանի հարցում և այդ երկրամասի կառավարումը հանձնել Հայաստանին: Հարցի նման լուծման գործում պակաս կարևոր դեր չէր խաղացել նաև Հայաստանի կառավարության բուռն բողոքները և Նախիջևանի վրայով Ադրբեջանի և Թուրքիայի միավորման վտանգավորության մատնանշումը:

1. «Հառաջ», 29 հոկտեմբերի 1919 թ.:

2. Շարուր-Նախիջևանի միացումը Հայաստանին կատարվել է հապճեպ, առանց նախապատրաստական լուրջ աշխատանքների: Երկրամասի կառավարման գործը հանձնելով Հայաստանի Հանրապետությանը, բրիտանական հրամանատարությունը միաժամանակ թույլ չէր տվել անհրաժեշտ քանակությամբ զորք մտցնել տարածաշրջան: Թույլ չէր տվել նաև իրականացնել ազգաբնակչության զինաթափություն այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունում գործում էր զինաթափության մասին օրենքը: Մուսուլմանական ռազմական կազմավորումները շարունակում էին իրենց կիսալեգալ գոյությունը: Նման պայմաններում գործող երկրամասի հայկական վարչությունը չէր կարող ամուր ու կայուն լինել:

3. Ստանձնելով երկրամասի կառավարումը, Հայաստանի Հանրապետությունը ձգտելով հարթել ազգամիջյան հակամարտությունը և խաղաղ աշխատանքի համար պայմաններ ստեղծել, հավասարապես հոգ էր տանում թե հայ և թե մուսուլման ազգաբնակչության մասին: Իշխանության տեղական մարմինները կազմավորելիս անպայմանորեն հաշվի էր առնվում ազգաբնակչության կազմը, իսկ ոստիկանությունում և դատական մարմիններում գերազանցապես ընդգրկված էին մուսուլմաններ: Գաղթականության համար ստեղծված սննդակայաններից օգտվում էին նաև մուսուլման գաղթականները, միջոցներ հատկացվեցին Նախիջևան քաղաքի ջրամատակարարման գործի կազմակերպման համար, դպրոցաշինության ծրագրեր էին մշակվում և այլն:

ՉԼՈՒՄ ԵՐՐՈՐԳ

ԹՈՒՐԵ-ԱԳՐԵՑԱՆՅԱՆ ՀԱՎԱՀԱՅՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՅՈՒՄԸ: ԱՂՍՏԱՄԲԱԿԱՆ ԸՆԹՈՒՄՆԵՐԸ ԸՆԹՈՒՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆՈՒՄ

Հանրապետության սահմանների միաժամանակյա ընդարձակման հետևանքով առաջացած դժվարությունները, մուսուլմանաբնակ շրջաններում տեղաբաշխված հայկական գործերի անբավարար քվաքանակը:

Իրադրությունը Նախիջևանում և Գողթանում: Հայաստանի դեմ համախալամական շարժում առաջ բերելու ուղղությամբ Ադրբեջանի ծավալած գործունեությունը: Հակահայկական շարժումները փոքրասիական Թուրքիայում, մշտական լարված իրադրությունը Սուրմալուում և Կարսում: Զարոգչության ուժեղացումը Շարուր-Նախիջևանում:

Բրիտանական հրամանատարության քամահրական վերաբերմունքը Հայաստանի հնչեցրած ահազանգերի նկատմամբ, զորաջոկատների դուրսբերումը երկրամասից:

Մուսուլմանների նկատմամբ հայերի գործադրած բռնությունների մասին կեղծ լուրերի տարածումը և բողոքը: Ապստամբության բացահայտ պատրաստությունները: Օսմանյան և ադրբեջանական սպաների կողմից զորաջոկատների ստեղծումը և մարզումը:

Հուլիսյան հակահայկական շարժումները: Դեպքերը Բեյուք-Վեդիում, հարձակումները հայկական գյուղերի վրա Նախիջևանի գավառում: Կռիվները Նախիջևան քաղաքում և անգլիական ներկայացուցչության դիրքորոշումը: Շրջափակման վտանգը և Նախիջևանի զորամասի նահան-

ջը Դարալագյազ: Ինքնապաշտպանական կռիվները Գողթանում:

Ապստամբական շարժումները Շարուրում: Հայկական գործերի նահանջը Բաշ-Նորաշենից և Շահթախթից, Խանլուխլարի ողբերգությունը:

Հայկական գործերի կրած անհաջողությունների պատճառները, ռազմաճակատների ամրապնդման ուղղությամբ կառավարության ձեռնարկած միջոցառումները:

«Դաշնակիցների» միջնորդությունը, Խալիլ-բեյի հետ նրանց վարած բանակցությունների ծախողումը:

Գերության մեջ մնացած հայերի գողգոթան:

Սահմանների միաժամանակյա ընդարձակումը, Կարսի, Սուրմալուի, Շարուր-Նախիջևանի անհանգիստ շրջանների միացումը, մշտական լարված իրադրությունը հայ-թուրքական և հայ-ադրբեջանական սահմանների վրա, խիստ ծանրացրին հանրապետության ռազմաքաղաքական իրադրությունը, քանի որ եղած ռազմական ուժերը չափազանց քիչ էին ծառայած խնդիրների իրագործման համար:

Մարտի 14-ին Խատիսյանը Թիֆլիս՝ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լ.Եվանգուլյանին (Եվանգուլով) ուղարկած նամակում գրում է. «Թանկագին Լեո: Այժմ, երբ դու արդեն մեր պաշտոնական ներկայացուցիչն ես, կհայտնեմ քեզ այն տվյալները և իրահանգները, որոնք անհրաժեշտ է, որ դու նկատի ունենաս.

1. Գլխավոր մեր կարիքները՝ հաց, հագուստ բանակի համար և անգլիացիների կողմից այն գաղափարի պաշտպանություն, որ թաթարները **չպետք է** հարձակվեն մեզ վրա և որ իրենք կպատժեն նրանց դրա համար:

2. Գաղթականների վերադարձ Կարսի մարզ և Նախիջևանի գավառ ու թուրքահայերի Թուրքական Հայաստան վերադառնալու **իրավունքի** ճանաչում և նրանց վերադարձնելու **երաշխիքները**:

3. Հաց բնակչության համար և

4. Վրացիների կողմից հայկական կորպուսի գույքի վերադարձում:

Ահա մեր սուր, կենսական և անհետաձգելի հարցերը. առանց նրանց փրկություն չկա»: Այնուհետև նկարագրելով այն ծանր քաղաքական ու տնտեսական վիճակը, որ առաջացել է Հայաստանում սովի, համաճարակային հիվանդությունների և մահմեղականների կողմից թշնամական գործողությունների հետևանքով, Խատիսյանը ավելացնում է. «Բանակի դրությունը՝ մոտ է կործանման: Սոված, պատռոտված, չորս ամիս չլողացած, 50 %-ով տիֆից հյուծված, նրանք կիսակմախք են, վազում են ու ընկնում: Նրանց թիվը՝ մինչև 3,5 հազար 900 սպաներով¹: Ահա մեր «բանակը»: Իսկ շուրջը կուշտ, զինված թաթարները գերազանց գիտեն մեր դրությունը, մահվան են դատապարտում այն թաթարներին, ովքեր մեզ գաղտնի հաց են վաճառում (արդեն 3 դեպք է եղել): Այդպիսին է բանակի դրությունը: ... Գեն. Սիլիկովը ասում է, որ ինքը մինչև ապրիլի 1-ը պետք է ունենա 16.000 զինվոր, այլապես Հայաստանը նորից կկործանվի:

Դու ի՞նչ պետք է անես.

1. Խնդրել անգլիացիներին իրենց թեև փոքրաթիվ ջոկատները հաստատել Ալեքսանդրապոլում, Իզդիրում և Կողբում.

2. Խնդրել նրանց տալու մեզ հաց, հագուստ և սապոգներ՝ Թիֆլիսից.

3. Խնդրել վրացիներին անհապաղ վերադարձնել մեզ հայկական կորպուսի գույքը.

4. Խնդրել գեն. Բրաֆին շտապ այստեղ ուղարկել Հայաստան եկող բեռները (հացահատիկ, հաց, ապրանքներ Թիֆլիսից):

Առանց այդ միջոցների ոչինչ անել հնարավոր չէ ...»²:

Ինչպես տեսնում ենք, կառավարության առաջ ծառայած խնդիրները բարդ էին ու բազմաբնույթ: Սակայն մուսուլմանական վտանգը և սահմանների ընդարձակումը անհրաժեշտաբար առաջին

1 Անկասկած, գույները այստեղ խտացված են, իսկ բանակի թիվը նվազեցված (եթե այն վրիպակ չէ):

2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ.276, ց.1, գ. 116, ք.36:

պլան էին մղում բանակի վերակառուցման և թվակազմի ընդլայնման խնդիրը: Եվ արդեն ապրիլի 12-ի նիստում կառավարությունը որոշում է «հանձնարարել զինվորական մինիստրին կազմակերպելու 5 բատալիոն յուրաքանչյուրը 800 հոգուց՝ հրավիրելով զորակոչից ազատ մարդկանց ամսական 300ռ. ռոճիկով, տալով նրանց զինվորի օրապարենը և հագուստեղեն»¹:

Անշուշտ, մեր խնդիրը չէ կանգ առնել նոր զորամասերի ստեղծման հարցի վրա, բայց չենք կարող նաև չընդգծել, որ անվարժ մարդկանցից զորամասեր ստեղծելը հեշտ խնդիր չէր, որի պատճառով էլ հնարավոր չեղավ անհրաժեշտ քանակությամբ զորամասեր տեղաբաշխել նոր միացված շրջաններում, թեև Նախիջևանի հարցում, ինչպես արդեն տեսանք, դեր է խաղացել նաև գեն. Թոմսոնի դրած արգելքը: Արդյունքը եղավ այն, որ ինչպես գեն. Հախվերդյանն է վկայում, Նախիջևան ուղարկվեց կապիտան Խուդավերդյանի նոր կազմավորված սահմանապահ գումարտակը (375 զինվոր), Դիվիզիայի շտաբի պարետային վաշտը (100 զինվոր)՝ պորուչիկ Ժամհարյանի հրամանատարությամբ, սահմանապահ ծիավոր գնդի երկու հարյուրյակ՝ պորուչիկ Գավրիշի հրամանատարությամբ և պորուչիկ Մինասյանցի հրետանային դասակը²: Ավելի ուշ ուղարկվեց նաև փոխգնդապետ Մամաջանովի առանձին գումարտակը (շուրջ 380 զինվոր): Գեն. Հախվերդյանը ընդգծում է, որ դիվիզիայի շտաբի պարետային վաշտի Նախիջևան ուղարկելը ինքնըստինքյան վկայում է, թե ուժերի ինչպիսի լարվածություն էր առաջ բերել սահմանների միաժամանակյա ընդարձակումը:

Ինչպես տեսնում ենք, Շարուր-Նախիջևանի շրջանում տեղաբաշխված հայկական ուժերի թիվը հազիվ անցնում էր հազարից (չհաշված հետագայում փախստականներից կազմավորած 500-հոգիանոց ջոկատը, որը մարտական պատրաստվածություն համարյա չունեցր): Ինչ խոսք, որ այդ ուժերը չափազանց քիչ էին Շարուր-Նախիջևանի նման ընդարձակ տարածաշրջանի թշնամաբար տրամադրված մահմեղական ազգաբնակչությանը հնազանդ

1 Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 43, ք. 65:

2 Տես նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 32, ք. 15:

պահելու համար: Դա գիտակցում էր Հայաստանի կառավարությունը, բայց այլ հնարավորություն չունենալով, հույսը դրել էր բրիտանական զինված ուժերի ներկայության վրա, որոնց թիվը թեև աննշան էր (ըստ գեմ. Հախվերդյանի կես վաշտ պահում էին Բաշ-Նորաշենում և կես վաշտ էլ Նախիջևանում) բայց ևայնպես, նրանց ներկայությունը զսպում էր տեղի մահմեդականներին: Վերջիններս, չցանկանալով բարդացնել հարաբերությունները անզլիացիների հետ, ինչպես նաև նրանց աչքում ապստամբ չերևալու համար՝ արտաքուստ իրենց հանգիստ էին պահում, բայց միաժամանակ գաղտնի պատրաստվում էին ապստամբության ու սպասում հարմար պահի: Իսկ հարմար պահը վրա հասավ այն ժամանակ, երբ բրիտանական հրամանատարությունը որոշեց զորքերը դուրս բերել Անդրկովկասից, այդ թվում և Նախիջևանից:

Նահանգապետ Գ. Վարշամյանը ՀՀ ներքին գործոց նախարարին ուղարկած 1919 թ. մայիսի 29-ի զեկուցագրում Նախիջևանում տիրող դրության մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Ինչպես գրել էի, այստեղ հասարակության մեջ երկու խմբեր կան, մեկը՝ թույլ, հաշտվել է մեր տիրապետության հետ, ծառայության է մտնում և աշխատում է ցույց տալ իբրև մեզ բարեկամ: Այդ խմբակին ես աշխատում եմ ամեն կերպ ուժեղացնել: Երկրորդ խումբը դա ամենաուժեղն ու ազդեցիկն է, դեմ է մեր քաղաքականությանը ու Նախիջևանը Հայաստանին կցվելուն, ուժեղ պրապագանդա է մղում մեր իշխանության դեմ ու հայտարարել է մեզ բոյկոտ»¹: Հայտնելով, որ երկրորդ խմբի ղեկավարը Ջաֆար-ղուլի խան Նախիջևանսկին է, Վարշամյանը նաև տեղեկացնում է, որ վերջինս ժողով է գումարել և հորդորել մուսուլմաններին տնտեսական բոյկոտ հայտարարել հայերին, հարաբերություններ չունենալ, և ոչ մի հարցով չդիմել հայկական իշխանություններին ու դատարաններին և այլն: «Նախիջևանի դրությունը շատ անմխիթար է, - շարունակում է նահանգապետ Վարշամյանը, - փաստորեն մեր իշխանությունը այնտեղ չկա: Անզլիա-

կան զորքերը գյուղերից քաշվեցին, տեղը մենք չկարողացանք զորամասեր ուղարկել: Գեներալը հայտնեց, որ այդքան ուժեր չունի, չի կարող զորքերը ցրել: Միլիցիա չկա, տեղացի հայերը չեն մտնում ծառայության: Կյանքը շատ թանկ է, իսկ ռոճիկները՝ քիչ: Դրսից ոչ ոք չի գալիս, թեև ես գրել եմ թավրիզ, Դարալագյազ, Ջանգեզուր ու Սիսիան, բոլորը հրաժարվում են ռոճիկների քչության պատճառով»¹:

Ստացվում է, որ նահանգապետը իշխանություն ուներ միմիայն այն վայրերում, որտեղ հայկական զորքեր կային տեղաբաշխված, այսինքն Նախիջևանում, Ջուլֆայում և Շահթախթիում: Իսկ ահա գյուղական շրջանների մեծ մասում հայկական վարչությունը կամ բացակայում էր, կամ շատ թույլ էր: Այստեղ փաստական տերը, ինչպես Վարշամյանն է վկայում, Ջաֆար-ղուլի խան Նախիջևանսկու որդին էր՝ Քերբուլայ Ալի խանը: «Երկրորդ ամենավտանգավոր մարդը մեզ համար նրա որդին՝ Քալբալա² Ալի խանն է, - ասված է վերը նշված զեկուցագրում: Մի քանի գյուղերում, որ մենք ուզեցինք գյուղական տանուտերեր ընտրել, հակառակվեցին և հայտնեցին, որ հայկական կառավարությունը չեն ընդունի, մինչև որ Քալբալա խանից հրաման չլինի: Գավառում զինված ուժերը բոլորը նրա հրամանատարության տակ են գտնվում և, ինչպես երևում է գաղթականների տված տեղեկություններից, նրանք շարունակ զինավարժություններ են անում: Գավառում մենք դեռևս թույլ ենք, այնտեղ շրջում են զինված խմբեր՝ իբր միլիցիոներներ, որոնք նույնպես գործում են Քալբալա խանի անունից և, ինչպես երևում է, մինչև օրս էլ հաշվվում է զինվորական ընդհանուր հրամանատար»: Նահանգապետը Ալի խանին այնքան վտանգավոր էր համարում, որ ներքին գործոց նախարարին առաջարկում է խնդրել վարչապետին՝ անզլիացիների միջոցով նրան հեռացնելու երկրամասից: Սակայն դա այնքան էլ հեշտ խնդիր չէր, քանի որ անզլիացիները, ըստ ամենայնի, հովանավորում էին Ալի խանին, ինչի մասին է վկայում այն

1. «Բանբեր Հայաստանի արխիվների» 1993, N 1-2, էջ 106:

1. Նույն տեղում, էջ 108:

2. Այդպես է տեքստում:

փաստը, որ նրանք վերջինիս ոչ միայն չէին ստիպում զինաթափել ու ցրել զինված խմբերը և հեռանալ երկրամասից, այլև այն, որ նրան դարձրել էին իրենց միսիայի կցորդը, հաճախ էին հյուրընկալվում նրա տանը, քեֆեր անում և այլն: Այդ ամենը Ալի խանը տեսնում ու հասկանում էր և այնքան հանդուգն էր դարձել, որ չէր խորշում հակահայկական ելույթներ ունենալ նույնիսկ անգլիացիների ներկայությամբ: Վարչամյանը վկայում է, որ Ալի խանը մի խոսակցության ժամանակ անգլիացիների ներկայությամբ ասել է, թե. «Նախիջևանի նկատմամբ կատարվեց մեծ անարդարություն: Նա պետք է կացվեր կամ Ադրբեջանին և կամ Պարսկաստանին, հայերդ երբեք չէք կարող կառավարել այս երկիրը: **Սա լինելու է երկրորդ Սակեդոնիա և շատ շուտով դժգոհ էլենենտները չեթաներ են կազմելու ու հարձակումներ գործելու**»¹ (ընդգծումը մերն է - Է.Ձ.): Եվ քանի որ այս խոսքերն ասված էին «շատ լուրջ տաք վիճաբանության ժամանակ», ուստի նահանգապետը ենթադրություն է անում, թե «դրա մեջ ճշմարտություն կա և երևի այդ գործունեության նորա կղիմեն»:

Նահանգապետ Վարչամյանը իր ենթադրության մեջ բուրրովին էլ չէր սխալվել: Սակայն դեռևս ժամանակ էր պետք, որ նախ անգլիացիները հեռանան, և հետո՝ անհրաժեշտ նախապատրաստությունները ավարտվեն: Ահա ինչու Չայաստանի դեմ Նախիջևանի մահմեդականության ապստամբությունը հետաձգվեց մինչև հուլիսի կեսերը: Իսկ անգլիացիները, չնայած տված խոստումներին, ձգտում էին օր առաջ հեռանալ այդ անհանգիստ վայրերից²:

Հագիվ կես ամիս էր անցել Նախիջևանի երկրամասը Չայաստանի գերիշխանության տակ անցնելուց, երբ անգլիական հրամանատարությունը արդեն որոշում է հանել իր զորքերը տարածաշրջանից: Մայիսի 31-ին գեմ. Կորին Չայաստանի վարչապե-

1. Նույն տեղում, էջ 107:

2. Բրիտանական զորքերը Անդրկովկասից հանելու վերաբերյալ որոշումը կայացվել էր դեռևս 1919թ. ապրիլի 9-ին Փարիզում: Ըստ որում, դաշնակիցները համաձայնել էին, որ դրանք կփոխարինվեն իտալական զորքերով, սակայն երբ արդեն անգլիական զորքերը դուրս էին բերվել տարածաշրջանից, Իտալիան հրաժարվեց զորք ուղարկել:

տին ուղարկած գրության մեջ հայտնում է, թե «համաձայն այն քաղաքականության, որի մասին Դուք արդեն տեղեկացված եք, ես պետք է հայտնեմ Ձեզ, որ բրիտանական ջոկատները, որոնք ներկայումս գտնվում են Նախիջևանում և երկաթուղու երկարությամբ, դուրս կբերվեն մոտակա մի քանի օրերի ընթացքում: Այն ամենը, որ ես տեսա, ես համոզվեցի, որ այդ շրջանում խաղաղությունը և անվտանգությունը կշարունակվի Ձեր վարչության տակ»: Եվ կարծես թե փորձելով հանգստացնել վարչապետին զորքերը հանելու հնարավոր հետևանքների համար, շարունակում է, թե «ուղևորվում է Բաքու՝ խոսելու Ադրբեջանի կառավարության հետ, որպեսզի նրանք սահմանափակեն իրենց գործունեության ոլորտը վիճելի շրջաններում և հայտնելու նրանց, որ նրանք ներկայումս ձեռնպահ մնան Ջանգեզուրի վրա իրենց իշխանությունը տարածելուց: Այդպիսով **Դուք պետք է անհապաղ հետ կանչեք Ձեր ներկայացուցչին այդ շրջանից և ես ուրախ կլինեմ լսելու, որ Դուք այդ կատարել եք**»¹ (ընդգծումը մերն է - Է. Ձ.):

Ջանգեզուրից Արսեն Շահնազյանի հետ կանչելու վրա անգլիացիները պնդել են նաև հետագայում, բայց, օրինակ, համարյա ոչինչ չարեցին, որպեսզի Գողթանը ևս ընդունի Չայաստանի գերիշխանությունը, թեև այդ մասին համապատասխան հայտարարություն էր արվել: Այդ հարցը առանձնակի սրության հասավ հունիսի սկզբին, երբ Գողթան գավառի կոմիսար նշանակված Աշոտ Մելիք-Մուսյանցը դաշնակից հրամանատարության անունից Գողթանի մուսուլմանական ազգային խորհրդին առաջարկեց ընդունել Չայաստանի գերիշխանությունը: Հունիսի 3-ին Օրդուբադում գումարված մուսուլմանական ազգային խորհուրդը մերժում է այդ առաջարկը և որոշում բողոքի հայտարարությամբ դիմել բոլոր եվրոպական տերություններին: Գործին չի օգնում նաև Մելիք-Մուսյանցի հունիսի 4-ի հաշտարար առաջարկությունը. ներկայացուցիչ ուղարկել թիֆլիս այդ հարցը դաշնակից հրամանատարության հետ լուծելու համար, իսկ մինչ այդ կատարել Չայաստանի կառավարության կարգադրությունները և ճանաչել իրեն

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 101, ք. 36:

որպես Գողթան գավառի կոմիսար: Մուսուլմանական ազգային խորհուրդը հունիսի 7-ով թվագրված պատասխանում դիվանագիտորեն խուսափում է այդ առաջարկից՝ պատասխանելով, թե թյուրիմացություններից խուսափելու համար պետք է սպասել հունիսի 2-ին Թիֆլիս ուղարկած իրենց ներկայացուցչի վերադարձին¹:

Բայց արդեն հաջորդ օրը՝ հունիսի 8-ին, Իրանի վրայով Օրդուբադ են հասնում Բաքվից ուղարկված մի խումբ սպաներ՝ 50 ձիավորներով, որոնք իրենց հետ բերել էին 20 միլ. ռուբլի: Խմբի ղեկավար Ահմեդովը իրեն հռչակում է Օրդուբադի նահանգապետ, հունիսի 11-ին կազմակերպում հանրահավաք և ապստամբության կոչ անում՝ հայտարարելով, թե շուտով Ադրբեջանից մեծաքանակ ուժեր կգան օգնության²:

Ի դեպ է ասել, որ Բաքուն Օրդուբադի շրջանին հատուկ նշանակություն էր տալիս ոչ միայն նրա համար, որ այն ռազմական հարմար պլացդարմ էր ու մշտական սպառնալիք հայկական Ձանգեզուրի թիկունքին, այլև այն, որ Ադրբեջանը Նախիջևանի վրայով Թուրքիային կապող ուղու վրա խիստ կարևոր հանգույց էր: Հունիսի 13-ին վարչապետին ուղարկած զեկուցագրում Բաքվում Հայաստանի հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանը հաղորդում է այն աշխատանքների մասին, որ ձեռնարկել էր Ադրբեջանի կառավարությունը Այաթից դեպի Ջուլֆա երկաթգծի անցկացման ուղղությամբ, որը Մեդրու վրայով պետք է անցներ Օրդուբադ և այստեղից Ջուլֆա ու Նախիջևան: Ահա ինչու մեկ այլ զեկուցագրում Բեկզադյանը խորհուրդ է տալիս ամրացնել Մեդրին ու մեծացնել նրա պաշտպանությունը: «Մեր տրամադրության տակ եղած տեղեկություններից երևում է, որ Ադրբեջանը լուրջ պատրաստություններ է տեսնում Արաքսի հովտով անցնել Օրդուբադ ու Նախիջևան: Այս ծրագիրը խաղաղությամբ իրագործելու համար միակ խոչընդոտը հանդիսանում է Մեդրին իր շրջակա հայ գյուղերով, որը կա-

1. Տես նույն տեղում , ֆ. 200, ց. 1, գ. 212, թ. 107:

2. Տես «Հառաջ», 5 նոյեմբերի 1919 թ.:

րող է հեշտությամբ արգելել թուրքական առաջխաղացումը՝ բռնելով այդ դժվարանցանելի կիրճը: Որպեսզի այդ խոչընդոտը հեշտությամբ վերացվի՝ ադրբեջանցիք բանակցության մեջ են մտել պարսկական մի քանի ավազակաբարո խաների հետ, որպեսզի հարձակումը սկսելու դեպքում նոքա աջակցեն իրենց զինակցությամբ՝ կրակ բացելով Մեդրու վրա դիմացի պարսկական բարձրություններից: Համաձայնությունն արդեն կայացել է նրանց միջև և խաների երկու ներկայացուցիչները Բաքու են եկել վերջնականապես մշակելու մատնանշված կետերում ռազմական գործողությունների վերջնական ծրագիրը»¹:

Ջարմանալիորեն անգլիական բարձրաստիճան հրամանատարությունը հավատում էր Ադրբեջանի կեղծ խոստումներին: Դեռ մայիսի 8-ին Թիֆլիսից Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը հեռագրում է իր կառավարությանը, թե Թոմսոնը ասում է, որ Ֆաթալի Խան-Խոյսկին խոստանում է աջակցել Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի և Սուրմալուի մուսուլմանների կողմից Հայաստանի կառավարության իշխանությունը ճանաչելուն և առաջարկում, որ Հայաստանը նման կերպ վարվի Ղարաբաղի հարցում²: Մինչդեռ այդ նույն մայիս-հունիս ամիսներին Ադրբեջանը տենդագին աշխատանք էր տանում Հայաստանի դեմ մուսուլմանների ընդհանուր ապստամբություն բարձրացնելու և Հայաստանը բոլոր կողմերից շրջափակելու համար: Արդեն մայիսի 13-ին զորքերի Երևանյան խմբավորման հրամանատար Դրոն հեռագրում է ռազմական նախարարին, թե «Յուվա-Գայլի Դրունք շրջանում մի խումբ անձիք՝ Շանդիբեկ Մախմուդբեկովի և Մահարլամ Բերբալայ Օրուջ օղլը Ալիևի զլխավորությամբ, եռանդուն ագիտացիա են մղում Նախիջևանի մարզի նկատմամբ Հայաստանի Հանրապետության իրավունքը ճանաչելու դեմ, կազմակերպում են զինված ջոկատներ և պատրաստվում դիմադրություն ցույց տալ մեր զորքերին: Նշված անձանց հարում են անգլիական զենեղալ-նահանգապետ Լաութենի նշանակած կո-

1. Նույն տեղում , ֆ. 200, ց. 1, գ. 50, մաս I , թ. 13:

2. Տես «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993 , N 1-2, էջ 105:

միսար Խալիլ-բեկը և Բեյուք-Վեդի գյուղի բնակիչներ Քերբալայ Իսմաիլ Մահարլամ-օղլին, Քերբալայ Մուսա-բեկը և Աբաս Կուլի-բեկ Շադլինսկին»¹: Հեռագրի վերջում ավելացված էր, որ վերո-շարադրյալը հայտնվում է ի գիտություն և համապատասխան կարգադրություն: Սակայն Հայաստանի կառավարությունը իրադրությունը չսրելու մտահոգությամբ, մայիսյան այդ օրերին ձեռնպահ էր մնում պատժիչ գործողություններից: Մինչդեռ այդ նույն օրերին էր, որ մոլլա Բեգթաշևի գլխավորությամբ Նախիջևանից մի պատվիրակություն անցավ Թավրիզ՝ բանակցելու պարսկական կառավարության հետ՝ վերջինիս Հայաստանի դեմ հանելու և Նախիջևանը Պարսկաստանին միացնելու նպատակով: Սակայն պարսիկները, ինչպես արդեն նշել ենք, զգուշանում էին բացահայտ գործողություններից և Բեգթաշևը դիմեց նաև քուրդ Սմկոյին², առաջարկելով իր ձիավորներով անցնել Նախիջևան և գլխավորել հակահայկական շարժումը: Պատվիրակությունը նաև քարոզչական մեծ աշխատանք էր տանում Թավրիզի նահանգի ազգաբնակչության մեջ, կեղծ լուրեր տարածում հայերի կողմից մուսուլմանների նկատմամբ բռնություններ գործադրելու, մասսայական կոտորածների մասին և այլն: Եվ պետք է ընդունել, որ այս ասպարեզում քիչ հաջողությունների չհասավ, ինչի մասին է վկայում այն փաստը, որ հուլիս-օգոստոսյան դեպքերի օրերին այստեղից մեծ թվով մուսուլմաններ օգնության շտապեցին Նախիջևանի իրենց կրոնակիցներին:

Մեծ ակտիվություն էր ցուցաբերում նաև պաշտոնական Բաքում: Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանը Երևան ուղարկած մի շարք զեկուցագրերում տեղեկացնում է Հայաստանի դեմ նյութող դավադրությունների մասին: «Ադրբեջանը չի դադարում տենդազին նախապատրաստություններ տեսնելուց, որպեսզի ինչ գնով էլ լինի իր իշխանությունը տարածի Ձանգեզուրի և Նախիջևանի վրայ, - ասված է նրանցից մեկում: Թե Ղարաբաղում, թե Ձանգեզուրում

1 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 50, թ. 13:

2 Քուրդ ապստամբ ցեղապետ, որը երկարատև կռիվներ մղեց իշխանությունների դեմ Իրանի հյուսիսարևմտյան շրջաններում:

և թե Նախիջևանի շրջանում տեղի ունեցող ապստամբական բռնկումները էապես իրար հետ կապ ունեն և այդ ամենը կատարվում է նախապես մտածուած և մշակուած ծրագրով: Հարկավ, այդ բոլոր ձեռնարկությունները ուղղուած են հայկական կառավարության դեմ և նպատակ ունեն մուսուլմանական գերիշխանությունը ուժեղացնելով՝ հայութիւնը շրջապատել թուրքական օղակով և զրկել պետական շինարար աշխատանք կատարելու հնարավորութիւնից: Այդ նպատակով տաճկա-թրքական գաղտնի քաղաքական կազմակերպութիւնները իրանց գործակալների միջոցով աշխատում են Հայաստանին կցուած երկրամասերի մահմեդական ազգաբնակչութեան թշնամական տրամադրութիւնը ուժեղացնել՝ մատակարարելով նրանց թե դրամական միջոցներ, թե զենք և թե ռազմամթերք»¹: Տ. Բեկզադյանը մատնացույց է անում նաև այն իրողությունը, որ հակահայկական տրամադրություններ քարոզվում են «ոչ միայն գավառներում, այլև մայրաքաղաք Բաքվի գործարանային շրջանի մահմեդական բանվորների մեջ», որտեղ շարունակ միտինգներ են գումարվում և կոչ արվում արշավանք կազմակերպել Ղարաբաղի, Ձանգեզուրի վրայով դեպի Նախիջևանի շրջանը, Ադրբեջանի գերիշխանությունը տարածել մինչև նախկին ռուսական սահմանը և միանալ Թուրքիայի հետ: Ձգտելով ամենուրեք հակահայկական շարժումներ առաջացնել, Ադրբեջանը Վրաստանի վրայով գործակալներ ու քարոզիչներ է ուղարկում Արդահանի շրջան, իսկ Պարսկաստանի վրայով դեպի Նախիջևան, օսմանյան սպաներ հավաքագրում և առատորեն ֆինանսավորում: «Իբրև ապացույց համախալամական շարժման ուժեղացման, - գրում է Տ. Բեկզադյանը, - Ադրբեջանի ղեկավար շրջանները բանակցութեան մեջ են մտել նաև Թավրիզի թրքական կազմակերպութիւնների հետ՝ ներդաշնակելու իրանց գործողութիւնները և այդ նպատակով Բաքու է եկել Թավրիզի «Իթֆի-հատ-խալամի»-ի նախագահ Յուսուֆ Ջիա Թալիբ Ձադեմ»²:

Բաքվի կոչերը մեծ արձագանք են գտնում նաև փոքրասիա-

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, I մաս, թ. 12:

2. Նույն տեղում, թ. 13:

կան թուրքիայում: Խժդժությունները Հայաստանի արևմտյան սահմանների վրա և սիստեմատիկ հարձակումները սահմանամերձ շրջանների վրա տևական բնույթ են ստանում ու ստեղծում խիստ լարված իրադրություն Կարսի մարզում և Սուրմալուի գավառում: Չի անցնում մի օր, որ հաղորդագրություն չստացվի այս կամ այն գյուղի կամ սահմանապահ զորամասի վրա թուրք-քրդական ավազակախմբերի հարձակումների մասին: Դրա հետ մեկտեղ կանոնավոր զորամասեր են կենտրոնացվում Հայաստանի սահմանների հարևանությամբ: « Թուրքահայաստան ուղարկված գործակալները վկայում են թուրք կանոնավոր զորամասերի ներկայությունը Օլթիի և Սարիղամիշի ուղղությամբ և Ալաշկերտի շրջանում, - գրում է Ս. Վրացյանը՝ վկայակոչելով բանակի գլխավոր շտաբի հունիսի 17-ի գաղտնի զեկուցումը: Կատարելապես ստույգ կերպով հաստատված է, որ թուրքական 12-րդ դիվիզիան գտնվում է Խորասան-Չիվինում կենտրոնն ունենալով Խորասանում»¹:

Չբավարարվելով այդ ամենով՝ թուրք գործակալները քարոզչական ակտիվ աշխատանք են ծավալում Հայաստանի Հանրապետության բուն տարածքում և հատկապես Սուրմալուում ու Շարուր-Նախիջևանում: «Քարոզչությունը թուրքիայի և Անդրկովկասի շրջաններում ուժեղանում է, - ասված է վերը հիշատակված գաղտնի զեկուցման շարունակության մեջ: Այդ նպատակով մեծ քանակությամբ թուրք գործակալներ են ուղարկված Հայաստանի ներսերը, մահմեդական գյուղերը և ամեն տեղ հայտնաբերվում են մեր վարչության և հակահետախուզության կողմից: Մասնավորապես, զորավոր է թուրք գործակալների ազդեցությունը Արդահան-Օլթիի և Բարդուսի շրջաններում, ուր նրանք կազմակերպել են գնդացիներով զինված քրդական հրոսախմբեր: Նույն պատրաստությունը կատարվում է և Սարիղամիշ-Կաղզվան տարածության վրա և ավելի հեռուները՝ Բարթոլյան լեռնաշղ-

1. Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, Եր., 1993, էջ 314:

թայի քրդաբնակ մասերում մինչև Արարատ»¹: Իսկ բանակի գլխավոր շտաբի բաժնի պետ փոխգնդապետ Շնեուրը հունիսի 21-ին հաղորդում է ՀՀ արտգործնախարարին, թե «համաձայն Տրապիզոնի ֆրանսիական միսսիայի հաղորդագրության, «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ագիտատորները... այժմ անցել են Նախիջևան այնտեղ թուրքական քարոզչությունը ուժեղացնելու համար»²:

Հասկանալի է, որ Հայաստանի կառավարությունը այս ամենի մասին պետք է հայտներ դաշնակիցներին և հայտնում էր: Բայց վերջիններս ոչ միայն միջոցներ չէին ձեռնարկում, այլև հանգստացնում էին հայերին՝ հավատացնելով, թե թուրքերը ի վիճակի չեն լուրջ վտանգ ստեղծելու: Ահա, օրինակ, ինչ է ասված նման պատասխաններից մեկում. «Ես անհապաղ կզեկուցեմ Բարձր հրամանատարությանը Ձեր հաղորդումները թուրքական գործակալների վերսկսված գործունեության մասին, - ասված է Ալ. Խատիսյանին հասցեագրած Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեն. Կորիի հունիսի 19-ի նամակում: **Սակայն ես կուզեի հիշեցնել Ձեզ, որ երբեմնի թուրքական մեծ ազգը այժմ հիմնավորապես ջախջախված է, որ նա չունի ոչ բանակ, ոչ ռազմամթերք, ոչ որևէ ուժ, և որ ինչպես չաշխատեն նրա գործակալները, նրանք վճռականապես ոչինչի չեն հասնի:** Հայտնի է, որ որոշ նախկին հզոր թուրք պետական այրեր գտնվում են փախուստի մեջ և թագնվում են Անդրկովկասում, որտեղ նրանք հուսահատ ջանքերով ձգտում են կողմնակիցներ հավաքագրել: **Դրանում նրանք անհաջողության կմատնվեն, քանի որ նրանք ոչ փող ունեն, ոչ ազդեցություն և, թեև նրանք կարող են անկարգություններ առաջացնել այս կամ այն տեղում, բայց նրանք երբեք ի վիճակի չեն լինի նորից ոտքի հանել նախկին Օսմանյան կայսրության մի որևէ մասը»**³ (ընդգծումը մերն է - Է. Ձ.) :

Արդյո՞ք դա բրիտանական հրամանատարության համոզ-

1. Նույն տեղում:

2. «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1-2, 1993, էջ 164-165:

3. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 120, ք. 134:

մունքն էր, թե՞ ասված էր Հայաստանի իշխանություններին հանգստացնելու համար, դժվար է ասել: Բայց ինչ էլ որ լիներ նման վերաբերմունքի պատճառը, հետևանքը մեկն էր. Անդրկովկասի բրիտանական հրամանատարությունը շարունակեց մնալ դիտողի դերում, իսկ թուրք-ադրբեջանյան հակահայկական քարոզչությունը օր օրի ծավալվում ու սպառնալից կերպարանք էր ստանում:

Հակահայկական շարժումներ հրահրող և կազմակերպող կարևոր կենտրոն էր դարձել Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունը: Դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Թեքինսկին կարողացել էր կապեր հաստատել Հայաստանի մուսուլմանաբնակ շրջանների հետ և հրահանգավորել նրանց: 1919 թ. հունիսի 4-ին նա հեռագրում է իր կառավարությանը, թե հայերը ուրախ են կամավորական բանակի առաջխաղացման առթիվ, հույս ունեն, որ նա կգրավի Բաքուն և հետևություն անում, թե «Կամավորական բանակի հետ բարդությունների դեպքում Հայաստանը մեր նկատմամբ թշնամական դիրք կբռնի, ուստի Շարուր-Նախիջևանի շրջանից պետք է վտանգ ստեղծել Հայաստանի համար»¹: Այդ խնդրի իրագործման համար Խան-Թեքինսկին պահանջում է շտապ կերպով փող ուղարկել ու նաև տեղեկացնում, որ իր ձեռնարկած միջոցների շնորհիվ Շարուրը, Նախիջևանը և Օրդուբադը միավորվել են ի դեմս մուսուլմանական ազգային խորհրդի, որը մշտական կապ է պահպանում իր հետ: Այդ նույն օրը նա մի երկրորդ հեռագիր էլ է ուղարկում Բաքու, որում խորհուրդ է տալիս մազութ չտալ Հայաստանի երկաթուղիների համար, քանի որ լուրջ դեպքեր են սպասվում Նախիջևանում ու տեղեկացնում, որ անգլիական զորքերը հեռանում են տարածաշրջանից²: Իսկ հունիսի 11-ին Խան-Թեքինսկին՝ պատասխանելով իր կառավարությանը, հայտնում է, որ Շարուր-Նախիջևանի շրջանը ունի մինչև 6 հազար ասկյար՝ թնդանոթներով և զնդացիրներով զինված, որոնք իրենց մարտունակությամբ չեն զիջում հայերին և որ ռազմական գործողությունների դեպքում

դրանց թիվը կարելի է հասցնել 10 հազարի: Նաև կարծիք է հայտնում, որ առայժմ պետք է պահել 6 հազարը, տեղաբաշխել հին տեղերում, իսկ մի մասը կենտրոնացնել Ջանգեզուրի սահմանի վրա¹: Թեքինսկին չի մոռանում տեղեկություններ հաղորդել նաև Հայաստանի զինված ուժերի մասին: Հունիսի 12-ին նա իր կառավարությանը հեռագրում է, թե իր ռազմական կցորդը հայտնել է իրեն, որ Հայաստանը ունի երեք հետևակային բրիգադ՝ յուրաքանչյուրը երկուական զնդով, որ զնդերը բաղկացած են երեքական գումարտակներից: Ունի նաև երեք հեծելագունդ վեցական էսկադրոնով, որոնց կազմավորումը դեռ ավարտված չէ: Հրետանին բաղկացած է 12 մարտկոցից՝ յուրաքանչյուրում 4 թնդանոթ: Բացի դրանից կա նաև Ղարաբաղյան ջոկատը՝ բաղկացած մեկ գումարտակից, երեք էսկադրոնից և 4 թնդանոթից: Իսկ Կարսում կա 500-ից մինչև 700 թնդանոթ՝ առանց ծառայող անձնակազմի: Վերջում ավելացնում է, որ Հայաստանը ունի նաև երեք գրահագնացք²: Շարունակելով տրամադրել իր կառավարությանը Հայաստանի դեմ, Թեքինսկին հունիսի 20-ին հեռագրում է, թե «հայկական իշխանությունները՝ չնայած անգլիական գեներալ Դևիի և Խատիսովի խոստումներին, սկսել են խուզարկություններ կատարել և բռնագրավել զենք, կահույք, տախտակներ և այլ իրեր»³: Իսկ 22-ին ուղղակի գրում է. «**Կարծում են Ադրբեջանը ներկայումս ուրիշ թշնամի չունի, բացի Հայաստանից**, ուստի պետք է հատուկ ուշադրություն դարձնել Հայաստանի վրա: Հարկավոր է քուրդ Սմկոյին մեր կողմը գրավել, լիազորություններ տալ ինձ և հարցուփորձ անել ռազմական կցորդին»⁴ (ընդգծումը մերն է - է. Ջ.):

Հակահայկական քարոզչության գործում մեծ դեր ու նշանակություն ուներ նաև ադրբեջանական մամուլը: Օր չէր անցնում, որ Բաքվում լույս տեսնող թերթերում հակահայկական որևէ բան տպագրված չլիներ: Առանձնապես մեծ ջանքեր էր թափում «Ադրբեջան» թերթը, որն այնքան էր տարվել Հայաստանում մուսուլ-

1. Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 358, թ. 26:

2. Տես նույն տեղում, թ. 31:

1. Նույն տեղում, թ. 27:

2. Նույն տեղում, թ. 29:

3. Նույն տեղում, թ. 34:

4. Նույն տեղում, թ. 38:

մանների նկատմամբ բռնություններ գործադրելու մասին կեղծ լուրեր տարածելու մոլուցքով, որ մի համարում գրել էր, թե «Նախիջևանում մի օրվա ընթացքում հայկական իշխանությունը սպանել է 152252 թուրք»¹, մոռանալով սակայն, որ այդ գավառում մուսուլմանների ընդհանուր թիվը չէր անցնում 75.000-ից: Ասենք Բաքվում շատ լավ էլ գիտեին, որ Նախիջևանում հայկական վարչության կողմից մուսուլմանների նկատմամբ ոչ մի բռնություն չի գործադրվում: Ինքը Խան-Թեքինսկին է հունիսի 22-ի հեռագրում ասում, թե «Նախիջևանում հայերի կողմից մուսուլմանների սպանություն լինում են մասնավոր բնույթի հողի վրա՝ ինչպես հայերն են բացատրում: Հունիսի 18-ին զրահագնացքը ռմբակոծեց Բաշ-Նորաշենի մոտի գյուղը երեք թուրք ասկյարների կողմից երկու զինվորի և մեկ սպայի սպանության համար: Կարծում եմ, որ թուրք ասկյարների (այնտեղ - է. Ջ.) գտնվելը հիմք կտա հայերին մեղադրելու մուսուլմաններին թուրքերի հետ կապեր ունենալու մեջ»²:

Նման փաստերը կեղծվում էին պաշտոնական Բաքվի կողմից և խոսում միայն մուսուլմանական գյուղերը ռմբակոծելու մասին: Բայց զարմանալին ոչ այնքան դա է, որքան այն, որ այս հարցում մուսուլմանների նկատմամբ հայերի գործադրած երևակայական բռնությունների մասին հրապարակումների հարցում Ադրբեջանական մամուլից հետ չէր մնում նաև վրացական մամուլը: Նպատակը պարզ է. որքան սրվեն հայ-ադրբեջանական հարաբերությունները, այնքան Վրաստանը կհայտնվի շահեկան վիճակում, գուցեև թելադրողի դերում: Հավանաբար վրացիները չէին մոռացել նաև 1918 թ. դեկտեմբերյան պատերազմում կրած պարտությունը:

Աղմուկը այդ բռնությունների շուրջը այնքան էր մեծացել, որ բրիտանական հրամանատարությունը որոշեց Նախիջևան գործուղել գնդապետ Պլաուդենին՝ տեղում իրերի դրությանը ծանոթանալու ու համապատասխան կարգադրություններ անելու նպատակով: Հունիսի 20-ին գնդապետը ծանապարհվեց Նա-

1. Տես «Հառաջ», 5 նոյեմբերի 1919 թ.:

2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 358, թ. 36:

խիջևան (Դրոյի հետ միասին) և Քերբալայ խանի, ինչպես նաև նահանգապետ Վարչամյանի ու Նախիջևանում տեղաբաշխված հայկական զորքերի հրամանատար գեն. Շելկովնիկովի հետ հարցի քննարկումներից ու պարզաբանումներից հետո իր հրամանատարությանը ներկայացրեց թեզիսների ձևով կազմված մի զեկուցագիր՝ բաղկացած երկու մասից. առաջին մասում ներկայացված են Քերբալայ խանի բողոքները, իսկ երկրորդում՝ Վարչամյանի և Շելկովնիկովի բացատրությունները: Ըստ Քերբալայ խանի կատարվել է.

«1. Մուսուլմանների սեփականության ռեկվիզիցիա,

2. Հայ զինվորների կողմից մուսուլմանների տների խուզարկություն,

3. Չենքի բռնագրավում,

4. Մասնավոր սեփականության յուրացում,

5. Մուսուլմանների նկատմամբ զորքի և միլիցիայի անհարգալից վերաբերմունք»:

Հայկական կողմը համոզիչ փաստերով ցույց է տվել, որ մասնավոր սեփականության յուրացում չի կատարվել, իսկ ռեկվիզիցիայի ենթարկվել է միմիայն ռուսական պետական գույքը: Ինչ վերաբերում է խուզարկություններին, ապա այն էպիզոդիկ բնույթ է կրել. կատարվել է միայն զենքի խուզարկություն և խոստացել են այլևս չկատարել ու նաև միջոցներ ձեռնարկել 5-րդ կետում մատնանշված դրությունը շտկելու համար: Վարչամյանը և Շելկովնիկովը նաև առաջ են քաշել հետևյալ պայմանները զենքի հարցում.

«ա. բոլոր ատրճանակները պետք է գրանցվեն,

բ. ոչ ոք, բացի զինվորներից, զենք կրելու իրավունք չունեն,

գ. բոլոր զենք կրողները պետք է ձերբակալվեն ոստիկանության կողմից,

դ. ձերբակալված զենքը պետք է բռնագրավվի»¹:

Ուշագրավ է, որ զեկուցագրում Պլաուդենը խոսում է նաև այն մասին, որ Ենգիջա և Բաշ-Նորաշեն գյուղերը հայտարարել են

1. Նույն տեղում:

Հայաստանի կառավարությանը ենթարկվելու իրենց ցանկության և թուրքական ազդեցության դադարեցման անհրաժեշտության մասին ու ավելացնում, որ ինքը հրամայել է հեռացնել թուրք ասկյարներին Նախիջևանից, իսկ մերժելու դեպքում հավաքել կանանց, երեխաներին և գնդակոծել այն գյուղը, որտեղ սպանել են հայ սպային և զինվորներին¹:

Հայկական բռնությունների մասին Ադրբեջանի, Նախիջևանի և ընդհանրապես իսլամի աշխարհի բարձրացրած աղմուկի կապակցությամբ Հայաստանի կառավարությունը ստիպված եղավ նաև մի հատուկ հաղորդագրություն հրապարակել Վրաստանում իր դիվանագիտական միսսիայի տեղեկատու բյուրոյի միջոցով, որում ասված էր, որ «Հայաստանի Արտաքին գործերի մինիստրության հանձնարարությամբ անհրաժեշտ է համարում հաղորդել հետևյալ խիստ ստուգված տվյալները.

Հայոց զորամասերի կողմից Կարսի, Շարուրի ու Նախիջևանի շրջանների գրավման և այդ շրջաններում հայկական իշխանության հաստատելու առաջին իսկ օրից Հայաստանի կառավարությունը անհապաղ մահմեդական ազգաբնակչությանը մասնակից է դարձրել երկիրը կառավարելու գործին և, մինչև այժմ էլ, շատ վայրերում, ինչպես օրինակ Նախիջևանում, մահմեդականները վարչական ծառայողների մեջ 70-75 տոկոս են կազմում: Կարսի շրջանում նրանք վարում են նաև զավառապետների ու շրջանապետների պաշտոններ: Քաղաքական ու քաղաքացիական կյանքի ասպարեզներում ևս մահմ. ազգաբնակչությունը ամբողջ լրությամբ օգտվում է Հանրապետության այլ քաղաքացիներին հավասար: Մասնավորապես, անցնելով Նախիջևանի շրջանի մի քանի մահմեդականների անգլիական հրամանատարությանը հանձնված բողոքների առանձին մեղադրանքներին, որոնք և հիմք են ծառայել մամուլի գրություններին, տեղեկատու բյուրոն պետք է հաղորդի հետևյալը.

1. Ընդամենը ձերբակալվել է 2 հոգի, մեծ մասամբ պարտավո-

1. Խոսքը Շարուրի գյուղերից մեկում դավադրաբար սպանված հայ սպայի և 3 զինվորների մասին է:

րեցուցիչ որոշումների խախտման համար, որոնք 3-7 օր բանտարգելության են ենթարկվել:

2. Ձերբակալվածներից միայն երկու հրացան է խլված, որոնք կվերադարձվեն տերերին դատարանի առաջ ներկայանալու դեպքում: 10-12 ատրճանակները խլված են գեներալ նահանգապետների և անգլիական միսսիայի պարտավորեցուցիչ որոշման համաձայն:

3. Տնային խուզարկության միայն երեք դեպք է տեղի ունեցել իրենց իսկ մահմեդականների ցուցմունքներով, որոնք պնդում էին, թե այդ տներում զինապահեստներ կան, հյուրանոցներում ամենևին խուզարկություն չի կատարվել, իսկ թեյատներում կատարվել է մի քանի անգամ (որպես վայրեր, ուր հավաքվում են հանցավոր տարրերը):

4. Ոչ մի ձի ռեկվիզիցիայի չի ենթարկվել:

5. Տասը հոգու մահացնելու աստիճան ծեծելու մասին բողոքագիրը ստորագրող Քելբալի Խան-Նախիջևանցին, հակառակ քաղաքացիական նահանգապետի առաջարկության, որևէ ապացույց այդ մասին չի ներկայացրել:

6. Շանապարհին իբր թե 40 մահմեդականների սպանության մասին որևէ փաստ չի ներկայացվել»¹:

Հայտարարության մեջ խոսվում է նաև մահմեդականների կողմից հայերի նկատմամբ գործադրած բռնությունների, Նեհրամ, Վեդի և մի շարք այլ տեղերում հայերի սպանության, «մահմեդական ազգաբնակչության շարժումը դրսից լայնորեն նախապատրաստած լինելու» մասին և այլն:

Սակայն կառավարական այս հաղորդագրությունը որևէ կերպ ազդել դեպքերի հետագա զարգացման վրա այլևս չէր կարող. մահմեդականների նկատմամբ հայոց գործադրած բռնությունների մասին չարամտորեն տարածած կեղծ լուրերը վաղուց իրենց դերը կատարել էին: Մահմեդականությունը թե Հայաստանի Հանրապետությունում, թե նրանից դուրս պատրաստ էր զինված ելույթի և այն սկսվեց հուլիսին; Սկսվեց ոչ թե որպես տեղական

1. «Աշխատավոր», 26 հուլիսի 1919 թ.:

մի մասնակի դեպք, ընթացություն, այլ համընդհանուր, համիսլանական շարժում հանրապետության արևելյան, հարավային և արևմտյան սահմանների վրա, որի նպատակը Հայաստանի օղակունը և վերջնական կործանումը պետք է լիներ: Սկիզբ առնելով Վեդիբասարում¹, այնուհետև այն ծավալվեց իր մեջ առնելով Շարուրը, Նախիջևանը, Սուրմալուն, Ջանգիբասարը և մուսուլմանաբնակ մյուս շրջանները՝ ընդհուպ մինչև Օլթի:

* * *

1919 թ. հունիսի առաջին օրերին մուսավաթականները, կարծես թե հակահայկական շարժումները ճնշելու հարցում բրիտանական հրամանատարության վճռականությունը ստուգելու նպատակով, հայերի մասսայական ջարդ կազմակերպեցին Շուշու մոտակայքում: Ավերվեցին մի քանի հայկական գյուղեր (Ղայբալիքենդ, Կրկժան, Փահլուր և այն), որոնցով Ղարաբաղը կապվում էր Ջանգեզուրի հետ: Փորձը հաջող անցավ. Շուշիում տեղակայված բրիտանական զորամասը սահմանափակվեց դիտողի դերով և անգն գյուղացիներին կոտորող ավազակախմբերին² սաստելու փորձ անգամ չարեց: Բրիտանական բարձր հրամանատարությունը ևս սահմանափակվեց միայն քննիչ հանձնաժողով ուղարկելով ու կատարվածը խոսքով դատապարտելով և նույնիսկ պաշտոնանկ չարեց այդ ջարդերի կազմակերպիչներին՝ իր իսկ կողմից Ղարաբաղի նահանգապետ նշանակված քուրդ դոկտոր Սուլթանովին: Իսկ Հայաստանի կառավարության, ինչպես և Թիֆլիսում գործող Ղարաբաղի հայրենակցական միության բոլոր բողոքները մնացին որպես «ծայն բարբառոյ յանապատի»: Հասկանալի է, որ այս հաջողությունը պետք է ոգևորեր և էլ ավելի

1 Այդպես էր կոչվում Վեդի գետի հովիտը և հարող շրջանը, որտեղ մի շարք թուրքաբնակ գյուղեր կային Բեյուք-Վեդի, Քյուչուկ-Վեդի, Կարաբաղլար, Ավշար, Խալիսա, Շիլար, Շիդլու և այլն:

2 Ադրբեջանը համիդիե ջոկատների օրինակով Ջաբուդի ձորի քղերից զինված խմբեր էր ստեղծել, որոնց միջոցով էլ իրագործում էր շրջանը հայերից մաքրելու իր քաղաքականությունը:

սանձարձակ դարձներ իսլամ ջարդարարներին ու խրախուսեր նրանց ակտիվ գործողությունների նաև Հայաստանի Հանրապետության մուսուլմանական շրջաններում: Սակայն հունիսին, քանի դեռ պատրաստ չէին համընդհանուր ապստամբության, սահմանափակվում էին անհնազանդության ցուցադրական դրսևորումներով, թեև մի շարք տեղերում տեղի են ունեցել նաև ուղղակի հարձակումներ հայ զինվորների վրա: Այդ ամենը հաստատող բազմաթիվ փաստաթղթեր են պահպանվել արխիվներում, բայց ծանոթանալով դրանցից մի քանիսին. «Վերջին օրերս Նախիջևան քաղաքում և Շահթախթի, Կիզիլ-Բողազի, Յաջիի (Ջուլֆայի) և Շարուրի շրջանների մուսուլմանների մոտ նկատվում է գրգռված տրամադրություն, - ասված է Երևանյան գորախմբերի շտաբի պետ գնդ. Պրիտոմանովի 1919 թ. հունիսի 12-ի ղեկուցագրում: ...Ըստ հետախուզական տվյալների Նախիջևան քաղաքում հայտարարված է մուսուլման կամավորների գրանցում և նույնիսկ, իբր մոտ օրերս ենթադրվում է զորահավաք: Մուսուլմանների ռազմական կազմակերպությունը, ըստ երևույթին, գլխավորում է Քերբալի խան Նախիջևանսկին»: Ջեկուցագրում հայտնվում է նաև, որ Ուլիա-Նորաշենի մոտ զինված թաթարները հարձակվել են երեք հայ զինվորի վրա և մեկին վիրավորել, հունիսի 11-ին Շահթախթի մոտ հարձակում են գործել դաշտային պահակախմբի վրա, իսկ Սուլթան-բեկ և Բադամլու գյուղերի մոտ գերի են վերցրել դաշտային աշխատանքների դուրս եկած 6 կնոջ և 1 տղամարդու: «Կուչի-Դեմուրչի գյուղի թաթարները այնքան են լկտիացել, - շարունակում է գնդ. Պրիտոմանովը, - որ սկսել են փողոց դուրս գալ զինված խմբերով: Ըստ արժանահավատ տեղեկությունների Ղաշարխ, Ենգիջա (Նորաշեն կայարանի մոտի) և շրջակա գյուղերում **ապստամբության պատրաստվելու ուժեղ ազդեցություն է մղվում**» (ընդգծումը մերն է - Է. Ջ.): Դա այնքան բացահայտ էր կատարվում, որ հայկական հրամանատարությունը ստիպված էր ջոկատ ուղարկել, շրջապատել Ղաշարխ

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց.1, գ. 50, թ. 44:

գյուղը և ձերբակալել 6 քարոզիչների¹: Շարուրում մահմեդականների ապստամբական նախապատրաստությունների մասին է խոսվում գեներալ Ռախմանովի հուշերի 15-ի հաղորդագրության մեջ: Նրանում ասված է, որ ըստ հետախուզական տվյալների Նորաշեն կայարանի մոտ գտնվող ենգիջա գյուղ են եկել 3 ադրբեջանցի սպաներ և Նախիջևանի մուսուլմանական ազգային խորհրդի նախագահ Սուլթանբեկովը, որոնք Գամզանների տանը գումարած խորհրդակցությունից հետո բնակչությանը հայտարարել են, որ պետք է պատրաստվել հայերի վրա հարձակման: Նման հրահանգ է ուղարկվել նաև շրջակա գյուղերը և Բեյլուք-Վեդի: Տեղեկացվում է նաև, որ սպաները մնացել են գյուղում՝ ապստամբությունը նախապատրաստելու համար և որ «ամեն օր, Արաքսի ափին, Սուղանլու-Ենգիջա շրջանում հավաքվում են մինչև 600 հեծյալ: Ենգիջան ունի երեք գնդացի»²: Իսկ Արաքսի աջ ափին կան 2000 հետևակ և 2 թնդանոթ, որոնք մոտ օրերս կուղարկվեն Ենգիջա³:

Հունիսի 12-ին տեղեկություն է ստացվում, որ Նախիջևանից 4-5 կմ. հեռավորության վրա գտնվող Բուլղան գյուղի մարագներից մեկում պահված է երկու թնդանոթ, մեկ գնդացի և արկեր: Հաջորդ օրը՝ 13-ին, հակահետախուզության պետ Կոտուրսկին 35 զինվորներով գնում է ստուգելու ստացված լուրը: Սակայն զինված գյուղացիները ոչ միայն թույլ չեն տալիս անցնել գյուղով, այլև կրակ են բացում արդեն հեռացող զինվորների հետևից³:

Գեներալ Ռախմանովի մի ուրիշ հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ հունիսի 15-ին 200 հոգուց բաղկացած քրդական մի ավազակախումբ հարձակվում է Արազդայան կայարանի վրա: Փոխհրածգության ժամանակ սպանվում է 1 զինվոր և 8 փախստական, իսկ 4-ը վիրավորվում են: Հունիսի 18-ին Քեշթազ գյուղում թուրք ասկյարները արգելափակում են Բաշ-Նորաշենի կոմիսարի օգնականին: Կոմիսարը ստիպված է լինում ուղարկել զրահագնացք և կես վաշտ հետևակայիններ: Կոմիսարի օգնա-

կանը ազատվում է, և երկու խռովարար ձերբակալվում են: Բայց հեռացող զինվորների հետևից հանկարծակի կրակ է բացվում գյուղից, որի հետևանքով սպանվում է երկու զինվոր և մեկ սպա: Ջրահագնացքը ստիպված է լինում ռմբակոծել նենգ գյուղը¹: Գեներալ Ռախմանովի մեկ այլ հաղորդագրության մեջ (հունիսի 30-ի) ասված է, որ երբ Բրիտանական զինվորական ներկայացուցիչ Պլաուդենը՝ Երևանյան զորախմբի հրամանատար Դրոյի հետ միասին Նախիջևան ուղևորության ժամանակ, իր մոտ հրավիրեց մուսուլմանական զանազան գյուղերի ներկայացուցիչների, ապա «Շահթախթի շրջանի թաթարները կտրականապես հրաժարվեցին ներկայացուցիչներ ուղարկել՝ պատճառաբանելով իրենց հրաժարումը նրանով, որ չեն ճանաչում ու չեն ուզում ճանաչել Հայաստանի կառավարությունը»²: Գեներալ Ռախմանովի հաղորդած տեղեկությունները հաստատող փաստեր կան նաև Դրոյի՝ Հայաստանի Հանրապետության զորքերի հրամանատարին ներկայացրած գաղտնի զեկուցագրում: Նրանում ասված է, որ Շահթախթի շրջանի, ինչպես նաև Կիվրազ, Ղարաբաղլար և Խոկ գյուղերի մուսուլմանները, որոնք հրաժարվում են ընդունել հայկական վարչությունը, լավ զինված են, ունեն գնդացիներ, նույնիսկ թնդանոթներ: Դրոն խոսում է նաև այն բողոքների մասին, որ Նախիջևանցիները ներկայացրել էին Պլաուդենին՝ իբրև թե հայկական վարչության անօրինական գործողությունների և հակահետախուզության կողմից առանց պատճառների իրականացրած ձերբակալությունների կապակցությամբ: Ձեկուցագրից նաև տեղեկանում ենք, որ գնդ. Պլաուդենը խնդրել է Դրոյին նորից այցելել Նախիջևան ավելի երկար ժամանակով՝ իրադրությանը ծանոթանալու, որոշ գյուղեր այցելելու և ներկայացված բողոքները քննարկելու համար: Կարելի է ենթադրել, որ Պլաուդենին դուր էր եկել Դրոյի որոշ զիջողականությունը, նրա կարգադրությամբ հակահայկական քարոզչության համար ձերբակալ-

1. Նույն տեղում, թ. 40:

2. Տես նույն տեղում, թ. 46:

3. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1-2, էջ 177-178:

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 50, թ. 50:

2. Նույն տեղում, թ. 63:

ված մի քանի անձանց ազատ արձակելը¹:

Այսպես օր օրի վրա հասունանում էր համընդհանուր ապստամբությունը, իրական վտանգ ստեղծում երկրամասում հայկական իշխանության գոյության համար: Միայն կույրը կարող էր դա չտեսնել, և կանխազգալով վտանգը՝ Հայաստանի կառավարությունը դեռ հունիսի 18-ին թիֆլիսում իր դիվանագիտական ներկայացուցչի միջոցով դիմեց Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարին՝ խնդրելով մի ջոկատ ուղարկել Նախիջևան: Հունիսի 14-ին դիվանագիտական ներկայացուցչի փոխանորդ Մ. Թումանյանը նորից է դիմում Բրիտանական զորքերի հրամանատարին, շեշտում, որ վիճակը Նախիջևանի տարածաշրջանում ավելի է վատացել ու հայտնում, որ Հայաստանի վարչապետը «հանձնարարել է իրեն կրկնել Նախիջևան բրիտանական ջոկատ ուղարկելու մասին խնդրանքը», քանի որ Հայաստանի կառավարությունը համոզված է, որ «Նորին Մեծության թեկուզ փոքրիկ ջոկատի ներկայությունն այնտեղ իսկույն հանգստություն կմտցնի պանթուրքիստական էմիսարների կողմից հրահրվող մուսուլմանների մեջ՝ ցրելով Կովկասից դաշնակցային ուժերի հեռանալու և Թուրքիային իր հին պլանների իրագործման հնարավորություն ընձեռելու մասին կեղծ լուրերը²:

Բրիտանական հրամանատարությանն ուղղած ինչպես նախորդ, այնպես էլ այս կոչը մնաց անարձագանք: Մինչդեռ հուլիսյան այդ նույն օրերին արդեն խոշոր իրադարձություններ էին ծավալվում թե Ջանգեզուրում և թե Վեդու ու Շարուրի շրջաններում:

Ջանգեզուրում թուրքերը հարձակումները կատարում էին թե Բազարչայի (Որոտան) և թե Օխչի (Ողջի) գետերի ուղղությամբ: Բազարչայի ուղղությամբ հարձակման ենթարկվեց Երիցաթումբ գյուղը: Բայց առանձնապես մեծ ուժեր էին կենտրոնացվել Ղափանի ուղղությամբ օսմանյան սպա Քյազիմ փաշայի գլխավորությամբ: Ըստ որում Ղափանի վրա հարձակումը ծավալվել էր երկու կողմից. Օխչիի ձորով Քաջարանց և Շաբադին գյուղերի

գծով և հակադիր հարավարևելյան կողմից՝ Ղարաբաբա, Ագարակ և Եղվարդ գյուղերի ուղղությամբ: Նպատակը պարզ էր. գրավել Ղափանը և ճանապարհ բացել Ադրբեջանից դեպի Նախիջևան: Եվ պետք է ասել, որ սկզբում թուրքերը հանկարծակիության շնորհիվ որոշ հաջողության հասան. գրավեցին Երիցաթումբը, Ղարաբաբան, Ագարակը և Եղվարդը: Հարձակումը այնքան անսպասելի էր, որ բնակչության մի մասը չհասցրեց փախչել և զոհ գնաց թուրքական խուժանին: Սակայն շուտով դրությունը փոխվեց, Ղափանի մարտական ուժերը հակահարձակման անցան, ջախջախիչ հարվածներ հասցրեցին թշնամուն և ոչ միայն ետ գրավեցին կորցրած գյուղերը, այլև իրենց հերթին գրավեցին և ավերեցին մի շարք թուրքական գյուղեր: Առանձնապես նշանակալից էր Ղարաբաբայի համար կռիվը, որտեղ սպա Թորոսյանի գլխավորած ուժերը այնպիսի հարված հասցրեցին թշնամուն, որ նա խուճապահար փախչելով, մարտի դաշտում թողեց 100-ից ավելի սպանված և մեծ թվով զենք ու զինամթերք: «Ականատես, ձեռնահաս և վստահելի անձնավորության հաղորդած տեղեկություններից երևում է, որ յուլիսի 2-4-ին Ջանգեզուր գաւառի Ղափանի շրջանում տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումների ժամանակ թուրքական զինուած ուժերը մեծ ջարդ են կրել - սպանուել են 150 և վիրավորուել 100 հոգի, որոնց փոխադրել և տեղաւորել են թրքական գիւղերում, - ասված է Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանի Երևան ուղարկած հուլիսի 18-ի գրության մեջ: Ջարդուած բանակին օգնութիւն հասցնելու նպատակով Աղղամից ճանապարհել են դեպի կռուի վայրը վեց հարիւր շահսևան ծիււորներ, որոնք կազմ և պատրաստ Աղղամում կարգադրութեան էին սպասում»¹: Սակայն ղափանցիների հաղթանակը այնքան տպավորիչ ու ցնցող էր, որ այս ճակատում թշնամին երկար ժամանակ այլևս ակտիվություն չէր ցուցաբերում:

Դժբախտաբար, դեպքերը այլ կերպ զարգացան Շարուր-Նախիջևանում: Այստեղ թշնամին շատ ավելի պատրաստված ու կազմակերպված գտնվեց, քան հայկական կողմը սպասում էր:

1. Նույն տեղում, թ. 67:

2. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1-2, էջ 113:

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, I մաս, թ. 13:

Շարուրում և Նախիջևանում գտնվող հայկական զորամասերը թիկունքից կտրելու նպատակով որոշված էր նախ ապստամբեցնել Վեդիբասարը, Հայաստանի կառավարության ուշադրությունը բևեռել նրա վրա և դրանով իսկ գործողությունների ազատություն ստանալ Շարուրում և Նախիջևանում: Ապստամբությունը ծրագրվել ու ղեկավարվում էր Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության միջոցով: Խան-Թեքինսկին հայերի բռնությունների մասին աջ ու ձախ տարածած կեղծ լուրերով ու բողոքներով անհրաժեշտ հող էր նախապատրաստել: Այն ծրագրված էր սկսել հուլիսի սկզբին, ինչի մասին անուղղակի վկայություն կա Ադրբեջանի պրեմյեր-մինիստրին ուղարկած հունիսի 26-ի N 247 գաղտնի հեռագրում: «Սուսուլմանների կյանքը օր օրի վրա վատանում է, - ասված է նրանում: **Թող ադրբեջանական կառավարությունը վերջնագրի կարգով, եթե հնարավոր է Վրաստանի հետ մեկտեղ, պահանջի անհապաղ դադարեցնել բոլոր բռնությունները...: Թող Ադրբեջանը բարձրաձայն բողոքի ամբողջ աշխարհի առաջ**, իսկ ինձ մոտ բռնության ամեն ղեպքի համար խնդրագրեր կան: Հունիսի 30-ին Խատիսովին նամակ կհանձնեմ, որում կմատնանշեմ մուսուլմանների նկատմամբ բոլոր բռնությունների և նրանց իրավական դրության մասին»¹ (ընդգծումը մերն է - Ե. Ջ.):

Այսպես կեղծ խնդրագրեր հավաքելով և աշխարհով մեկ աղմկելով, Թեքինսկին փորձում էր հասարակական կարծիք ստեղծել: Իսկ ապստամբության ռազմական կողմը նախապատրաստում էին մի խումբ օսմանյան սպաներ գնդապետ Խալիլ-բեյի գլխավորությամբ, որի ցուցումով նախապես մեծ քանակությամբ զենք, զինամթերք և կռվող ուժ էր կենտրոնացվել Բեյուք-Վեդիում: Հուլիսի 1-ին Բեյուք-Վեդիի և Դավալուի շրջանում թուրքերը սպանում են 9 հայ զինվոր և 12 գյուղացի²: Կառավարությունը պահանջում է հանձնել մեղավորներին, վերադարձնել սպանված զինվորների զենքերը և վճարել դրամական տուգանք՝ հօգուտ սպանվածների ընտանիքների: Բավարարություն չստանալով, կառավարությունը որոշում է զորք ուղարկել: Սակայն գյուղի մատույցներում թուրքերը հուլիսի 4-ին հայկական զորամասի վրա հանկարծակի ու

1. Նույն տեղում, գ. 358, ք. 40:

2. Տես նույն տեղում, գ. 209, ք. 185:

միաժամանակյա կրակ են բացում զենքի բոլոր տեսակներից՝ պատճառելով զգալի կորուստներ (սպանվածների թիվը հասնում էր 30-ի, վիրավորներինը՝ ավելի քան 70-ի): Խուճապի մատնված հայկական զորամասը նահանջում է հազիվ փրկելով թնդանոթները և մարտի դաշտում թողնելով հինգ զնդացիր: Խուճապը այնքան մեծ էր, որ սպանվածների և վիրավորների մի մասը թողնվել էին մարտի դաշտում:

Ինչ խոսք, որ այս անհաջողության համար մեղավոր էր նաև զորամասի հրամանատարությունը զնդ. Ապրեսյանի գլխավորությամբ, որը հավատ ընծայելով գյուղի կոմիսարին (հայտնել էր, թե բանակցելու համար ներկայացուցիչներ է ուղարկում) մոտեցել էր գյուղին առանց նախազգուշական միջոցառումների: Նույնիսկ հրետանին, որը պետք է դիրքավորվեր գյուղից որոշակի հեռավորության վրա, այնքան էր մոտեցվել, որ ընկավ հրացանային կրակի տակ և միայն սպաների անձնագոհ ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ փրկել դրանք¹:

Ինչևէ, սխալը թույլ էր տրված և հարկավոր էր շտկել այն, հարկավոր էր արագ գործողություններով ճնշել ու լիկվիդացնել այդ ապստամբական օջախը՝ նրա տարածումը կանխելու նպատակով: Գիտակցո՞ւմ էր դա հայկական կողմը թե ոչ՝ դժվար է ասել: Մի բան պարզ է. արագ ու վճռական գործողություններ տեղի չունեցան, զուցե նաև անհրաժեշտ քանակությամբ ուժեր ձեռքի տակ չունենալու պատճառով: Հուլիսի 5-ին՝ ղեպքերից մեկ օր հետո, հայկական բանակի Սուրմալու-Նախիջևանյան խմբավորման հրամանատար Դրոն մեկնում է Երևան՝ զեկուցելու կատարվածի մասին: Իսկ Բեյուք-Վեդիում անհաջողության մատնված զորամասը «հանգստանում է և կարգի բերում իրեն»: Ճիշտ է, չորս օր հետո՝ հուլիսի 8-ին, փորձում է գրոհով գրավել Վեդին, բայց հաջողություն չի ունենում: Մինչդեռ թշնամին նորանոր ուժեր էր կուտակում Վեդիում, պատրաստվում երկարատև դիմադրության: Բանակի շտաբի հուլիսի 10-ի օպերատիվ հաղորդագրության մեջ ասված է, որ հուլիսի 9-ին Համզակի բանդայի շուրջ

1. Տես նույն տեղում, ֆ. 199, ց 1, գ 50, ք. 74:

300 զինված թաթարներ Շարուրից անցել են Սադարակ և տեղի բնակչությունից պահանջել միանալ իրենց բեյութեղիցիներին օգնության զնալու համար: Եիշտ է, Սադարակ ուղարկված հայկական զորամասի մոտենալուն պես այդ բանդան հեռացել է, բայց դրանով Վեդիին օգնության հասնողների ճանապարհը չի փակվել¹: Դետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ իսկապես Վեդիբասարի մահմեդականները վաղուց պատրաստվել էին երկարատև դիմադրության, շրջակա գյուղերից Բեյութեղի էին հավաքվել մի քանի հազար կռվողներ, կուտակել զենք ու զինամթերք և այլ անհրաժեշտ պարագաներ: Դուլխի 16-ով թվագրված մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ հետախուզության միջոցով հայկական կողմին հաջողվել էր պարզել, որ Բեյութեղիում կար 5000 կռվող, որոնց շարքում 15 թուրք ասկյար, 2 թուրք ինստրուկտոր, 30 ադրբեջանցի սպաներ: Բոլորը զինված էին ռուսական և թուրքական արտադրության մարտական հրացաններով, կար նաև 2 թնդանոթ (1-ը ռուսական և մեկը՝ թուրքական), զնդացիր և այլն²: Հասկանալի է, որ նման ուժին ընկճելը հեշտ գործ չէր: Ահա ինչու ուղարկված հայկական ուժերը, թեև սեղմել էին թշնամուն բոլոր կողմերից, բայց գյուղը շարունակում էր դիմադրել: Գեն. Հախվերդյանը իր հուշերում այդ անհաջողության հիմնական պատճառը համարում է Դրոյի կողմից ոչ ճիշտ տակտիկայի կիրառումը: Նա գրում է. «Գրավել հողապատնեշներով լավ ամրացված Բեյութեղին, չհաջողվեց: Գրոհներ ձեռնարկվել են 2-3 անգամ, բայց ամեն անգամ դրանք ավարտվել են անհաջողությամբ: **Դրա պատճառը տակտիկայի հիմնական կանոնների խախտումն էր, այն է, Դրոյի ցանկությունը շրջապատել ամբողջ Բեյութեղու շրջանը բոլոր կողմերից, որի հետևանքով ռազմաձևակառույցը խիստ ձգված էր և գրոհող զորասյունները՝ սակավամարդ: Ըստ որում ամեն մի զորամասի համար հատուկ խնդիր չէր առաջադրվում և նրանց գործողություններում փոխկապակցվածություն չկար: Մի խոսքով՝ դիլետանտություն կամ, երևանյան արտահայտությամբ,**

1. Նույն տեղում, ք. 85:

2. Նույն տեղում, ք. 99:

խմբապետություն: Զինվորական ներկայացուցիչները խորհուրդ տվեցին ամբողջ ջոկատը կենտրոնացնել Թաշլուի շրջանում Բեյութեղից հյուսիս-արևմուտք, և նպատակակետի կենտրոնացված հրետանային նախապատրաստությունից հետո բոլոր ուժերով գրոհել մեկ ուղղությամբ, այսինքն կենտրոնացված ուժերով, բայց **Դրոն գործում էր յուրովի, պարտիզանաբար:** Միջամտել նրա կարգադրություններին և պնդել իրենց պլանի վրա, զինվորական ներկայացուցիչները ցանկալի չէին համարում, քանի որ պատերազմը քաղաքացիական էր, և ինչքան քիչ լինեին կորուստները, այնքան ավելի լավ»¹(ընդգծումը մերն է - է. Ջ.):

Իսկապես որ Դրոյի ընտրած տակտիկան ճիշտ չէր, մանավանդ եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ շրջապատման մեջ ընկածները, որպես կանոն, կռվում են մահապարտներին հատուկ համառությամբ: Բայց ճիշտ չէ նաև գեն. Հախվերդյանը, երբ արդարացնում է գործին չմիջամտելու իր և իր զինվորականների վարքագիծը: Չէ՞ որ Դրոն ոչ թե ինչ-որ ֆիդայական խմբի, այլ հայկական բանակի Սուրմալու-Նախիջևանյան խմբավորման հրամանատարն էր, հետևապես նա պարտավոր էր անվերապահորեն կատարել իր վերադասի՝ ռազմական մինիստրի², բանակի գլխավոր հրամանատարի, վերջապես նաև ռազմական շտաբի մշակած պլաններն ու իջեցրած հրահանգները: Եիշտ չէ նաև Վեդիում սկսված իրադարձությունները քաղաքացիական պատերազմ համարելը և ռազմական գործողությունների պլանավորմանը իրենց չմասնակցելն ու չմիջամտելը դրանով արդարացնելը, քանի որ այն, ինչպես վերը տեսանք, Թուրքիայի և Ադրբեջանի կողմից հրահրված և Հայաստանի դեմ սանձազերծված համախլամական գրոհի կարևոր օղակներից մեկն էր, գրոհ, որի նպատակը հայ պետականության ոչնչացումն էր: Չենք կարծում նաև, թե զինվորական ղեկավարությունը այդ բանը չէր գիտակցում կամ չէր հասկանում, թե ինչ ծանր հետևանքներ կունենա

1. Նույն տեղում, ք. 45, գ. 1, գ. 32, ք. 16:

2. 1919 թ. մարտի 27-ին գեն. Հախվերդյանը հրաժարական էր տվել և նրա փոխարեն ռազմական մինիստր էր նշանակվել գեն. Բ. Արարատյանը:

հայ գործադատների անհաջողությունը Վեդիբասարի կռիվներում: Իսկ եթե հասկանում էր, բայց չարունակում էր հանդուրժել Դրոյի «պարտիզանաբար» ռազմական գործողություններ վարելը, ուրեմն կամ նա ի վիճակի չէր ազդելու Դրոյի վրա, կամ էլ նա ուղղակի անտարբեր էր հանրապետության ճակատագրի նկատմամբ: Եթե հիշենք այն անհանդուրժողականության, սուր հակասությունների ու հակամարտության մասին, որ գոյություն ուներ հայկական բանակի պրոֆեսիոնալ սպաների և ֆիդայի հրամանատարների միջև, ապա առաջինը ավելի հավանական պետք է համարենք: Այո՛, հայկական բանակի հրամանատարական կազմում գոյություն ունեցող այդ դժբախտ իրողությունը՝ պակաս բացասական դեր չի խաղացել մեր զորքերի կրած անհաջողությունների հարցում թե՛ այդ օրերին, թե՛ հատկապես 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ: Մինչդեռ եթե Բեյուք-Վեդիի շրջանի ապստամբությունը արագ կերպով ճնշվեր, ապա գուցեև Շարուրում ու Նախիջևանում դեպքերը այլ ընթացք ստանային: Համենայն դեպս, Վեդիբասարում գտնվող մեր զորքերը (թվով շուրջ 800) կարող էին օգնության հասնել Շարուրի մեր զորամասին: Բայց այդպես չէր կարող մի կողմից անգլիացիների միջամտությունը՝ հարցը իբրև թե խաղաղորեն լուծելու առաջարկությամբ, մյուս կողմից Ադրբեջանի բարձրագրած աղմուկը և, ինչպես արդեն ասվեց, տակտիկական սխալները, հնարավորություն չտվեցին գործն արագ ավարտել: Դա ավելի էր լկտիացնում թշնամուն և մահմեդականությունն ամենուրեք գենքի է դիմում, գրոհում մեր ուժերի վրա: Հուլիսի 12-ին Դրոն հաղորդում է Երևան, որ Բեյուք-Վեդին շրջապատող բարձունքները մեր ձեռքում են, աստիճանաբար սեղմում ենք թշնամուն, բայց միաժամանակ ավելացնում, որ «հակառակորդը մեծ և փոքր խմբերով անընդհատ անհանգստացնում է մեր թիկունքը՝ անցնելով Արաքսը և հարձակվելով մոտակա գյուղերի վրա: Երեկ ժամը 16-ի մոտերքը թաթարները, անցնելով Արաքսը, հրդեհեցին Նովրուզլու գյուղում մի քանի խոտի դեզ և թաքնվեցին: Երեկ երեկոյան մենք էլ հարձակվեցինք Ալի-Մամեդ գյուղի վրա և գրավեցինք: Աջ ա-

փից թշնամին անընդհատ գնդակոծում է մեր զորամասը: Խալիսայում հավաքված թաթարները այսօր առավոտյան մոտեցան Օվչար գյուղին: Զրահագնացքի աջակցությամբ թաթարները հետ են քշվում»¹:

Այս հաղորդման մեջ Դրոն խոսում է միմիայն զինվորների կորուստների մասին (շուրջ 20) և ոչինչ չի ասում խաղաղ բնակչության կորուստների մասին: Մինչդեռ այդ նույն հարձակման մասին մամուլում հրապարակված հաղորդագրության մեջ ասված է, որ « Ամսոյս 11-ի երեկոյան ժ. 4-ին Սարաջլու, Չելիխանլու թուրք զիւղացիները յարձակվեցին Նովրուզլու, Դալուլար գիւղերի վրայ. Նովրուզլուում դաշինով ու հրացանով սպանվեցին 2 կին, 20 տղամարդ և 5 հոգի վիրավորվեցին, այրել են ցորենի արտեր: Դալուլարը մարդկային կորուստ չի տվել: Ղամարլուում ու շրջակա գիւղերում սկսուեց խուճապ: Ականատեսների պատմելով յարձակման մասնակցել են հարևան թուրք գիւղերից շատերը: Մեր տեղական ուժերի հակահարձակումը 2 ժամ յետոյ թշնամուն շարտեց Արաքսի միւս ափը»²: Իսկ հուլիսի 20-ին Դրոն հաղորդում է, որ «Շարուրում հանգիստ է, ձախ թևում ավելի առաջ ենք անցել և գտնվում ենք հենց Բեյուք-Վեդիում, սերտ կապ ենք հաստատել Ձինջիրլուի հետ»³:

Բեյուք-Վեդիի շրջանում հայերի որոշ հաջողությունները խիստ անհանգստացնում են Ադրբեջանին և Երևանի նրա ներկայացուցչին: Եվ եթե հուլիսի 7-ին Բաքու ուղարկած հեռագրում վերջինս ուրախությամբ հայտնում էր, որ «Բեյուք-Վեդին հետ է մղել հայկական զորքերին և հարկադրել, որ վերջիններս հետ քաշվեն մինչև երկաթուղու գիծը»⁴, ապա 14-ին արդեն հարկադրված էր հայտնել, որ «Բեյուք-Վեդու դրությունը շատ լուրջ է: ... Մուսուլմաններին կարող է փրկել Ադրբեջանի ռազմական միջամտությունը: Եթե հայկական զորքերը վերցնեն գյուղը, ապա մուսուլմաններին կմորթեն, դրա համար էլ մուսուլմանները համառորեն

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 50, թ. 92:

2. «Աշխատանք», 15 հուլիսի 1919 թ.:

3. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 50, թ. 108:

4. Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 358, թ. 43:

պաշտպանվում են»։ Այնուհետև շեշտելով, որ ինքը մուսուլմաններից հայտնել է, որ Ադրբեջանը ներկայումս չի կարող գործեր ուղարկել, բայց բոլոր ծախսերը և կորուստները անհապաղ կհատուցի, ավելացնում է, թե «**սպասվում են մեծ իրադարձություններ ողջ Շարուր-Նախիջևան-Օրդուբադի շրջաններում և Կարսի մարզում**։ Չկորցնելով մեկ օր անգամ, ուղարկեցեք խոշոր չափի գումար ռազմական կազմակերպությունների համար»¹ (ընդգծումը մերն է - Է.Ձ.)։

Ինչպես տեսնում ենք, Թեքինսկին խոսում է մուսուլմանների համընդհանուր ապստամբության մասին հանրապետության արևմտյան և հարավային ողջ տարածքի վրա։ Ասենք Թեքինսկու հաղորդածը Բաքվի համար բոլորովին նորություն չէր. դեռ հուլիսի 8-ին Թեքինսկին իր կառավարությունից ստացել էր այսպիսի մի հավաստիացում. «Գովում են Շարուր-Նախիջևանի հետ կապվելու ձեր ծրագիրը և համաձայն են ռազմական կազմակերպությունների համար միջոցներ բաց թողնել. հաղորդեցեք ո՞ւմ և ինչպես բաց թողնել փողը։ Հաղորդեցեք նույնպես. ի՞նչ ծանապարհով պիտի իրականանա ծրագիրը և կազմակերպությունը»²։

Իսկ հուլիսի 12-ին Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ.Բեկզադյանին է ներկայացնում բողոքի նոտա Բեյուք-Վեդիի դեպքերի կապակցությամբ, որտեղ Հայաստանի կառավարությանը մեղադրում է իբրև թե անգեմ, անպաշտպան և ինքնորոշված մուսուլմանական ազգաբնակչության դեմ «պատժիչ էքսպեդիցիա» ուղարկելու և նման այլ մեղքերի մեջ և պահանջում անհապաղ դադարեցնել հայկական գործերի գործողությունները «մուսուլմանների դեմ ընդհանրապես»։ Եվ իզուր էր Բեկզադյանը հուլիսի 15-ի պատասխան նոտայում իր կառավարության անունից հավաստիացնում, թե Հայաստանը մուսուլմանների նկատմամբ ոչ մի բռնություն չի գործադրել, այլ հակառակը, նրանցից շատերին պաշտոններ է առաջարկել, որ Հայաստանի Հանրապետության համար չկան սև և սպիտակ ոսկորի քաղաքացիներ», և նա քաջ գիտակցում է, որ առանց հայերի և

մուսուլմանների միջև բարի հարաբերությունների հաստատման հնարավոր չի լինի պետականության հիմքերի ամրապնդումը և այլն։ Նոտայում նաև տրված էր Բեյուք-Վեդիի դեպքերի իրական պատկերը¹։

Չբավարարվելով սրանով, Ադրբեջանի կառավարությունը Երևանի իր դիվանագիտական ներկայացուցչին հանձնարարում է նույն հարցով հանդիպում ունենալ վարչապետ Խատիսյանի հետ։ Հուլիսի 16-ին Բաքու իր արտագործմինիստրին ուղարկած հեռագրում Թեքինսկին հայտնում է, որ երկարատև զրույց է ունեցել վարչապետ Խատիսյանի հետ, որը «իր գործողությունները համարում է ճիշտ» և որպես արդարացում վկայակոչում անգլիացի գնդապետ Պլաուդենի և ամերիկյան միսիայի կողմից հավանության արժանանալու փաստը²։ Այդ նույն օրը Թեքինսկին մեկ ուրիշ, ավելի ընդարձակ հեռագիր է ուղարկում Բաքու Հայաստանի վարչապետի հետ իր զրույցի մասին, որտեղ ասված է. «Խատիսյանը գտնում է, որ Բեյուք-Վեդու օպերացիան Հայաստանի ներքին գործն է, որ ինքը՝ Ադրբեջանը նույն կերպ է վարվում նույնիսկ մուսուլմանական ազգաբնակչության նկատմամբ ասկյարների սպանության համար, որ Ադրբեջանը երբեք չի հավակնել Վեդիբասարի շրջանի վրա, որ չի կարող երկու-երեք գյուղերի ինքնորոշում լինել»։ Այնուհետև հայտնելով, որ վարչապետը համաձայն է թույլ տալ բեյուքվեդիցիներին վերաբնակվել Ադրբեջան, վերջում ավելացնում է. «Ես խոստացա հարցնել Ձեզ և **խնդրեցի երկու-երեք օրով կանգնեցնել ռազմական գործողությունները**։ Խատիսյանը պատասխանեց, որ կհարցնի ռազմական մինիստրին և եթե դա չի խանգարի ստրատեգիական խնդիրներին, ապա հնարավոր է ռազմական գործողությունները երկու-երեք օրով կկանգնեցվեն»³ (ընդգծումը մերն է - Է. Ձ.)։

Ինչ խոսք, որ ոչ Թեքինսկին, ոչ էլ նրա կառավարությունը Հայաստանի տակ պայթուցիկ ռումբի պես ընկած Վեդիբասարը վերաբնակեցնել չէին ցանկանա և երկու-երեք օրով ռազմական

1. Նույն տեղում, ք. 50:

2. «Հառաջ», 8 նոյեմբերի 1919 թ.:

1. Տես՝ ԳՅ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 209, ք. 185-186:

2. Նույն տեղում, գ. 358, ք. 51:

3. Նույն տեղում, ք. 52:

գործողությունները դադարեցնելու խնդրանքը ժամանակ չափելու, ինչպես նաև Բեյուք-Վեդիին շունչ քաշելու հնարավորություն տալու նպատակ էր հետապնդում: Ինչ վերաբերում է Անդրկովկասի բրիտանական հրամանատարությանը, ապա նա այս ամենը տեսնում էր, լավատեղյակ էր Ադրբեջանի կողմից ծրագրվող գործողություններին և թեքինսկու գործունեությանը, բայց սաստելու փորձ չէր անում, որևէ պատժիչ գործողություն չէր ձեռնարկում, այլ միայն զարմանք էր հայտնում, թե ինչո՞ւ է Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունը խառնվում Հայաստանի ներքին գործերին: Ավելին. Ադրբեջանի քարոզչության ազդեցության տակ անգլիական հրամանատարությունը որոշում է միջամտել և դադարեցնել Բեյուք-Վեդիի վրա հայկական հարձակումները. «Մեր աշխատանքի շնորհիվ գեներալ Կորին մի սպա է ուղարկում Հայաստանի կառավարությանն առաջարկելու մուսուլմանների վերաբերմամբ զինվորական գործողությունները դադարեցնելու, - գրում է «Ադրբեջան» օրաթերթը հուլիսի 21-ի համարում, - նա ասել է, որ իր համակրանքը մուսուլմանների կողմն է և մուսուլմանների հարցը պատերազմով լուծելն անթույլատրելի է»¹:

Եվ իսկապես. հուլիսի 21-ին բրիտանական հրամանատարությունը Հայաստանի կառավարությանը ռազմական գործողությունները դադարեցնելու ցուցում է տալիս, որից անմիջապես փորձում են օգտվել թուրքերը: Ահա ինչ է ասված այդ մասին բանակի գլխավոր շտաբի պետ. գնդապետ Ջինկևիչի հուլիսի 22-ի օպերատիվ հաղորդագրության մեջ. «Բրիտանական հրամանատարության ցուցման համաձայն մեր կողմից ակտիվ գործողությունները Բեյուք-Վեդիի դեմ դադարեցվեցին հուլիսի 21-ի առավոտյան: Այդ նույն օրը երեկոյան Բեյուք-Վեդիից թաթարները հարձակման անցան և գրավեցին Բեյուք-Վեդիից հյուսիս գտնվող 362 բարձունքը: Հուլիսի 22-ի առավոտյան մենք կռվով այդ բարձունքը ետ վերցրինք»:

1. «Հառաջ», 25 նոյեմբերի 1919 թ.:

22-ի առավոտյան թաթարները հարձակման անցան 4 ուղղություններով.

1. Շիդլուի մոտ անցնելով Արաքսը և շարժվելով Բեյուք-Վեդիի ու Խալիսա-Ավշարի ուղղությամբ: Այդ հարձակումը կասեցված է, թաթարները հետ են քշված Շիդլու գյուղը:

2. Բեյուք-Վեդիից: Այդ հարձակումը նմանապես հետ է մղված:

3. Գայլի Դրունքի վրա՝ Շարուրի կողմից, Գայլի Դրունքից հյուսիս գտնվող բարձունքներից: 22-ի երեկոյան Գայլի Դրունքի հյուսիսային մասը մնաց թաթարների ձեռքին, իսկ հարավայինը՝ մեր:

4. Շահթախթիի վրա: Այնտեղ գտնվող մեր վաշտերը կռվով ճեղքել անցել են Շարուր»¹:

Հաղորդագրության վերջում Ջինկևիչը նաև հայտնում է, որ երեկոյան ժամը 23-ին ռադիոգիր է ստացել Շարուրի ջոկատի հրամանատարից, թե չորս կողմից շրջապատված կռիվ է մղում հարձակվող զերակչի թաթարական ուժերի դեմ:

Ինչպես տեսնում ենք, հայկական կողմից ռազմական գործողությունների դադարեցումը Բեյուք-Վեդիին փորձում էր օգտագործել իր դրությունը բարելավելու, օղակումը վերացնելու համար: Դա երևում է ոչ միայն հակահարձակում կազմակերպելու փորձերից, այլև թեքինսկու նույն հուլիսի 22-ին Բաքու ուղարկած հեռագրից. «Ես տպավորություն ստացա, որ հայկական զորքերը չեն հեռանա Բեյուք-Վեդիից, - ասված է նրանում, - այլ մնալով դիրքերում միայն կդադարեցնեն ռազմական գործողությունները: Ձեռնարկեք միջոցներ, որպեսզի հայկական զորքերը հետ քաշվեն, այլապես Բեյուք-Վեդիի մուսուլմանների դրությունը կծանրանա և նույնիսկ վտանգավոր կդառնա»²:

Չենք կարծում, թե թեքինսկին տեղյակ չէր, որ այդ նույն օրերին Ադրբեջանի ջանքերով զենք էին վերցրել Շարուրն ու Նախիջևանը: Ուրեմն միջոցներ արդեն ձեռնարկված էին, սկսված էր չհայտարարված պատերազմ Հայաստանի դեմ: Հետևապես ի՞նչ էր ուզում թեքինսկին, բացահայտ պատերազմ, ինչի մասին նա

1. Տես ԳԳ ՊԿՊԱ, ֆ. 199, գ. 1, զ. 50, թ. 110:

2. Նույն տեղում, ֆ. 200, գ. 1, զ. 358, թ. 61:

բազմիցս պնդել էր իր նախորդ հեռագրերում: Բայց Ադրբեջանի ղեկավարությունը գերադասում էր գործել ծածուկ, քողարկված՝ բրիտանական հրամանատարության դժգոհությունը չհարուցելու համար:

Հուլիսի 14-ին Նախիջևանի նահանգապետի ժամանակավոր պաշտոնակատար Մեժլունովը¹ ՀՀ ներքին գործոց մինիստրին հեռագրում է, որ ամսի 2-ին Նախիջևանից ոչ հեռու Ջեյնադին գյուղի մոտ թալանվել են 10 ղազանչեցի հայեր, խլվել են ձիերը, փողերը և ամբողջ գույքը, նույն օրը Կզըլ-Բողազում օրվա ընթացքում թալանվել են 25 հայեր²: Հուլիսի 15-ին Երևան ուղարկած մի նոր հեռագրով Մեժլունովը հայտնում է, թե «դրությունը անհանգիստ է, զրգռող: Ամիս 8-ից սկսվել են թալան, սպանություններ: Երրորդ մասում³, Կզնութի և Նախիջևանի միջև, հարձակում է կատարվել երրորդ մասի կոմիսարի վրա: Այնտեղ կզնութցիներից և այլ գյուղերից գերի էր վերցվել 15 մարդ, այդ թվում չորս կին: Անգլիական միսիայի ներկայացուցիչը վերջնագիր էր ներկայացրել Մուսուլմանական ազգային խորհրդին, որպեսզի մինչև ամսի 16-ի երեկո գերիները ազատ արձակվեն, բայց երեկ նրանցից 9-ին գտան սպանված: ... Այսօր զեյնադցիները գերի էին վերցրել 42 ղազանչեցիների, բայց թալանելուց հետո ազատ էին արձակել և 2 կնոջ բռնաբարել: **Ընդհանուր տագնապալից հրադրության պատճառով գեներալը չի համարձակվում պատժել իր ուժերով, քանի որ դրանք փոքրաթիվ են:** Այդ մասին հայտնված է անգլիական միսիայի ներկայացուցչին...»⁴ (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Գեներալ Շելկովնիկովը բավականաչափ ուժեր չունի խռովարարներին պատժելու, ուստի նա շարունակում է նստած մնալ Նախիջևան քաղաքի զորանոցներում և բավարարվել դիտողի

1. Հուլիսի սկզբին Երևան մեկնած նահանգապետը չէր վերադարձել բրիտանական ներկայացուցչության պետի պահանջով՝ պատճառաբանությամբ, որ իբր նահանգապետը բրիտանական ներկայացուցչի կարգադրությունները արհամարհում է, որ մուսուլմանները դժգոհ են նրանից և այլն:

2. Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 50, թ. 94:

3. Նախիջևանի գավառը բաժանված էր 3 վարչական մասերի:

4. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 171, թ. 30:

դերով: Իսկ թշնամին ավելի ու ավելի է համարձակություն ձեռք բերում, տարածում գործողության շրջանակները, ընդլայնում շարքերը և մոտենում քաղաքին: Ճի՞շտ էր արդյոք նրա այդ վարքագիծը: Կարծում ենք ոչ. նախաձեռնությունը թողնելով հակառակորդին, նա դրանով իսկ հայկական զորամասին դատապարտում էր պասսիվության, շրջապատման ու անխուսափելի պարտության: Եվ մի՞ թե քիչ էր 700-800 զինվորը, չէ՞ որ հենց այդքան ուժով դրանից մեկ տարի առաջ՝ 1918 թ. գարնանը, պորուչիկ հարազյանը պատժելով մի քանի անհնազանդ գյուղերի և հաղթականորեն մտնելով Նախիջևան, հարկադրեց թշնամուն հաշտություն կնքել և հանգիստ նստել: Ճիշտ է, 1919 թ. ամռանը թշնամին ավելի լավ էր զինված ու կազմակերպված: Բայց միևնույն է. Նախիջևանի զորամասի հրամանատարության տակտիկական դատապարտելի է, մանավանդ եթե հիշենք այն հանրահայտ ճշմարտությունը, որ ամենալավ պաշտպանությունը հարձակումն է: Շատ հնարավոր է, որ եթե Շելկովնիկովի զորամասը սկզբից ևեթ ակտիվ գործողությունների դիմեր, ճնշեր ու հնազանդեցներ ծայր առնող ըմբոստությունները, ապա գուցե դեպքերը այլ կերպ զարգանային: Բայց դա տեղի չունեցավ, Նախիջևանի հայկական զորամասը մնաց տեղում, իսկ թշնամին աստիճանաբար սեղմում էր օղակը քաղաքի շուրջը:

Փաստերի անկողմնակալ ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ Նախիջևանում դեպքերի նման զարգացման գործում մեղքի իր բաժինն ուներ նաև Անդրկովկասի բրիտանական հրամանատարությունը: Ընդհանուր հրամանատար գեմ. Թոմսոնին փոխարինած գեմ. Կորին և Երևանյան միսիայի ղեկավարի պաշտոնում գեմ. Դևիդին փոխարինած գնդ. Պլաուդենը Նախիջևանի հարցում ոչ հայանպաստ դիրքորոշում որդեգրեցին: Թե՛ Շարուրում, թե՛ Նախիջևանում տեղի ունեցած միջադեպերի ժամանակ, որպես կանոն, նրանք բռնում էին մահմեդականների կողմը, աշխատում ծածկել նույնիսկ բացահայտ հանցագործությունները՝ կարծես թե նրանց չգրգռելու մտադրությամբ: Նախորդ գլխում

մենք արդեն ծանոթացանք նման մի միջադեպի հետ՝ կապված Նախիջևանում որոշ քանակությամբ զենքի բռնագրավման հետ և տեսանք, թե ինչով այն ավարտվեց: Ավելորդ չենք համարում մեկ-երկու փաստեր ևս վկայակոչել:

Նախիջևանում ոստիկանությունը ձերբակալել էր հակահայկական քարոզչության հայտնի պարագլուխներ Բեգբաշևին ու Ռզաևին: Որոշվել էր նաև խուզարկություն կատարել Արաքսի ափին գտնվող մի գյուղում, որտեղ, ըստ տեղեկությունների, զենքի գաղտնի պահեստ կար: Սակայն գործին միջամտեց գնդ. Պլաուդենը և կարգադրեց ձերբակալվածներին ազատել, իսկ գյուղում խուզարկություն չկատարել, քանի որ իրենք խոստացել են մուսուլմաններին, որ հայկական վարչությունը քաղաքական ձերբակալություն, խուզարկություն ու զինաթափում չի կատարելու: Նա նույնիսկ սպառնաց, որ եթե իր պահանջը իսկույն ևեթ չկատարվի, ապա ինքը Նախիջևանի անգլիական ներկայացուցչությունը կփակի՝ հետևանքների համար ամբողջ պատասխանատվությունը դնելով հայկական կողմի վրա¹:

Նույնպիսի ավարտ է ունենում նաև Շահթախթի գյուղի միջադեպը (սպանվել էր մի հայ արհեստավոր, որին մի թուրք հրավիրել էր իր ջրաղացը նորոգելու): Նախ անգլիացի և իսլամ ներկայացուցիչները երեք օր ձգձգում են գործի քննությունը, իսկ այնուհետև քննիչի հետ միասին մասնակցում գործի քննությանը: Քննիչը (ազգությամբ թուրք) գործը ապացուցված համարելով, առաջարկում է ձերբակալել հանցագործին, սակայն անգլիացի և իսլամ ներկայացուցիչները չեն համաձայնում և մարդասպանը մնում է անպատիժ: Այս միջադեպը նկարագրված է «Չառաջ»-ի 1919 թ. նոյեմբերի 26-ի համարում: Այնտեղ պատմվում է նաև Ղզլ-Բողազի դեպքի մասին (զինված թուրքերը հարձակվել էին հայ գաղթականների վրա, թալանել, քշել տարել անասունը, կրակ բացել դեպքի վայր հասած թուրք միլիցիոներների վրա, վիրավորել կոմիսարին): Սակայն անգլիական ներկայացուցչության

ղեկավար կապիտան Շվինդը¹ իր հովանավորության տակ է առնում հանցագործներին, թույլ չի տալիս միջոցներ ձեռնարկել, հայտարարում է, թե կատարվածը մեծ բան չէ, Քերբալայ խանը խոստացել է թալանվածը վերադարձնել: Դարձյալ հանցագործները մնում են անպատիժ:

Այսպես էր գործում անգլիական ներկայացուցչությունը Նախիջևանում: Եվ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ ներկայացուցչությունը տեղավորված էր Ռահիմ խանի տանը, կապիտան Շվինդը մասնակցում էր այդտեղ կազմակերպված բոլոր միջոցառումներին (հավաքույթներ, ճաշկերույթներ և այլն) և բնականաբար ընկել էր խանի ազդեցության տակ: Գործը հասավ այնտեղ, որ երբ հայկական կողմը զգուշացրեց կապիտանին, որ Նախիջևանում գաղտնի զորակոչ է սկսված և որ նրա ներկայությամբ՝ Ռահիմ խանի տան բակում, երիտասարդների ցուցակագրություն է կատարվում, ապա վերջինս պատասխանել էր. «Այդ բոլորը ինձ հայտնի է, դուք կարող եք հանգիստ մնալ, ես նախագուշացրել եմ թե ազգային խորհրդին և թե Քերբալայ խանին: Ես ասել եմ, որ ամբողջ պատասխանատվությունը նրա վրա կընկնի, եթե մի դեպք պատահի: Նրանք հավատացրել են, **ինքն էլ իր կողմից հավատացնում է, որ ոչ մի բարդություն այստեղ չի առաջանա, թուրքերը սաստիկ վախենում են անգլիացիներից և բավական է իր մի խոսքը, որ ամեն մի ցույց ու ապստամբություն դադարի**»² (ընդգծումը մերն է - Է. Ձ.):

Սակայն հավատացածը ինքն էր, իսկ իրականությունը՝ բոլորովին այլ: Չէր անցել և մի քանի օր, երբ սկսվեց ապստամբությունը և Ռահիմ խանի տունը վերածվեց ապստամբության ռազմական շտաբի:

* * *

Դատելով հրաշքով փրկված և Դարալագյազ անցած փախստականների վկայություններից, մահմեդական հրոսա-

1. Տես՝ «Չառաջ», 11 նոյեմբերի 1919թ.:

1. Որոշ փաստաթղթերում այս անունը ներկայացված է Շվինդոր ձևով:

2. «Չառաջ», 26 նոյեմբերի 1919 թ.:

կախմբերը լայնածավալ ռազմական գործողությունները Նախիջևանի գավառում սկսել են հուլիսի 17-ին: Անպաշտպան մնացած հայկական գյուղերը՝ Մազրան, Երկու Դիզաները, Դիդուվարը, Գյուլթափան, Նազարաբադը, Յարմջան, Ղարաբաբան և մի շարք այլ գյուղեր ամբողջովին ավերվել են, բնակիչների մեծ մասը սրի քաշվել, իսկ մի մասն էլ մազապուրծ փախել լեռները: Ձնաբերդցիները կարողացել են անցնել Դարալագյազի Մարտիրոս գյուղը: Սակայն գավառի հայկական գյուղերի բնակչության մի մասը հանկարծակի գալով, մնաց գերության մեջ, ենթարկվեց ամեն կարգի ստորացումների ու բռնությունների, կրեց մարդկային մեծ կորուստներ:

Գավառում դեպքերը սկսելու նույն օրը՝ հուլիսի 17-ին, Ռահիմ խանի բնակարանում գաղտնի ժողով էր գումարվել, որտեղ և հավանաբար մշակվել էր գործողության պլան նաև քաղաքի համար: Նման ենթադրության հիմք է տալիս այն փաստը, որ հուլիսի 19-ին որբանոցներում և հիվանդանոցներում ծառայող օտարագրի պաշտոնյաներին առաջարկվել էր հեռանալ Նախիջևանից¹, իսկ հաջորդ օրն արդեն կռիվը սկսված էր: Որպես առիթ օգտագործվել էր օսմանյան բնակի մի նախկին ասկյարի ծերբակալությունը, որը տեղական ավազակախմբերից մեկի ղեկավարն էր: Իսկույն փակվում են խանութները և կազմ պատրաստ ավազակախմբերը գործի են անցնում նախ շուկայում, որտեղ հարձակվում են հայ մարդկանց, միլիցիոներների ու զինվորների վրա² և ապա քաղաքի մյուս մասերում: Հարձակման ենթարկվեցին նաև հայկական պահակակետերը: Սակայն առաջին անակնկալից ուշքի եկած հայկական զորամասը շուտով կարողանում է դրության տերը դառնալ և գրավել քաղաքի մեծ մասը: Իսկ հակահարված ստացած թշնամին որոշում է ժամանակ շահել՝ մինչև օգնական ուժեր կգան գավառից: Նույն օրը երեկոյան Քերբալայ խանը մի գրություն է ուղարկում հայկական զորամասի հրամանատարին՝ առաջարկելով վերջ տալ կռիվներին և ներկայացուցիչներ ու-

1. Տես նույն տեղում:

2. Այս հարձակման ժամանակ ոտքից ծանր վիրավորվեց սահմանապահ գումարտակի հրամանատար կապ. Խուրավերդյանը, որը պահակակետերի ստուգման նպատակով շրջում էր քաղաքում:

ղարկել հաշտության շուրջը բանակցելու համար¹: Խանի գրությունը վավերացված էր անգլիական ներկայացուցչի կողմից, որպիսի հանգամանքը հավատ է ներշնչում հայկական կողմին և կռիվը դադարեցվում է:

Նախիջևանում սկսված կռիվների և նաև այն դադարեցնելու մասին Երևանում իմանում են նույն օրը՝ հուլիսի 20-ին, Բաշ-Նորաշենից գնդ. Կարաքեչիշևի ուղարկած ռադիոգրից, որտեղ ասված էր, որ անգլիացի լեյտենանտը² իրեն հայտնել է Նախիջևանում թաթարների ապստամբության և սկսված կռիվների մասին. «դեպքերի մասին, - ասված է ռադիոգրում, - հնդեվրոպականով Նախիջևան արած հարցումին անգլիացի լեյտենանտը ստացավ պատասխան, թե Նախիջևանում կրակոցները դադարել են և ապստամբները պատվիրակություն են ուղարկել հայտարարելով, թե ամեն ինչում ճանաչում ու ենթարկվում են իշխանությանը»³: Վերջում ավելացնում է, թե ապստամբության մանրամասների մասին անգլիացի լեյտենանտը հարցում է արել Նախիջևան և որ պատասխան ստանալուն պես կհաղորդի:

Քերբալայ խանի հետ հայկական զորամասի հրամանատարի հանդիպումը տեղի է ունենում անգլիական ներկայացուցչի բնակարանում: Որոշվում է կարգը վերականգնելու նպատակով ստեղծել խառը կազմով միլիցիա: Սակայն հաջորդ օրը ոչ Քերբալայ խանից և ոչ էլ կապիտան Շվինդից լուր չի ստացվում: Հայկական կողմն էլ, ամբողջ օրը անօգուտ սպասելուց հետո, երեկոյան դիմում է Քերբալայ խանին, առաջարկում բացել խանութները, սկսել խաղաղ աշխատանքը քաղաքում խոստանալով, որ իր կողմից ոչ մի խոչընդոտ կամ վտանգ չի ստեղծվի: Խանը խոստանում է, բայց դեռ լույսը չբացված, 22-ի վաղ առավոտյան, մուսուլմանական ավազակախմբերի գլուխ անցած, քաղաքի Սարվանլար թաղամասի կողմից հարձակվում է հայկական դիրքերի վրա: Վերսկսված կռիվը կրկին հաջողություն չի բերում խանին. հայ-

1. Տիֆուլ վարակված գեմ. Շելկովիկովին ժամանակավորապես փոխարինում էր փոխգնդ. Սամաջանովը:

2. Խոսքը Շարուրում գտնվող անգլիական ներկայացուցչության ղեկավար լեյտենանտ Չարլի մասին է:

3. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 50, թ. 108:

կական ուժերին հաջողվում է ոչ միայն հետ մղել կատաղի գրոհները, այլև գրավել Սարվանլարը:

Այս դեպքերից հետո դարձյալ մեջտեղ է գալիս անգլիացի կապիտանը և հայերին առաջարկում հանել իրենց զինված ուժերը դիրքերից, հետ քաշվել, որից հետո հետ կքաշվեն նաև մահմեդական ուժերը և խաղաղությունը կվերականգնվի: Իսկ թե ինչու սկզբում հայերը պետք է հետ քաշվեին, անգլիացին պատասխանել էր, թե «հայերի կռվող ուժը կանոնավոր զորք է, հեշտ է համոզել, իսկ թուրքերինը խուժան է, դժվար է համոզել ու հեռացնել»¹:

Այս անգամ սակայն հրամանատարը չի համաձայնում, արդարացիորեն պատճառաբանելով, որ թուրքերը միշտ խաբել են մնան դեպքերում և իր կողմից առաջարկում է, որ եթե նրանք զենքը վայր դնեն, վերջ տան թշնամությանը և անցնեն խաղաղ աշխատանքի, ապա հայերի կողմից ոչ մի թշնամություն չի լինի և պատժամիջոցներ չեն կիրառվի: Հենց այդ օրը՝ հուլիսի 22-ին, հրամանատարը առաջին հաղորդագրությունն էր ուղարկել Նախիջևանից, որտեղ ասված էր, որ «երրորդ օրն է, ինչ քաղաքում և Նախիջևանի շրջակայքում կռիվներ են գնում, գյուղացիները խիստ տուժել են, քաղաքում մեր դրությունը կայուն է»²:

Սակայն արդեն հաջորդ օրը հայկական զորամասի վիճակը ծանրանում է. շրջակայքից քաղաքի իրենց ցեղակիցներին օգնության եկած հրոսակախմբերը քաղաքը շրջապատելու վտանգ են ստեղծում: Այսպիսի պայմաններում, երբ դրսից օգնության որևէ հույս չկար, իսկ զինամթերքն էլ օր օրի սպառվում էր, հուլիսի 24-ին հրամանատարությունը որոշում կայացրեց քաղաքը թողնելու և հայ ազգաբնակչության հետ մեկտեղ դեպի Դարալազյազ հեռանալու մասին: Հենց այդ օրն էլ զորամասը բռնեց նահանջի ճանապարհը և կռիվներով շարժվեց դեպի Ջնաբերդ: Պետք է ասել, որ այն կատարվել է բավականին կազմակերպված, ռազմագիտական բոլոր կանոններով և համեմատաբար քիչ կորուստներով: Այդ առթիվ հրապարակված զորական հաղոր-

դագրության մեջ ասված է, որ «Նախիջևանից նահանջելիս մենք տվել ենք կորուստ՝ 3 սպանված սպա, 2-ը վիրավոր, 1-ը անհայտ կորած: Ջինվորներից սպանված են 32-ը, վիրավոր՝ 24-ը, անհայտ կորած 37-ը»¹: Ինչքա՞ն կորուստներ է ունեցել զորամասը քաղաքում մղված կռիվներում՝ ոչ այս և ոչ էլ զորական մյուս հաղորդագրություններում ոչինչ չի ասված: Իսկ ահա Հախավերդյանը իր հուշերում անդրադառնում է այդ հարցին և ասում, որ այդ ժամանակամիջոցում սպանվել է 1 սպա՝ պորուչիկ ժամհարյանը և 5 զինվոր, վիրավորվել 1 սպա՝ կապ. Խուդավերդյանը և 12 զինվոր²:

Ինչ վերաբերում է մուսուլմանների կորուստներին, ապա դրանք շատ ավելի մեծ էին: Ըստ Խալիլ-բեյի՝ «Նախիջևանի կռիվների ժամանակ սպանվել ու վիրավորվել են 1000-ի չափ թաթարներ, որոնց թվում պարագլուխ Քերբալայ Ալի խանը, որը երեք տեղից վիրավորվել է»³:

Հուլիսի 25-ին զորամասը արդեն Ջնաբերդում էր, որտեղից հաղորդվում է Երևան, որ հուլիսի 20-ից մինչև 24-ը զորամասը ծանր կռիվներ է մղել Նախիջևան քաղաքում և նրա շրջակայքում բոլոր կողմերից հարձակվող հակառակորդի դեմ և որ 24-ի առավոտյան բազմաթիվ գրոհներից հետո, թշնամին կարողացավ գրավել Շահմահմուդը⁴: Մամուլում հրապարակված մեկ այլ հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ մինչև Ջահրի զորամասը նահանջել է անկորուստ: Իսկ վերը նշված կորուստները Ջահրիում մղված կռիվներում է տվել:

Ջնաբերդում ևս զորամասը հաջողությամբ պաշտպանվում է, մեծ կորուստներ պատճառում հարձակվող հրոսակախմբին: Սակայն զինամթերքի պակասը և զորքերի հյուծվածությունը անհնար էին դարձնում այստեղ երկար մնալը: Ուստի Դրոյի կարգադրությամբ զորամասը թողնում է նաև Ջնաբերդը, կռիվներով ճեղքում անցնում Դարալազյազ՝ իր հետ տանելով նաև Նախիջևանահայության վերջին բեկորներին (շուրջ 7000 հոգի): Այս-

1. «Հառաջ», 26 նոյեմբերի 1919 թ.:
2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200 ց. 212, թ. 117:

1. «Հայաստանի աշխատավոր», 5 օգոստոսի 1919 թ.:
2. Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 17:
3. «Աշխատանք», 7 օգոստոսի 1919 թ.:
4. Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 212, թ. 116:

տեղ Շելկովնիկովը պետք է ստանձնեն Դարալագյազի հրամանատարությունը, գնդ. Մելիք-Գյուրջիևի և կապ. Գալստյանցի օգնությամբ կազմակերպել տեղական ուժերը, ամեն գնով պահպանել կապը Ջանգեզուրի և Նոր-Բայազեդի գավառների հետ: Իսկ թե ինչ էր կատարվել Նախիջևան քաղաքում հայկական զորամասի հեռանալուց հետո, տեղեկանում ենք «Հառաջ»-ի թղթակցի մի հրապարակումից, որտեղ մասնավորապես ասված է. «Նախիջևանի հայ ժողովրդի վերջին կոպեկներով շինած տուները և խանութները նորեն կողոպտված են, քարուքանդ եղած, փողոցները դարձյալ կեղտոտ են, խանութները փակ և տեղ-տեղ թանաված:

Հայկական զորքի նահանջեն միայն 12 ժամ հետո թուրքերը կրճատեն և կըկոտորեն այն կիներն ու երեխաները, որոնք մնացած էին: Իսկ անոնք, որ այգիներ կամ ուրիշ տեղեր պահված էին, երկու օր վերջ դուրս կուգան, նույն ատեն Բեհիմ խան մարդասիրություն ընկնելով, ատոնց կղրկի Պարսկաստան, մօտ 76 հոգի:

Թաթարները կը մտնեն ամերիկեան հիվանդանոց և կըսպանեն 18 հիվանդ և վիրավոր, որոնց մեջ 15 տղամարդ և երեքը կին, կը սպանեն նաև թուրք մը, որ հայի գլխարկ դրած էր:

Ասկէ վերջ կը հարձակին նաև որբանոցի, հիվանդանոցի և գործարաններու վրա և բոլոր ապրանքները կը կողոպտեն, կը մնա միայն պահեստը, բայց վերջը մասնավոր կողոպուտ եղած է այնտեղ ալ:

Երբ անգլիացիները հոն կը հասնեն և արիւնլիկ սենյակներ կը տեսնեն, ամերիկեան դրոշակը վար առնելով կհեռանան:

Նախիջևանի մոտակա գյուղերը Քերպլա Մուխթարի և մի քանի անհատներու շնորհիվ ազատված են: Այդ գյուղերն են Թազա գիւղ, Եմխան և մի քանի մարդիկ ալ Ջահրիի մեջ: Իսկ մնացած գիւղերու մասին ստույգ տեղեկութիւններ դեռ չկան»¹:

Այսպիսի դառն ճակատագիր էր բաժին ընկնում մեկ տարվա գաղթականական չարքաշ կյանքից հետո հայրենիք վերադարձած նախիջևանահայերին:

Խիստ ծանր վիճակ էր ստեղծվել նաև Ջուլֆայի սահմանա-

1. «Հառաջ», 24 սեպտեմբերի 1919 թ.:

պահ խմբի և տեղի հայ բնակչության համար: Կանխագալով վտանգը դեռ հուլիսի 21-ին սահմանապահ խմբի հրամանատար պորուչիկ Գրիգոր Յովհաննիսյանը Թավրիզի հայոց առաջնորդարանի միջոցով դիմել էր պարսից խանություններին՝ խնդրելով թույլտվություն վտանգի դեպքում պարսից հողն անցնելու համար: Օգնության խնդրանքով նա դիմել էր նաև Նախիջևան գեմ. Շելկովնիկովին և Երևան ռազմական մինիստրին, սակայն պատասխան չէր ստացել:

Հուլիսի 24-ին Արաքս գետում հայ երեխաների և կանանց դիակներ նկատելով Գ. Յովհաննիսյանը որոշում է դրությունը պարզելու նպատակով հետախուզության գնալ դեպի Աստապատ: Հասնելով Կարմիր Վանք և համոզվելով, որ գյուղին վտանգ է սպառնում, նա իր երկու զինվորների հետ մեկտեղ գյուղացիներին անվնաս հասցնում է Ջուլֆա: Բայց արդեն 25-ի առավոտյան շուրջ 200 զինված մուսուլմաններ հարձակման են անցնում մաքսատան ուղղությամբ: Ունենալով ընդամենը 18 զինվոր, պորուչիկ Գ. Յովհաննիսյանը համարձակ գրոհի է գնում, փախցնում հակառակորդին, գրավում Արաքսի վրայի կամուրջը և կեսօրին բնակչությանը անցկացնում պարսկական ափը: Կորուստներ կրել էր Ջուլֆայի սահմանապահ ուղեկալը, որը ենթարկվել էր հանկարծակի հարձակման: Սպանվել էին պրապորշիկ Յովսեփյանը և 4 զինվոր: Ուղեկալի մյուս 5 զինվորներից 3-ը գերի էր ընկել, մեկը վիրավորվել էր, իսկ մեկը փախել: Ինչ վերաբերում է Պարսկաստան անցածներին, ապա Թավրիզում լույս տեսնող «Ջանգ» թերթի մի հաղորդումից տեղեկանում ենք, որ պարսից իշխանությունները խիստ բարյացակամորեն են վերաբերվել գաղթականներին, նույնիսկ կարգադրել են երկաթուղային վարչությանը նրանց հասցնել Թավրիզ առանց վճարի¹: Սեպտեմբերի 19-ով թվագրված մեկ այլ պաշտոնական փաստաթղթում ասված է, որ Ջուլֆայից Պարսկաստան անցած բոլոր 780 փախստականները «գտնվում են Թավրիզում Ամերիկյան Կոմիտեի հովանավորության տակ ստանալով մարդագլուխ շաքաթական 12 դրան նպաստ, որ ներկա կուրսով անում է մոտավորապես

1. Տես «Աշխատավոր», 12 հոկտեմբերի 1919 թ.:

150 ռուբլի, ստացել են նաև վերմակներ ու սպիտակեղեն»¹:

Նախիջևանի անկումը թևավորեց նաև Գողթանի մահմեդականությանը, հուլիսի 25-ից կռիվներ ծավալվեցին նաև այստեղ:

Նախիջևանի հայկական իշխանությունների օրոք Գողթանը գավառի կարգավիճակ էր ստացել: Գավառի կոմիսար էր նշանակվել ծագումով ագուլիսցի Աշոտ Մելիք-Մուսյանը, իսկ միլիցիայի պետ՝ Մովսես Գյուլնազարյանը: Գավառական կենտրոն էր դարձել ոչ թե Օրդուբադը, այլ Ագուլիսը: Գավառում խաղաղություն էր հաստատվել, կյանքը նորմալ հունի մեջ էր մտնում և հայերի ու թուրքերի միջև թշնամական տրամադրությունները կարծես թե տեղի էին տալիս, երբ լուրեր հասան Նախիջևանում սկսված կռիվների մասին: Հավաստի տեղեկություններ չունենալով Նախիջևանի դեպքերի մասին, օգոստոսի 3-ին Մելիք-Մուսյանը և Գյուլնազարյանը ՀՀ խորհրդարանին, կառավարությանը և Գորիսի, Ղափանի, Գեմվազի ղեկավարությանը հասցեագրած նամակում գրում են. «Նախիջևանը ըստ երևույթին ընկավ: Շրջանի հայության բավական խոշոր մասը սրի է քաշված: Արաքսի մեջ նկատված են մեծ թվով դիակներ: ... Հուլիսի 25-ից Գողթանում ուժեղ կռիվներ են տեղի ունենում: Վերի գյուղերում (Փառակա, Բիստ) հաջողությունը առայժմ մերոնց կողմն է. այդտեղ ոչնչացված են թուրքական Բեյրութ և Բիլավ գյուղերը, իսկ Բիստի, Փառագայի, Տևիի և Սյոպու թուրքերը փախել են: Տանակերտը 8 օր է պաշարված է, այստեղ տեղի են ունենում դիրքային անընդհատ կռիվներ: Պաշարված կարելի է համարել և Ագուլիսն ու Ղաշտը (Ներք. Ագուլիս)»²: Այս գրությունից նաև տեղեկանում ենք, որ Ազա և Ղեր գյուղերը կարողացել են անվնաս գաղթել լեռնային Ցղնա գյուղը: Քիչ կորուստներով մի քանի օր տևած կռիվներից հետո, Գողթանի լեռնային մաս են անցել նաև Գյաղի, Փորաղաշտի և Շուռուքի բնակիչները: Իսկ ահա Ղազանչիի (Երնջակի ձոր) բնակչությունից միայն շուրջ 500 հոգի են փրկվել: Օգոստոսի 18-ով թվագրված մեկ այլ փաստաթղթից տեղեկանում ենք, որ 10-օրյա համառ կռիվներից հետո օգոստոսի 6-ին ընկավ նաև Տա-

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 138, թ. 1:

2. Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 612, թ. 1:

նակերտը¹: Այս ամենը խիստ ծանր վիճակ ստեղծեցին Վերին ու Ներքին Ագուլիսների համար, որոնք որոշեցին ընդունել Նախիջևանի իշխանությունը՝ հույս ունենալով, թե դրանով կփրկվեն կոտորածից: Ասենք նրանք ուրիշ հնարավորություն չունեին էլ: 1919 թ. աշնանը Գողթանում ծավալված դեպքերի ականատես և անմիջական մասնակից Հ.Հախնազարյանը, անդրադառնալով ագուլիսցիների այդ քայլին, գրում է. «Տանակերտի անակնկալ անկումը միանգամայն ողբերգական վիճակ ստեղծեց Վերին ու Ներքին Ագուլիսների համար: Կիսով չափ բնակված թուրքերով, ամեն կողմից օղակված թշնամու գյուղերով՝ ագուլեցիներին այլ բան չէր մնում, քան խոհեմության ճամփան բռնել, որովհետև ունեցած մի քանի տասնյակ երիտասարդներով անկարելի պիտի լիներ լուրջ դիմադրություն ցույց տալ»²: Ըստ Հախնազարյանի՝ բարբարոսների առաջին հարվածը իջեցվել էր թրքաբնակ Օրովանիս և Տրունիս գյուղերի միջև գտնվող ամբողջովին հայաբնակ Քաղաքիկ անվանված փոքրիկ գյուղին, որը պաշտպանության համար անհրաժեշտ քանակությամբ ուժեր չունեիր: Գյուղի երիտասարդների մի մասին էր միայն հաջողվել հեռանալ դեպի լեռները, մնացած ողջ բնակչությունը ոչնչացվել էր ամենադաժան ձևով, բացի 40-50 երիտասարդ աղջիկների, որոնց գերեվարել էին: Նկարագրելով Քաղաքիկում իր տեսածը, Հախնազարյանը գրում է. «Կեանքումս նման զարհուրելի տեսարանի ականատես չէի եղել: Որքան անգութ և բարբարոս էին թուրքերը: Չէի կարողանում բացատրել այս ահալոր ատելութեան ու թշնամութեան պատճառը հայերի հանդեպ. մի ժողովուրդ, որ ամեն կերպ օգնել էր նիւթապէս և աջակցել թուրքերին ու բնաւ ձեռք չէր բարձրացրել նրանց վրայ»³:

Օգոստոսի 25-ին Ռամիս գյուղում գումարվում է Գողթանի հայության V համագումարը, որին ներկա էին 40 ներկայացուցիչներ Բիստ, Փառակա, Ալաիի, Մեսրոպավան, Ռամիս, Տանակերտ, Քաղաքիկ, Շուռուք, Փորաղաշտ, Գյաղ, Ղազանչի, Ազա և Ղեր գյու-

1. Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 95, թ. 5:

2. Հ.Հախնազարյան, Գողթան գավառ, Թեհրան, 1991, էջ 334:

3. Նույն տեղում, էջ 331-332:

ղերից: Քննարկվել են ստեղծված իրադրության հետ կապված մի շարք հարցեր և ընդունվել որոշումներ: Կազմվել է նաև 9 կետից բաղկացած արձանագրություն, որոնցից առաջին երեքում խոսվում է Գողթանի խիստ կարևոր աշխարհագրական դիրքի, «Օրդուբադը և Ջահուկը թրքության հենարան լինելու», Օխչիի և Գեղվածորի թուրք գյուղերի հետ կապվելու նպատակով Շուռուք, Փորադաշտ և Գյաղ գյուղերի վրա կատարված հարձակումների և դրանց հերոսական պաշտպանության մասին և այլն: 4-րդ կետից պարզ է դառնում, որ գողթանցիները չեն բավարարվել միայն ինքնապաշտպանությամբ, այլ և փորձել են հակահարձակման անցնել և նախաձեռնությունը խլել թուրքերից: Առաջին փորձը կատարել են հուլիսի վերջին հարձակվելով Բեյրութ և Բիլավ թուրքական գյուղերի վրա, ինչի մասին խոսք եղավ վերևում: Երկրորդ փորձը կատարվել է օգոստոսի սկզբին. օգնության կանչելով մեղրեցիներին, գողթանցիները փորձեցին տեղահանել Ագուլիսի ճանապարհին ընկած թուրքական գյուղերը և դրանով իսկ կապ ստեղծել Գենվազի հետ, սակայն հաջողություն չունեցան: Տանակերտի անկումը թուրքերին հնարավորություն էր տվել ուժեր կենտրոնացնել և կասեցնել մեղրեցիների հարձակումը: Չնայած անհաջողությանը, Գողթանի համագումարը դրական է գնահատել դեպի Ագուլիս կատարած հարձակումը՝ գտնելով, որ այդ ակտը հարկադրեց թուրքերին առժամանակ դադարեցնել հարձակումները հայկական գյուղերի վրա:

5-րդ կետում խոսվում է այն մասին, որ Գողթանը դեռ «վերջնականապես պարտված համարել չի կարելի», ճիշտ է, հարձակողական գործողությունների համար բավականաչափ ուժ ու հնարավորություն չունի, բայց «ինքնապաշտպանության համար դեռ նա կայուն է»: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում արձանագրության 6, 7, 8, և 9-րդ կետերը, ուստի դրանք ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում ամբողջությամբ, առանց կրճատումների: Ահա դրանք.

«6. Գողթանի ներկա դրութիւնը հետևյալն է.

ա/. 2 Ագուլիսները բառի ամենալայն իմաստով կտրված են Գողթանի մնացեալ հայկական գյուղերից: Նրանք (Ագուլիսները) Ադրբեջանին հայտնել են գրավոր հպատակութիւն և, ըստ լուրերի, ստեղծել իրենց համար ստրկութեան նման մի բան: Նրանք ֆիզիկական գոյութեանը մեծ վտանգ չի նախատեսնվում:

բ/. Տանակերտ գյուղը ավերված է հիմնահատակ: Նրանք տվին 82 զոհ և համարեա մերկ այժմ ապաստանել են Ռամիսում: Ազա և Դեր գյուղերը առանց կռվի գաղթեցին Ցղնա՝ գտնվում են սոսկալի չքավորութեան մեջ:

գ/. Գյաղ, Շուռուք, Փորադաշտ գյուղերը և Ղազանչիի ընդհանուր կոտորածից ազատված մոտ 500 շունչ ծայր չքավորութեան մեջ գտնվում են Բիստում և Փառակայում:

դ/. Ալահի և Նասրվազ գյուղերը վերջին կռիվներին մի քանի անգամ ձեռքից ձեռք անցնելու պատճառով տնտեսապես բոլորովին քայքայվեցին: Գաղթականութեան չափ սրանք էլ չքավորութեան դուռն են հասել:

ե/. Անվանապես շեն համարվող Գողթանի 4 գյուղերը՝ Ռամիս, Ցղնա, Փառակա և Բիստ, այս տարվա բերքից կարող են ստանալ հացահատիկներ. ցորեն՝ 2000 փութ, գարի՝ 2000 փութ և կորեկ՝ 3000 փութ: Այսինքն Գողթանի ամբողջ գաղթականութեան և անշարժ ժողովրդի մաքսիմում 2 ամսվա պաշար՝ հաշվելով շնչին 1 ֆունտ:

զ/. Ժողովուրդը սննդի պակասութեան պատճառով հյուծվում է և օր օրի վրա ուժասպառ լինում:

է/. Արտաքին աշխարհից Գողթանը կտրված է բառիս ամենալայն իմաստով. Գենվազի և Օրդուբաթի ճանապարհները բռնված են թուրքերով, իսկ Նախիջևանի մասին խոսք լինել չի կարող:

7. Գողթանի ներկա կրիտիկական դրութեան ամբողջ պատասխանատվութիւնը Գողթանի համագումարը բարդում է Չայաստանի կառավարութեան վրա:

ա/. Գողթանի վերաբերմամբ նա գտնվեց վերին աստիճանի անհեռատես:

բ/. Թեև ժամանակին նրա (կառավարութեան) առաջ պարզվում էր Գողթանին սպասելիք բոլոր չարիքները և նրանց առաջն առնելու դիրքին և հնարավոր միջոցները, սակայն **կառավարութիւնը զարմանալի անփութութեամբ ոչ մի դրական միջոցի չդիմեց:**

գ/. Կառավարութիւնը ոչ միայն անհեռատես ու անփույթ գտնվեց Գողթանի վերաբերմամբ, այլ նա չկարողացավ պատկերացնել իրեն Գողթանի իսկական դրութիւնը, նրա ռազմական կարողութիւնը և պարենավորման ու ռազմական մթերքների քանակը և այն ժամանակ, երբ Գողթանին անհրաժեշտ էր մատակարարել ու ապահովել վերոհիշյալ պաշարներով, նա մեզանից 100.000 փամփուշտի պահանջ էր դնում և փորձ անում թնդանոթները և պուլեմյոտները փոխադրել Ագուլիսի նման միանգամայն անապահով մի վայր:

դ/ Այն ժամանակ, երբ Օրդուբադի իրական տերը դառնալու և Գենվազի հետ միանգամ ընդմիջտ կապվելու համար անհրաժեշտ էր 200-300 ուժով գրավել Սեարու պոստը, կառավարութիւնը հրաման է արձակում «ոչ մի դեպքում Օրդուբաթ ուժ չուղարկել»:

ե/. Ուղիղ երկու ամիս է Հայաստանի կառավարութիւնը կտրել է իր բոլոր կապերը Գողթանի հետ:

զ/. Նախիջևանի դեպքերից հետո, այսինքն մի ամսից ավել ժամանակամիջոցում, նույնիսկ մասնավոր մարդիկ հնարավորութիւն ստեղծեցին կապ հաստատել Երևանի և Գողթանի միջև, կառավարութիւնը հանցավոր անտարբերութեամբ իւր գոյութեան մասին անգամ չկարողացավ Գողթանին մի լուր հասցնել: Նա զլացավ հայտնել մեզ ընդհանուր դրութեան մասին և թե ինչ դիրք բռնի Գողթանը այսուհետև և Գողթանը մատնեց կատարեալ լքման և հուսահատութեան:

8. Գողթանի համագումարը այսպես հանգամանորեն պարզելով ներկա դրութիւնը եկավ այն եզրակացութեան, որ նա (Գողթանը) ոչ մի նախատեսված, ծրագրված ու պատասխանատու քայլ անել չի կարող, մինչև որ նրա առաջ չպարզվի.

ա/. Հայկական կառավարութեան վերաբերմունքը դեպի Գողթանը.

բ/. Հնարավոր միջոցները Գողթանը ապահովելու դրսի ուժով, հացով և դրամով և

գ/. Որովհետև հոկտեմբերի սկզբներից անանցանելի են դառնում Ղափուջուղի և առհասարակ Զանգեզուր տանող լեռնային բոլոր ճանապարհները, **Գողթանում գտնված բոլոր պաշարները տնօրինել մինչև հոկտեմբեր, իսկ հոկտեմբերից գալիք գործողութիւնների ամբողջ պատասխանատւոյունը թողնելով Հայաստանի կառավարութեան վրա, գաղթեցնել ամբողջ Գողթանը դեպի Գենվազ:**

9. ա/. Գաղթը կարող է ավելի շուտ տեղի ունենալ, եթե մինչև հոկտեմբեր Գողթանը հնարավորութիւն չունենա դիմադրել թշնամու գրոհներին.

բ/. Գաղթականութեանը ապահովելու համար հավաքվելիք ցորենը և միսը գնահատել տեղական գներով և գավառական կոմիսարի ստացականներով ապահովել ապրանքատերերին՝ որպէս Հայաստանի կառավարութիւնից ստացվելիք գումարներ:

գ/. **Սերտ կապ հաստատել Գենուազի, Ղափանի և Գորիսի հետ և խնդրել Գորիսի կառավարութեանը հովանավորել և կառավարել Գողթանը:**

դ/. **Գորիսի միջոցով և հատուկ սուրհանդակներով «այս որոշումները հայտնել Երևանի կառավարութեանը և խնդրել, որ նա գրավոր պատասխան տա բոլոր անելիքների մասին Գողթանի վերաբերմամբ».**

ե/. Եթե Հայաստանի կառավարութիւնը զլանալու լինի անմիջապէս պատասխանելու Գողթանի դրած հարցերին, **այն ժամանակ համագումարը այս արձանագրութիւնը իր բոլոր մանրամասնութիւններով, լրագիրների միջոցով, հասարակական լայն խավերի միւթ է դարձնելու և իր դատը հանձնելու է համայն հայութեան պաշտպանութեանը»¹ (ընդգծումը մերն է - Է. Զ.):**

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 95, ք. 2-4:

Ինչպես տեսնում ենք, եթե 6-րդ կետում ներկայացված է Գողթանում ստեղծված կացությունը, ապա 7-րդ կետում այդ վիճակի համար մեղադրվում է Հայաստանի կառավարությունը, Գողթանի հարցում նրա վարքագիծը համարում «անհեռատես ու անփույթ», սպառնում գաղթել Ջանգեզուր (կետ 8) և հասարակական քննարկման նյութ դարձնել այդ ամենը (կետ 9):

Գողթանցիներին հասկանալ կարելի է. անել դրության մեջ ընկած, նրանք մեղավորներ էին փնտրում: Բայց հազիվ թե հարկ կա ապացուցելու, թե որքան անհիմն էին Հայաստանի կառավարության հասցեին ուղղված մեղադրանքներն ու սպառնալիքները: Լեռներում ծվարած, աշխարհից կտրված և ամեն ինչից անտեղյակ գողթանցու մտքով անզամ չէր անցնում, որ հուլիս-օգոստոսյան այդ նույն օրերին հանրապետությունը՝ բոլոր կողմերից օղակված թշնամու կողմից, շնչահեղձ էր լինում և ինքն էր աշխարհից օգնություն խնդրում իր գոյությունը պահպանելու համար:

Սուրհանդակի կարգավիճակով Երևան եկած Մ.Գյուլնազարյանը սեպտեմբերի 8-ին մի զեկուցագիր է հանձնում ներքին գործոց մինիստրին, որում համառոտակի ներկայացնում է Գողթանի համագումարի որոշումները և շեշտում, թե «համագումարը հրահանգեց ինձ անպայման բերել հայկական կառավարությունից գրավոր հրահանգներ Գողթանի անելիքների մասին»¹: Հաջորդ օրը սեպտեմբերի 9-ին, պատասխան նամակ է հանձնվում Մ. Գյուլնազարյանին՝ հասցեագրված Գողթանի 5-րդ համագումարի նախագահությանը, որում, հասկանալի է, պահանջված հրահանգները չկային, բացի նրանից, որ «Ազգային խորհուրդը, եթե առանձին վտանգ չի սպառնում, թող մնա իր տեղը, իսկ եթե որևէ անապահովություն է զգացվում, լավ կլինի որ ժամանակավորապես փոխադրվի Ջանգեզուր»: Նամակում նաև ասվում է, որ տեղեկությունների և լուրերի ուշ ստացվելու պատճառը «հաղորդակցության դժվարությունն ու ճանապարհների հեռավորությունն է ...: Չպետք է մոռանանք, որ Հայաստանն ինքն էլ անընդհատ ենթարկվում է հարձակումների գրեթե իր բոլոր սահմաններում, և չնայած այդ ծանր դրության, մենք միշտ հիշում ենք Գողթանն ու նրա բնակչությունը և ամեն կերպ աշխատում աջակցություն ցույց տալ մեզնից անջատված մեր հարազատ եղբայրներին»: Նամակում տեղեկացվում է, որ բանակցություններ են վարվում «Գլխավոր կոմիսար գնդապետ Հասկելի հետ Նախիջևանի և Շարուրի գավառներում Ամերիկյան նահանգապետություն հաստատելու մասին»¹:

Հայաստանի կառավարությունը, չնայած ռազմաճակատներում տիրող ծանր դրությանը, անուշադրության չմատնեց նաև օգնության հարցը: Բաշադանցի խմբապետ Ղազար Քոչարյանի (քաչալ Ղազար) գլխավորությամբ մի ջոկատ ստեղծվեց, որը Ղարալազյազի և Ջանգեզուրի վրայով անցավ Գողթան՝ տեղ հասնելով հոկտեմբերի 2-ին: Ըստ Ս.Վրացյանի ուղարկվել է նաև նյութական օգնություն²:

Սեպտեմբերի 12-ին Թիֆլիսում գործող Գողթանի փրկության միությունը մի գրությամբ դիմում է Հասկելին՝ խնդրելով միջամտություն՝ արյունահեղությունը գավառում դադարեցնելու նպատակով³: Դիմե՞ց Հասկելը Ադրբեջանի կառավարությանը, թե ոչ, հայտնի չէ: Բայց փաստ է, որ մինչև նոյեմբերի վերջերը դրությունը գավառում համեմատաբար հանգիստ էր: Իսկ թե ինչ կատարվեց հետո՝ դեկտեմբերին, կանդրադառնանք հաջորդ գլխում:

* * *

Նախիջևանի հետ համարյա միաժամանակ ապստամբություն բռնկվեց նաև Շարուրում: Այստեղ այն ավելի լավ էր կազմակերպված: Դեռ ամռան սկզբին Շարուր էին հասել Ադրբեջանից ուղարկված 800 հեծյալներ⁴: Շուտով Հին Բայազեդից եկավ նաև

1. Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 95, ք. 1:

2. Տես Ս. Վրացյան, նշվ. աշխ. էջ 357:

3. Տես ԳՂԳՄ, ֆ. 276, ց. 1, գ. 183, ք. 26:

4. Այդ զորամասի հրամանատարը վրացի էր, որը Շահթախթիում սկսված կռիվների ժամանակ գերի հանձնվեց հայերին (տես «Ժողովուրդ», Թիֆլիս. 18 նոյեմբ. 1920 թ.):

1. Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 170, ք. 22:

խալիլ-բեյը 150 սպաներով և ասկյարներով: Վերջինս ստանձնել էր Նախիջևանի և Շարուրի ապստամբական ուժերի ընդհանուր հրամանատարի պարտականությունը և սերտ կապ էր պահպանում Հին Բայազեդի թուրքական զորամասի հրամանատար Ջավիդ բեյի հետ և ղեկավարվում նրա ցուցումներով: Կարճ ժամանակամիջոցում խալիլ-բեյին հաջողվել էր Շարուրում իր դրոշի տակ հավաքագրել ավելի քան 2000 հոգու, որոնցից 1000-ը հեծյալ: Իսկ ապստամբությունը սկսվելուց հետո դրանց թիվը խիստ մեծացավ: Մինչդեռ գնդ. Կարաքեշիշևի (Կարաքեշիշյան) հրամանատարության տակ գտնվող և Շարուրի մի քանի կետերում տեղաբաշխված (Բաշ-Նորաշեն, Շահթաթի, Սադարակ) հայկական ուժերի ընդհանուր թիվը հազիվ հասնում էր շուրջ 1000-ի: Շարուրում էր գտնվում նաև 1 զրահագնացք:

Հուլիսի 20-ին, երբ Բաշ-Նորաշենում լուր ստացվեց Նախիջևանում սկսված ապստամբության մասին, Շարուրում գտնվող անգլիական միսիայի պետ լեյտենանտ Չարլսը հավաքեց տեղի բնակչության ներկայացուցիչներին և զգուշացրեց, որ եթե այստեղ հետևեն Նախիջևանի օրինակին, ապա «ապստամբված գյուղերը բրիտանական թնդանոթներով կսրբվեն երկրի երեսից»¹: Սակայն ինչպես երևում է, նման սպառնալիքները մահմեդականների վրա այլևս ազդեցություն չէին գործում, առավել ևս, որ տարածաշրջանում բրիտանական զորքեր արդեն չկային, իսկ մի քանի հոգուց բաղկացած միսիան սարսափ ազդել չէր կարող: Այդ մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ այդ նույն օրը՝ հուլիսի 20-ին, շուրջ 300 հոգուց բաղկացած մի ավազակախումբ հարձակվել էր Խանլուխլարի վրա, բայց դեմ էր առել գյուղացիների դիմադրությանը ու հեռացել:

Լայնամասշտաբ գործողությունները սկսվում են հուլիսի 22-ին, երբ իսլամական մեծաթիվ ուժեր գրոհում են Շահթաթին, իսկ 23-ի գիշերը կռիվներ են բռնկվում Բաշ-Նորաշենում և Նորաշեն կայարանում: Ականատեսը պատմում է, որ Նորաշեն կայարանում մեր զինվորներն ու քաղաքացիներն անխուսափելիորեն

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 50, ք. 108:

կրճկեցին շրջափակման մեջ, եթե զրահագնացքը օգնության չհասներ¹: 24-ին թե Բաշ-Նորաշենը և թե Նորաշեն կայարանը գրավվել էին թշնամու կողմից: Այդ նույն օրը կայարանից ոչ հեռու կործանվեց նաև զրահագնացքը (թուրքերը քանդել էին կամուրջը և երկաթգիծը), սակայն հրամանատարը և անձնակազմի մի մասը կարողացան ճեղքել թշնամու շղթան և հեռանալ: Հուլիսի 25-ին Շիրազլուից երևան ուղարկած ռադիոգրում զորքերի երևանյան խմբավորման հրամանատար Դրոն հայտնում է, որ «երկօրյա մարտերից հետո գնդ. Կարաքեշիշևը հակառակորդի գերակշիռ ուժերի ճնշման տակ կորցնելով (անձնակազմի - Է. Ջ.) մինչև 50 %-ը հետ քաշվեց դեպի Չանախչի գյուղը: ... Երեկ գնդ. Կարաքեշիշևը գնդի 6 վաշտերի կենդանի մնացած անձնակազմով անցավ Ջինջիրլու»²: Դրոյի մեկ այլ հեռագրից (հուլիսի 26-ի) տեղեկանում ենք, որ մեր կորուստները Բաշ-Նորաշենում կազմել է շուրջ 300 հոգի: 25-ի ռադիոգրում Դրոն նաև հայտնել էր, որ Սադարակի շրջանում տեղակայված զորամասերը կատարելով հանձնարարությունը, հարձակման գնացին Դաշբուռունի բարձունքների վրա, բայց ջրի բացակայության պատճառով հետագայում հարձակումը կանգնեցվեց և զորամասերին հրամայվեց Սադարակի շրջանում հարմար դիրքեր գրավել և դիմադրել հակառակորդին մինչև օգնական ուժերի հասնելը:

Հայոց գործերը անհաջող ընթացք ունեցան նաև Շահթաթիում, որտեղից երկու մեր վաշտերը կռիվներով հետ քաշվեցին մինչև Խանլուխլար և դիրքավորովեցին: Հուլիսի 23-ին այդ երկու վաշտերը՝ ընդհանուր թվով 225 զինվոր, ամբողջ օրը համառու անգիջում կռիվներ էին մղում թշնամու գերակշիռ ուժերի դեմ: Սակայն զինամթերքի սպառվելու, ինչպես նաև նահանջելու հնարավորություն չունենալու պատճառով (գյուղը շրջապատված էր) հուլիսի 24-ին զենքերը վայր են դնում և անձնատուր լինում: Խալիլ-բեյի հրամանով գերիներին նախ փոխադրում են Ենգիջա, որտեղ վատ սննդի և անմարդկային բռնությունների պատճառով 85 հոգի մահանում են, իսկ հետո կենդանի մնացածներին փոխադ-

1. Տես «Հառաջ», 27 սեպտեմբերի 1919 թ.:

2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 212, ք. 117:

րում են Նախիջևան: Գերիների մի զգալի մասն էլ այստեղ է ոչնչանում և, միայն մի փոքրիկ խումբը աշնանը՝ ամերիկյան ներկայացուցչության միջնորդությամբ, ազատվում է գերությունից և բերվում Երևան:

Այսպիսին էր իրադարձությունների ընթացքը Շարուր-Նախիջևանում մինչև հուլիսի 25-ը: Օգտագործելով նպաստավոր իրադրությունը, հայկական ուժերի սակավաթվությունն ու կտրվածությունը թիկունքից և մեկը մյուսից, ինչպես նաև թվական զգալի գերակշռությունը, ապստամբ մահմեդական ուժերին հաջողվեց մեր զորամասերին դուրս մղել տարածաշրջանից: Նման ելքի հարցում գուցեև դեր են խաղացել նաև մեր հրամանատարության որոշ վրիպումները, բայց հայ զինվորները պատվով կատարեցին իրենց պարտքը հայրենիքի նկատմամբ: «Իրարից անջատված մեր փաքաքանակ զորամասերը ստիպված եղան անհավասար կռիվ մղելով հակառակորդի գերազանց ուժերի դեմ, ետ քաշվել դեպի մեր գլխավոր զորաբանակը, - ասված է Հայաստանի կառավարության օգոստոսի 6-ի պաշտոնական հաղորդագրության մեջ: Մեր զորամասերի մեծ մասը կարողացան հասնել իրենց նպատակին և ճեղքելով թշնամու օղակը միանալ գլխավոր ուժերին: Միայն խանլուխլարում մեր վաշտերից երկուսը սպառելով իրենց ամբողջ ռազմամթերքը, ստիպված եղան ցած դնել զենքը և անձնատուր լինել: Բոլոր այդ կռիվների ընթացքում թե մեր զինվորները և թե մանավանդ հրամանատարական կազմը կատարեցին իրենց զինվորական պարտքը՝ հերոսական դիմադրություն ցույց տալով թշնամուն ամենածանր և աննպաստ պայմաններում»¹: Անձնագոհության և հայրենասիրության փայլուն օրինակ տվեց կոմիսար Արամ Մելիք-Մաթևոսյանը, որը խանլուխլարում իր ձեռքով սպանեց իր կնոջն ու երեխաներին՝ թշնամու ձեռքը չընկնելու համար և զենքը ձեռքին կռվեց մինչև վերջին գնդակն ու ընկավ հերոսի մահով:

Մեզ հայտնի չէ՝ վերլուծվե՞լ են արդյոք մեր զորքերի կրած անհաջողությունների պատճառները, թե ոչ: Արխիվներում նման

1. «Աշխատավոր», 7-ը օգոստոսի 1919 թ.:
2. Տես «Հառաջ», 24 սեպտեմբերի 1919թ.:

փաստաթղթի չենք հանդիպել: Իսկ Հայաստանի կառավարության պաշտոնական հայտարարության մեջ արտահայտված դրական կարծիքը դեռևս չի նշանակում, թե սխալներ չեն եղել: Նախորդ շարադրանքում մենք արդեն խոսել ենք Նախիջևանի գործառնասի պասիվ վերաբերմունքի մասին գավառի գյուղերում տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ: Տարակուսանք կա նաև զորամասի քաղաքից հեռանալու հարցի կապակցությամբ. Արդյո՞ք շտապողականություն չի ցուցաբերել քաղաքը թողնելու հարցում: Ահա, օրինակ, ինչ է գրում Ատրպատականի թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը Հայաստանի վարչապետին ուղարկած 1919 թ. օգոստոսի 19-ի նամակում. «Նախիջևանի գարնիզոնին շատ բանում մեղադրում են (Իրան անցած գաղթականները - է. Ջ.), նրանք այդքան ուժով և կապ պահելով Ջուլֆայի քաջերի հետ, շատ բան կարող էին անել, մանավանդ, որ Գողթան և Ջանգեզուրը կողքներին էր: Ես չեմ կարող մեղադրել, քանի որ փաստացի ոչինչ չգիտեմ, միայն կարող եմ թուրքերի ասածները կրկնել, որ **Նախիջևանի թուրքերը ոչ միայն չէին հավատացել, որ գարնիզոնը նահանջել է, այլև երեք օր շարունակ ուրախություններ էին անում այդ առթիվ, քանի որ իրենց փամփուշտները վերջացած էին եղել և մարդիկ էին ուղարկել Սակու, Թավրիզ փամփուշտի»**¹ (ընդգծումը մերն է - է. Ջ.):

Դժբախտաբար այլ փաստեր չկան պարզելու, թե զորամասը իսկապե՞ս շտապել է հեռանալ քաղաքից, թե հեռացել է ժամանակին, ինչպես զորամասի հրամանատարությունն է հայտարարել: Բայց ինչ էլ որ լինեք այնտեղ, մեր զորքերի անհաջողությունների պատճառները թե Նախիջևանում և թե Շարուրում ինչպիսին էլ որ չլինեին, մի բան անհերքելի է, դրանց հետևանքով հանրապետությունը կորցրեց հսկայական տարածքներ և հայտնվեց օղակման մեջ արևելքից, հարավից և արևմուտքից: Հարկավոր էր լարել բոլոր ուժերը և Ս. Վրացյանի վկայությամբ «կառավարությունը ձեռք առավ արտակարգ միջոցներ. հուլիսի 23-ին Երևանի,

1. ԳՅ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 266, թ. 36:

եջմիածնի և Սուրմալուի գավառներում հայտարարվեց 26, 27 և 28 տարեկանների զորակոչ (օգ. 18-ին այս որոշումը տարածվեց ամբողջ Հայաստանի վրա): Հուլիսի 24-ին մտցվեց մահապատիժ պետական դավաճանության և դասալքության համար: Նույն օրը որոշվեց ազգաբնակչությունից հարկադրական միջոցներով զենք ու ռազմամթերք հավաքել և սահմանել զինային պարտադիր տուրք: Հուլ. 25-ին հաստատվեց զինաժողովի կոմիսարի պաշտոնը և Արշ.Ջամալյանը նշանակվեց զինաժողովի կոմիսար: Հուլ. 28-ին զենքի տակ առնվեցին մինչև 40 տարեկան բոլոր սպաները: Հուլ. 30-ին կազմվեց երեք հոգանոց Ապահովության կոմիտե վարչապետից և ներքին գործոց ու զինվորական նախարարներից: Ապահովության կոմիտեն պիտի վարեր երկրի պաշտպանության գործը լիազորություն ունենալով դիմելու արտակարգ միջոցների նույնիսկ առանց նախարարական խորհրդի որոշման»¹:

Երևանը լարում էր ուժերը, իսկ Բաքուն ցնծում էր: Նա հասել էր իր նպատակին, մնում էր գրավել նաև Ջանգեզուրը և Թուրքիայի հետ կապն ապահովված էր: «Շարուր-Նախիջևանի շրջաններում խոշոր իրադարձություններ են կատարվում: Ջինվորական կցորդ Ալիևին են հայտնել են հայկական զորքերի թվաքանակի և տեղաբաշխվածության մասին ռազմական միմիստրին փոխանցելու համար, - ասված է Բաքու ուղարկած Խան-Թեքինսկու հուլիսի 24-ի հեռագրում: Հայաստանը շարունակում է զորքեր ուղարկել Շարուր-Նախիջևանի շրջան: **Օգնեցեք մուսուլմաններին՝ մեր զորքերը մոտեցնելով Հայաստանի սահմաններին**»² (ընդգծումը մերն է - Է. Ջ.): Իսկ չորս օր հետո՝ 28-ին, իր կառավարությանը խորհուրդ է տալիս «հաստատակամորեն առաջարկել անգլիացիներին մեզ հանձնելու Ջուլֆայի և Շահթախթու երկաթուղին Ալյաթ-Ջուլֆա գծով Պարսկաստանի հետ առևտրի համար»: Այնուհետև մատնանշելով, որ իրենց տրվող

1. Տես Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, Եր., 1993, էջ 317:
2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 1, գ. 358, ք. 63:

երկաթուղին պետք է հասնի մինչև Դավալու, Խան-Թեքինսկին ավելացնում է, թե «Նման քայլով մենք՝ անգլիացիների աջակցությամբ, կմիացնենք մի հսկայական մուսուլմանական շրջան: Անգլիացիներին նման առաջարկ անելով մատնանշեցեք Հայաստանի անընդունակությունը, զնացքների երթևեկության հաճախակի ընդհատումը, ըստ այդմ խոստացեք ամբողջությամբ վերականգնել կարգը Շարուր-Նախիջևանի շրջաններում: Ես կարծում եմ, անգլիացիք կհամաձայնեն»¹:

Փորձե՞ց Ադրբեջանը համոզել անգլիացիներին Թեքինսկու հեռագրի ոգով, չենք կարող ասել: Բայց ահա Խալիլ-բեյը փորձեց համոզել թե Հայաստանի կառավարությանը, թե անգլիացիներին: Հաջողության հասնելով Բաշ-Նորաշենում, Շահթախթիում և Խանլուխլարում, նա նախ հուլիսի 25-ին խաղաղասիրության մի ցուցադրական քայլ է կատարում՝ գերությունից ազատելով և զնացքով Ղամարլու (Արտաշատ) ուղարկելով 29 վիրավոր հայ զինվորների, ապա հաջորդ օրը առավոտյան, Խանլուխլարում գերի հանձնված վաշտերից մեկի հրամանատար Սարգսյանցի միջոցով, հետևյալ գրությունն է ուղարկում հայկական բանակի հրամանատարությանը. «Նախիջևանում պատերազմը առաջինը սկսել են հայերը, իսկ մենք սկսեցինք Շահթախթիում և Շարուրում: Մենք արյուն թափել չենք ցանկանում: Եթե հայերը ապրում են մուսուլմանների հետ միատեղ, միշտ արյունահեղություն է լինում: Մինչև չվերջանա կոնֆերանսը (Փարիզի - Է.Ջ.), հայերը չպետք է տիրեն Շարուրը և պետք է մնան Դավալուում և վերջ դնեն ռազմական գործողություններին Բեյուր-Վեդիում: Մեզնից հայերին ոչ մի վնաս չի լինի: Երբ վերջանա կոնֆերանսը, եթե Շարուրը տան հայերին, մենք կենթարկվենք, քանի որ այդ ժամանակ այստեղ կզան հյուպատոսներ և մուսուլմանները հայերի դեմ ոչինչ չեն ունենա: Եթե մեր առաջարկը չընդունվի, մենք բոլորս կմեռնենք, բայց հայերին այստեղ չենք թողնի, քանի որ մեր միջև միշտ վեճեր են լինում: Եթե համաձայն եք, թե ոչ, պետք է պատասխանեք երկու

1. Նույն տեղում, ք. 66:

ժամից հետո: Շարուրի և Նախիջևանի բնակչության կողմից -
Խալիլ-բեյ»¹:

Ստանալով այս գրությունը², Սադարակի ճակատի հրամանատար գնդ. Կորուկովը իսկույն այն հաղորդեց Շիրազում՝ Դրոյին, իսկ վերջինս կարգադրեց Կորուկովին պատասխանել, որ գրությունը ուղարկված է բանակի հրամանատարին, ինչպես նաև կարգադրեց չվերսկսել ռազմական գործողությունները, եթե թշնամին առիթ չտա: Հայկական կողմից ռազմական գործողությունները առժամանակ դադարեցնելու շարժառիթներից մեկն էլ այն էր, որ վտանգ չստեղծվի գերության մեջ մնացած հայ զինվորների համար, որոնց կարող էին ոչնչացնել: Այդ վտանգի մասին Կորուկովին հայտնել էր Խալիլ-բեյի գրաբերը՝ ենթասպա Սարգսյանը: Բացի դրանից կար նաև բրիտանական հրամանատարության միջամտությունը՝ հարցը խաղաղորեն լուծելու տրամադրությամբ: Ս. Վրացյանը գրում է. «Կառավարությունը դիմեց և դաշնակիցներին զինվորական աջակցություն հասցնելու խնդրանքով: Հուլիսի 26-ին Երևան հասան անգլիական ու ֆրանսիական հրամանատարության ներկայացուցիչները մի քանի հարյուր հնդիկ զինվորների հետ և օգոստ. 2-ին հանդիպում ունեցան ապստամբների պետ Խալիլ-բեյի հետ, որը հայտարարեց, թե եղածը ապստամբություն չէ բնավ, այլ ազգային իրավունքների պաշտպանություն. Շարուր-Նախիջևանի թրջությունը մինչև Փարիզի վեհաժողովի վերջնական վճիռը, ուզում է կառավարվել սեփական ազգային խորհրդով, ինչպես Ղարաբաղը կառավարվում է հայկական ազգային խորհրդով»³:

Խալիլ-բեյի հետ հանդիպումը դաշնակիցները սկզբում ծրագրել էին իրականացնել հուլիսի 30-ին: Գնդ. Բելլոուի մի նամակում ասված է, թե հույս ունի «հուլիսի 30-ին թաթարների հետ խորհրդակցություն գումարել»⁴: Սակայն Դավալուից չկարողանալով

1. Նույն տեղում, գ. 212, թ. 118:

2. Գրությունը թելադրել էր Խալիլ-բեյը, իսկ թարգմանել էր ենթասպա Սարգսյանը:

3. Ս. Վրացյան, մշվ. աշխ. էջ 317:

4. ԳՅ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 162, թ. 9:

անցնել Բաշ-Նորաշեն, նրանք ստիպված եղան հետաձգել այդ հանդիպումը: Իսկ թե ինչպիսի մթնոլորտում են ընթացել օգոստոսի 2-ի բանակցությունները, չենք կարող ներկայացնել, քանի որ այդ մասին շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Օրինակ, «Աշխատանք» օրաթերթը այսպիսի մի հաղորդագրություն է տպագրել. «Օգոստոսի 2-ին անգլիական ու ֆրանսիական զինվորական ներկայացուցիչները Բաշ-Նորաշենում տեսակցեցին ապստամբ թաթարների ընդհանուր հրամանատար, թուրքական զնդապետ Խալիլ-բեյի հետ և դաշնակիցների կողմից պահանջ դրին վերջ տալ ապստամբության և ենթարկվել Հայաստանի կառավարությանը: Խալիլ-բեյը՝ ընդունելով դրանց թուրքական սպաների շքախմբով շրջապատված, պատասխանեց, որ ապստամբներն իրենց համարում են Շարուրի ու Նախիջևանի տերն այնպես, ինչպես հայերը Ղարաբաղում, որ **դաշնակիցներն անարդար բաժանում են կատարել հայաբնակ Ղարաբաղը Ադրբեջանին և թաթարաբնակ Շարուրն ու Նախիջևանը Հայաստանին կցելով** և որ այդ երկու գավառներն իրենց Ազգ. խորհրդով՝ անկախ են Հայաստանի կառավարությունից»¹ (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Անշուշտ, ճիշտ էր Խալիլ-բեյը, երբ խոսում էր դաշնակիցների կողմից անարդար բաժանումներ կատարելու մասին, բայց սխալ էր, երբ զուգահեռ էր անցկացնում մի կողմից Ղարաբաղի և մյուս կողմից Շարուրի ու Նախիջևանի միջև: Որովհետև, եթե բնաջնջման ու բռնազաղթերի հետևանքով Շարուրում ու Նախիջևանում ազգային կազմը որոշ փոփոխության էր ենթարկվել ի վնաս հայերի (այդ թվում և իր կողմից 1918թ.), ապա դա դեռ չի նշանակում, թե Հայաստանը կորցրել է իրավունքը իր անվիճելի պատմական գավառների նկատմամբ:

Խալիլ-բեյը նաև անգլո-ֆրանսիական ներկայացուցիչներին փորձել է հավատացնել, որ «ապստամբների հրամանատարությունը իր ձեռքն անցնելու օրվանից նա խիստ կարգապահություն է մտցրել և արգելել է հայերի կոտորածը, որ հայ գյուղացիության՝

1. «Աշխատանք», 7 օգոստոսի 1919 թ.:

մի մասը երկյուղից լեռներն է փախել, իսկ մյուս մասը մնացել է իր տեղում և նույնիսկ դաշտային աշխատանքներով է զբաղված, որ հայ գերիները լավ են պահվում և դրանց վտանգ չի սպառնում»¹: Խալիլ-բեյի այս խոսքերի մեջ ճշմարտության նշույլ անգամ չկար, եթե չհաշվենք այն իրողությունը, որ իսկապես նա խստությամբ կիրառելով փորձել էր կարգապահություն մտցնել մահմեդական հրոսակախմբերի շարքերում: Նախիջևանից Թիֆլիս հասած ականատեսը ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունում գրույցի ժամանակ ասել էր, թե «Նախիջևանի թուրքական զորքերի դիսցիպլինան շարունակում է մնալ շատ խիստ՝ շնորհիվ Խալիլ-բեյի կտրուկ միջոցների: Գրեթե ամեն օր նրա հրամանով կախում են այս կամ այն հանցանք գործող թուրքերի»²: Գուցե գույները այստեղ խտացված են, բայց նաև զարմանալու ոչինչ չկա. չէ՞ որ Խալիլ-բեյը պրոֆեսիոնալ զինվորական էր, հետևապես կարգապահության ջատագով: Ինչ վերաբերում է հայերի կոտորածներին վերջ տալուն, ապա այստեղ խնդիրը մի քիչ այլ է: Նախ հուլիսյան դեպքերին զոհ գնացած հայերի թիվը, հենց թուրքերի տվյալներով, հասնում էր շուրջ 8000-ի ³, ինչը վկայում է, որ ոչ Խալիլ-բեյը և ոչ մյուսները հայերին չեն խնայել: Եվ հետո, այդ դեպքերից հետո տարածաշրջանում այնքան քիչ հայեր էին մնացել, որ այլևս նրանց կոտորելու կամ չկոտորելու մասին լրջորեն խոսելն իսկ ավելորդ էր: Նախիջևանի գավառում մնացել էր ընդամենը 6580 հայ՝ ցրված լեռներում և ենթակա սովամահության, իսկ Շարուրում՝ 2200 հոգի, պաշարված Խանլուխլարում և դարձյալ սովամահության դատապարտված⁴: Ի դեպ, այստեղ Խանլուխլարում, Խալիլ-բեյը իսկապես թալանն ու բռնաբարությունները դադարեցնելու կարգադրություն էր արել, բայց բավականին ուշացած, երբ մահմեդական խուժանն արդեն կատարել էր իր սև գործը: Նույնիսկ ցուցադրաբար մի քրդի գնդակահարել էր և 6 հոգու քիթ կտրել տվել: Բայց դա ոչ թե մարդասիրություն

1. Տես նույն տեղում:

2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 138, թ. 138:

3. Տես նույն տեղում:

4. Տես «Հառաջ», 18 հոկտեմբերի 1919 թ.:

էր, այլ սառը հաշիվ. պատանդի վիճակում հայտնված այդ հայերը նրան պետք էին Հայաստանի Հանրապետության հետ բանակցություններում օգտագործելու համար: Ըստ որում ոչ միայն քաղաքական, այլև նյութական շահի ակնկալիքով: Սիստեմատիկ թալանի միջոցով Խանլուխլարում մնացած հայերին հասցնելով սովամահության, Խալիլ-բեյը միաժամանակ փորձում էր նրանց օգնելու քրդի տակ Հայաստանից կորզել սննդամթերք, հագուստ և այլն: Գերությունից փախած և մի կերպ երևան հասած Սիսաք Հովհաննիսյանը պատմում է, որ «այդ ժամանակ Բաշ-Նորաշենի փաշան մեր հոգևորականներից պահանջեց ճշգրիտ տվյալներ ցրտից և սովից օրական մահացողների մասին, որպեսզի բանակցությունների մեջ մտնի Հայաստանի կառավարության հետ հաց և հագուստ ուղարկելու վերաբերյալ, ըստ որում հոգևորականներին հարկադրում էր խիստ մեծացնել թվական տվյալները»¹:

Հենց նման մտադրության դրսևորում պետք է համարել շարուրցիների սեպտեմբերի 9-ի դիմումը ՀՀ վարչապետին, որում մասնավորապես ասված էր. «Շարուրի հայկական յոթ գյուղերի՝ Խանլուխլարի, Վարմազիարի, Ալաքլուի, հայկական Դաշարիսի, Փարչիի, Թազաբենդի և Բլիթազի² ազգաբնակչությունը ս. թ. հուլիսի 24-ին առանց կռվի վայր դրեց զենքերը Ադրբեջանական կառավարության առջև: Ձեները հանձնելու օրվանից հայերը՝ շուրջ 2300 հոգի, **ապրում ենք հանգիստ ու խաղաղ, մուսուլմաններից ոչ ոք մեզ ձեռք չի տալիս: Մեր խիստ կարիքը հացը և դեղորայքն է, սովից և վարակիչ հիվանդություններից օրական 25-30 մարդ է մահանում:** Մեր տները քանդված են դեռ անցյալ տարվանից, ապրում ենք Խանլուխլարի ավերակներում: Խոնարհաբար խնդրում ենք ցորեն և դեղորայք ուղարկել, այլապես կործանվում ենք: Շարուրի հայերի անունից խնդրում ենք Հայաստանի կառավարության կողմից **ձերբակալված մուսուլմաններին փոխանակել գերի հայ սպաների հետ:** Նախիջևանի գավառի Թազաբենդ-Աստապատի հայերը նույնպես հացի և դեղորայքի

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 484, թ. 21:

2. Պետք է լինե՞ր Քըշթաղ:

կարիք ունեն»¹ (ընդգծումը մերն է - է. Ջ.):

Ոչ մի կասկած չի կարող լինել, որ այս դիմումը թելադրված էր թուրքերի, գուցեև անձամբ Խալիլ-բեյի կողմից: Եթե իսկապես շարուրահայերը հանգիստ ու խաղաղ էին ապրում, ինչպես ասված է դիմումի մեջ, ապա սով չպետք է լիներ: Չէ՞ որ նախկինում Հայաստանի կառավարությունը նրանց հաց երբեք չի մատակարարել, այլ հակառակը՝ ինքն է այնտեղ գնումներ կատարել: Շարուրցիների մտքի արգասիք չենք կարող համարել նաև Նախիջևանի ու Շարուրի տարածքում հակահայկական ակտիվ գործունեության համար նախկինում ձերբակալված մուսուլմաններին գերության մեջ գտնվող հայ սպաների հետ փոխանակելու, ինչպես նաև Նախիջևանի մոտ գտնվող Թազաքենդ (Աստապատ) հայկական գյուղում մնացած շուրջ 800 հայերին ևս հաց ու դեղորայք ուղարկելու խնդրանքը:

Շարուրցիների դիմումի մեջ միայն մի ճիշտ բան կա. դա այն է, որ նրանք իսկապես գենքը վայր են դրել, բայց ոչ թե Ադրբեջանի ինչպես դիմումի մեջ է ասված, այլ օսմանյան սպա Խալիլ-բեյի առաջ վստահելով նրա խոստումների: Ականատեսը գրում է, որ Խալիլ-բեյը Բաշ-Նորաշենում և Նորաշեն կայարանում «յաղթութիւն տանելուց յետոյ, գրութիւն է ուղարկում Խանլուխլարի հայերին, առաջարկելով զինաթափ լինել: Խանլուխլարցիք ուղարկում են ենգիջայ գիւղը նոյն գիւղացի Կարապետ Յակոբեանին և վարմագիարցի Յարութիւն Մարգարեանին ստուգելու՝ արդարև գրութիւնն ուղարկողը Խալիլ բե՞յն է, թե խաբում են թուրքերը:

Ուղարկածները վերադառնալով յայտնում են, որ Խալիլ բեյն ինքն է, որին տեսել են նրանք Շահթախթում: Սրանից յետոյ հայերը և Շահթախթից եկող 37 գնդի կապիտանն իր 225 զինուորների հետ անձնատուր են լինում, յանձնելով Խալիլ բեյին իրանց զենքերը և երկու ձեռքի գնդացիոր»²:

Երևանում բնակվող շարուրցիների՝ Հայաստանի խորհրդա-

1. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1-2, էջ 123-124:

2. «Ժողովուրդ», Թիֆլիս, 18 նոյեմբերի 1920 թ.:

րանին ուղղված 1919 թ. սեպտեմբերի 3-ի դիմումի մեջ ուղղակի ասված է, որ «Գնդապետ Խալիլ-բեյի խոստումների ազդեցության տակ, որ իբր թե անձնատուր եղողների վրա նրանք երբեք ճնշում չեն գործ դնի, հայ ժողովուրդը (Շարուրի - է. Ջ.) բարվոք համարեց առանց կռվի ու դիմադրության անձնատուր լինելու թուրքերին, գուցե, այդպիսով կարելի լիներ ազատել իրենց կանանց ու երեխաների կյանքը, բայց ավաղ, այսօր պատկերը այլ է փոխվել, ներկայումս մեզ հասնող ճիշտ ստուգված լուրերի համաձայն թուրք ամբոխը իր դարավոր ոխերի համար, առավել ևս չմոռանալով և այն հատուցումը, որ նա ստացավ Շարուրի հայերից 18 թվի դեպքերի ժամանակ, զանազան պատրվակների տակ, հազար ու մի տեսակ չարչարանքների ու տանջանքների է ենթարկում զինաթափ եղած անմեղների կյանքը, կոտորելով, սպանելով հայ երիտասարդներին, բռնաբարելով կանանց և այլն, և այլն»¹:

Դիմումի հեղինակները խնդրում են Խորհրդարանի անդամներից երեք հոգուց բաղկացած մի հանձնաժողով ստեղծել, որը հատկապես կգբաղվեր գերության մեջ հայտնված շարուրցիներին ազատելու և Երևան փոխադրելու հարցով: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, Խալիլ-բեյին հետաքրքրում էր ոչ թե գերիներին ազատելը, այլ նրանց վիճակի թեթևացման պատրվակով Հայաստանից հաց և դեղորայք կորզելը: Եվ երբ այդ բանը նրան չի հաջողվում, գործի է դնում հին ու փորձված միջոցը. անգն ու անպաշտպան հայերին հանձնում է մուսուլմանական մուլեռանդ ամբոխի հոշոտմանը: Վերը հիշատակած Միսաք Հովհաննիսյանը, որին հաջողվել էր փախչել գերությունից, այդ ամենը հետևյալ կերպ է ներկայացնում. «Մուսուլմանների զազանացած բանդաները ներխուժում էին, ընտրում աղջիկների, կանանց և հենց այդտեղ բռնաբարում ու սպանում: Ուրիշների տանում էին: Մեզ՝ սղամարդկանց, դաժանորեն ծեծում էին և արդյունքում սպանում: Երեխաներին նետում էին փոսերի մեջ և վերևից վառում: Բնակչությունը սկսեց փախչել բոլոր ուղղություններով, բայց մեզ

1. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1-2, էջ 119-120:

ամենուրեք հասնում էին և գազանաբար ոչնչացնում: **Բոլոր այդ գազանությունները կատարվում էր ենզհա գյուղում՝ գտնվող փաշայի հրամանով...**»² (ընդգծումը մերն է - Է. Ջ.): Սակայն Շարուրի հայության գողգոթայի մասին պատկերը ավարտուն չի լինի, եթե որոշ մեջբերումներ չկատարենք նաև Միքայել Տեր-Ավագյանի «Շարուրի հայերի սարսափելի կոտորածը» հոդվածից, որը հրատարակել է «Ժողովուրդ» թերթի 1920 թ. հոկտեմբերի 20-ի համարում: Պարզվում է, որ շարուրահայերի նկատմամբ բռնությունները սկսվել են առաջին իսկ օրերից: Հուլիսի 24-ին Խալիլ-բեյի կողմից Շարուրի պրիստավ նշանակված Միրզա Ալաքպարը արդեն 27-ին խուզարկություններ է կատարում Խանլուխարում, գտնում երեք հրացան, ծեծել տալիս ազդեցիկ հայերին, որից հետո «սիստեմատիկ կերպով թուրքերն սկսում են հայերի տները թալանել, կանանց տանել, բռնաբարել և հետ դարձնել: Հայերը ասկյարների օգնությանն են դիմում, բայց օսմանցոց ասկյարները նրանց աղաչանքը անհետևանք թողնելով, դեռևս մեղադրում են հայերին զրպարտության մեջ»: Սեպտեմբերի 15-ից հայերին արգելում են գյուղից դուրս գալ և հրամանը խախտողներին դաժան պատիժների են ենթարկում: Հոկտեմբերի 5-ին նոր պրիստավ է նշանակվում, որը «նշանակված օրից պահանջում է հայերից թե իր համար և իր ծառայողների համար ամեն զիշեր մի կին, և թույլ է տալիս թուրքերին դուրս տանել ֆուրգոններով հայկական տներից նրանց ունեցածը, պարբերաբար կոտորելով երիտասարդներին»: Չբավարարվելով սրանով, նոյեմբերին հրամայում են հավաքել բոլոր հայերին Փարչի գյուղում, որտեղ «թուրքերը մերկացնում են հայերին, քահանաների հետ և մարմնի վրա խաչեր են քաշում տաքացրած շամփուրներով: Երեխան մոր արգանդից հանում են, առաջարկում հորը՝ ուտել միսը: Ամուսինների ներկայությամբ բռնաբարում են կանանց: Այսպես շարունակվում է ամբողջ նոյեմբեր ամիսը»:

Դեկտեմբերին վիճակը ավելի է վատանում. պրիստավի հրա-

1. Խալիլ-բեյը մի որոշ ժամանակ իր շտաբով հաստատվել էր ենզհա գյուղում:
2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 484, թ. 21.

մանով «բոլորին տեղավորում են երեք տան մեջ Փարչի գյուղում, պահելով խիստ հսկողության տակ, և անդադար բռնաբարում են կանանց և արգելում հայերին որևէ սնունդ տալ: Թշվառ հայերն այնուհետև սկսում են կերակրվել շան, կատվի ու մեռած մարդկանց դիակներով: Քնած մարդկանց վիզը կտրում և ուտում են: Հայերին սպանում և միսը բերում ծախում են հայերին»¹:

Այսպիսին էր Խալիլ-բեյի իրական կերպարը: Այս մարդը, որ 1918 թ. իրականացրել էր նախիջևանահայության ջարդն ու տարագրումը, այժմ շարունակում էր կիսատ մնացած գործը: Բայց միաժամանակ չէր խորշում դաշնակիցների աչքին «քաղաքակիրթ ու մարդասեր» ձևանալ: «Քաղաքակիրթ և մարդասերի» դիմակ էր հագել նաև Խան-Թեքինսկին և Հայաստանի կառավարությանը ոչ միայն մարդասիրության քարոզ էր անում, այլև մեղադրում երեք հարյուրից ավելի մուսուլմանական գյուղեր ավերելու» և «մի քանի տասնյակ հազար մուսուլման տղամարդկանց, կանանց և երեխաների սպանելու» մեջ: Կեղծելով իրականությունը և դատողություններ անելով այն մասին, որ իբր Հայաստանում ամեն օր մուսուլմանների թալան ու սպանություն է կատարվում, Հայաստանի վարչապետին ներկայացրած հուլիսի 31-ի նոտայում Թեքինսկին գրում է. «Դրա համար էլ մի շարք շրջանների մուսուլմաններ՝ Հայաստանին միացնելու կապակցությամբ իրենց բողոքներում խնդրում են միացնել իրենց ցանկացած հարևան պետության, բայց ոչ Հայաստանին, կամ թե հաստատել ժամանակավոր՝ մինչև կոնֆերանսի ավարտը, ցանկացած իշխանություն, բայց ոչ հայկական»²:

Նա նույնիսկ վիճարկում է ապստամբ շրջանների նկատմամբ Հայաստանի կառավարության ձեռնարկած միջոցառումները ներքին գործ համարելը, հայտարարում, որ Հայաստանը երբեք իշխանություն չի ունեցել ոչ Բեյութ-Վեդիում և ոչ էլ մյուս մուսուլմանաբնակ շրջաններում և որ նրա ներկա գործողությունները

1. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1-2, էջ 312-313:
2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 209, թ. 200:

զենքի ուժով այդ շրջանները Հայաստանին միացնելու ակտ են¹: Ցավով ենք արձանագրում, որ Հայաստանի կառավարության պատասխան նոտան, որի տակ դրված է Ալ. Խատիսյանի ստորագրությունը, բավականին մեղմ է, եթե չասենք թույլ՝ թե բովանդակությամբ, թե հիմնավորումներով: Այսպես. Բեյութ-Վեդու նկատմամբ իրավունքի կապակցությամբ ասված է, թե «յիշեալ տերրիտորիան յանձնուած է եղել Հայաստանի կառավարութեանը Բրիտանական հրամանատարութեան հետ կայացած համաձայնութեան հիման վրայ, որի մասին այդ շրջանի ազգաբնակչութեանը յայտարարված է եղել: Ամեն ոք, ով չէր ցանկանում մնալ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի, պետք է կանխապես թողներ Հայաստանի սահմանները և տեղափոխվեր արտասահման»²: Ուրիշ ոչինչ. կարծես թե Հայաստանը Բեյութ-Վեդու վրա ուրիշ ոչ մի իրավունք չուներ: Նոտայի միակ ուշադրության արժանի մասը Թեքինսկու գործունեության գնահատականն է, որով փաստորեն վերջինս հայտարարվում էր persona non grata, բայց դարձյալ բավական մեղմ ու զգուշավոր տոնով. «Հայաստանի կառավարութիւնն անհրաժեշտ է գտնում հիմնուած հաստատուեալների վրայ, ցաւ ի սիրտ յայտարարել, որ իր գործողութիւններով պ. Թեքինսկին անձամբ նպաստել է Հայաստանի հանրապետութեան և երկրի անդորրութեան դեմ ուղղված շարժումներին, - ասված է նոտայում: ... **Ես իմ կառավարութեան անունից յայտնում եմ պ. Թեքինսկու յիշեալ գործողութիւնների առթիւ ամենաեռանդուն բողոք և թոյլ եմ տալիս ինձ հաւատալ, որ Ձեր կառավարութիւնը պ. Թեքինսկու գործունեութեան մասին այս տեղեկութիւններն ստանալուց յետոյ չի թողնի նրանց առանց ուշադրութեան:**

Հայաստանի կառավարութիւնը հաստատում է, որ **այս յայտարարութեան հետ համակարծիք են դաշնակիցների բարձր հրամանատարութեան ներկայացուցիչները Կովկասում, որի մասին նրանք յայտնել են Հայաստանի կառավարութեանը»**

1. Տես նույն տեղում, թ. 201:

2. Նույն տեղում, թ. 196:

(ընդգծումը մերն է - է. Ջ.): Նոտայի վերջում Խատիսյանը ավելացնում է, որ Թեքինսկու գործունեությունը ոչ միայն չի նպաստել Հայաստանի և Ադրբեջանի միջև բարեկամական կապերի ամրապնդմանը, այլ հակառակը. «հեշտությամբ կարող է քայքայել այս ծանր օրերում և այն բարի դրացիական յարաբերութիւնները, որոնք գոյութիւն ունեն երկու հանրապետութիւնների միջև և որոնց ամրապնդումը միշտ եղել է և մնում է Հայաստանի կառավարութեան ամենաջերմ ցանկութիւնը»¹:

Եթե նկատի առնենք այն իրողությունը, որ Հայաստանի կառավարությունը վաղուց տեղյակ էր Թեքինսկու հակահայկական գործունեությանը, ապա պետք է ընդունենք, որ այս նոտան բավականին ուշացած էր: Ինչո՞վ բացատրել դա. դատելով նոտայի այն տողերից, որտեղ խոսվում է Թեքինսկու գործունեության գնահատականի հետ դաշնակից տերությունների ներկայացուցիչների համաձայնության մասին, պետք է ենթադրել, որ այդ հարցը առանց նրանց հնարավոր չէր լուծել: Այդ է հաստատում նաև Ս. Վրացյանի հետևյալ վկայությունը. «Օգ. 4-ին Թեքինսկին Խան-Խոյսկուն տեղեկություններ է հաղորդում հայկական զինվորական տեղափոխությունների մասին և սրանով վերջանում է նրա դավադրական գործունեությունը Հայաստանում. **հայկական կառավարության պահանջով անզլիացիք քշեցին նրան երևանից**, և ի հատուցումն իր մատուցած ծառայությունների, նա նշանակվեց Ադրբեջանի արտ. գործ. նախարարի օգնական: Նրա տեղը երևան եկավ Ադրբեջանի «ազգային բանաստեղծ» Հախվերդովը, որն անշեղ շարունակեց իր նախորդի քաղաքականությունը»² (ընդգծումը մերն է - է. Ջ.):

Շատ հնարավոր է նաև, որ Հայաստանի կառավարությունը երկար ժամանակ հանդուրժում էր Թեքինսկուն հենց նրա համար, որ կարողանում էր գաղտնագրծել նրա հեռագրերը: Ի դեպ, օգոստոսի 1-ին և 3-ին Թեքինսկին երկու գաղտնի հեռագրեր էլ էր հղել իր կառավարությանը, որոնցում պահանջում էր անհապաղ

1. Նույն տեղում, թ. 197:

2. Ս.Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, էջ 316:

պատերազմ հայտարարել Հայաստանին. «մուսուլմանների դրուժությունը օր օրի վրա վատանում է, - ասված է առաջին հեռագրում: Վերջապես մեզ հարկավոր է իրական քայլեր կատարել, բացի թղթային նոտաներից: **Եթե մենք ուզում ենք զսպել մոլեգնած հայերին և փրկել բազմաթիվ մուսուլմանների կյանք ու գույք, ապա պետք է անհապաղ պատերազմ հայտարարենք: Բեյութ-Վեդու, Շարուրի և Նախիջևանի շրջաններում կռիվներ են ընթանում: Հայկական գնդերը փախչում կամ ոչնչացվում են: Մուսուլմաններն առայժմ չեն ուզում գրավել Երևանը: Հանդիմանք, ես ի՞նչ ձեռնարկեմ»¹ (ընդգծումը մերն է - Է. Ձ.):**

Հակասականությունն այստեղ ակնհայտ է. մեկ խոսում է մուսուլմանների ծանր դրության, մոլեգնած հայերից նրանց փրկելու, մեկ էլ հայկական գնդերի ոչնչացման և Երևանը գրավելու մուսուլմանների հնարավորության մասին: Որի՞ն պետք է հավատար Ադրբեջանի կառավարությունը և հավատա՞ց արդյոք: Դժբախտաբար, այս հեռագրի պատասխանը մեր արխիվներում չկա: Իսկ Թեքինսկին երկու օր անց արդեն այլ պլան է առաջարկում. «Ադրբեջանին հարկավոր է երկու շաբաթվա ընթացքում վերջացնել Ջանգեզուրի հետ և գորքերը առաջ շարժել մինչև Ղամարլու: Այժմ ամենահարմար ժամանակն է: Ամերիկյան գնդապետի՝ Հայաստանի կոմիսարի ժամանումից հետո ուշ կլինի: Եթե իմ առաջարկությունը Ձեր կողմից ընդունվի, իրագործեք առանց պատերազմ հայտարարելու: Շատ են խնդրում օգտվել պահից և ժամանակ չկորցնել»²:

Ինչպես տեսնում ենք, Ջանգեզուրին տիրելը Թեքինսկուն հեշտ է թվում: Մինչդեռ հենց այստեղ՝ Ջանգեզուրում Ադրբեջանի ատամները ջարդվեցին, ինչին կանդրադառնա՞նք ավելի ուշ: Ինչ վերաբերում է Հայաստանի դեմ բացահայտ պատերազմ սկսելուն, ապա Ադրբեջանը չգնաց դրան՝ ցուցաբերելով զգուշավորություն, այլ գերազանց շարունակել նույն քաղաքականությունը, որն արդեն որոշակի արդյունքներ էր տվել:

1. ՀՀ ՊԿՊԱ Ֆ.200, ց.1, գ. 358, ք. 68:

2. Նույն տեղում ք. 69:

Եթե փորձենք ընդհանրացնել վերը շարադրվածը, ապա պետք է ասենք, որ.

1. Երկրամասում հակահայկական ապստամբություն նախապատրաստելու գործում մեծ դեր ունեցավ այն համընդհանուր քարոզչությունը, որ իրագործեցին Ադրբեջանի իշխանությունները, թուրք-ադրբեջանյան գործակալները, պաշտոնական մամուլը: Երևանում Ադրբեջանի ներկայացուցչությունը դարձել էր հակահայկական շարժումներն ու գործունեությունը կոր-դինացնող կենտրոն, անհրաժեշտ ֆինանսավորումը և հրահան-գավորումը իրականացվում էր նրա միջոցով: Իսկ Անատոլիայից Շարուր-Նախիջևան թափանցած թուրք սպաներն ու ասկյարները մարզում ու կազմակերպում էին զորաջոկատներ, պատրաստվում մարտական գործողությունների:

2. Հակահայկական շարժման ծավալման գործում մեղքի իրենց բաժինն ունեն Անդրկովկասի բրիտանական հրամանատարությունը և Նախիջևանի նրա ներկայացուցչությունը, որոնք ոչ միայն ոչինչ չձեռնարկեցին այն կանխելու համար և անպատասխան թողեցին Հայաստանի կառավարության բազմաթիվ ահազանգերը նախապատրաստվող ապստամբության մասին, այլև իրենց անտեղի և, որպես կանոն, հօգուտ մուսուլմանների կատարած միջամտություններով հեղինակազրկեցին Նախիջևանի հայկական վարչությունը:

3. Հուլիսին Շարուր-Նախիջևանում բռնկված հակահայկական ապստամբությունը ոչ թե տարերային, այլ կազմակերպված շարժում էր, որը շուտով վերածվեց համախլամական շարժման Հայաստանի Հանրապետության արևելյան, հարավային և արևմտյան սահմանների վրա: Նպատակը Հայաստանի Հանրապետության կործանումն էր և, եթե դա տեղի չունեցավ, ապա միմիայն հայ ժողովրդի ու նրա

բանակի հերոսական ճիգերի շնորհիվ: Իսկ Շարուրում և Նախիջևանում տեղաբաշխված մեր փոքրաթիվ ուժերի անհաջողության պատճառը թշնամու ուժերի թվական մեծ գերազանցությունն էր: Դրա հետ մեկտեղ դեր են խաղացել նաև մեր որոշ հրամանատարների թույլ տված սխալները մարտական գործողությունների պլանավորման և իրականացման գործում:

ՉԱՐՈՒՐ ԶՈՐՐՈՐԳ

ՇԱՐՈՒՐ ՆԱԽԻՋԵՎԱՆՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՆԱՇԱՆԳԱԴԵ-ՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՓՈՐՁԸ: ԳՈՂԹԱՆԻ ՈՂԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Դրությունը ռազմաճակատներում օգոստոսին. մահմեդականության ընդհանուր գրոհը, հանրապետության օղակունը երեք կողմից:

Ալ.Խատիսյանի դիմումը Փարիզի վեհաժողովին օգնության խնդրանքով: Խորհրդարանի օգոստոսի 15-ի նիստը. «Հայրենիքը վտանգի մեջ է» կարգախոսը, դիմումը աշխարհի պառլամենտներին: Ուժերի համախմբումը և հակահարվածը անարգ թշնամուն Սերդենեկ-Կարակուրտի ճակատում, Իզդիրում և Կաղզվանում: Կռիվները Վեդիբասարում:

Հայաստանի գերագույն կոմիսար Հասկելը Երևանում, Ադրբեջանին զսպելու և Շարուր-Նախիջևանի հարցում Հայաստանին պաշտպանելու նրա խոստումները: Այցը Բաքու, խոստումների դրժումը, Շարուր-Դարալագյազում և Նախիջևանում ամերիկյան զեներալ-նահանգապետություն ստեղծելու մասին համաձայնագրի ստորագրումը և այն Հայաստանին պարտադրելու փորձը:

Ալ.Խատիսյանի բանակցությունները Հասկելի հետ Թիֆլիսում, համաձայնագրում կատարված փոփոխությունները: Ադրբեջանի դժգոհությունը, համաձայնագիրը հայտարարությամբ փոխարինելու Հասկելի որոշումը:

Հասկելի ներկայացուցիչ զնդ. Ռեյը և նահանգապետ Էդ.Դեյլին Նախիջևանում, բնակչության թշնամական վերաբերմունքը և բողոքի ցույցերը: Ամերիկյան զեներալ-նահանգապետություն հռչակելու

*փորձի ծախսողունը:
Դեկտեմբերյան իրադարձությունները Գողթանում:
Ներքին և Վերին Ազուլիսների կոտորածը և Հայաստանի «ղաշնակիցները»:
Այստամբության նախապատրաստությունները
Չանգիբասարում 1920թ. սկզբին: Մարտյան կռիվները Վեդիբասարում և Գողթանում: Նախիջևանի երկրամասը Թուրքիային միացնելու ուղղությամբ
Խալիլ-բեյի և նրա խմբի գործունեությունը:
Անդրկովկասյան հանրապետությունների կոնֆեդերացիա ստեղծելու Անգլիայի շահագրգռվածությունը, Ուորդրոպի մարտի 5-ի գրությունը: «Անդրկովկասում Հայաստանի տարածքային պահանջների մասին» Հայաստանի կառավարության ներկայացրած գրությունը: Ռազմական կոնֆլիկտները դադարեցնելու մասին անդրկովկասյան կոնֆերանսի ապրիլի 11-ի և 12-ի որոշումները:*

Օգոստոսին Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական դրությունն ավելի բարդացավ: Անատոլիայում ծայր առած քենալական շարժման քարոզիչներին հաջողվեց ոտքի հանել նաև Օլթիի, Սուրմալուի ու Կարսի մահմեդականներին և խիստ լարված վիճակ ստեղծել այդ շրջաններում ևս: Չէին դադարում ռազմական գործողությունները նաև Բեյութ-Վեդիի, Շարուրի և Դարալագյազի սահմաններում: Ոչ օգոստոսի 4-ին և ոչ էլ 6-ին գնդ. Պլատոնենին չհաջողվեց հանդիպել Խալիլ-բեյի հետ: Օգոստոսի 11-ին հրապարակված հայտարարության մեջ ասված է, որ բրիտանական զինվորական ներկայացուցիչը մտադիր է օգոստոսի 15-ին անցնել Նախիջևան, բանակցել մահմեդական լիդերների հետ և որևէ խելացի լուծում գտնել¹:

Մինչ անգլիացիները այսպես ծանրորեն մտածում էին «խելացի լուծում գտնելու» մասին, իսլամի հետևորդները ավելի ու ավելի էին ակտիվացնում իրենց գործողությունները ռազմաճակատներում: Մամուլի էջերում ավելի հաճախակի են հայտնվում հաղորդագրություններ այս կամ այն ճակատում ռազմական ընդ-

հարունների մասին: «Աշխատանք» օրաթերթի օգոստոսի 7-ի համարից տեղեկանում ենք, որ «Հուլիսի 31-ին 500 չափ քրդեր հարձակում գործեցին և խլեցին Մերդենեկի գորամասի համար 100 զինվորի ուղեկցությամբ ուղարկած փամփուշտներն ու հրանոթները: Օգոստոսյան ուղարկած գորամասը քրդերին ետ մղեց և կողպուտը ետ խլեց: Օգոստոսի 2-ին առ. ժամը 9-ին թաթարները, մոտավորապես 400 հոգի, հարձակում գործեցին Բոյութ-Վեդիի կողմից մեր կենտրոնական գորամասերի վրա: Սկզբում այդ գորասյունը ձախ թևի վրա ետ մղեցին դեպի Թանթան գյուղը: Բայց երբ մեր պահեստը մոտեցավ, մենք հարձակման դիմեցինք և վերականգնեցինք մեր նախկին դրությունը: Նույն միջոցում մեր ձախ գորսխումբը հարձակման դիմեց և բոլորովին մոտեցավ Բոյութ-Վեդի գյուղին»: Այդ նույն հաղորդագրության մեջ նաև ասված է, որ օգոստոսի 2-ին «300-ի չափ զինված թաթարներ անցան Արաքսը, գրավեցին Շիդլու ու Խալիսա գյուղերը և շարունակեցին առաջանալ դեպի Դավալու: Ուղարկված ուժերը Խալիսա գյուղը ետ գրավեցին և թաթարներին ետ շարտեցին ջրանցքից դեմը»:

Արաքսի աջ ափից հակառակորդի հաճախակի հարձակումները լուրջ վտանգ էին ստեղծում Դավալու հայկական գյուղի համար, ուստի օգոստոսի 4-ին որոշվեց բնակչությանը ժամանակավորապես փոխադրել Դամարլու: Ճիշտ է, այս առթիվ հրապարակված հայտարարության մեջ ասված է, թե դա կատարվել է «ռազմագիտական որոշ նկատառումներով», և որ գյուղի «պարպունը կատարված է առանց որևէ ճնշման թշնամու կողմից», բայց հազիվ թե դա համապատասխանում է իրականությանը:

Օգոստոսի 6-ին թուրք-թաթարական հրոսակախմբերը հարձակվում են Արագ-գյուղ գյուղի վրա (Իգդիրի շրջան), բնակիչները ստիպված հեռանում են Մուլլա-Ղամար գյուղը: Իսկ քրդերը հարձակվում են Սարիղամիշի ուղղությամբ, բայց շրջակա իշխող բարձունքներում անրացած մեր զինվորներին հաջողվում է հետ շարտել գրոհողներին¹: Օգոստոսի 10-ին քրդերը հարձակվում են նաև Ասլանլու գյուղի վրա, բայց հաջողություն չեն ունենում: Այդ նույն օրը քրդերը գրոհում են նաև Աբաս-Գյուլի վրա² (Իգդիրի շրջան): Այս շրջանում մարտերը տևում են մի քանի օր, քրդերը ի

1. Տես նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 162, ք. 74:

1. Տես «Աշխատանք», 14 օգոստոսի 1919թ.:

2. Տես «Հայաստանի աշխատավոր», 14 օգոստոսի 1919 թ.:

վերջո գրավում են Աբաս-գյուլի շրջանը: Օգոստոսի 7-ից կռիվներ են ծավալվում նաև Կողբի և Դաշբուրունի շրջաններում, որոնք ընթանում են փոփոխակի հաջողություններով:

Այսպիսի պայմաններում, երբ անգլիական միջամտությունը ուշանում էր, իսկ թշնամին էլ օր օրի ընդարձակում էր գործողությունների շրջանակը, հայկական հրամանատարությունը որոշում է նոր հարձակումով ընկճել Բեյուք-Վեդիին, լիկվիդացնել այդ ճակատը, որը հնարավորություն կտար և՛ ուղղել ռազմաճակատի գիծը, և՛ այդտեղ կաշկանդված զորամասերին օգտագործել այլ ճակատներում: Հարձակումը նշանակված էր օգոստոսի 10-ին: «Աշխատանք» օրաթերթը օգոստոսի 14-ի համարում «Ձորական հաղորդագրության» մեջ այսպես է ներկայացնում այդ հարձակումը. «Մեր զորքերը օգոստոսի լույս 10-ի գիշերը հարձակման դիմելով գրավեցին Ղոթուն գյուղը, Շորբուլախ աղբյուրից դեպի հյուսիս գտնվող բարձրությունը, որ Բոյուք-Վեդի գյուղից 2 վերստի վրա է, Ենգիջա, Ղարալար, Շիրագլու, Ջիաթ-Ղրան և Ռեհանլու. հարձակումը շարունակվում է»: Իսկ «Հայաստանի աշխատավորը» մի քիչ այլ կերպ է ներկայացնում այդ իրադարձությունը՝ վկայակոչելով օգոստոսի 11-ին ստացած հաղորդագրությունը. «Երեկ, առավոտյան ժամը 5-ից, սկսեց մեր առաջխաղացումը դեպի Բոյուք-Վեդի: Մեր զորքերը արիությամբ առաջ էին շարժվում: Մի քանի նկատառումների հետևանքով երեկոյան մեր առաջխաղացումը դադարեց: Երեկոյան բարձրացավ անասելի ուժեղ ավազոտ քամի, որ փչում էր ուղղակի գորքի երեսին և կուրացնում էր առաջացողների աչքերը, մասամբ պատճառ դառավ առաջխաղացումը դադարեցնելու: Գիշերը հանգիստ անցավ»¹:

Կարծում ենք այս պատճառաբանությունը անլուրջ է, և մեր հրամանատարությունը ավելի անկեղծ կլիներ, եթե հայտարարեր, որ Բեյուք-Վեդիին գրավել չկարողանալու պատճառը թշնամու ուժերի գերազանցությունն էր կամ էլ հմուտ պաշտպանությունը: Ի դեպ, Ս. Վրացյանը հենց դրանով է պատճառաբանում, նա գրում է. «Թուրքերը դիմադրում էին կատաղի կերպով, ռազմագիտական արհեստով փորված դիրքերից, հրացանների ու գնդացիների սպանիչ կրակով: Մի քանի օր տևեցին արյունահեղ կռիվներ, որոնց ամբողջ երկիրը լարված հետևում էր»²:

1. Նույն տեղում:

2. Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 317:

Որ իսկապես թշնամին մեծ ուժեր էր կենտրոնացրել Բեյուք-Վեդիում, դա երևաց արդեն հաջորդ օրը, երբ նա հակահարձակման անցնելու լուրջ փորձեր արեց: «Օգոստոսի 11-ին ժամը 14-ին հակառակորդը հանկարծ հարձակվեց մեր ծախ թևի վրա և ճնշեց նրան, - ասված է հեռագրական գործակալության հաղորդագրության մեջ: Մեր զորամասերը նահանջեցին, բայց շնորհիվ անմիջապես ձեռք առնված միջոցների և մարտկոցներից մեկի հրաշալի գործողությունների, դրությունը անմիջապես վերականգնվեց և մեր զորամասերը կրկին գրավեցին լքված դիրքերը: Օգոստոսի 11-ին ժամը 24-ին թաթարական հետախույզները փորձեցին առաջանալ դեպի 526 բարձրությունը, Բոյուք-Վեդիից 4 վերստ դեպի հյուսիս, բայց հրացանային կրակով ետ մղվեցին»¹: Այդ նույն հաղորդագրության մեջ նաև ասված է, որ թշնամին երկու զորասյուներով Շարուրից հարձակման է անցել Դարալազյազի ուղղությամբ: Հայկական գյուղերի վրա հարձակումներ էին տեղի ունենում Նոր-Բայազեդի գավառում և մի շարք այլ վայրերում: Իսկ Բեյուք-Վեդիի ճակատում համառ կռիվները շարունակվեցին նաև օգոստոսի 12-ին և 14-ին: Ահա, օրինակ, ինչ է գրում այդ կռիվների մասին ՀԻԳ-ն «Ձորական հաղորդագրության» մեջ. «Երեկ (օգ. 12-ին - Է. Ջ.) ժամը 14-ի մոտ մեր կենտրոնի շրթաները իջան դեպի Բեյուք-Վեդի: Մութն ընկնելուն պես մեր շրթաները հետ քաշվեցին: Այս շարժման ժամանակ թաթարներն սկսեցին ուժեղ կերպով ճնշել մեր կենտրոնի աջ թևը: «Ալլախ» աղաղակելով թաթարները յարձակման դիմեցին, բայց գնդացիային ու հրացանային կրակով ու ռումբերով յետ մղվեցին: Երկու ժամից հետո թաթարները նորից յարձակում գործեցին մեր կենտրոնի ձախ թևի վրայ: Նրանց ուժեղ ճնշման տակ մենք ստիպված եղանք թողնել 591 և 590 բարձրութիւնները, որոնք գտնվում են Բեյուք-Վեդիի հիւսիսային կողմում: Լուսաբացի մօտ մենք գրոհեցինք 520 բարձրութիւնը, որ գիշերը թաթարները թողել էին:

Օգոստոսի 14-ին, մութն ընկնելուն պես, թաթարները յարձակվեցին մեր կենտրոնի աջ թևի 509 բարձրութեան վրայ, բայց հրացանային և գնդացիային ուժեղ կրակով յետ մղվեցին»²:

Այդ նույն օրերին թշնամին ակտիվ գործողություններ էր ծա-

1. «Հայաստանի աշխատավոր», 14 օգոստոսի 1919 թ.:

2. «Աշխատանք», 16 օգոստոսի 1919 թ.:

վալել նաև Արաքսի աջ ափին. «Երեկ, օգոստոսի 14-ին ժամը 21-ին քիւրդ-թաթարները թվով 4000-6000, շրջապատեցին մեր զորամասը Մուլա-Ղամար գիւղում, - ասված է մեկ այլ հաղորդագրության մեջ: Ըստ լրացուցիչ տեղեկությունների՝ Մուլա-Ղամարի մօտ թշնամիներով շրջապատված մեր վաշտերը թշնամու շղթան պատռելով դուրս եկան»¹:

Ահա այսպիսին էր իրադրությունը ռազմաճակատներում օգոստոսի կեսերին: Կարծում ենք ընթերցողն էլ կընդունի, որ այն խիստ ծանր էր, եթե օրհասական չասենք: Թշնամին փաստորեն օղակել էր հանրապետությունը երեք կողմերից: Սպառնալից վիճակ էր ստեղծվել Երևանի քթի տակ Ջանգիբասարում: Դեպքեր էին տեղի ունենում նաև Էջմիածնի շրջանում: Թե որքան լուրջ ու սպառնալից էր վտանգը, վկայում է թեկուզ այն փաստը, որ Հայաստանի կառավարությունը այս անգամ արդեն ստիպված էր դիմել անմիջականորեն Փարիզի վեհաժողովին. «Հայաստանի կառավարության կողմից ստացված պաշտոնական տեղեկությունների համաձայն ընթացիկ օգոստոս ամսի 15-ին Բրիտանական զորքերը հեռանում են Անդրկովկասից և Երզրումից, - ասված է Փարիզ խաղաղության կոնֆերանսի նախագահ Կլեմանտյոյն (պատճեն ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային և ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին) ուղարկած վարչապետ Ալ. Խատիսյանի օգոստոսի 9-ի հեռագրում: Թուրք-թաթարական շարժումը արդեն սկսում է սպառնալ հայ ժողովրդի գոյությանը: Բրիտանական ուժերի ներկայությունը մասամբ զսպում է այդ շարժումը: Նրանց հեռացումով անխուսափելի աղետ կսկսվի: Ամբողջ հայ ժողովրդի գոյությունը վտանգի տակ է այն դեպքում, երբ դաշնակիցների հաղթանակը Հայաստանին խոստանում էր ազատություն և Խուլտուրական կյանք: **Մարդկային արդարության և Հայաստանի գոյության անունից պահանջում են շտապ և եռանդուն միջոցներ ձեռք առնել աղետից խուսափելու համար: Հայկական կառավարությունը խորապես համոզված է, որ դաշնակիցները իսկական միջոցներ կտրամադրեն իրենց որոշումները պարտադրելու թուրք-թաթարներին»** ²(ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Ուշագրավ է, որ այս անգամ Խատիսյանն արդեն «պահան-

ջում» է և ոչ խնդրում, բայց ոչ թե փոքր դաշնակցի իրավունքով, այլ «մարդկային արդարության և Հայաստանի գոյության»: Թե որքան Եվրոպան մարդկային արդարության ջատագով էր, կարծում ենք Խատիսյանին վաղուց հայտնի էր: Բայց այս անգամ նա առիթ ունեցավ համոզվելու, որ Հայաստանի գոյությունը ևս Եվրոպային շատ քիչ է հետաքրքրում: Անցնում են օրերը, իսկ վեհաժողովից որևէ պատասխան չկա, և Խատիսյանը՝ այս անգամ Կովկասում ֆրանսիական զինվորական միսսիայի պետ գնդ. Շարդինիի միջոցով նույն հասցեատերերին տեղեկացնում է, որ «Հայաստանի վրդովեցուցիչ դրությունը ծանոթ է Փարիզի կոնֆերանսին, որը դեռ ոչինչ չի արել աղետի առաջն առնելու համար: Հայկական կառավարությունը խորապես ցավում է, որ միայնակ է թողնվել այն ժամանակ, երբ նրա գոյությունը սպառնալիքի տակ է դրված թուրք-թաթարական հորդանների կողմից, որոնք իրենց շարժումը զարգացնելով շրջապատում են Հայաստանը: Մուսուլմանական ապստամբներին ու զանազան բանդաներին միանալով, թուրք կանոնավոր զորքերը սկսել են արդեն երեք կողմից հարձակվել Հայաստանի վրա և անցել են հայկական տերիտորիա: Հանուն հայ ժողովրդի նրա կառավարությունը նորից խնդրում է Ձեր բարձր ժողովից շտապ որոշում ընդունել հայ ժողովրդին ազատելու համար, որ համաձայնականների դաշնակիցն է և նրանց հետ պայքար է մղել արդարության ու ազատության համար: Խնդրվում է ընդունված որոշման մասին անմիջապես հաղորդել մեզ»¹:

Իրական օգնությունը զորք ուղարկելը կլիներ, բայց, ինչպես արդեն տեսանք, այդ նույն վեհաժողովի որոշումով էին բրիտանական զորքերը հեռանում Անդրկովկասից: Ուրեմն վեհաժողովը զորք ուղարկել չէր կարող և չուղարկեց: Դրա փոխարեն հնգի խորհուրդը որոշեց Հայաստան ուղարկել ամերիկյան զննապետ Ուիլյամ Հասկելին՝ որպես Հայաստանի կոմիսար: Սակայն դեռ մինչև Հասկելի ժամանումը Երևանում տեղի ունեցավ մի կարևոր իրադարձություն ևս. դա Հայաստանի խորհրդարանի արտակարգ նիստն էր, որը գումարվել էր օգոստոսի 15-ին՝ հանրապետությունում ստեղծված իրավիճակի հարցը քննարկելու և անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու համար: Ժամանակա-

1. «Աշխատանք», 21 օգոստոսի 1919 թ.:
2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 201, թ. 72 ա:

1. Նույն տեղում, թ. 77 ա.:

կիցները այդ նիստը նմանեցրել էին սգահանդեսի: Ծանր ու ճնշող էր այն տպավորությունը, որ ստեղծվել էր վարչապետին փոխարինող Ա. Սահակյանի զեկուցման հետևանքով: Ներկայացվել էին այնպիսի փաստեր, ռազմաճակատներում տիրող դրությունը նկարագրվել էր այնպիսի գույներով, որ հուսահատությունը պատեց ամենքին:

«Մենք հետզհետե շրջապատվում ենք երկաթե օղակով, - ասված է զեկուցման մեջ: Թշնամին ուզում է ներխուժել մեր երկիրը...: Կառավարությունը բավարար չգտնելով ներկա զինվորական ուժը կոչ է անում ժողովրդին զոհաբերել իր գույքն ու կյանքը: Այժմ կառավարությունը դիմելով այս բարձր ժողովին հայտնում է, որ կարիք ունի հեղինակավոր գործիչների, և պատգամավորներից օգնություն ստանալու հույս ունի»: Մեջբերելով Ա.Սահակյանի այս խոսքերը Ս. Վրացյանը գրում է. «Խորհրդարանը ընդառաջ գնաց կառավարության դիմումին և որոշեց. 1) հայտարարել հայրենիքը վտանգի մեջ և հրավիրել ժողովուրդը՝ լարել բոլոր ուժերը երկրի պաշտպանության համար, 2) բժ. Հ.Տեր-Դավթյանից, Լ.Թադևոսյանից, Հ.Արղությանից և Հ.Մանուկյանից բաղկացած խորհրդարանական մի խումբ ուղարկել զորաճակատ ողջունելու համար գործին և բանակի բարելավման ծրագրեր բերել, 3) կոչ ուղղել դաշնակից երկրների խորհրդարաններին»¹:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այս վերջինը՝ կոչը, որն ի դեպ, ուղղված էր ոչ միայն դաշնակից, ինչպես Ս. Վրացյանն է նշում, այլ մի մեծ խումբ երկրների պառլամենտներին: Մանուլում այն հրատարակվել է հետևյալ վերտառությամբ. «Հայաստանի պառլամենտի հուշագիրը ուղղված Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Յապոնիայի, Բելգիայի, Սերբիայի, Հունաստանի, Ռումինիայի, Չինաստանի, Սպանիայի, Նոր-Վեգիայի, Շվեյցիայի, Հոլանդիայի, Պորտուգալիայի և Պարսկաստանի պառլամենտներին»: Խիստ բնութագրական է հուսահատական բովանդակությամբ այս փաստաթուղթը, որի առաջին իսկ տողերը գուժում են հայ ժողովրդի մարտիրոսության մասին. «Այն ժամանակ, երբ համաձայն դաշնակից երկրներում կառավարությունների և պառլամենտների արած բազմաթիվ հայտարարությունների, մանր ազգերի համար նոր օր պիտի բացվեր, քանի

որ համաշխարհային պատերազմը վերջացել է դաշնակիցների հաղթությամբ, *այն մանր ազգերից ամենաապարախտը, հայ ժողովուրդը ձգված է իր ծակատագրին, արյունաքամ է լինում իր դահիճների ձեռքին*»¹ (ընդգծումը մերն է - Է. Չ.): Այնուհետև շեշտելով, որ հայ ժողովուրդը՝ արձագանքելով «դաշնակից պետությունների առաջին իսկ կոչին, ամբողջ հինգ տարի կռվել է մարդկության ու քաղաքակրթության թշնամի համարվող օսմանյան կայսրության դեմ», որի ընթացքում «Հայաստանը գրեթե ամբողջովին ավերվել է և հայ ժողովուրդը կորցրել է համարյա իր կեսը», ընդգծում այն խոստումները, որ «դաշնակից կառավարությունները և նրանց թիկունքում կանգնած հասարակական կարծիքի ներկայացուցիչները այս պատերազմից առաջ և նրա ընթացքում ամեն հարմար առիթին արտահայտել են հայ ժողովրդի հասցեին», հուշագիրն ավելացնում է, թե այն բանից հետո, երբ օսմանյան կայսրությունը կործանվեց և դաշնակիցները հաստատվեցին նրա մայրաքաղաքում, «թվում էր, թե միայն օրերի կամ շաբաթների խնդիր է Հայաստանը տաճիկների ձեռքից դուրս կորզելու և հայ ժողովրդին իր արդար իրավունքների տերը դարձնելու խնդիրը: Բայց ավաղ, անցան ամիսներ, ամբողջ 9 ամիս և այս ուղղությամբ ոչ մի բան չկատարվեց»: Ավելին, Հայաստանի խորհրդարանը, թեև շատ մեղմ, անչափ մեղմ ու խիստ զգուշավոր կերպով մեղադրում է դաշնակիցներին Թուրքիայի հարցում ցուցաբերած հանդուրժողական քաղաքականության մեջ ու ավելացնում, թե «Դաշնակից պետությունների այս անսպասելի մեղմ վերաբերմունքից խրախուսված Տաճկաստանը այսօր վերսկսել և առաջ է տանում իր հին հայաջինջ քաղաքականությունը կատաղի համառությամբ: Հին Տաճկաստանի սահմաններում հայության մնացորդները բնաջնջելուց հետո նա այժմ իր արևելյան մեքենայությունների ամբողջ թափով ընկել է Անդրկովկասում կազմված Հայկական հանրապետության վրա: Ամիսներ շարունակ իր գործակալների միջոցով տեղական մահմեդականներին հայկական կառավարության դեմ գրգռելուց հետո՝ այսօր նա իր սպաներով ու ասկյարներով քրդական ու թաթարական հրոսակախմբերի գլուխն անցած՝ հիմնահատակ է անում հայկական գյուղերն ու ավանները. *Շարուրի, Նախիջևանի,*

1. Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 318:

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 34, թ. 1:

*Սուրմալուի, Երևանի և Ղարսի գավառներում կոտորում է հայ ժողովրդի մնացորդները: Եվ այս վայրագությունները կատարվում են այն ժամանակ, երբ դաշնակից պետությունների ներկայացուցիչները մեզ մոտ են, իսկ նրանց տասնյակ հազարավոր զորքերն ընդամենը մի քանի ժամվա հեռավորության վրա»¹ (ընդգծումը մերն է - Է. Ջ.): Փաստելով այն իրողությունը, որ հայ ժողովուրդը չի ուրանում այն նյութական ու բարոյական աջակցությունը, որ նա վերջին ամիսներին ստացել է դաշնակիցներից, ինչը, սակայն, չի կարող համադրվել «այն անլուր զոհերի հետ, որ տվել է հայ ժողովուրդը ընդհանուր գործի համար», հուշագիրը միաժամանակ արձանագրում է, որ «դաշնակիցների հոգացողությունից գրեթե ամբողջովին դուրս են մնացել հայ ժողովրդի պաշտպանության գործը, կամ նրա ինքնապաշտպանությունը կազմակերպելու խնդիրը», որի հետևանքով «**նա այսօր կանգնած է իր դարավոր դահճի դիմաց մեն-մենակ առանց դաշնակից զորքերի, առանց բավարար քանակությամբ զինամթերքի ու ռազմական ուժերի**» (ընդգծումը մերն է - Է. Ջ.):*

Այս տողերում արդեն մեղադրանք կա դաշնակիցների հասցեին, ակնարկ կա նրանց կողմից իրենց փոքր դաշնակցին լքելու վերաբերյալ: Բայց նա, այդ փոքր դաշնակիցը հայ ժողովուրդը, լի է վճռականությամբ շարունակելու պայքարը անհավասար պայմաններում և արժանավայել կերպով ընդառաջելու իր ճակատագրին: Ուստի հուշագիրը ամփոփում է. «Այսպիսով դաշնակիցների հաղթանակից հետո էլ հայ ժողովրդին այլ ճանապարհ չի մնում ֆիզիկական գոյությունը պահպանելու համար, բայց եթե մեն-մենակ և ռազմական աննպաստ պայմաններում անհավասար կռվի դուրս գալ հայ ժողովրդի և ընդհանուր քաղաքակրթության դարավոր թշնամու դեմ: Սրա համար Հայաստանի պարլամենտը հրահանգում է իր կառավարությանը զենքի տակ առնել զենք կրելու ընդունակ բոլոր քաղաքացիներին: Պառլամենտը չի անգիտանում, որ այդ վճիռը պետք է նոր անասելի դժվարություններ բերի հայ ժողովրդի գլխին, որ գաղթը, որբությունը, սովամահությունն ու համաճարակը նոր թափ պետք է առնեն ոչնչացնելու հայ ժողովրդի մնացորդները: Բայց երբ տղամարդու առաջ նորից ցցվում է թուրքական յաթաղանից խողխողվելու անխուսափե-

1. Նույն տեղում, թ. 2:

լիությունը, երբ հայ կնոջ ու աղջկա գլխին կախվում է պատվագրկության սպառնալիքը, Հայաստանի պառլամենտը այլ որոշում ընդունել չի կարող:

Եթե հայ ժողովրդի մնացորդներին վիճակված է կոտորվել դաշնակիցների աչքի առաջ, երբ այնքան հնարավոր է նրանց համար կանգնեցնել դահճի ձեռքը, կընդունենք տղամարդու պես:

Եթե հայ ժողովրդի մնացորդներին վիճակված է կոտորվել հիմա ևս, երբ դաշնակիցների զորքերը տասնյակ հազարներով կանգնած են Պոլսում, Տրապիզոնում, Բայբուրդում, Թիֆլիսում, Բաքվում և երբ նրանց դուրին է կասեցնել հայ ժողովրդի գլխին բարձրացրած դահճի ձեռքը, ապա **հայ ժողովրդին այլ բան չի մնում, քան քաղաքակիրթ մարդկության խղճին և մտքին հասցնել իր օրհասի գույժը և պատվավոր մահվան վճռակա-նությամբ ընդառաջել իր ծանր ճակատագրին**»¹ (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Հայաստանի Հանրապետության կազմավորումից հետո սա առաջին պաշտոնական փաստաթուղթն է, որում ի լուր աշխարհի դժգոհություն էր արտահայտվում անարդար վերաբերմունքից հայ ժողովրդի նկատմամբ: Ցավոք, այստեղ ևս հին ժամանակների պես. ամեն ինչ բարդվում է «ծանր ճակատագրի» վրա, պատրաստակամություն հայտնվում «կոտորվել... տղամարդու պես», խոսվում «պատվավոր մահվան», ինչպես նաև «իր օրհասի գույժը քաղաքակիրթ մարդկության խղճին ու մտքին հասցնելու» մասին և այլն, և այլն: Կարծես թե նոր էին ծանոթանում քաղաքակիրթ մարդկության խղճին, այն նույն մարդկության, որը ոչինչ չարեց հայկական հարցի լուծման համար, հանդուրժեց 90-ականների ջարդերը, Մեծ եղեռնը: Այդ ամենից հետո նույնիսկ տարակուսում ես, թե արժե՞ր արդյոք նման քայլի դիմել, փակված դռներ ծեծել, ի լուր ամենքի խոսել իր թուլության և անճարակության մասին, օգնություն հայցել այնտեղից, որտեղից որ սպասելիք չունես: Առավել ևս, որ նման հուսահատական բովանդակությամբ փաստաթուղթը կարող էր հաղթական տրամադրություն և ոգևորություն առաջ բերել թշնամու բանակում և հակառակը՝ հուսալքություն սեփական շարքերում: Կարծում եմք, որ խորհրդա-

1. Նույն տեղում, թ. 2-3:

րանը աչքաթող էր արել այս ամենը և գործել պահի ազդեցության տակ: Իսկ պահը իսկապես որ անասելիորեն ծանր էր, վտանգը՝ ընդհանուր ու կործանարար: Անհրաժեշտ էր լարել բոլոր ուժերը, բռունցքվել ու հակահարված տալ թշնամուն: Եվ նիստին հաջորդած օրերին մամուլն արդեն ահազանգ էր հնչեցնում. «հայ ժողովրդին սպառնացող վտանգը պարզ է ու ակներև, կմեծանա ամեն օր, կընդարձակվի և կդառնա համայնակույլ... վտանգը, որ պայթել է Չայաստանի և հայ ժողովրդի վրա, կթվի որ ամենասարսափելին է, որ երբեք տեսած ըլլանք մենք, - ասված է «Աշխատանք» թերթի օգոստոսի 16-ի համարում զետեղված «Վտանգին առջև» հոդվածում: Ոչ մեկ բան օգնեց մեզ և ոչ ոք կրցավ նպաստել մեր մաքառումին ու օրհասի ճիգերուն: **Օրորվեցանք սին հույսերով, քաջալերվեցանք դաշնակիցներու հաղթանակովն ու ներկայությամբը, պահ մը կարծեցինք, թե ազատվեցանք ասիական մղձավանջեն** և խափկանքն ունեցանք տեսնելու իրավունքի և արդարության հաղթանակը, ու ահա այժմ երազեն արթնացած, կզտնենք մեզ մին մեմակ, վտանգին դեմ հանդիման, սուրին ու ջարդին ենթակայ» (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Այնուհետև շեշտելով, որ ամեն մի հայ պետք է գիտակցի, որ իր գոյությունը վտանգի տակ է, որ հայ ժողովուրդը դաշնակիցների ներկայությամբ կարող է ջարդվել այնպես, ինչպես ջարդվում էր մինչ այդ, հողվածագիրը մարգարեաբար ավելացնում է, թե «թող գիտակցեն բոլորը, որ **Փարիզի հաշտության կոնֆերանսը կրնայ հայ ժողովրդի վրայ «հոգոց հանգուցելոց» կարդալ այնպես, ինչպես քահանան ամեն ննջեցյալին վրայ**» (ընդգծումը մերն է - Է. Զ.):

«Մահ թե ազատություն» խորագիրն էր կրում «Չայաստանի աշխատավոր»-ի խմբագրականը. **«Թշնամին մեր դռանն է:** նա, խախտելով զինադադարի պայմանները, երեկ ներս խուժեց Շարուր-Նախիջևան, այսօր էլ նա գրավում է Կողբը և արշավում դեպի մեր երկրի սիրտը - դեպի Երևան: **Վտանգն ավելի մոտ և ավելի ահավոր երևակայել չի կարելի**»¹(ընդգծումը մերն է-Է. Զ.):

Վտանգն ահավոր էր, և հռչակելով «մահ թե ազատություն»,

խմբագրականում, այնուամենայնիվ, ոչինչ չէր ասվում դաշնակիցների հասցեին, այլ ժողովրդին կոչ էր արվում մեկ մարդու պես ոտքի կանգնել և հակահարված տալ թշնամուն՝ ապավինելով միմիայն սեփական ուժերին: Իսկ աշխարհի պառլամենտներին ուղղված դիմումը մնաց որպես «Չայն բարբառոյ յանապատի»: Ճիշտ է, Ստամբուլում գտնվող ամերիկյան ծովակալ Բրիստոլը օգոստոսի 21-ին մի հուշագիր ներկայացրեց սուլթանական կառավարությանը, որով զգուշացնում էր, որ եթե թուրքական իշխանությունները անհապաղ արդյունավետ միջոցներ չձեռնարկեն կանխելու Կովկասում կամ որևէ այլ վայրում թուրքերի, քրդերի կամ այլ մուսուլմանների կողմից հայերի նկատմամբ գործադրվող բռնությունները, ապա պրեզիդենտ Վիլսոնը իր «14 կետերից» կհանի թուրքիային վերաբերող կետը, որի հետևանքը կլինի թուրքական կայսրության լիակատար վերացումը: Սակայն 1919 թ. ամռանը սուլթանական իշխանությունը արդեն խիստ սահմանափակված էր և չէր տարածվում Ստամբուլից և նրա շրջակայքից այն կողմ: Ուրեմն անգամ ցանկության դեպքում սուլթանը ի վիճակի չէր ազդելու Փոքր Ասիայում և Կովկասում ծավալվող իրադարձությունների վրա: Բացի դրանից, վիլսոնյան կետերից թուրքիային վերաբերող կետի հանումը լուրջ սպառնալիք չէր և հազիվ թե սուլթանը լուրջ նշանակություն տար դրան: Իսկ ԱՄՆ-ը Սերժանտի Արևելքում զինված ուժեր չունեի, հետևապես ազդեցության լծակներ ևս չունեի: Մի հանգամանք ևս. 1919 թ. ամռանը արդեն նշմարելի էին թուրքիայի հարցում դաշնակիցների միջև եղած հակասությունները, ինչը, անշուշտ, տեսանելի էր նաև թուրքերին: Դա իր արտահայտությունը գտավ նաև ծովակալ Բրիստոլի հուշագրի հարցում. Փարիզում գումարված մեծ տերությունների ղեկավարների օգոստոսի 25-ի նիստում, որտեղ քննության էր դրված հայերին սպառնացող վտանգը, ոչ այնքան խոսվում էր օգնության արդյունավետ միջոցներ ձեռնարկելու մասին¹, որքան այն, թե ինչո՞ւ է Բրիստոլը առանց դաշնակիցներին տեղյակ պահելու մնան հուշագիր ներկայացրել սուլթանի կառա-

1. Նիստը բավարարվել էր նրանով, որ հանձնարարել էր Ֆրանսիայի կառավարությանը միջոցներ որոնել հայերին ռազմական օգնություն ցույց տալու ուղղությամբ: Մինչդեռ Ֆրանսիան տարածաշրջանում ոչ գործ ուներ, ոչ էլ ազդեցություն մուսուլմանների վրա:

1. «Չայաստանի աշխատավոր», 19 օգոստոսի 1919 թ.:

վարությամբ»¹:

Մեծ տերությունների կողմից Հայաստանի Հանրապետության պառլամենտի կոչի նկատմամբ նման վերաբերմունքը գալիս է հաստատելու վերը նշած մեր այն կարծիքը, որ փաստաթուղթն ընդունվել է պահի ազդեցության տակ, հաշվի չեն առնվել հնարավոր բացասական հետևանքները և հատկապես այն, որ այն կարող է ազդել նաև Հայաստանի Հանրապետության կենսունակության նկատմամբ տերությունների պատկերացումների վրա: Այդ մասին ակնարկել է Հասկելը սեպտեմբերի սկզբին Թիֆլիսում Խատիսյանի հետ Շարուր-Նախիջևանի շուրջը ունեցած զրույցի ժամանակ. «**Հասկելը գտնում է, որ մենք մեր դրությունը չափազանց ողբերգական ենք ներկայացնում (օրինակ՝ պառլամենտի կոչը), - ասված է այդ կապակցությամբ ՀՀ արտգործնախարարության տեղեկատվական բաժնի կազմած ամփոփագրում: Այդ անօգնականությունը ազդում է բոլորի վրա: Ազդել է նաև ինձ վրա համաձայնագրի առաջին նախագիծը կազմելիս: Նշանակություն ունի նաև Հայաստանի թշնամիների համար»² (ընդգծումը մերն է. - Է. Ջ.):**

Որ Հայաստանը դեռևս չէր սպառել իր դիմադրական ուժը և ի վիճակի էր արժանի հակահարված տալու թշնամուն, ակնհայտ դարձավ Խորհրդարանի արտակարգ նիստին հաջորդած օրերին օգոստոսի 16-18-ին, երբ հաջողվեց իսլամական բանդաներին դուրս քշել Մերդենեկ-Կարակուրտի (Կարսի մարզ) և Իզդիրի շրջաններից, հակահարված տալ Խորվիրապի ու Բելյուք-Վեդու մոտ: Առանձնապես նշանակալից էր Կաղզվանում տարած հաղթանակը: Շուրջ 1500 հոգանոց թուրք-քրդական ավազակախումբը հանկարծակի գրոհով օգոստոսի 17-ին խուժեց քաղաք, սակայն դեմ առնելով տեղի զորամասի ամուր պաշտպանությանը, ստիպված եղավ հետ քաշվել: Եղան նաև անհաջողություններ. մասնավորապես օգոստոսի 18-ին Կողբի վրա թշնամու մեծաթիվ ուժերի գրոհը կանգնեցնել չհաջողվեց և մեր զորքերը ազգաբնակչության հետ մեկտեղ (շուրջ 5000 հայ և եզդի) հետ քաշվեցին դեպի Արաքսի ափը: Այս անհաջողության գործում դեր խաղաց

1. Տես՝ Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները, 1917-1923թթ., Եր., 1999, էջ 105:

2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 101, ք. 90-91:

նաև մեր զորքերի թիկունքում գտնվող մուսուլմանաբնակ գյուղերի ապստամբությունը¹:

Այսպիսին էր իրադրությունը հանրապետության ռազմաճակատներում, երբ լուր ստացվեց Փարիզի վեհաժողովի կողմից Հայաստանի գերագույն կոմիսար նշանակված գնդապետ Հասկելի առաքելության մասին:

* * *

Ամերիկյան բանակի գնդապետ Ուիլյամ Հասկելը Հայաստանի գերագույն կոմիսար էր նշանակվել (հետո նաև Ադրբեջանի և Վրաստանի) վեհաժողովի հնգի խորհրդի կողմից և հետևապես հանդես էր գալիս որպես Դաշնակից տերությունների ներկայացուցիչ: Արդեն այդ հանգամանքը մեծ շուք ու հաղիսավորություն էր տալիս նրա առաքելությանը: Հայաստանի կառավարությունը մեծ հույսեր էր կապել նրա հետ: Օժտված լինելով մեծ լիազորություններով, նա իսկապես շատ բան կարող էր անել Հայաստանի համար, իհարկե, ցանկության դեպքում: Ս. Վրացյանը վկայում է, որ Հասկելի «ժամանումը մեծ ոգևորություն առաջացրեց հայերի մեջ: Բաթումից մինչև Երևան, ամեն տեղ, նրան ցույց տվեցին խանդավառ ընդունելություն»²: Արխիվային փաստաթղթերը ևս վկայում են այն մեծ ոգևորության և ուշադրության մասին, որ տրվում էր Հասկելի առաքելությանը: Օգոստոսի 16-ին Երևանի վարչապետ և արտգործնախարար Ալ. Խատիսյանին ուղարկած հեռագրում, Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Եվանգուլյանը գրում է. «Երեկ առավոտյան եկավ գնդապետ Հասկելը: Ոչ ոքի չի ընդունում, նույնիսկ ամերիկացիներին: Օրը մի քանի անգամ Հասկելը այցելում է հիվանդ Գրինին: Իր լիազորությունների սահմանների ու էության մասին առայժմ ոչ մեկին ոչինչ չի ասում: Ըստ Գրինի Հասկելը գերագույն կոմիսար է նշանակված ոչ միայն Հայաստանի, այլև ողջ Անդրկովկասի համար»³: Այնուհետև նշելով, որ նրա մեկնումը Երևան դեռ

1. Տես՝ Ս. Վրացյան, նշվ. աշխ. էջ 318:

2. Նույն տեղում, էջ 320:

3. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 362, ք. 12:

վճռված չէ, միաժամանակ տեղեկացնում է, որ Հասկելը արդեն սկսել է այցելել դաշնակիցների ներկայացուցիչներին, իսկ երկու-շաբթի կընդունի իրեն:

Եվանգոլյանը խատիսյանին հասցեագրած մի առանձին հեռագրում նկարագրում է նաև կայացած հանդիպումը և Հասկելին բնութագրում որպես «հաճելի տպավորություն» թողնող մարդ, որը խոստանում է «վերականգնել կարգը Հայաստանում»: Իսկ թե ինչպես դա պետք է անի, երևում է հաջորդ տողերից, որտեղ ասված է, թե դեռ Կոստանդինապոլսից Հասկելը հեռագրել է Կլեմանտոյին «Հայաստան դաշնակցային զորքեր մտցնելու անհրաժեշտության մասին», բայց պատասխան չի ստացել: Հասկելի նկատմամբ մեծ ուշադրության մասին է վկայում հատկապես հեռագրի երկրորդ մասը, որտեղ հայտնելով այն մասին, որ օգոստոսի 20-ին Հասկելը կնոջ և մի քանի սպաների ուղեկցությամբ ուղևորվելու է Հայաստան, միաժամանակ ներկայացնում է հյուրին ընդունելու և տեղավորելու միջոցառումների մի ամբողջ ծրագիր: «Կազմակերպեք դիմավորում սահմանի վրա, Ղարաքիլիսում, Ալեքսանդրապոլում, Երևանում, - ասված է հեռագրում, - պատրաստեք շոգեքարշեր Սանահինում, Հասկելի վագոնում լավ հագնված և կարգապահ զույգ ժամապահներ կարգեք, Երևանում բաղնիք ունեցող բնակարան բռնագրավեք, կին ծառայող վարձեք, Ալեքսանդրապոլի և Երևանի կայարաններում ծաղիկներ մատուցեք, կայարանում պատվո պահակ կարգեք, փողհարներով կապի սպա նշանակեք»¹ և այլն:

Դեսպանի «հրահանգները» պատվով կատարվեցին, Հասկելին շատ ջերմ ընդունելություն ցույց տրվեց Ղարաքիլիսայում, Ալեքսանդրապոլում և հատկապես Երևանում: Օգոստոսի 21-ին մայրաքաղաքն ամբողջովին տոնական կերպարանք էր ընդունել: Երևանի կայարան էին հավաքվել ոչ միայն նախարարներ, Խորհրդարանի անդամներ, օտարերկրյա ներկայացուցիչներ, այլև վարչապետն ու Խորհրդարանի նախագահը: «Քաղաքն ամբողջովին զարդարված էր դրոշակներով, գորգերով ու կանաչով, - գրում է Ս. Վրացյանը: Բոլոր խանութները փակ էին: Փողոցներում տիրում էր արտակարգ եռուզեռ»²:

Դատելով վարչապետի հետ հանդիպումից և Խորհրդարանում

ունեցած ելույթից, Հասկելը նաև պերճախոս էր խոստումների մեջ: Վարչապետին նա ասել էր, թե «ինքը Վեհաժողովից հանձնարարություն ունի պաշտպանելու բոլոր հայերին, ուր և գտնվեն նրանք՝ Հայաստանում, Ադրբեջանում, Թուրքիայում թե՛ Վրաստանում: Ձինվորական օգնություն առաջմ չի կարող տալ, բայց արդեն Փարիզ է ուղարկել 3 սպաներ՝ խնդրելով անմիջապես զորք հասցնել Հայաստան, այլև խնդրել է որ անգլիական զորքերի մի մասը թողնվի Հայաստանում: Ինքը ամեն միջոց ձեռք կառնե պաշտպանելու համար Հայաստանի սահմանները և կպահանջե, որ Ադրբեջանի կառավարությունը վերջ տա գրգռիչ գործունեությանը Հայաստանի մահմեդականների մեջ: Ձեռք կառնե նաև կտրուկ միջոցներ, որ Հայաստանը ստանա զենք ու ռազմամթերք և որ վրաց կառավարությունը արգելք չլինի նրանց փոխադրությանը: Մասնավորապես, կաշխատե ապահովել Հայաստանի պարենավորման զործն ու մթերքի հայթայթումը: Դրա համար նա Բաթումում թողել է իր սպաներից մեկին՝ Հայաստանի համար ստացվող ապրանքները փոխադրելու համար: Շուտով Բաթում կհասնի 7000 տոն ալյուրով բեռնավորված մի նավ, ապա կստացվեն պահածոներ, մսեղեն, դեղորայք, երկրագործական գործիքներ ու մեքենաներ և այլն: Դրամական օժանդակություն Ամերիկյան չի տա, քանի հոգատարության հարցը որոշված չէ, բայց ինքը հույս ունի, որ նպաստամատույցը կտրամադրե մինչև 50 միլիոն դոլար: Հույս ունի նույնպես հայթայթել զորքի, որբերի և գաղթականների հագնելիքը, այլև բանակի համար 150 ջորիներ՝ իրենց սարքով միասին: Մինչև ձմեռ թուրքահայերի ներգաղթը անհնար է, բայց գարնանից նրանք կարող են վերադառնալ իրենց տեղերը: Հայկական հարցի լուծումը Վեհաժողովում որևէ կասկած չի հարուցանում. վճռված-վերջացած խնդիր է, մնում է միայն որոշել սահմանները և հոգատար պետությունը»¹:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 22-ին, գումարվեց Խորհրդարանի հանդիսավոր նիստ: Նախագահը հյուրին դիմեց չափազանց սրտառուչ, հուզախառն մի ճառով, որտեղ խոսք կար և՛ հայ ժողովրդի տառապանքների ու մղած պայքարի, և՛ թշնամու նորանոր դավադրությունների, և՛ նաև դաշնակիցներից սպասվելիք օգնության մասին: «Դաշնակիցների հաղթությունը սրբազան դող

1. Նույն տեղում, գ. 175, I մաս, թ. 34:

2. Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 320:

1. Նույն տեղում, էջ 321:

է առաջացրել մեր սրտում, բերկրանք ու խնդության հուզում, - ասված է նախագահի ճառում: Ազավոր Հայաստանը համոզված է եղել, որ դաշնակիցները պիտի վերջ դնեն նրա անհատնում տառապանքներին և նա պիտի վերածնվի իբրև անկախ երկիր ու պետություն»: Մեղադրանքի շեշտ կար նրա հետևյալ խոսքում. «Մեր ավագ դաշնակիցները ապավինած իրենց հզորության, չեն շտապում մոտեցնել հաշվեհարդարի ժամը պարտված թշնամիների հետ: Այդ հանգամանքը թշնամին օգտագործում է վախ ու կասկած պատվաստելով թույլերին և որոգայթներ լարելով մեր մատաղ հանրապետության դեմ»: Այնուհետև հիշեցնելով հյուրին, որ «արևելյան բռնապետության տիպար մեր թշնամին սովոր է հարգել ուրիշի իրավունքը միմիայն ուժեղ բռունցքի ստիպողությամբ», նախագահը ավելացնում է, որ «մեր հզոր դաշնակիցները պիտի զգացնել տան թուրքիային, որ նրանց ուժը չի լքել մեր թիկունքը և հարկը պահանջած ժամին կարող է հանուն արդարության, հանուն մեր գոյության ու քաղաքական դատի, կարգի հրավիրել, սանձահարել անսանձին: **Այսօր հասել է ժամը, որ դաշնակիցները խոսքով ու գործով ազդարարեն, թե Հայաստանը մենակ չէ, որ այլևս նրա ծակատազրի հետ չի կարելի անպատիժ խաղեր սարքել**»¹ (ընդգծումը մերն է - է. Ջ.):

Պատասխան խոսքում Հասկելը խոստացավ ապահովել թե Հայաստանի սահմանների պաշտպանությունը, թե պարենավորումը: Ավելին, նա խոստացավ հարկադրել Ադրբեջանին վերջ տալու Հայաստանի նկատմամբ թշնամական քաղաքականությանը. «Անկասկած է, որ Ադրբեջանի կառավարությունը խախտել է անգլիական իշխանությունից ստացած հրահանգները, - հայտարարել է Հասկելը, - և այդ խնդիրն է այս րոպեիս ինձ զբաղեցնում: **Ես մեկնում եմ Թիֆլիս և կպահանջեմ, որ Ադրբեջանը վերջ տա այդ բանին, հակառակ դեպքում Ադրբեջանի կառավարության անդամները կենթարկվեն անձնական պատասխանատվության**»² (ընդգծումը մերն է - է. Ջ.):

Ուշագրավ մի հանգամանք. Խորհրդարանի նախագահին իր ճառում ոչ մի անգամ չէր տվել Ադրբեջանի անունը՝ արդարացիորեն գտնելով, որ հակահայկական բոլոր շարժումների ու դավադրությունների հեղինակն ու ոգեշնչողը Թուրքիան է: Մինչդեռ Հաս-

կելը խոսում է ոչ թե Թուրքիայի, այլ Ադրբեջանի մասին: Ծիշտ է, նա շոշափեց նաև Թուրքիայի հարցը, բայց ամեն ինչ կապեց Փարիզի կոնֆերանսի և Հայաստանի մանդատի հետ՝ ավելացնելով իմիջիայլոց, որ «բողոքել է բրիտանական զորքերի հեռանալու կապակցությամբ և հույս ունի, որ անգլիական զորքերը կմնան այստեղ»:

Ինչևէ. օգոստոսի 23-ին Հասկելը մեկնեց Թիֆլիս, իսկ այնտեղից էլ անցավ Բաքու՝ Ադրբեջանի կառավարությանը հարկադրելու վերջ տալ Հայաստանի նկատմամբ թշնամական գործողություններին, ինչպես հայտարարել էր Խորհրդարանում: Սակայն թե ինչ կատարվեց Բաքվում, ինչ տեղեկատվություն հրամցվեց նրան և ինչպես հեղափոխեցին, որ արդյունքում մոռացավ Երևանին տված խոստումները և օգոստոսի 29-ին Ադրբեջանի վարչապետ Ուսուբբեկովի հետ ստորագրեց մի համաձայնագիր, որով Շարուր-Դարալազյազի և Նախիջևանի գավառները առանձնացվում էին որպես չեզոք գոտի և ստեղծվում էր ամերիկյան գեներալ-նահանգապետություն: Սեպտեմբերի 3-ին Երևանում ամերիկյան գեներալ Ֆորդը Խատիսյանին է հանձնում Հասկելի՝ սեպտեմբերի 2-ով թվագրված հեռագիրը, որում ասված էր, որ Ադրբեջանի հետ կայացրել է համաձայնություն ռազմական գործողությունների դադարեցման մասին և նույնը պետք է անի Հայաստանը, ինչպես նաև դադարեցնի զենքի ու զինամթերքի առաքումը Ջանգեզուր: Հայտնում է նաև, որ Շարուր-Նախիջևանից կստեղծվի չեզոք գոտի, և որ նրա ու Հայաստանի «միջև սահմանաբաժանման գիծը կհայտարարվի հետո»: Հետաքրքրական մի փաստ. Ֆորդը ասել էր Խատիսյանին, թե «վերոհիշյալը հաղորդում է Ձեզ որպես հրահանգ բարձրագույն կոմիսարի՝ ճշտորեն ի կատար ածելու համար»¹:

Այսպես ուրեմն. Հասկելը Ադրբեջանի հետ համաձայնության է գալիս, իսկ Հայաստանին՝ հրահանգում: Ի՞նչ էր մնում անելու Հայաստանի կառավարությանը, եթե ոչ պատասխան գրությամբ հայտնել, որ թեև ինքը պատերազմ չի հայտարարել Ադրբեջանին և ոչ էլ նրանից նման հայտարարություն ստացել, այլ գործ է ունեցել թուրք-ադրբեջանյան ուժերի կազմակերպած ապստամբների հետ, բայց և այնպես ընդունում է զինադադարը ու նաև

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 30, թ. 1-2:

2. Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 322:

1. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N-1-2, էջ 70:

գտնում, որ «զինադադարի ընթացքում այն բոլոր հարցերը, որոնք հարուցված են գնդապետ Հասկելի հեռագրի մեջ, այն է՝ չեզոք զոնայի մասին, սահմանային գծի մասին և այլն, մնում է բաց և ենթակա են զնդ. Հասկելի ու Հայաստանի կառավարության ընդհանուր քննությանն ու որոշմանը: Սույն քննության կարգը որոշելու համար բարեհաճեցեք հաղորդել զնդ. Հասկելին, թե արդյոք նպատակահարմար չի՞ գտնում գնդապետը ունկնդրել կառավարության ներկայացուցիչներին, որոնք կարող են գնալ Թիֆլիս, կամ թե հնարավոր է համարում հայտնել իր ենթադրությունները Երևանի կառավարությանը, նախապես նրա քննությանը ենթարկելու համար»¹:

Հայաստանի կառավարության նման մեղմ ու հարմարվող վարքագծին ի պատասխան Հասկելը հարմար գտավ համաձայնագրի նախագիծն ուղարկել Երևան վարչապետ Խատիսյանին, այն «առանց հապաղման» ստորագրելու և Թիֆլիս-Հասկելի գրասենյակ վերադարձնելու առաջարկությամբ: 21 հոդվածներից² բաղկացած այդ համաձայնագրում կետեր կային նաև այն մասին, որ Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները «անհապաղ իրենց զորքերը հետ են կանչում Չեզոք գոտու սահմաններից» (հոդ. 4), հայտարարում են «համընդհանուր համաձայնություն» (հոդ. 6), Ադրբեջանը պարտավորվում է զործադրել իր ողջ ազդեցությունը « հանգստացնելու թաթար ազգաբնակչությանը Չեզոք գոտում և Երևանի շրջանում» (հոդ. 8), իսկ Հայաստանը՝ «Չեզոք գոտում և Ջանգեզուրի շրջանում» (հոդ. 9) և այլն: Այսպիսով ստացվում է, որ չեզոք գոտու անվան տակ Հայաստանից անջատվում են ոչ միայն ամբողջ Շարուրն ու Նախիջևանը (16-րդ հոդվածում ասված էր, որ երկաթուղու ուղղությամբ Հայաստանի և Չեզոք գոտու միջև սահմանը անցնում է «Գալի դրունքով»), այլև հայկական Դարալազյազն ու Ջանգեզուրը: Դրա համար էլ «Բաքու-Ջուլֆա կառուցվող երկաթուղին գտնվում է բացառապես Ադրբեջանի կառավարության վերահսկողության տակ» (հոդ. 15): Իսկ թե որքանով էր Չեզոք գոտին իսկապես չեզոք և ոչ ադրբեջանական, երևում է 17-րդ հոդվածից, որտեղ ասված է, որ կառավարման համար տեղական հարկերի միջոցով հավաքված միջոցներից զատ «անհրաժեշտության դեպքում Ադրբեջանի կառա-

1. Նույն տեղում, էջ 70-71:

2. Այդպես է արխիվային փաստաթղթում, իսկ մամուլում (օր. տես «Աշխատավոր», 19. 09. 1919) հրապարակված տեքստը 20 կետ ունի:

վարությունը կհատկացնի լրացուցիչ միջոցներ ամերիկյան նահանգապետի ցուցումով»¹:

Դժվար չէ հասկանալ այն տարակուսանքն ու վրդովմունքը, որ առաջ բերեց այդ համաձայնագիրը Երևանում: Սեպտեմբերի 6-ին կառավարությունը հավանություն է տալիս Խատիսյանի կազմած պատասխանին և որոշում շտապ կարգով Թիֆլիս ուղարկել մի պատվիրակություն վարչապետի գլխավորությամբ՝ Հասկելին տարհանողելու և համաձայնագրի տեքստում փոփոխություններ կատարելու նպատակով:

Պատվիրակությունը Թիֆլիս հասավ սեպտեմբերի 7-ի առավոտյան և նույն օրն էլ այցելեց Հասկելին: Բանակցությունները վարվում էին բանավոր զրույցների ձևով և շարունակվեցին մինչև սեպտեմբերի 14-ը, որի ընթացքում տեղի ունեցան 6 հանդիպում: Հասկելը սկզբից ևեթ խիստ բարեացակամ էր և պատրաստ ընկալելու հայկական կողմի մտահոգությունները: Արդեն երկրորդ հանդիպումից հետո Ալ. Խատիսյանի և Ռ. Տեր-Մինասյանի ստորագրությամբ հեռագիր հղվեց Երևան՝ Խորհրդարանի նախագահին, որում ասված էր. «Ժամանեցինք երկուշաբթի առավոտյան, կայարանում մեզ դիմավորեց Գեգեչկորին: Հասկելի հետ ունեցել ենք երկու երկարատև տեսակցություն: Նրա վերաբերմունքը միանգամայն բարեացակամ է, նրա պայմանները բոլորովին վերջնագրային չեն: Գոտու (չեզոք- Ե. Ջ.) վերաբերյալ բոլոր վիճելի հարցերի բարենպաստ լուծման հույս ունենք: ... Դարաբաղի և Ջանգեզուրի հարցերը առայժմ մանրամասն չենք քննարկել, բայց ամբողջովին պարզել ենք մեր տեսակետը: Ամեն կերպ ամրապնդեք մեր կապը և ազդեցությունը Ջանգեզուրում»²:

Սեպտեմբերյան այդ օրերին Թիֆլիս եկավ նաև Ադրբեջանի վարչապետ Ուսուբբեկովը և իր հերթին մի քանի տեսակցություն ունեցավ Հասկելի հետ: Ծանոթանալով հայկական կողմի առարկություններին և Հասկելի դիրքորոշմանը, նա համաձայնեց նախագծում փոփոխություններ կատարելուն, բայց միաժամանակ առաջ քաշեց հետևյալ հակաառաջարկները.

«1. Նախիջևանը և Շարուր-Դարալազյազը կազմում են հատուկ գեներալ-նահանգապետություն:

2. Գեներալ-նահանգապետ նշանակում է Հասկելը ա-

1. ԳԳ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 162, ք. 133-134:

2. Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 362, ք. 26:

մերիկացիներից:

3. Գավառը կառավարվում է ընտրված վարչության կողմից:

4. Ամբողջ իշխանությունը գտնվում է Ազգային խորհրդի ձեռքում: Գեներալ-նահանգապետը միայն վերահսկող ֆունկցիա ունի:

5. Վարչությունը նշանակվում է խորհրդի կողմից մեծամասնություն կազմող բնակչությունից:

6. Մամուլի, խղճի, խոսքի ազատություն և այլն:

7. Չեզոք գոտու բյուջեն քննարկվում է Ադրբեջանի պառլամենտում: Պակասը վճարում է Ադրբեջանը:

8. Շրջանառության մեջ են ադրբեջանական բռները:

9. Մինչև գեներալ-նահանգապետի ընտրությունը Բաքվից հրավիրվում են երկու խորհրդականներ. երկրամասը հանգստացնելու ու խաղաղացնելու համար:

10. Այդ շրջանից հոգուտ Ադրբեջանի առանձնացվում է հատուկ հողաչերտ Բաքու-Ջուլֆա երկաթգծի համար:

11. Գեներալ-նահանգապետության տարածքում ազգաբնակչությունը չի զինաթափվում:

12. Հայտարարվում է համաներում տարածքային հարցերի լուծման հետ կապված բոլոր հանցագործությունների համար»¹:

Այս կետերի հետ հայկական կողմը չէր կարող համաձայնել, չհամաձայնեց նաև Հասկելը և մշակեց նոր նախագիծ, ըստ որի Դարալագյազը հանվում էր Չեզոք գոտուց, իսկ Ջանգեզուրը թողնվում էր նախկին վիճակում, այսինքն կառավարվելու էր տեղական ազգային խորհրդի կողմից: Այս նախագիծը ներկայացվեց երկու կողմերին: Ուսուրբեկովը դժգոհ մնաց նախագծից և առաջ քաշեց երեք կետից բաղկացած նոր պահանջ.

«1. Բաքու-Ջուլֆա երկաթուղին պետք է հանձնվի Ադրբեջանին,

2. Չեզոք գոտում ամբողջ իշխանությունը Ազգային խորհրդին,

3. Դարալագյազը Հայաստանին հանձնվելու համար

1. Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 101, ք. 90:

որպես հատուցում Ադրբեջանին տալ Ագուլիս-Օրդուբադ գծով տարածքը»¹:

Այս առաջարկները ևս վճռական կերպով մերժեցին հայ պատվիրակները: Առանձնապես բուռն էր բողոքը երրորդ կետի հարցում: Արդյունքում քննարկման նման ընթացքից դժգոհ Ռեսուրբեկովը թողեց Թիֆլիսը և մեկնեց Բաքու: Բայց դեռ մինչև Թիֆլիսից հեռանալը նա կազմակերպել էր մի շինծու բողոքի ակցիա ևս. Թիֆլիս էին եկել Շարուր-Նախիջևանի երկու ներկայացուցիչներ, որոնք Հասկելին ներկայացրին 10 կետերից բաղկացած մի գրություն, որի մեջ խոսվում էր ոչ միայն հայկական իշխանությունը չճանաչելու, այլև Սուրմալուի, Վեդի-Բասարի, Շարուրի, Նախիջևանի և Օրդուբադի շրջանները անհապաղ Ադրբեջանի մաս հայտարարելու իրենց պահանջի մասին: Հետաքրքրությունից զուրկ չէ այն փաստը, որ գրույցի սկզբում Հասկելը փորձել է համոզել, որ նրանք ճանաչեն Հայաստանի գերիշխանությունը խոստանալով անձի ու գույքի ապահովություն, բայց պատվիրակ հորջորջվածները կտրուկ մերժել են դա և մի շարք պատճառների շարքում (Հայաստանում տիրող անիշխանություն, մաուզերիստների խմբեր, իրենց նկատմամբ դաշնակցականների սնուցած թշնամություն և այլն) վկայակոչել նաև անկախ լինելու և ազատ ապրելու իրենց իրավունքը: Իսկ երբ Հասկելը մատնացույց է արել Ղարաբաղի հայության նույնանման պահանջը, ապա նրանք հայտարարել են, թե դա բոլորովին այլ հարց է, «դրանք մահմեդականների մեծամասնության մեջ ապրող մանր շրջաններ են, մի քանի գյուղեր չեն կարող մի նոր հանրապետություն կազմել» և այլն:

Մի կողմից բանակցություններ վարելով Հասկելի հետ, մյուս կողմից ադրբեջանական ղեկավարությունը դիվանագիտական աշխատանքին զուգընթաց փորձում էր իր դիրքերը ամրապնդել ռազմի դաշտում ձեռք բերած հաղթանակներով: Շարուր-Նախիջևանի հարցը համարելով լուծված, այս անգամ փորձադաշտ էր ընտրվել Սուրմալուն: Հաջողության դեպքում Ադրբեջանը կարող էր պնդել, որ Սուրմալուն ևս մտցվի չեզոք գոտու մեջ:

Սուրմալուի թուրք-քրդական ուժերը, որոնց խրախուսում ու

1. Նույն տեղում, ք. 90:

ղեկավարում էին Անատոլիայից եկած սպաներ և ասկյարներ, արդեն օգոստոսի վերջին օրերին պատրաստ էին ակտիվ գործողությունների: Օգոստոսի 31-ին ՀՀ ներքին գործոց նախարարին ուղարկած «շտապ, գաղտնի» գրության մեջ Սուրմալուի գավառի կոմիսար Խ. Բաբայանը գրում է. «Աբասգյուլի շրջանի և Կողբի նահանջից հետո Իգդիրի շրջանի համար ստեղծվեց մի շատ ծանր դրություն: Հիսուն հազարի չափ հայ ազգաբնակչություն, սեղմված օղակի մեջ, համարյա պաշարողական դրության մեջ է, շրջապատված ամեն կողմից թշնամի տարրերով»: Այնուհետև նշելով, որ թուրք-քրդական ուժերը հատկապես «սպառնում են Իգդիրին ու Իգդիր-Մարգարա խճուղուն», շարունակում է. «Տեղական բանակը իր քանակով անհամապատասխան է բնակչության ֆիզիկական գոյությունը պաշտպանելու: Ունի երկու գումարտակ (Մուրադի և Ասլանի) և 2-րդ կամավորական գունդը՝ մոտավորապես 1500 սվին, 70 հեծյալներով ու 4 թնդանոթով»: Վերջում խոսելով թուրք-քրդական շրջաններում նկատվող շարժումների և հայերի վրա սպասվող հարձակման վերաբերյալ պատվող լուրերի մասին, ավելացնում է. «Խնդրում են միջնորդել բանակը ուժեղացնելու, որպեսզի հնարավորություն ստեղծվի մի թեթև առաջխաղացումով բռնել մոտակա բարձունքները, շարժվել դեպի Կողբ և այդպիսով ամրացնել Սուրմալուն, հակառակ դեպքում դրությունը շատ վտանգալից է»¹:

Ինչ խոսք, որ 1500 զինվորը շատ քիչ էր այդ խիստ անհանգիստ շրջանը հնազանդ պահելու համար: Բայց դժբախտությունն էլ հենց այն էր, որ բոլոր ճակատներում էլ դրությունը ծանր էր, և նոր ուժեր ուղարկելու ոչ մի հնարավորություն չկար: Իսկ թշնամին լայնամասշտաբ գործողությունների էր անցել Հասկեի հետ բանակցություններ սկսելուց էլ առաջ՝ սեպտեմբերի 6-ին: Հարձակման անցնելով Դալիքդաշի հայկական վաշտի վրա, ամբողջ օրը տևած համառ կռիվներից հետո թշնամուն հաջողվեց գրավել Իգդիր տանող խճուղին: Երեկոյան կողմ վաշտը թողնելով Դալիքդաշը, բաժանվեց երկու մասի և նահանջեց Էրզրումի ու Իգդիրի ուղղությամբ: Ոգևորված թշնամին գրավեց նաև Իգդիրին մոտ գտնվող Բահարլու գյուղը և փորձեց այդտեղից ներխուժել քա-

ղաք: Բայց այստեղ արդեն զինվորներին օգնության հասան կամավորական խմբերը և հաջողվեց հետ շարտել թշնամուն, հակահարձակման անցնել և գիշերվա ընթացքում ետ վերցնել Մալաքլու գյուղն ու Դալիքդաշը: Հաջորդ օրը թշնամին նորից հարձակման անցավ Դալիքդաշի ուղղությամբ, բայց հայ զինվորներին հաջողվեց ոչ միայն հետ շարտել թշնամուն, այլև գրավել Կարակոյունլու գյուղը և վերականգնել կապը Դաշբուրունի հայկական վաշտի հետ: Սեպտեմբերի 8-ի և 9-ի կռիվները ևս հաջողություն չբերեցին թշնամուն: Ամսի 10-ին և 11-ին հանգիստ էր, բայց 12-ի գիշերը թշնամին հանկարծակի հարձակման անցավ աջ թևում և Արաքսի ուղղությամբ գրավեց Կարակալան, Խայֆալուն, Խոշխաբարը և մի շարք այլ գյուղեր ու դարձյալ մոտեցավ Իգդիրին: Քաղաքում խուճապ սկսվեց, ժողովրդի մի մասը հեռացավ: Իսկ երբ լույսը բացվեց և պարզ դարձավ թշնամական ուժերի դասավորությունը, հայկական ուժերը հակահարձակման անցան, փախուստի մատնեցին թշնամուն և գիշերվա ընթացքում կորցրած գյուղերը ազատագրեցին¹:

Ծավալված իրադարձությունները պահանջում էին լուրջ ուշադրություն դարձնել Սուրմալուի ճակատին, քանի որ պարզ դարձավ, որ թշնամին ձգտում է տեր դառնալ Արաքսի աջ ափի հենակետային դիրքերին, գրավել կամուրջները, կտրել գավառը գետի ձախ ափից և ամբողջովին մեկուսացնել այն: Հայկական բանակի հրամանատարությունը որոշեց այստեղ ուղարկել Դրոյին: Սեպտեմբերի 19-ին գեմ. Հախվերդյանի և գնդ. Պրիտոմանովի հետ հեռախոսազրույցում Դրոն՝ հայտնելով իր տեղ հասնելու մասին, միաժամանակ ներկայացնում է այն ծանր վիճակը, որ ստեղծվել էր Իգդիրի ջոկատում ռազմամթերքի, սննդամթերքի և հատկապես տարածված հիվանդությունների (մալարիա) պատճառով, որի հետևանքով հրամանատարական կազմի և զինվորների կեսից ավելին շարքից դուրս էր եկել: Տեղեկացնելով, որ նման վիճակում ակտիվ գործողություններ ձեռնարկել չի կարող, Դրոն խնդրում է շտապ ուղարկել տաք հագուստ, սննդամթերք և այլն²: Իսկ թշնամին՝ քաջատեղյակ ջոկատի վիճակին, Իգդիրի վրա նոր հարձակման պատրաստություն էր տեսնում: Դա հաս-

1. Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 612, թ. 4:

1. Տես «Հառաջ», 24, 25 սեպտեմբերի 1919 թ.:

2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 50, թ. 150:

տատում էին նաև գերի բռնված քրդերը: Եվ այն տեղի ունեցավ սեպտեմբերի 21-ին թուրք-քրդական մեծաքանակ ուժերը հանկարծակի հարձակումով գրավեցին Խայֆալուն, Խոշխաբարը, Ալի-Ղամարը և ներխուժեցին Իզդիր: Քաղաքը պաշտպանող հայկական ուժերը ծանր դրության մեջ ընկան, զինվորները տատանվում էին և թշնամու ճնշման տակ սկսեցին ընկրկել: Բայց այս վճռական պահին քաջության ու հերոսության փայլուն օրինակ տվեց Դրոն, «մրրկածին Դրոն» ինչպես Ս. Վրացյանն է նրան անվանել: Իր թիկնապահների գլուխ անցած՝ նա անձնուրաց կերպով առաջ նետվեց, իր անձնական օրինակով ոգևորեց ու խրախուսեց զինվորներին և նոր ուժով բորբոքեց մարտը: Քաղաքի փողոցներում մի քանի ժամ տևած արյունահեղ կռիվները ի վերջո ավարտվեցին հայոց հաղթանակով: Մարտի դաշտում թողնելով շուրջ 500 դիակ, թշնամին խուճապով հեռացավ լեռները: Այդ հանդուգն բնավորության տեր և անվիճելի ռազմական ունակություններով օժտված այդ մարդը, որը ֆիդայական միջավայրից ծնունդ առած հրամանատարական կազմի մեջ ամենաերևելի էր, ու մեծ դերակատարություն ունի առաջին հանրապետության ռազմական պատմության մեջ, այդ օրը սեպտեմբերի 21-ին փրկեց ոչ միայն իր հայրենի քաղաք Իզդիրը, այլև Սուրմալուն, քանի որ դրանից հետո թշնամին այստեղ այլևս մեծ ակտիվություն չցուցաբերեց, իսկ Ադրբեջանն էլ Հասկելի հետ հետագա բանակցություններում այլևս չպնդեց այդ գավառը չեզոք գոտու մեջ մտցնելու վրա: Սակայն մինչև Հասկելի հետ վարվող բանակցություններին վերադառնալը, մեկ-երկու խոսքով անդրադառնանք Ձանգիբասարում տիրող դրությանը, քանի որ սեպտեմբերյան այդ նույն օրերին թուրք-ադրբեջանյան գործակալներն ամեն կերպ ձգտում էին ապստամբեցնել նաև Ձանգիբասարը:

Սեպտեմբերի 17-ին ՀՀ մինիստրների խորհրդին ուղարկած նամակ-գրության մեջ ներքին գործոց նախարարը հայտնում է, որ «համաձայն մեզ հասած տեղեկությունների, օգոստոսի վերջերին Ձանգիբասար էր եկել Խալիլ-բեյի առաջին ադյուտանտը Մամեդ բեյը, որը անցյալ տարվա տաճկական արշավանքի ժամանակ Իզդիրում բատալիոնի հրամանատար էր: ...Ամբողջ

շրջանում խիստ կերպով տարվում է զորահավաքի գործը և ամեն գյուղից հավաքվում է 100-200 մարդ...»¹: Նամակում խոսվում է նաև այն մասին, որ Ձանգիբասարի շրջանում զինված բնակչության թիվը հասնում է շուրջ 2000-ի, բայց ազգաբնակչության մեջ նկատելի է նաև պառակտում, մի մասը չի ուզում ապստամբել: Վկայաբերվում է Ուլուխանլուն, որը թեև խաղաղասեր է, բայց ենթակա է Խալիլ-բեյի գործակալների սպառնալիքին: «Այսօր Ձանգիբասարի շրջանում հետևյալ դրությունն է տիրում, - ասված է նամակի վերջնամասում, - մենք՝ հանձինս մեր կառավարության ներկայացուցիչների, մուտք չունենք այնտեղ, որովհետև մեր փորձերը այդ ուղղությամբ մի քայլ կատարելու, կառաջացնե թուրքերի կողմից որոշ թշնամական գործողություններ, որի համար կարիք կլիներ նոցա վերաբերմամբ զինվորական ուժ գործադրել: ...Ստեղծված դրությունը բուժելու և իրավակարգը վերահաստատելու համար ես իրագործելի եմ համարում երկու ծրագիր.

1. Քանի որ նկատվում է Ձանգիբասարի շրջանում պառակտումն, երկու հոսանք, մեկը անպայմանորեն հակառակ մեր կառավարության, իսկ մյուսը՝ խաղաղ տրամադրությամբ և մեր կառավարության ենթարկվող - երկրորդ հոսանքին պատկանող թուրքերին աշխատելու է կապել մեր կառավարության հետ, նոցա ապահովել Խալիլ-բեյի վտանգից և այդպիսով նոցա շարքերը ստվարացնել: Այդ ուղղությամբ արդեն իմ կողմից որոշ քայլեր են կատարված և պիտի ենթադրել, որ կարելի է որոշ հետևանքներ ունենալ: Իսկ եթե մեր ցանկությունները չիրականան և մենք հակառակ մեր լավ տրամադրություններին դեպի խաղաղ թուրք ազգաբնակչությունը, ոչ մի արդյունք չունենանք շրջանում իրավակարգը վերականգնելու գործում, այն ժամանակ.

2. Հարկավոր է, որ մեր կառավարությունը պատրաստ լինի ուժ գործադրելու այս աննորմալ կացությանը վերջ տալու համար»²:

Ձանգիբասարցիները մեծ չափով զենք, զինամթերք և այլ անհրաժեշտ նյութեր էին կուտակել, ինչպես նաև սկսել էին բրինձ, ցորեն և այլ իրեր փոխադրել Արաքսի աջ ափը՝ անհաջողության դեպքում այդ ամենը հայերի ձեռքը չընկնելու համար: Սակայն 1919 թ. աշնանը այստեղ գործը ռազմական ընդհարման

1. Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 615, թ. 1:

2. Նույն տեղում, թ. 3-4:

չհասավ. հայկական կողմը՝ ցուցաբերելով զգուշություն, զորք չմտցրեց Ջանգիրասար, իսկ վերջինս էլ՝ հատկապես Իգդիրում հայոց հաղթանակից հետո, վախեցավ զենքի դիմել:

Եթե փորձենք ամփոփել վերը շարադրածը և վերադառնալ Հասկելի հետ վարվող բանակցություններին, ապա պետք է արձանագրենք, որ երկու ճակատով գործելու համար Ադրբեջանի փորձը հաջողությամբ չպսակվեց, նա չկարողացավ դիվանագիտական ճակատում հետապնդած խնդիրները ամրապնդել ռազմի դաշտում ձեռք բերած հաղթանակներով: Արդյունքում Հասկելի հետ բանակցություններում նա չկարողացավ թելադրողի դերում լինել: Իսկ հայ պատվիրակները Ուսուրբեկովի թիֆլիսից հեռանալուց հետո դեռ մի քանի անգամ էլ հանդիպեցին Հասկելին¹: Նրանք խնդրում և պահանջում էին անփոփոխ թողնել վերջին նախագիծը: Հասկելը կարծես թե դեմ չէր դրան, բայց նաև մատնացույց էր անում Ադրբեջանին պարտադրելու համար ռեալ ուժի բացակայությունը: Ուստի որոշեց նոր նախագիծ մշակել և հրապարակել այն մանիֆեստի ձևով՝ Փարիզի կոնֆերանսի անունից: Սկզբնապես այն բաղկացած էր 9 հոդվածներից և հիմնականում կազմված էին հայկական կողմի առաջարկությունների ոգով: Երևան ուղարկած հաշվետվության մեջ դրանք ներկայացված են հետևյալ կերպ.

- «1. Ձանգեզուրը մնում է նախկին դրությամբ,
2. Դարալագյազը մերն է,
3. Շարուր-Նախիջևանը՝ չեզոք գոտի,
4. Ամերիկյան գեներալ-նահանգապետություն,
5. Մեր սահմանը մինչև Գայլի դրունքը,
6. Բեյուր-Վեդին պետք է զինաթափվի,
7. Ջուլֆա-Բաքու երկաթուղին պետք է կառուցվի միմիայն մեզ հետ հատուկ համաձայնությունից հետո,
8. Չեզոք գոտու ծախսերը կամ ամերիկյան, կամ ընդհանուր»²:

Հասկելը հայ պատվիրակներին նաև ասել էր, թե անձամբ կմեկնի Բաքու և համաձայնագիրը կներկայացնի Ադրբեջանի կառավարության ստորագրությանը: Նա այդպես էլ վարվեց, սակայն Բաքուն շարունակում էր համառել: Ուստի Հասկելը որոշեց

չրջանցել Բաքվին, ուղղակի բանակցությունների մեջ մտնել նախիջևանցիների հետ և ստանալ վերջիններիս համաձայնությունը: Նա Նախիջևան գործուղեց գեմ. Ռոբինզոնին, որը և հոկտեմբերի 1-ին այստեղ զումարեց խորհրդակցություն Ռահիմ խանի, Քերբալայ խանի և մի քանի այլ ղեկավար գործիչների մասնակցությամբ: Սակայն վերջիններս վճռականորեն դեմ արտահայտվեցին ամերիկյան գեներալ-նահանգապետության գաղափարին և հայտարարեցին, թե Ադրբեջանից բացի ոչ մի ուրիշ իշխանություն իրենք չեն ճանաչում:

Համաձայնագիրը ստորագրելուց Ադրբեջանի հրաժարումը և նախիջևանցիների կոշտ դիրքորոշումը խիստ ծանր կացություն ստեղծեցին Հասկելի համար: Չեռքի տակ չունենալով զինված ուժ, նա չէր կարող իր կամքը պարտադրել Ադրբեջանին: Ուստի որոշեց հրաժարվել համաձայնագրի գաղափարից և բավարարվել հայտարարությամբ, որը պետք է հրապարակվեր հոկտեմբերի 23-ին՝ ամերիկյան գեներալ-նահանգապետի Նախիջևան մտնելու օրը: Նրանում ասված էր, որ քանի որ Փարիզի կոնֆերանսը դեռևս չի լուծել Հայաստանի և Ադրբեջանի միջև վիճելի համարվող Շարուրի և Նախիջևանի շրջանների պատկանելիության հարցը, ուստի ելնելով երկրամասում խաղաղությունը վերականգնելու անհրաժեշտությունից ու հենվելով Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների համաձայնության ու Փարիզի կոնֆերանսի կողմից իրեն տրված իրավունքների վրա՝ «որպես Հյուսիս-Ամերիկյան Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Իտալիայի գերագույն կոմիսար՝ այժմ կարգադրում են հետևյալը.

1. Շարուրի և Նախիջևանի օկրուգները կազմում են դաշնակցային կառավարման գոտի ամերիկյան նահանգապետի գլխավորությամբ.
2. Հյուսիս-Ամերիկյան Միացյալ Նահանգների ինժեներական գործերի գնդապետ Էդմոնդ Դեյլին նշանակվում է այդ գոտու նահանգապետ»¹:

Հայտարարությունն ընդհանուր առմամբ բաղկացած էր 13 հոդվածներից: Նրանում ասված էր, որ ստեղծվում է կենտրոնական վարչություն՝ կազմված հայերից և թաթարներից նրանց

1. Ընդհանուր առմամբ այդ օրերին կայացել է 6 հանդիպում:
2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 101, ք. 90:

1. Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, ք. 186:

թվակազմին համապատասխանող համամասնությամբ (հոդ. 3), իսկ տեղական վարչությունը կարող է թողնվել նույնը, կամ նահանգապետը կարող է նշանակել նոր պաշտոնատար անձանց (ինչպես նաև անընդունակներին ու անբաններին ազատել պաշտոնից) (հոդ. 7): Հայաստանը և Ադրբեջանը անհապաղ իրենց զորքերը, գործակալներն ու բնակչությանը գրգռող անձանց դուրս են բերում գոտու տարածքից (հոդ. 4, 5), հայտարարվում է համաներում (հոդ. 6): Վիճահարույց Բաքու-Ջուլֆա երկաթուղու կառուցումը կարող էր իրականացվել Հայաստանի և Ադրբեջանի միջև անմիջական համաձայնությամբ (հոդ. 9): Չեզոք գոտու կառավարման ծախսերը փակվում են տեղական հարկերի հաշվին (հոդ. 10), ազգաբնակչությունը չի զինաթափվում (հոդ. 12), հռչակվում է խոսքի և խղճի ազատություն (հոդ. 11): Վերջին 13-րդ հոդվածով բոլորին հրավիրում է «ենթարկվել և համակերպվել այս հայտարարության պահանջներին, լռությամբ աջակցել և օգնել ամերիկյան նահանգապետի վարչությանը մինչև խաղաղության կոնֆերանսի կողմից այդ օկրուգների տիրակալության հարցի վերջնական լուծումը»¹:

Հայաստանը գոհ էր հայտարարության բովանդակությունից և պատրաստակամություն հայտնեց ամեն կերպ օժանդակել նրա իրագործմանը: Սակայն բոլորովին այլ դիրքորոշում էր որդեգրել Ադրբեջանը. արտաքուստ չհակադրվելով Հասկելին, նա գաղտնաբար հրահրում է նախիջևանցիներին ըմբոստության: Հոկտեմբերի 16-ին ժամանակավորապես Հասկելին փոխարինած գնդ. Ռեյը մի նամակով դիմում է Նախիջևանի մուսուլմանական ազգային խորհրդին, հայտնում, որ Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների համաձայնությամբ Շարուր-Նախիջևանը կկառավարվի ամերիկյան նահանգապետի կողմից, և որ այդ պաշտոնում նշանակված է ամերիկացի գնդապետ Էդմոնդ Լ. Դեյլին: «Նրա իր պարտականություններին անցնելը, - ասված էր նամակում, - ենթադրվում է հոկտեմբերի 23-ին Նախիջևանում: Միաժամանակ ենթադրվում է շրջանի կառավարման վերաբերյալ Ադրբեջանի և Հայաստանի դաշնակիցների գերագույն կոմիտեի հետ կապված համաձայնության հայտարարումը: Մի խումբ մարդիկ, որոնց թվում ես և սպայակույտի սպաները, գնդ. Դեյլին

1. Նույն տեղում, թ. 188:

ու իր սպայակույտը և Ադրբեջանի ու Հայաստանի ներկայացուցիչները, Նախիջևան կժամանեն հոկտեմբերի 23-ին: Հրավիրում ենք Նախիջևանի մահմեդական ազգային խորհրդին, այլ զինվորական ու քաղաքական ներկայացուցիչներին նույնպես ներկա լինել»¹:

Ըստ Հասկելի կարգադրության Հայաստանը և Ադրբեջանը երեքական ներկայացուցիչներ պետք է ուղարկեին Էդմոնդ Դեյլիի շքախմբի հետ Նախիջևան մեկնելու և նահանգապետության հռչակման արարողությանը մասնակցելու համար: Հոկտեմբերի 21-ին Ռեյը, Դեյլին և ամերիկյան առաքելության մյուս անդամները արդեն Երևանում էին: Այդ նույն օրը Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը շտապ հեռագրում է Բաքու, հայտնում ամերիկյան միսսիայի ժամանաման մասին և խնդրում շտապ հաղորդել, թե «իրո՞ք համաձայնություն կնքված է, որպեսզի հայտարարեմ այդ մասին Նախիջևանի ազգաբնակչության: Միսսիան և ազգաբնակչությունը անգիտության մեջ են»²: Դրան հետևեց Ադրբեջանի արտգործնախարար Ջաֆարովի հոկտեմբերի 23-ի հետևյալ պատասխանը. «Հասկելը բանակցություններ վարեց կառավարության հետ **Շարուր-Նախիջևանի շրջանը չեզոք գոտի հայտարարելու մասին**: Համաձայնություն **չկայացավ, որովհետև Հասկելը չընդունեց մեր պայմանները**: Կառավարությունը հայտարարեց միայն, որ նա մնալով պասսիվ դերի մեջ, դիմադրություն չի ցույց տա, եթե Հասկելը չեզոք գոտի հաստատե»³:

Սակայն, ինչպես հետագա դեպքերը ցույց տվեցին, Ադրբեջանը բոլորովին էլ «պասսիվ» դերի մեջ չէր մնացել. նա ոչ միայն ներկայացուցիչներ չուղարկեց, այլև ամենուրեք վխտացող իր գործակալների միջոցով այնպիսի նախապատրաստական աշխատանք էր կատարել, որ երբ մեկ օր Երևանում անտեղի սպասելուց հետո ամերիկյան պատվիրակությունը հոկտեմբերի 24-ին շարժվեց դեպի Նախիջևան, ապա ամենուրեք նրան թշնամաբար դիմավորեցին: Իսկ Նախիջևանում Խալիլ-բեյի և Քերբալայ խանի հրահրանքով նույնիսկ բողոքի ցույց կազմակերպվեց: Նահանգապետարանի դիմաց հավաքված ամբոխը աղմուկ-աղաղակով ու սպառնալիքներով ամերիկացիներից պահանջում էր հե-

1. Ս. Վրացյան, Գշվ. աշխ., էջ 326:

2. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1-2, էջ 153-154:

3. Նույն տեղում, էջ 154:

ռանալ Նախիջևանից: Նեղն ընկած Ռեյը Խալիլ-բեյի և Քերբալայ-խանի ճնշման տակ ստիպված եղավ համաձայնել, որ Դեյլիմ մնա Նախիջևանում ոչ թե որպես նահանգապետ, այլ ամերիկյան ներկայացուցիչ-խորհրդական: Դեյլին նույնիսկ հարկադրված եղավ բնակվել ոչ թե քաղաքում, այլ 3 կմ. հեռավորության վրա գտնվող գորանոցում: Ռեյը ստիպված եղավ նաև իր հետ Նախիջևան տարած պաշտոնյաների մի մասին հետ ուղարկել: «Ռեյի առաքելությունը Նախիջևանի հարցում ամբողջովին տապալվեց, - ասված է Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին ուղարկած հոկտեմբերի 28-ի գաղտնի գրության մեջ: **Նրա ավտոմեքենաները գնդակոծվեցին թաթարների կողմից: Հանդիպումը խիստ անբարեացակամ էր: Գնդապետ Դեյլին մնացել է Նախիջևանում միայն որպես կապի սպա, ըստ որում թաթարները հայտարարեցին, որ իրենք պատասխանատու չեն նրա կյանքի համար: Ռեյը համոզմունք հայտնեց, որ այդ ժողովրդի հետ առանց զորքի ոչինչ չես անի»¹ (ընդգծումը մերն է - Է. Ջ.): Իսկ Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը, որը քիչ ջանք չէր ներդրել ամերիկյան առաքելությունը ձախողելու գործում, նոյեմբերի 1-ին գոհունակությամբ հեռագրում է իր արտգործնախարարին, թե «Նախիջևանից ինձ գրում են, որ **ազգաբնակչությունը հրաժարվեց ընդունել գնդ. Դեյլիին որպես նահանգապետ:** Երկար բանակցություններից հետո գնդ. Ռեյը համաձայնեց գնդ. Դեյլիին թողնել որպես Ամերիկայի ներկայացուցիչ: Նա բացարձակապես հրաժարվեց խառնվել ներքին վարչության գործերին: Հասկելի՞ ժողովրդին ուղղված կոչերը հետ են վերցված...»² (ընդգծումը մերն է - Է. Ջ.): Նախիջևանյան այս իրադարձությանը անդրադարձել է նաև վարչապետ Խատիսյանը Վաշինգտոնում իր դիվանագիտական ներկայացուցչին ուղարկած նոյեմբերի 18-ի նամակում: Նա գրում է. «... Շնորհիվ Հասկելի միջամտության, Ադրբեջանն արդեն ընդունել էր մի պայմանագիր, որով Շարուրի, Նախիջևանի և Գողթանի շրջանները պիտի կազմեին Ամերիկյան նահանգապետություն (չավարժ-չցուրվ՝ՌՏՐՊՏՏ), չեզոք զոնա, մինչև Փարիզի կոնֆերանսի վերջնական որոշումը կովկասի մասին: Գերագույն կոմիսարի կարգադրությամբ ամերիկյան նահան-**

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 138, ք. 77:

2. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1-2, էջ 155:

գապետը հոկտեմբերի 23-ին հանդիսավոր կերպով պիտի մտներ Նախիջևան, Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչների հետ միասին, բայց վերջին թույլին Ադրբեջանը հրաժարվեց մասնակցել այդ հանդեսին, միևնույն ժամանակ ծածուկ կազմակերպելով Նախիջևանի թրքական ամբոխի կողմից դիմադրություն: Այս թույլիս Նախիջևանում է գտնվում Ամերիկյան նահանգապետը, **բայց նա բոլորովին անզոր է...**¹ (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Այսպիսին էր վախճանը այն գործունեության, որ ծավալեց Հասկելը Շարուր-Նախիջևանում ամերիկյան գեներալ-նահանգապետություն ստեղծելու ուղղությամբ: Այն ամբողջովին ձախողվեց, որի պատճառը ոչ այնքան Ադրբեջանի դիմադրությունն էր, որքան Հասկելի անզորությունն իր կամքը պարտադրելու տեսակետից. ձեռքի տակ չունենալով ռեալ ուժ (զորք կամ ոստիկանություն) նա չէր կարող լուրջ Փարիզի վեհաժողովի մանդատով որևէ ծրագիր իրականացնել: Ե՛վ Հասկելը, և նրա շրջապատը առիթն ունեցան համոզվելու, որ իսլամի աշխարհում իսկապես որ միայն ուժն է հարգի, իսկ ուժ դաշնակիցները 1919 թ. աշնանը Անդրկովկասում համարյա չունեին. բրիտանական հրամանատարությունը, թեև տարածաշրջանում դեռևս մի քանի ջոկատներ ուներ, բայց ոչ միայն չէր միջամտում, ոչ միայն չէր օժանդակում, այլև, ինչպես Եվանգուլյանն է նշում իր զեկուցագրերում, ամերիկացիներին վերաբերվում էր ընդգծված քամահրանքով, նրանց հետ խոսում մի տեսակ վերևից: Հասկանալի է, որ նման պայմաններում Հասկելի ցանկացած ձախողում բրիտանական հրամանատարությանը բոլորովին չէր հուզի, այլ հակառակը: Այո, Հասկելը անհաջողության մատնվեց, իսկ ահա Ադրբեջանի հաջողությունը կրկնակի էր, քանի որ նախ, ձախողեց ամերիկյան գեներալ-նահանգապետության ստեղծումը Շարուր-Նախիջևանում և հետո, հասավ նրան, որ գնդ. Դեյլին մնաց Նախիջևանում որպես ամերիկյան ներկայացուցիչ: Իսկ դա փաստորեն նշանակում էր ընդունել Հայաստանից անջատված այդ տարածաշրջանի ինքնուրույն գոյությունը, ճանաչել Ադրբեջանի կողմից նշանակված նահանգապետ Ջամալինսկու իշխանությունը, որը պաշտոնական փաստաթղթերում իրեն հորջորջում էր որպես «Հարավ-Արևմտյան Ադրբեջանի նահանգապետ»: Էլ ինչպե՞ս կարող

1. Նույն տեղում, էջ 187-188:

եր Ադրբեջանը չգնահատել ամերիկացիների այդ քայլը. «Նախագուշակական բոլոր միջոցները ձեռք առնելով, - հեռագրում է Ադրբեջանի արտգործնախարար Ջաֆարովը Երևանի իր դիվանագիտական ներկայացուցիչ Չախվերդովին 1919 թ. նոյեմբերի 9-ին, - հաղորդեցեք Ջամալինսկուն, որ անհրաժեշտ է **գնդ. Դեյլիի հետ համատեղ բարեկամական հարաբերություններ**, և որ նրանց բռնած դիրքը կառավարության կողմից հավանություն է գտնում»:

Այսպես ուրեմն, Ադրբեջանը գոհ էր ամերիկացիների բռնած դիրքից, իսկ Չայաստա՞նը: Հասկելի անհաջողությունը դա նաև Չայաստանի կառավարության անհաջողությունն էր. վերջինս չէր կարող չգիտակցել, թե ինչպիսի ընթացք կարող է ստանալ Նախիջևանի հիմնահարցը, եթե ամերիկյան գեներալ-նահանգապետությունն ստեղծելու հարցը վերջնականապես օրակարգից դուրս գա: Այդ է պատճառը, որ Չայաստանը հոկտեմբերի 23-ի ձախողումից հետո դեռ երկար ժամանակ շարունակում էր կառչած մնալ ամերիկյան գեներալ-նահանգապետությունն ստեղծելու գաղափարին, մինչդեռ Ադրբեջանը հարցը համարում էր լուծված և գտնում, որ այդ շրջանների պատկանելիության հարցը վիճելի չէ: Հենց այդ օրերին էր, որ Ադրբեջանի կառավարությունը, իր սկզբունքային համաձայնությունը հայտնելով հայ-ադրբեջանական կոնֆերանս գումարելու վերաբերյալ, միաժամանակ հայտարարել էր, թե Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի հարցերը չեն կարող այդ կոնֆերանսի քննարկման առարկա դառնալ: Ստանալով այս հայտարարությունը, ՀՀ արտգործնախարարը Թիֆլիսի իր դիվանագիտական ներկայացուցչին ուղարկած հոկտեմբերի 28-ի գաղտնի գրությամբ հանձնարարում է «ոչ պաշտոնական և բանավոր հայտնել գնդ. Ռեյին, որ Ադրբեջանի հետ բանակցություններում հայկական կառավարությունը ներկա պահին կուզենար հասնել նրան, որ

ա) **Չաստատվի ամերիկյան գեներալ-նահանգապետություն Շարուր-Նախիջևանում.**

բ) **Դադարեցվի Ադրբեջանի ակտիվ գործողությունները Ջանգեզուրի նկատմամբ.**

գ) **Ստորագրվի տրանզիտային պայմանագիր և մեզ**

Ադրբեջանի տարածքում զանազան նյութերի գնման (իրավունք) ընձեռվի,

դ) **Ադրբեջանում հայ ազգաբնակչության դրությունը բարելավվի և նրանց նկատմամբ բռնությունը դադարեցվի: Հայաստանի սահմաններում հարձակումները դադարեցվեն»¹ (ընդգծումը մերն է - Է. Ջ.):**

Ինչպես տեսնում ենք, Չայաստանի կառավարությանը առավել անհանգստացնողը Շարուր-Նախիջևանը և Ջանգեզուրն են: Եվ դա հասկանալի է. այն բանից հետո, երբ օգոստոսին Լեռնային Ղարաբաղը ժամանակավորապես (մինչև Փարիզի կոնֆերանսի կողմից հարցի վերջնական լուծումը) ճանաչեց Ադրբեջանի գերիշխանությունը², իսկ Շարուր-Նախիջևանն էլ փաստորեն անջատվեց Չայաստանից, Ջանգեզուրը միակ տարածքն էր, որ դեռ կարող էր խանգարել Ադրբեջանի սահմանակցմանը Թուրքիային: Հասկանալի էր նաև, որ շուտով արդեն Ադրբեջանն ամբողջ ուժով նետվելու էր Ջանգեզուրի վրա՝ այդ խնդրի լուծման նպատակով: Թե ե՞րբ և ինչպե՞ս կատարվեց դա, կանդրադառնանք Գողթանում ծավալված իրադարձությունների հետ մեկտեղ, քանի որ դրանք, սերտորեն կապված են միմյանց հետ (անշուշտ, Ջանգեզուրին հպանցիկորեն, քանզի նա դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից): Ինչ վերաբերում է Շարուր-Նախիջևանում չեզոք գոտի ստեղծելու ուղղությամբ Չայաստանի կառավարության հետագա ջանքերին, ապա դրանք բոլորն էլ ապարդյուն անցան: Հասկելն այդ ուղղությամբ այլևս ջանք չգործադրեց, ավելին, արդեն 1920 թ. հունվարին ամերիկացիները սկսեցին հեռանալ Նախիջևանից: Դա նախիջևանցիների մոտ նույնիսկ անհանգստություն առաջացրեց. փետրվարի 3-ին Ջամալինսկին Նախիջևանից Հնդեվրոպական հեռագրաթելով

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 183, թ. 77-78:

2. Օգոստոսի 22-ին Շուշիում Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև ստորագրվեց մի համաձայնագիր, որով վերջինս ժամանակավորապես ճանաչում էր Ադրբեջանի գերիշխանությունը մինչև հարցի վերջնական լուծումը Փարիզի կոնֆերանսում: Դա արվել էր ավելորդ արյունահեղությունից խուսափելու նպատակով, սակայն հետագա դեպքերը ցույց տվեցին, որ դա սխալ էր, քանի որ նախ արյունահեղությունից այդպես էլ չխուսափեցին (1920 թ. մարտյան կոտորածը Շուշիում) և հետո՝ թե մուսավաթական և թե հորհրդային Ադրբեջանը այն մեծապես օգտագործեցին Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իրենց իրավունքը փաստարկելու հարցում:

հարցնում է Հախվերդովին թե. «1. Ամերիկացիներն ի՞նչ պատճառով են հեռանում Նախիջևանից, 2. քաղաքական աշխարհում, առհասարակ, ի՞նչ կա: Հայերը մասնակի հարձակումներ են կատարում սահմանների վրա: Այդ մասին հաղորդված է Հասկելին...»¹:

Կասկածից դուրս է, որ Ջամալինսկուն անհանգստացնողը հայերի կողմից հնարավոր հարձակման վտանգն էր, որը ամերիկացիների հեռանալու և օսմանյան զինվորականների հետ հարաբերությունների սրման պայմաններում կարող էր իրական դառնալ: Վերը նշած հեռախոսային կապի ժամանակ Ջամալինսկին հայտնել էր Հախվերդովին, որ «3. Ձեզ հայտնի անձանց հակաաշխատանքը եթե շարունակվի, ես և ընկերները կդատապարտվենք կործանման: ...**Խալիլ-բեյը իրեն հայտարարեց խմբի գլխավոր և ցանկանում է մոտ օրերս հեղաշրջում առաջ բերել ու կոտորել իմ մոտ աշխատակիցներին**: 4. Դրանք բոլորովին վերջացել է. երկրորդ ամիսն է, որ պաշտոնյաները ռոճիկ չեն ստացել, այդ բանը (ծեռնտու) է Խալիլ-բեյին, և նրա նենգ նպատակներից գաղթականները գլխովին ոչնչանում են»²:

Մենք կանգ չենք առնի Նախիջևանի ադրբեջանական իշխանությունների և Խալիլ-բեյի միջև ծագած հակամարտության վրա³, այլ միայն ուզում ենք արձանագրել, որ հարցը այնքան էր լրջացել, որ Հախվերդովը ստիպված էր շտապ հեռագրել Բաքու՝ իր կառավարությանը (փետրվարի 4-ին), հայտնել Նախիջևանում ստեղծված ճգնաժամային դրության մասին և առաջարկել Խալիլ-փաշայի միջոցով հետ կանչել Խալիլ-բեյին Նախիջևանից⁴:

Հայաստանի կառավարությունն, անշուշտ, տեղյակ էր Նախիջևանում ծայր առած ներքին զգվռոցին, բայց նա չէր պատրաստվում զենքի ուժով վերագրավելու այն: Չեզոք գոտու ստեղծումը և հարցի վերջնական լուծումը Փարիզի կոնֆերանսին թող-

1. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993 թ. N 1-2, էջ 159:

2. Նույն տեղում:

3. 1920 թ. հունվարի 3-ով թվագրված մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ Արալըխի, Վեդիբասարի և Միլիստանի ներկայացուցիչների Նախիջևանում գումարված համագումարում երկրամասը հայտարարվել էր ռազմական դրության մեջ, Խալիլ-բեյը հռչակվել դիկտատոր, իսկ Քերբալայ-խանը տեղակալ քաղաքացիական հարցերի գծով:

4. Տես նույն տեղում, էջ 160:

նելը ամբողջովին բավարարում էր նրան: Ահա ինչու Նախիջևանից ամերիկացիների հեռանալուց հետո Հայաստանի կառավարությունն այնտեղ չեզոք գոտի ստեղծելու ուղղությամբ մի նոր փորձ արեց՝ այս անգամ անգլիացիների օգնությամբ: 1920 թ. հունվարի 30-ին Երևանում գումարվեց Հայաստանի կառավարության արտակարգ նիստ, որին ներկա էր նաև Անդրկովկասում Մեծբրիտանիայի գերագույն կոմիսար Ուորդրոպը: Վարչապետ Խատիսյանը, ներկայացնելով կառավարության առաջ ծառայած խնդիրները, հավաստիացնում էր Ուորդրոպին, որ իր կաբինետը կանգնած է մուսուլմանների հետ խաղաղ համակցության տեսակետի վրա, բայց չի կարող թույլ տալ, որ Ադրբեջանը՝ օգտվելով Հայաստանի խաղաղասիրությունից, ընդարձակ իր տարածքը անվիճելի հայկական շրջանների՝ Ղարաբաղի, Ջանգեզուրի և մյուսների հաշվին: Նա հատկապես Ուորդրոպի ուշադրությունը հրավիրեց Նախիջևանի հարցի վրա և հայտարարեց, որ Հայաստանի համար ցանկալի է այնտեղ անգլիական զենեթալ մահանգապետության ստեղծումը, Երևան-Թավրիզ երկաթգծի բացումը և այլն:

Պատասխանելով վարչապետին, Ուորդրոպը հավաստիացնում էր, թե ինքը լավ է հասկանում Նախիջևանի հարցի լուծման կարևորությունն ու անհրաժեշտությունը և կծեռնարկի բոլոր հնարավոր միջոցներն այդ ուղղությամբ, բայց առանց զինված ուժի դժվար կլինի հեռացնել թուրք զործակալներին և ասկյարներին: Նա անհրաժեշտ էր համարում սպասել մինչև Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի կնքումը, որով լուծում կստանան բոլոր այդ հարցերը, բայց նաև չմոռացավ հայտնել իր տարակուսանքը, թե «**արդյո՞ք զենեթալ Դևին լիազորություն ունեթ հանձնելու Նախիջևանը Հայաստանի կառավարությանը**»¹ (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Սրանով, կարծում ենք, ամեն ինչ է ասված. Ուորդրոպը Նախիջևանի հարցի կարգավորման ուղղությամբ քայլեր չի ձեռնարկելու և չծեռնարկեց էլ: Միակ խոստումը, որ նա փորձեց կյանքի կոչել, դա Երևան-Թավրիզ երկաթգծի բացման հարցն էր, որը սակայն ավարտվեց անհաջող: Փետրվարի 8-ին Ջաֆարովը հայտ-

1. Նույն տեղում, էջ 133:

նում է Երևանի իր դիվանագիտական ներկայացուցչին, թե «միստր Ուորդրոպը խնդրում է աջակցել բանալու Ջուլֆա-Երևան երկաթուղագիծը», որին հետևում է Հախվերդովի հետևյալ պատասխանը. «**Նախքան մեր փոխհարաբերությունների կարգավորումը և սահմանների որոշումը Երևան-Ջուլֆա ճանապարհը բանալը համարում են աննպատակահարմար**: Տնտեսական տեսակետից դա նպաստավոր է միայն Հայաստանին: Մեզ համար ճանապարհի բացումը դեռևս տնտեսական շահ չի ներկայացնում, իսկ քաղաքական շահերը թե Նախիջևանում և թե պարսկական Ադրբեջանում մենք կարող ենք հետապնդել առանց այդ ճանապարհի: Ուորդրոպը գործում է հայերի խնդրով»¹ (ընդգծումը մերն է - Է. Ջ.): Իսկ սահմանների որոշումը վեր էր թե Ուորդրոպի, թե Անդրկովկասում գործող արևմտյան մյուս տերությունների ներկայացուցիչների ուժերից: Դրա վկայությունն էր նաև այն մասնավոր խորհրդակցությունը, որ գումարել էր Ուորդրոպը փետրվարի 23-ին Թիֆլիսի իր բնակարանում կապիտան Գրեյսիի, Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Հախվերդովի, Հայաստանի պառլամենտի անդամ Վ.Փափազյանի և Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լ.Եվանգուլյանի մասնակցությամբ:

Բացելով խորհրդակցությունը, Ուորդրոպն առաջարկեց մտքերի փոխանակություն կատարել և առաջարկություններ անել հայ-ադրբեջանական հարաբերությունները հարթելու և սահմանների վերաբերյալ որևէ ընդունելի լուծում գտնելու համար: Վիճաբանությունները բուռն էին. ադրբեջանցիները առաջարկում էին թե Ջանգեզուրում և թե Նախիջևանում ազգային խորհուրդներ կազմավորել, այդ շրջանների կառավարումը հանձնել նրանց՝ մինչև Փարիզի կոնֆերանսի վերջնական որոշումը, ինչպես նաև այդ վիճելի տարածքներից դուրս բերել թե՛ իրենց գործերին և թե՛ ազիտատորներին: Այլ կերպ ասած, նրանք վիճելի էին համարում Ջանգեզուրն ու Նախիջևանը, իսկ Ղարաբաղը՝ ոչ: Հասկանալի է, որ հայերը սրա հետ չէին համաձայնի և իրենց հերթին առաջարկեցին «պահպանել status quo Ղարաբաղի և Ջանգեզուրի վերաբերմամբ, իսկ Շարուր-Նախիջևանը հանձնել Հայաստանին՝ ինչպես նրա անվիճելի մասը, ծայրահեղ դեպքում

1. Նույն տեղում, էջ 161:

մտցնել այնտեղ դաշնակից ուժերի ժամանակավոր վարչություն»¹:

Երկարատև վեճերը, ինչպես և սպասելի էր, ավարտվեցին անարդյունք: Ադրբեջանցիներն առաջարկեցին հայ-ադրբեջանական սոր կոնֆերանս գումարել, ինչին հայերը համաձայնեցին՝ պայմանով, որ իրենց արած առաջարկությունները ընդունվեն որպես բանակցությունների հիմք: Իսկ Ուորդրոպը բոլորովին չէր միջամտել վիճաբանություններին ու կարծիք չէր արտահայտել, այլ միայն վերջում ասել էր, թե նման հանդիպումները կարող են օգտակար լինել: Այսպես էր փորձում հարթել հայ-ադրբեջանական հարաբերությունները միստր Ուորդրոպը:

* * *

Շարուր-Նախիջևանում ծավալված հուլիս-օգոստոսյան իրադարձությունների ժամանակ, ինչպես արդեն տեսանք, ավերվել և ոչնչացել էին Գողթանի մի շարք գյուղեր: Կանգուն էին մնացել միայն Վերին և Ներքին Ագուլիսները, որոնք հայտնել էին իրենց հպատակությունը Ադրբեջանին, հույսը դրել նրա գթասրտության վրա, ինչպես նաև Լեռնային Գողթանի շուրջ 6 գյուղեր (Բիստ, Տղնա, Ռամիս, Նասրվազ, Փառակա և Ալահի), որոնք թիկունքը տված Կապուտջուղի բարձրաբերձ ու դժվարանցելի լեռներին, երեք կողմից շրջապատված, կենաց մահու կռիվ էին մղում թշնամական հորդանների դեմ՝ զուրկ սննդամթերքից, ռազմամթերքից և այլ անհրաժեշտ իրերից: «Գողթանում Ագուլիսներն ու Չանանաքը (Տղնա) անվնաս են, - «Աշխատավոր»-ի թղթակցին ասել է օգոստոսին Նախիջևան այցելած Ամերիկյան նպաստամատույցի ներկայացուցիչ դոկտոր Ըջըրը: Տանակերտը, Ազան ավերվել են: Լեռնային գյուղերը պաշարված են թաթար հրոսակախմբերի կողմից: Ազատված փախստականները լեռներում սովամահ են լինում»²:

Քաջալ Ղազարի խմբի ժամանումը Գողթան որոշ չափով հուսադրեց լեռնականներին և այնտեղ ապաստան գտած գաղթականներին, բայց փրկել նրանց մղձավանջից չէր կարող: Ղազարի

1. Նույն տեղում, էջ 134:

2. «Աշխատավոր», 4 հոկտեմբերի 1919թ.:

և Գյուլնազարյանի գլխավորած ուժերի թիվը հասնում էր 7-8 հարյուրի՝ երկու թնդանոթով և վեց զնդացրով: Ինքնապաշտպանության համար սա էլ քիչ չէր, եթե նկատի առնենք այդ գյուղերի բնական անառիկ դիրքը, ինչ խոսք, սննդամթերքի և զինամթերքի պաշարների առկայության դեպքում:

Աշնան սկզբին՝ սեպտեմբեր-հոկտեմբերին զավառում դրությունը համեմատաբար հանգիստ էր, բայց նոյեմբերին՝ Ջանգեզուրի վրա Ադրբեջանի կատարած մեծ արշավանքի ծախողումից հետո, Գողթանում նորից հարձակումներ սկսվեցին հայկական գյուղերի վրա: Սակայն մինչև դրանց անցնելը, հակիրճ անդրադառնանք Ջանգեզուրի վրա Ադրբեջանի նոյեմբերյան արշավանքին:

Ջանգեզուրի վրա մանր հարձակումներ միշտ էլ կատարվել են 1919 թ. թե՛ գարնան, թե՛ ամռան ամիսներին, որոնք, որպես կանոն, արժանի հակահարված են ստացել զանգեզուրցիների կողմից: Դրանցից մեկին՝ Ղափանի ուղղությամբ հուլիսի սկզբին ձեռնարկած հարձակմանը արդեն ծանոթացել ենք և տեսել, թե Ղափանցիները սպա թորոսյանի գլխավորությամբ ինչպիսի ջախջախիչ հարված հասցրեցին թշնամուն Ղարաբաբայի ճակատամարտում: Թվում էր, թե այդ ծանր պարտությունից հետո ադրբեջանցիները այլևս չեն համարձակվի ոտք դնել Ջանգեզուրում և մի քանի ամիս իսկապես դրությունը հանգիստ էր: Սակայն արդեն աշնան սկզբին սկսեցին լուրեր պտտվել դեպի Ջանգեզուր Ադրբեջանում նախապատրաստվող մեծ հարձակման մասին: Ինչպես արդեն վերը նշեցինք, դա սպասելի էր. Ղարաբաղից և Շարուր-Նախիջևանից հետո հերթը Ջանգեզուրին էր: Ժամանակավոր հաջողություններով արբեցած Ադրբեջանը պատրաստվում էր մի հարվածով ընկճել նաև Ջանգեզուրը և դրանով իսկ ճանապարհ բացել դեպի Նախիջևան ու Թուրքիա: Ըստ որում, դա այնքան բացահայտ էր կատարվում, որ նկատելի էր անգամ առանց հատուկ հետախուզության: Սեպտեմբերի 22-ին Երևան՝ ԳՅ արտգործնախարարին ուղարկած գաղտնի գրության մեջ Բաքվում Զայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը գրում է, թե «վերջին ժամանակներս միսսիայիս տեղեկատու բաժանմունքի՝ Չեզ և Ջորական նախարարին ուղարկած մի շարք կարևոր և ու-

շաղրության արժանի հաղորդագրություններից պարզ նկատելի է, որ Ադրբեջանի կառավարությունը տենդագին պատրաստություններ է տեսնում Ջանգեզուրի շրջանի հայութեանն ևս զենքի ուժով իւր իշխանութեան ենթարկելու և այդպիսով պետութեան սահմանները ընդարձակելով հասցնել մի կողմից Ջուլֆայի վրայով Պարսկաստանին և ապահովել Բաքու-Ջուլֆա երկաթուղու գծի կառուցման գործը, իսկ միւս կողմից Նախիջևանի և Սուրմալուի վրայով սահմանակցել Տաճկաստանին և այդպիսով խանգարել Զայաստանի անկախութեան իրագործման»¹:

Իհարկե, Տ. Բեկզադյանը հայտնություն չէր անում Ադրբեջանի կողմից հետապնդվող այդ երկու խնդիրները մատնանշելով: Զայաստանի ղեկավարությամբ դա վաղուց հայտնի էր: Զայաստանում չէր նաև այն միտքը, որ «Ադրբեջանը՝ խրախուսուած Նախիջևանի, Շարուրի և Բ. Վեդիի վերջին ընդհարումների իրանց համար նպաստավոր հետևանքներից և միւս կողմից Դաշնակից պետութիւնների ներկայացուցիչների բարեացակամ և խնամոտ վերաբերմունքից, իւր նուաճողական գործառնութիւնների մեջ առավել սանձարձակ է դարձել և ստեպ չի թագցնում հրապարակավ արտահայտելու»: Այլ է խնդիրը, երբ խոսում է այն մասին, որ «գաղտնի ռազմական նախապատրաստութիւնների հետ զուգընթացաբար վերջին ժամանակներս համարեա ամեն օր Բաքվում հրատարակվող ռուսերեն և թաթարերեն «Ադրբեջան» թերթերում լույս են տեսնում Երևանի, Նախիջևանի, Շարուրի, Օրդուբադի, Սուրմալուի շրջաններում բնակվող թուրքերի կողմից յիշատակագրեր, յայտարարութիւններ, դիմումներ թե Ադրբեջանի կառավարութեան և թե Դաշնակից պետութիւնների ներկայացուցիչներին, որոնցով աշխատում են վարկաբեկել Զայաստանի կառավարութիւնը ու նորա վարչական պաշտոնեութիւնը՝ նկարագրելով բազմատեսակ բռնութիւնների, հալածանքի և կողոպուտի դեպքեր ուղղուած թուրքերի դեմ» և հետևություն անում, թե ամբողջ աղմուկը նպատակ ունի «հասարակական տրամադրութիւն ստեղծել և, եթե մոտ ապագայում այս կամ այն հայկական շրջանի դեմ յարձակումներ սկսելու լինեն՝ հիմնավորել ու արդարացնել կարողանան իբրև թուրք ժողովրդի արդար զայրույթի ար-

1. ԳՅ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50 | մաս, թ. 135:

դիւնք»¹:

Շուրջ երկու ամիս նախապատրաստվելուց հետո, Ադրբեջանի վերջո գործի անցավ: Նրան թվում էր, թե բավական է, որ ադրբեջանական մեծ բանակը մոտենա Ձանգեզուրի սահմաններին և վերջինս կհետևի Ղարաբաղի օրինակին: Դուրսոր Սուլթանովը, որն իրեն հորջորջում էր որպես Ղարաբաղի և Ձանգեզուրի նահանգապետ, հոկտեմբերի վերջին ադրբեջանական կառավարության անունից նույնիսկ այդ ոգով մի կոչ ուղղեց զանգեզուրցիներին, որը սակայն մնաց անպատասխան:

Նոյեմբերի սկզբին գեներալ Ադա-օղլը Շիխլինսկու ավելի քան 6 հազարանոց բանակը արևելքից, իսկ խալիլ-բեյի Նախիջևանյան ուժերը (շուրջ 3 հազար) արևմուտքից, փորձեցին աքցանի մեջ առնել Ձանգեզուրը: Սկիզբը նրանց համար կարծես թե հաջող էր. Շիխլինսկու բանակը կարողացավ որոշ չափով խորանալ դեպի Գորիս և գրավել մի քանի գյուղեր: Սակայն դա կարճ տևեց. օգնություն ստանալով Ղափանից և Սիսիանից, Գորիսը պաշտպանող ռազմական ուժերը գնդ. Արսեն Շահմազյանի գլխավորությամբ հակահարձակման անցան, շուրջ մեկ շաբաթ տևած արյունահեղ կռիվներում ջախջախեցին թշնամուն և հարկադրեցին խուճապահար փախչել Ձանգեզուրից՝ մարտի դաշտում թողնելով մի քանի հարյուր սպանվածներ, մեծաքանակ զենք ու զինամթերք: Դարալագյազ-Ձանգեզուրի սահմանագլխին հաջողվեց հետ շարտել նաև խալիլ-բեյի գլխավորած նախիջևանյան ուժերին:

Նոյեմբերյան այս հաղթանակը Ձանգեզուրի հերոսական պատմության ամենափայլուն դրվագներից է: Նրա նշանակությունը շատ մեծ է, քանի որ ադրբեջանական բանակի ջախջախումը ոչ միայն փրկեց Ձանգեզուրը Ադրբեջանի ճիրաններից, այլև խիստ բարերար ազդեցություն ունեցավ հանրապետության և հայ ժողովրդի բարոյահոգեբանական վիճակի վրա ընդհանրապես: Անկումային տրամադրություններն ու հոռետեսությունը տեղի տվեցին: Դժվար է անգամ գուշակել, թե ինչ կլինեի Հայաստանի հանրապետության հետ, եթե Ձանգեզուրը ևս ընկրկեր թշնամու առաջ և ընդուներ Ադրբեջանի գերիշխանությունը: Ամենայն հավանականությամբ լկտիացած իսլամական հորդաները կշարժվեին Երևանի վրա: Դա տեղի չունեցավ Ձանգեզուրի

1. Նույն տեղում:

խրոխտ ու անկոտրում կեցվածքի շնորհիվ: Ավելին, Ուսուրբեկովը, որ սկզբում հրաժարվում էր հարցի խաղաղ կարգավորման նպատակով խատիսյանի հետ հանդիպելու Ռեյի առաջարկությունից ու հոխորտալից հայտարարություններ անում, թե Ձանգեզուրում տեղի ունեցողը Ադրբեջանի ներքին գործն է, պարտության լուրն առնելուն պես փափկեց, իսկույն ուղևորվեց Թիֆլիս և նոյեմբերի 23-ին խատիսյանի հետ ստորագրեց 5 հոդված պարունակող մի համաձայնագիր, որով կողմերը պարտավորվում էին «դադարեցնել ընդհարումները...», բոլոր վիճելի հարցերը մեջն առնելով և սահմանների խնդիրը, լուծել խաղաղ համաձայնությունների միջոցով» մինչև առաջիկայում գումարվելիք հայադրբեջանական կոնֆերանսի որոշումը և այլն¹:

Համաձայնագիրը ստորագրվեց, բայց չէր անցել և մի շաբաթ, երբ այն խախտվեց: Նոյեմբերի 29-ին Շարուր-Նախիջևանի զինված ուժերը՝ «ավելի քան 2000 հետևակ, 500 հեծյալ, 2 թնդանոթով և 8 գնդացրով, լայն ճակատով հարձակման անցան Դարալագյազի հայկական գյուղերի՝ Ռինդի, Արփայի, Խաչիկի և Այնաձորի վրա»², բայց համառ կռիվների արդյունքում հետ շարտվեցին:

Դժվար չէ հասկանալ, որ կոնֆերանսից առաջ Ադրբեջանը ձգտում էր ընդլայնել իր կողմից վերահսկվող տարածքները: Բացի այդ, Դարալագյազի այդ հատվածին տիրանալով, Ադրբեջանը հնարավորություն կստանար կտրել Ձանգեզուրը թիկունքից, ամբողջովին շրջափակել ու հարկադրել զինաթափվելու և ընդունելու իր գերիշխանությունը: Ի դեպ, Ձանգեզուրի զինաթափության վրա Ուսուրբեկովը համառորեն պնդում էր դրանից ընդամենը 9 օր առաջ՝ նոյեմբերի 20-ին, գնդ. Ռեյի ներկայությամբ խատիսյանի հետ վարած բանակցություններում: Ձանգեզուրը համարելով Ադրբեջանի գերիշխանությանը ենթակա տարածք, նա խատիսյանից պահանջում էր դուրս բերել այնտեղից զինվորական կազմավորումները, օգնել զինաթափվելու ազգաբնակչությանը, բացելու ճանապարհները, ետ վերադարձնելու մուսուլման գաղթականներին: Իսկ խատիսյանը, չզիտես ինչու ոչինչ չասելով գերիշխանության մասին, լոկ առարկում էր նրանով, թե Հայաստանը Ձանգեզուրում ռազմական կազմավորումներ չունի,

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 190, թ. 36:

2. Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 183, թ. 110:

իսկ բնակչությանը զինաթափվելու հրաման չի կարող տալ, «քանի դեռ գավառը շրջապատված է թշնամական պայմաններով»՝ մատնացույց անելով «Ղարաբաղից հարավ գտնվող քրդական ցեղերին, որոնք խիստ թշնամաբար են տրամադրված»¹:

Տարօրինակ է, բայց փաստ, որ անհաջողության մատնվելով՝ Նախիջևանում ամերիկյան զեներալ-նահանգապետությունը ստեղծելու հարցում և չկարողանալով կանխել հայ-ադրբեջանական ընդհարումները, Հասկելը հանգել էր այն մտքին, որ խաղաղություն հաստատելու համար անհրաժեշտ է ժամանակավոր դեմարկացիոն գիծ հաստատել կողմերի միջև: «Երեկ հանդիպել եմ Հասկելին, - հաղորդում է Եվանգուլյանը դեկտեմբերի 7-ի հեռագրում, - որը շարունակում է մնալ այն տեսակետին, որ **Ձանգեզուրը մտնում է Ադրբեջանի ազդեցության գոտի, ինչպես որ Շարուր-Նախիջևանը՝ Հայաստանի**, ըստ այդմ մատնանշում է դեմարկացիոն գիծը, որն իբր հաստատել են անգլիացիները: Իմ վճռական հայտարարությանը, որ մեզ ոչ մի դեմարկացիոն գիծ հայտնի չէ, **Հասկելը փաստական դրության վրա հիմնված նոր առաջարկ արեց, այն է. Ձանգեզուրը մտնի Հայաստանի սահմանը, իսկ Նախիջևանը՝ Ադրբեջանի:** Չունենալով այդ մասին Ձեր լիազորությունները, ես պատասխանեցի, որ այդ առաջարկության մասին կհաղորդեմ կառավարությանը»² (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Հայտնի չէ, Հասկելն իր այս կարծիքը հայտնե՞լ է Ադրբեջանի կառավարությանը և վերջինս համաձայնե՞լ է դրան, թե ոչ: Բայց ահա Հայաստանի կառավարությունը համաձայնել այս տարբերակներից որևէ մեկին, թեկուզև ժամանակավոր, չէր կարող: Դա Հայաստանի Հանրապետության մահը կլիներ. Ձանգեզուրը այն միջնաբերդն էր, որ բաժանում էր Ադրբեջանը Նախիջևանից և որին դեմ առնելով ջարդուփշուր էին լինում Ադրբեջանի գրոհները: Հրաժարվել Ձանգեզուրից, դա նաև դավաճանություն կլիներ մարտի դաշտում հենց նոր հաղթանակ տարած զանգեզուրցու հանդեպ: Բացի այդ, կորցնելով Ձանգեզուրը, Հայաստանը միաժամանակ տեր չէր դառնա Նախիջևանին, մինչդեռ Ադրբեջանը հնարավորություն կստանար իր շոշափուկները ավելի ու ավելի հեռուն տարածել, սահմանակցել Նախիջևանին և

1. Տես նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 352, ք. 15-17:

2. Նույն տեղում, գ. 50, II մաս, ք. 370:

հակահայկական գործունեություն ծավալել այնտեղ: Ասել, թե Հասկելը և նրա շրջապատը այդ ամենը չէին գիտակցում, ճիշտ չէր լինի: Հայ-ադրբեջանական համաձայնագրի ստորագրումից երկու օր առաջ՝ նոյեմբերի 21-ին Վաչինգտոն պետական դեպարտամենտ ուղարկված մի հեռագրում ասված է. «Թուրք-թաթարական վերջին փորձերը՝ զավթել Ձանգեզուրը, մեծապես պայմանավորված է այն փաստով, որ անհանգստություն պատճառող հայկական այս շրջանը սեպված է Բաքվի և Նախիջևանի ու Թուրքիայի միջև»¹:

Եթե նկատի առնենք Նախիջևանի խիստ կարևոր աշխարհագրական դիրքը, ապա պետք է ընդունենք, որ Հասկելի առաջ քաշած երկրորդ տարբերակը ևս (Ձանգեզուրը՝ Հայաստանին, Նախիջևանը՝ Ադրբեջանին) անընդունելի էր Հայաստանի համար: «Ամենավճռական ձևով, առանց որևէ տատանման հայտարարեք Հասկելին, որ **ներկա պահին միակ ընդունելի վճիռը և Հայաստանի կողմից հնարավոր զիջումը այն է, որ Ձանգեզուրը ղեկավարվի Ազգային խորհրդով, իսկ Շարուր-Նախիջևանը՝ ամերիկյան նահանգապետով**, - ասված է Խատիսյանի դեկտեմբերի 8-ի պատասխան հեռագրում: Հասկելի առաջարկած կոմբինացիան առաջ կբերի ժողովրդի դժգոհությունը: ...Կրկնում եմ, հայկական կառավարությունը ոչ մի դեպքում չի կարող այլևս որևէ զիջում անել, առավել ևս, որ մեր ռազմական դրությունը վերջին ժամանակներս լավացել է: **Դեմարկացիոն գիծ կարող է լինել միմիայն Ձաբուղի գիծը**²: Ղարաբաղի վերաբերյալ Ադրբեջանը պետք է կատարափ Ազգային խորհրդի հետ (կնքած) համաձայնագրի կետերը»³ (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

Սրա հետ մեկտեղ Հայաստանի կառավարությունը Եվանգուլյանի միջոցով Հասկելին տեղեկացնում է Ադրբեջանի երկակի խաղի մասին Նախիջևանի հարցում: Մասնավորապես հայտնվում է դեկտեմբերի 5-ին Երևանում ձերբակալված ավստրիացի սպա Մարոկուտիի մասին, որը վրացական անձնագրով անցնում էր Նախիջևան՝ տեղի ղեկավարության համար տանելով մեծ չափի գումարներ և Շարուրի ու Նախիջևանի շրջանների բազմա-

1. Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ. Եր., 1999, էջ 76:

2. Ձաբուղի ծորը Ձանգեզուրը բաժանում է Ղարաբաղից:

3. Գ. Գալոյան, ֆ. 200, ց. 1, գ. 50, II մաս, ք. 371:

թիվ քարտեզներ: Հեռագրի վերջում ասված է, թե պետք է «կոնֆի-
դենցիալ կերպով հայտնել գնդ. Հասկելին գործի էությունը՝ մատ-
նանշելով, որ չնայած համաձայնագրին, Ադրբեջանը դեռևս շա-
րունակում է աջակցել Նախիջևանի ապստամբներին և վարել ոչ
անկեղծ քաղաքականություն Հայաստանի նկատմամբ»¹: Իսկ
դեկտեմբերի 18-ին անմիջականորեն Հասկելին հասցեագրած
հեռագրում խատիսյանը ներկայացնում է բրիտանական հրամա-
նատարության կողմից Նախիջևանի երկրամասը Հայաստանին
հանձնելու, թուրք-ադրբեջանական գործակալների հրահրանքով
այնտեղ ծագած ապստամբության և ամերիկյան գեներալ-նա-
հանգապետություն հաստատելու վերաբերյալ կայացած համա-
ձայնության մասին, որի հետևանքով Հայաստանը դադարեցրեց
ռազմական գործողությունները Նախիջևանի դեմ, մինչդեռ Նա-
խիջևանը դարձյալ Բաքվի հրահրանքով, մերժեց ճանաչել ամե-
րիկյան նահանգապետի իշխանությունը: Հասկելի ուշադրությու-
նը հրավիրելով Ադրբեջանի կառավարության մի քանի գաղտնա-
գերծված հեռագրերի վրա, որոնցում Շարուրը և Նախիջևանը
հռչակված են որպես Ադրբեջանական տարածք, խատիսյանը
վերջում ավելացնում է. «Հայաստանի կառավարությունը՝ պա-
տասխանատու լինելով իր պառլամենտի և ժողովրդի առաջ, չի
կարող անուշադրության մատնել Ադրբեջանի կողմից Հայաստա-
նի հանրապետության կենսական շահերի և իրավունքների
նմանօրինակ բացահայտ խախտումը: Պատասխանատվության
խորը գիտակցումը հարկադրում է ինձ նորից իմ կառավարության
անունից խնդրել Ձեզ Շարուրի և Նախիջևանի շրջաններում Ամե-
րիկյան գեներալ-նահանգապետություն հաստատելու վերաբեր-
յալ Ձեր կողմից նախագծված և երկու հանրապետությունների
կողմից ընդունված պլանի շուտափույթ իրագործման մասին: **Հե-
տագա հապաղումը՝ սուր կերպով սպառնալով Հայաստանի
շահերին, կստիպի Հայաստանի կառավարությանը իր տրա-
մադրության տակ եղած բոլոր միջոցներով և ընդունելի եղա-
նակներով ձեռնարկել իր շահերի և իրավունքների պաշտ-
պանությանը Շարուրի և Նախիջևանի խռովարար շրջաննե-
րում, որոնք Ադրբեջանի կողմից գաղտնի հրահրանքների և
խարդավանքների ազդեցության տակ, հրաժարվում են ըն-**

1. Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 196, թ. 95:

**դունել նշված շրջաններում Ամերիկյան գեներալ-նահանգա-
պետություն հաստատելու վերաբերյալ գոյություն ունեցող
համաձայնությունը»¹ (ընդգծումը մերն է - է. Ձ.):**

Ինչ խոսք, որ Ամերիկյան գեներալ-նահանգապետության
հաստատումը ոչ միայն ինչ-որ չափով կմեղմեր հայ-ադրբեջանա-
կան սրված հարաբերությունները ընդհանրապես, այլև բարերար
կերպով կանդրադառնար բուն Նախիջևանում ազգամիջյան հա-
րաբերությունների վրա: Բայց բանն էլ հենց այն է, որ ստեղծված
պայմաններում ոչ Հասկելն էր կարողանում ազդել Ադրբեջանի
վրա և ոչ էլ Հայաստանն էր ի վիճակի գեների ուժով ենթարկել Շա-
րուր-Նախիջևանը: Սպասելիքներ չկար նաև դեկտեմբերի 14-ին
Բաքվում գումարված հայ-ադրբեջանական կոնֆերանսից, որին
մենք չենք անդրադառնում, քանի որ ըստ էության նա ոչինչ չա-
րեց, բացի կոնֆերանսը թիֆլիս փոխադրելու, և երեք հանրապե-
տությունների միասնական կոնֆերանս գումարելու մասին որո-
շում կայացնելուց (դեկտ. 21-ին): Բայց ահա դեկտեմբերյան այդ
նույն օրերին Գողթանում ծավալված արյունալի իրադարձու-
թյուններին, որի հետևանքով ոչնչացան Վերին և Ներքին Ազուլիս-
ները, չանրադառնալ չենք կարող. նախ, որովհետև դրանք ինչ-որ
չափով կապ ունեն Ձանգեզուրի դեպքերի հետ, և հետո, մի ավե-
լորդ անգամ ապացուցում են, որ Նախիջևանի ադրբեջանական
իշխանությունների նպատակը ոչ թե «ազատ և անկախ ապրելն
էր», ինչպես նրանք փորձում էին համոզել Հասկելին, այլ տարա-
ծաշրջանը հայերից մաքրելը: Բացի դրանից, այդ բարբարոսա-
կան իրադարձությունները ծավալվել էին Շարուր-Նախիջևանում
ամերիկյան ներկայացուցչության հաստատումից հետո, ինչը մի
ավելորդ անգամ վկայում է, որ գնդ. Դեյլին այդտեղ հեղինակու-
թյուն և ազդեցություն չունեի և տեղական իշխանությունների վրա
ներգործել չէր կարող:

Դեռ նոյեմբերի 12-ին Օրդուբադի մահմեդականները մեծ հար-
ձակում կատարեցին Բիստի, 25-ին Ալահիի, Մեսրոպավանի
(Նասրվազ), Ռամիսի ուղղությամբ: Եիշտ է, այս հարձակումները
հաջողությամբ հետ մղվեցին, բայց դրությունը հայկական գյուղե-
րում գնալով ծանրանում էր, իսկ լեռնային Գողթանը Ձանգեզուրի
հետ կապող միակ ճանապարհը, այն էլ խիստ դժվարանցելի,

1. Նույն տեղում. գ. 183, թ. 127:

փակվում էր կամ խոր ծյան, կամ էլ Օխչու և Գեղվաձորի ավազա-կաբարո թուրք գյուղացիության թշնամական գործողությունների պատճառով: Գտնվելով Մեղրի-Ղափան խճուղու վրա, շուրջ 5000-6000 բնակչությամբ այս գյուղերը մեծ վտանգ էին նաև Ղափանի հայկական գյուղերի համար. հաճախակի էին դարձել անասունների ու նաև առանձին մարդկանց անհայտանալը: Այս երկու գյուղախմբերը նաև չէին ճանաչում Ձանգեզուրի ազգային խորհրդի իշխանությունը ու չէին ենթարկվում նրան: Նախիջևանից մեծ թվով գաղտնի գործակալներ ու զինվորականներ էին թափանցել այստեղ, որոնք մարզում ու պատրաստում էին բնակչությանը: Նոյեմբերի 2-ին սրանք հայտարարեցին, որ չեն ճանաչում Ձանգեզուրի ազգային խորհրդին և ենթարկվում են միայն Ադրբեջանին: Հասկանալի է, որ նման վիճակը հանդուրժել չէր կարելի, և Ղափանի հրամանատարությունը որոշեց մաքրել այդ շրջանը թշնամական տարրերից: Դրանում շահագրգռված էին նաև գողթանցիները և առաջին քայլը հենց նրանք կատարեցին. նոյեմբերի 18-ին Գողթանից շուրջ 200 հոգանոց մի ջոկատ անցնելով Կապուտջուղը, հանկարծակի հարձակվում է Օխչու ձորի թուրք գյուղերի վրա (Օխչի, Շաբադին, Փիրդովդան, Արալըխ և այլն) և քշում նրանց¹: Այս հաջողության շնորհիվ վերականգնվում է կապը Գողթանի և Ղափանի միջև: Բայց դեռ մնում էր Գեղվաձորը իր 7-8 թուրքական գյուղերով, ավելի ավազակաբարո ու թշնամական: Հենց սրանք էին կազմակերպել 1918 թ. օսմանյան արշավանքի հետևանքով Ձանգեզուր անցած գողթանցի անգեն գաղթականության սպանողը, որին զոհ էին գնացել շուրջ 2000 մարդ: Այնպես որ ղափանցիների սրտերում կար նաև վրիժառության տենչը: Դեկտեմբերի 1-ի լուսաբացին Գ. Նժդեհի զլխավորած վաշտերը անցան հարձակման և շուրջ մեկ շաբաթ տևած կռիվներից հետո մաքրեցին Գեղվաձորը²:

Ավելորդ չենք համարում մատնանշելու, որ այս երկու օպերացիաների դեպքում էլ նպատակ էր դրված ոչ թե այդ անհնազանդ թուրքական գյուղերի բնաջնջումը, այլ մաքրումը: Դրա համար էլ նրանք շատ քիչ կորուստներ էին տվել և համարյա անվնաս անցել Նախիջևանի տարածք: Մինչդեռ Ադրբեջանը մի այնպիսի աղ-

1. Տես Վ.Գևորգեան, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Եր., 1991, էջ 36:

2. Նույն տեղում, էջ 40:

մուկ բարձրացրեց այս դեպքերի կապակցությամբ, որ նույնիսկ Հասկելին և նրա գործընկերներին տրամադրեց Հայաստանի դեմ: Դեկտեմբերի 9-ին ՀՀ վարչապետին ուղղած հեռագրում երևանում Հասկելի ներկայացուցիչ Տելֆորֆը հայտնում է, որ ստացել է գնդ. Դեյլիի գրությունը Նախիջևանից, որում տեղեկացվում է, որ իրեն են ներկայացել Նախիջևանի շրջանի թաթարների ներկայացուցիչները և հայտնել, թե «Ձանգեզուրի շրջանի հայերը հարձակումներ են գործում թաթարական գյուղերի վրա՝ խախտելով Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների կազմած պայմանագիրը: ...Նրանք նաև ասել են, որ եթե հայերը չդադարեցնեն ռազմական գործողությունը Ձանգեզուրում, ապա հնարավոր չի լինի հետ պահել թաթարներին վրեժխնդրությունից և հայերի վրա հարձակումներից»¹: Հայտնելով գնդ. Դեյլիի գրության բովանդակությունը, Տելֆորդը ցանկություն է հայտնում, որ Հայաստանի կառավարությունը անհապաղ միջոցներ ձեռնարկի հետագա զարգացումները կանխելու համար:

Այդ նույն օրերին Հասկելի պահանջով գնդ. Դեյլին Նախիջևանից անցնում է Թիֆլիս: Երևանում նա հանդիպում է ՀՀ արտգործնախարարին և հայտնում այն զրգռված տրամադրությունների մասին, որ առաջացել էր Նախիջևանի մուսուլմանների մոտ «հայերի կողմից Սիսիանի շրջանում թաթարական գյուղերի ավերածության կապակցությամբ»: Նա նաև զգուշացրել էր, որ «հնարավոր է Նախիջևանի շրջանում մնացած հայերի կոտորած»: Սակայն Հայաստանի կառավարությունը՝ հենվելով Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Հախվերդովի գաղտնի հեռագրերի ու գրությունների վրա, որոնք, ինչպես արդեն նշել ենք, Հայաստանի հակահետախուզությունը կարողանում էր գաղտնազերծել, չէր հավատում այդ լուրերին: Դեկտեմբերի 12-ին Արտգործնախարարության զլխավոր քարտուղար Տեր-Հակոբյանը Թիֆլիս՝ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լ.Եվանգուլյանին հեռագրում է, թե Նախիջևանում ամենուրեք հանգիստ է, հայերի դեմ ելույթներ չեն սպասվում և խնդրում այդ մասին տեղյակ պահել գնդ. Հասկելին և գնդ. Դեյլիին²: Այդ նույն օրը Եվանգուլյանին ընդարձակ հեռագիր (8 կետից բաղկացած) է ուղարկում Ալ. Խատիսյանը, Ձանգեզուրի

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, II մաս, ք. 375:

2. Տես նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 183, ք. 120:

իրադարձությունների շուրջ Ադրբեջանի բարձրագրած աղմուկի կապակցությամբ հանձնարարում տեղեկացնել Հասկելին, որ Հայաստանը Ձանգեզուրում կանոնավոր զորք չի ունեցել և այժմ էլ չունի, որ իր կառավարությունը անկեղծորեն կողմնակից է նույնքերի 23-ի համաձայնագրի պահպանման, իսկ ինքը պաշտոնական տեղեկություններ չունի այնտեղ կատարվող իրադարձությունների մասին, հարցում է արել և լուրերի հաստատման դեպքում մեղավորները կպատժվեն ու հայտնում իր համոզմունքը, որ բոլոր այդ ընդհարումները վերջ կգտնեն այն դեպքում, եթե Նախիջևանում իրապես հաստատվի ամերիկյան նահանգապետություն, իսկ Ադրբեջանն էլ հրաժարվի Ձանգեզուրի նկատմամբ ոտնձգություններից¹:

Հարկ ենք համարում նշել, որ Նախիջևանի մուսուլմանների կողմից հավանական վրեժխնդրության մասին Դեյլիի մտավախության նկատմամբ Հայաստանի կառավարության վերը նշած դիրքորոշման պատճառներից մեկն էլ այն էր, որ նա կարծում էր, թե քանի որ Նախիջևանի շրջանում մնացած 1-2 հայկական գյուղերը, իսկ Գողթանում Վերին և Ներքին Ազուլիսները արդեն հայտնել էին իրենց հպատակությունը Նախիջևանի իշխանություններին, ուրեմն նրանց նկատմամբ թշնամություն չի հրահրվի: Այդպես էին մտածում նաև իրենք՝ ազուլեցիները, որոնք 1918 թ. օսմանյան ներխուժման ժամանակ հայտնելով հնազանդություն, փրկվել էին հալածանքներից: Սակայն այս անգամ իրականությունը բոլորովին այլ դուրս եկավ. հենց Նախիջևանի իշխանություններն էլ կազմակերպեցին Ազուլիսների կոտորածը ընդամենը մի քանի օր հետո:

Ժամանակի մամուլում ու հուշագրություններում բավականաչափ լուսաբանված են այդ իրադարձությունները, ցույց է տրված, թե ինչպես դեկտեմբերի 18-ի առավոտյան վայրենի ամբոխը հանկարծակի ներխուժեց Ներքին Ազուլիս ու սկսեց թալանել ու կոտորել անզեն ժողովրդին: Այդ օրը զոհվեցին շուրջ 400 հոգի՝ բոլոր նրանք ովքեր փախչել չկարողացան, իսկ ովքեր կարողացան, խուճապահար բռնեցին Վերին Ազուլիսի ճանապարհը: Բնութագրական մի փաստ. երբ փախստականները հասնում են Վերին Ազուլիս, ոստիկանները մի քանի ժամ դարպասները չեն

1. Տես նույն տեղում, գ. 178, ք. 170:

բացում (Վերին Ազուլիսը պարսպապատ էր) մինչև գալիս է ոստիկանապետը և կարգադրում նախ բոլորին խուզարկել և նոր թողնել ներս: Ձենքի պատրվակով կատարված խուզարկությունը վեր է ածվում փողի, թանկարժեք իրերի թալանի¹:

Ներքին Ազուլիսի ողբերգությունը խիստ անհանգստացրեց Վերին Ազուլիսի հայերին, որոնք իսկույն դիմեցին Օրդուբադի իշխանություններին և շրջանի կոմիսար, օսմանյան սպա Էդիֆ-բեյին՝ խնդրելով պաշտպանություն: Վերջինս Ազուլիս եկավ 20 ասկյարների ուղեկցությամբ և արժանացավ հայերի խանդավառ ընդունելությանը: Էդիֆ-բեյը խոստացավ Նախիջևանից զորք բերել տալ և պաշտպանել հայերին: Դեպքերի սկանառես, Ազուլիսի հաշտարար դատավոր Հով. Տեր-Անտոնյանը² վկայում է, որ Ազուլիս գալու նույն օրը Էդիֆ-բեյը այդ խնդրով դիմել է Նախիջևանում գտնվող Խալիլ-բեյին, բայց վերջինս պատասխանել է, թե «Նախիջևանում անիշխանություն է և ինքը չի կարող զորք ուղարկել»: Սակայն «Էդիֆ-բեյը հանգստացրեց հայերին, որ ինքը Բայազեդից տաճիկ զորք բերել կտա, իսկ հակառակ դեպքում խոստացավ իր իսկ միջոցներով ազգաբնակչությանը առաջնորդել մինչև սահմանագլուխ»³:

Ջարմանալի է, որ Հ. Տեր-Անտոնյանը Էդիֆ-բեյի վարքագծի մեջ ոչ մի կասկածելի բան չի տեսնում: Մինչդեռ պարզից էլ պարզ է, որ եթե Էդիֆ-բեյը ցանկանար փրկել Ազուլիսի հայերին, ապա նա դա կաներ հեշտությամբ: Նախ տեղական պաշտոնյաները նրան անվերապահորեն ենթարկվում էին (այդ թվում և ոստիկանությունը) և հետո, 20 ոստիկանները քիչ չէին այդ խնդիրը իրականացնելու համար: Վերջապես 6 օրը (դեկտեմբերի 18-24-ը) քիչ ժամանակամիջոց չէր կազմակերպելու հայերի զաղթը դեպի լեռնային հայկական գյուղերը: Բայց դրա փոխարեն հանգստացնում է հայերին, իսկ հետո թողնում անպաշտպան՝ զազազած ամբոխի դեմ: «Դեկտեմբեր 24-ի գիշերը, - գրում է Հ. Հախնազարյանը, - երբ թուրք զինված ամբոխը մեկը մյուսի ետևից կողոպտում և հրդեհում է ավանի տները և մոտենում կենտրոնական թաղամասերի տներին՝ այդտեղ հավաքված ժողովրդի վիճակը շատ վտանգած է լինում: Կատաղած ամբոխը սպառնում է յարձակել այդտեղ հաւաքւած անզեն ժողովրդի վրայ: Այդ ժամանակ Էդիֆ-

1. Տես «Հառաջ», 3 փետրվարի 1920 թ.:

2. «Հառաջ»-ում այս ազգանունը ներկայացված է Տեր-Հակոբյան ձևով:

3. «Հառաջ», 3 փետրվարի 1920 թ.:

բելը յայտարարում է յուսահատ և ընկճած ժողովրդին, որ այլևս ի վիճակի չէ իր փոքրաթիւ գինւորներով և ոստիկաններով պաշտպանել նրանց, և կատաղած ամբոխին զսպել: Խոսում էր, որ իբր թէ նրա վրա գնդակ է արծակել՝ հայերին պաշտպան հանդիսանալու համար:

Նկատի ունենալով այս վտանգավոր կացութիւնը, կարգադրում է իր ձեռքի տակ ունեցած գինւած ուժերի պաշտպանութեամբ փոխադրել հայերին թրքական թաղին կից մի քանի հայապատկան տները խոստանալով այնտեղից ավելի ապահով վայր տանել»¹:

Սակայն հայերին ապահով վայր տանելու փոխարեն հաջորդօրն առավոտյան գավառապետի հետ մեկտեղ մեկնում է Օրդուբադ՝ իբրև թէ Ալի Իսսան փաշային դիմավորելու: Սա էլ հենց ջարդը սկսելու ազդանշան է հանդիսանում. գազազած ջարդարարները և նրանց միացած ոստիկանները անմիջապէս գործի են անցնում: «Ժանդարմները, մտրակելով հայերին փողոց էին շարտում, որից հետո սկսեցին լսվել կանոնավոր զորքի համազարկերի ծայնը, - պատմում է Յ. Տեր-Անտոնյանը: Երբ կամացկամաց լռվեցին համազարկերի ծայները, այն սենյակը, ուր ես էի թաքնված, բերին 30-ի չափ հայ գեղեցկուհիներ և սկսեցին բռնաբարել նրանց հարևան սենյակներում նախօրոք նրանցից վերցնելով թանկագին իրերը»²:

Սպանվողների ճիչն ու աղաղակը, թուրք ջարդարարների գոռում-գոչունը մինչև ուշ երեկո չէին դադարում: Երբեմն-երբեմն լսելի էր նաև փոխհրածություն: Դրանք այն դեպքերն էին, երբ առանձին հայ երիտասարդներ զենքը ձեռքներին պաշտպանել են իրենց ընտանիքներին մինչև վերջ և իրենց հետ գերեզման տարել նաև բազմաթիվ թուրք ջարդարարների: Ցավով ենք նշում, որ Ազուլիսի հայերը փաստորեն անգն էին և լուրջ ու կազմակերպված դիմադրություն ցույց չեն տվել: Ո՞վ էր դրանում մեղավոր, դա ուրիշ հարց է, և մենք քննարկման նյութ չենք ուզում դարձնել: Ինքը՝ Յ. Յախնազարյանը, դեպքերի մասնակիցն ու ականատեսը, այս մասին ոչինչ չասելով, հաճախ է կրկնում, թէ եթէ չլինեին Գեղվաձորի դեպքերը, ապա Ազուլիսները այսօր էլ կանգուն կլինեին: Ադրբեջանի պաշտոնական շրջանները ևս նման

1. Յ. Յախնազարյան, նշվ. աշխ. էջ 358:

2. Նույն տեղում:

կերպ էին բացատրում կատարվածը՝ հավասարության նշան դնելով հնազանդ, Ադրբեջանի իշխանությունը ճանաչած ազուլիսցիների և զենքը ձեռքին Ջանգեզուրի հայկական իշխանությունների դեմ պայքարող գեղվաձորցիների միջև:

Յետաքրքրությունից զուրկ չէ այն փաստը, որ Ազուլիսի դեպքերին առաջինը արձագանքեց Ջանգեզուրը. դեկտեմբերի 27-ին վերջնագիր ներկայացվեց Նախիջևանի իշխանություններին՝ վերջ տալու ջարդերին, հակառակ դեպքում սպառնալով նույն կերպ վարվել Ջանգեզուրի մուսուլման ազգաբնակչության հետ: Դեկտեմբերի 31-ի պատասխան գրության մեջ այսպես կոչված Յարավ-արևմտյան Ադրբեջանի գեներալ-նահանգապետը մեղքը բարդում էր Օխչի-Շաբադինի և Կիզի-Դարասիի գազազած փախստականների վրա, որոնք 400-500 հոգանոց բանդաներ են ստեղծել ու հարձակումներ են գործում «ոչ միայն հայկական, այլև մուսուլմանական գյուղերի վրա» և իբրև ավերել են նաև երեք մուսուլմանական գյուղեր: Թուրք նահանգապետը չէր մոռացել նաև հիշեցնել զանգեզուրցիներին, որ դեռ հայեր կան Թագաբենդում, Խանլուխլարում, որոնք նմանապէս կարող են ենթարկվել կոտորածի, եթէ Ջանգեզուրը իրականացնի իր սպառնալիքը¹:

Ազուլիսի դեպքերի կապակցությամբ ակտիվ կերպով բողոքում է նաև Յայաստանի կառավարությունը: Դեկտեմբերի 29-ին գնդ. Յասկելին (պատճեն՝ Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Ուորդրոպին, Ֆրանսիայի ներկայացուցիչ Նոնանկուրին) ուղարկած շտապ հեռագրում Խատիսյանը հայտնում է Գողթանի իրադարձությունների մասին, բողոքում նոյեմբերի 23-ի համաձայնագրի նման խախտման դեմ, պահանջում անհապաղ միջոցներ ձեռնարկել նոր արյունահեղությունների առաջն առնելու համար²: Յաջորդ օրը՝ դեկտեմբերի 30-ին բողոքի հեռագիր է ուղարկվում նաև Բաքու, որտեղ դարձյալ հիշատակվում է նոյեմբերի 23-ի համաձայնագիրը, խնդրվում անհապաղ միջոցներ ձեռք առնել հետագա արյունահեղությունը դադարեցնելու ուղղությամբ՝ «հակառակ դեպքում պատասխանատվությունը երկու ժողովուրդների ծանր օրերի համար, Յայաստանի կառավարություն-

1. Տես ՅՅ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 484, ք. 9:

2. Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 183, ք. 133:

նը ամբողջովին դնում է Ադրբեջանի կառավարության վրա»¹: Հետաքրքրական է, որ այս հեռագրում խոսվում է Ազուլիս գյուղի բնաջնջման և «Վերին Ազուլիսի վրա շարունակվող հարձակումների» մասին: Սա նշանակում է, որ դեկտեմբերի վերջին Հայաստանի կառավարությունը դեռևս ամբողջովին ճշտված տեղեկություններ չուներ կատարվածի մասին: Միայն հունվարի սկզբին լուր ստացվեց Վերին Ազուլիսի կործանման և շուրջ 1000 զոհերի մասին: Հունվարի 12-ին արտգործնախարարին ժամանակավորապես փոխարինած ներքին գործոց նախարար Ա. Գյուլխանդանյանը Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լ.Եվանգուլյանին հասցեագրած հեռագրում նոր, ճշտված տեղեկություններ է հաղորդում Ազուլիսների կոտորածի մասին, հայտնում Գողթանի լեռնային գյուղերի վրա շարունակվող հարձակումների և թուրք սպաներին ու Նախիջևանի ադրբեջանական զեներալ-նահանգապետին հեռացնելու վերաբերյալ զանգեզուրցիների պահանջի մասին²: Հունվարի 14-ին նույն բովանդակությամբ մի հեռագիր էլ ուղարկվել է Ադրբեջանի արտգործինիստր խան-խոյսկուն³:

Ինչպե՞ս վերաբերվեց Հասկելը Գողթանի դեպքերի առթիվ Հայաստանի կառավարության բողոքներին: Լսելով Եվանգուլյանի զեկուցումը Ազուլիսների կոտորածի մասին, Հասկելը պատասխանել է մի երկարաշունչ ճառով, որում ավելի շատ նախատինք ու քննադատություն կար Հայաստանի կառավարության հասցեին, քան կարեկցանք. «Ամեն անգամ, հենց որ ստացվում է կոտորածների առթիվ ինչ-որ մեղադրանք կառավարություններից մեկից մյուսի նկատմամբ, անմիջապես ստացվում են նույնանման տեղեկություններ մյուս կողմից՝ այդ հայտարարությունը չեզոքացնելու համար: Միշտ այդպես է եղել: Այսպես օրինակ, ոչ շուտ, քան այսօր ստացել են հաղորդում, որ Էջմիածնի մոտ սպանվել են վեց թաթար: Վեքիլովը եկավ և հայտարարեց, թե դա նոյեմբերի 23-ի համաձայնագրի խախտում է և ոչ ուշ, քան մի քանի ժամ անց, ստացվում են տեղեկություններ Ազուլիսների դեպքերի մասին՝ դարձյալ դա զնահատելով որպես համաձայնագրի խախտում: **ես ընդհանրապես դադարում եմ հավատալ այդ**

1. Նույն տեղում, ֆ. 278, ց. 1, գ. 6, թ. 34:
2. Տես նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 458, թ. 26:
3. Տես նույն տեղում, թ. 19:

հայտարարություններին և հակված եմ կարծելու, որ դրանց միակ տեղը ադբարկոն է»¹ (ընդգծումը մերն է- Է. Ձ.):

Հազիվ թե ճիշտ կլինի մեղադրել Հասկելին հայ-ադրբեջանական բարդ հարաբերությունների հորձանուտում ճիշտ չկողմնորոշվելու և կողմերի հայտարարություններին նույն կերպ վերաբերվելու համար: Իսկապես որ փոխադարձ մեղադրանքները այնքան հաճախակի էին, այնքան իրարամերժ ու հակասական, որ դժվար էր գլուխ հանել, առավել ևս մի մարդու, որն արևմտյան քաղաքակրթության կրող էր: Հասկելի համար հավանաբար դժվար էր ըմբռնել իսլամի աշխարհում վաղուց ընդունված ու բնութագրական դարձած գործելակերպը. այս կամ այն ծրագրված գործողությունից առաջ նախ աղմկել հակառակորդի շարմտադրությունների, կատարած բռնաբարությունների ու սպանությունների մասին: Էջմիածնի մոտ 6 ադրբեջանցիների սպանության մասին հայտարարությունը ևս այդ շարքից էր և նպատակ ուներ խլացնել Ազուլիսների կոտորածի կապակցությամբ Հայաստանի բողոքը: Եվ, դատելով Հասկելի վերը հիշատակված հայտարարությունից, անտեղի չէր անցել: Ավելին, Հասկելը մեղադրել է Հայաստանի կառավարությանը չստուգված փաստերի հիման վրա հայտարարություններ անելու մեջ՝ «նպատակ ունենալով գրգռել հասարակական կարծիքը»: Դա համարելով պրոպագանդայի էժանագին միջոց, նա հայտարարել է, թե «Հայկական կառավարության քաղաքականությունը ոչնչով լավ չէ թաթարների քաղաքականությունից, մինչդեռ հայկական կառավարությունը պետք է ցույց տար իր գերազանցությունը նրանց նկատմամբ և ոչ թե գործեր ու հույսը դներ նույն միջոցների վրա: ...Այդ քաղաքականությամբ հայ-թաթարական խաղաղ հարաբերություններ հաստատել հնարավոր չէ: Միակ միջոցն է սահմանել ժամանակավոր դեմարկացիոն գիծ երկու պետությունների միջև և կառավարության գլուխ ունենալով մարդիկ, որոնց վրա կարելի է հենվել, հասնել նրանից (կառավարությունից) միատեսակ վերաբերմունքի բոլոր քաղաքացիների նկատմամբ, անկախ ազգությունից ու կրոնից: Պետք է հասնել նրան, որ Հայաստանում ապրող թաթարը իսկապես իրեն զգա լիիրավ քաղաքացի: Այդ

1. Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 183, թ. 146:

դեպքում վերջ կգտնի նրա ձգտումը դեպի Ադրբեջան»¹: «Խատիսովը խելոք է և բարձր մյուսներից, - ասել է Հասկելը, - բայց նա ուժեղ չէ: Նա ամբողջովին կուսակցության ձեռքում է և ստիպված է կատարել պառլամենտի և կուսակցության թելադրած հրամանները»²:

Հայտնի չէ Վեբլիովին և՞ս նման նախատինք ու «խրատներ» է տվել Հասկելը, թե ոչ: Բայց, որ Հայաստանի կառավարությանը այլևս չէր հավատում (վերջինիս նույնիսկ մեղադրել էր կոտորածներ հրահրելու մեջ), դա փաստ է: Ուրեմն, անհետևանք պետք է մնային նրան ուղղած բոլոր դիմումները: Ասենք ցանկության դեպքում անգամ նա ոչինչ անել չէր կարող, քանի որ Նախիջևանի մահմեդական իշխանությունների վրա ազդելու որևէ միջոց չուներ: Արդեն վերը տեսանք, որ նա ձախողվեց Նախիջևանում ամերիկյան գեներալ-նահանգապետություն հաստատելու հարցում: Շուտով մեկ ուրիշ դեպք եկավ կրկին անգամ փաստելու, որ Նախիջևանի մահմեդականները ընդհանրապես ամերիկացիներին բանի տեղ չէին դնում: Բանն այն է, որ Հայաստանի կառավարությունը, փորձելով ինչ-որ ձևով օգնել Ազուլիսի ջարդերից հետո տեղում մնացածներին (շուրջ 600 հոգի գերության մեջ էին Օրդուբադում, 300 հոգու հաջողվել էր անցնել Պարսկաստան, 200-ին՝ Մեղրի), 1920 թ. փետրվարին կազմակերպել էր մի պատվիրակություն դեպի Նախիջևան-Օրդուբադ ամերիկացի գնդապետ Շելլիի ղեկավարությամբ, որը մի քանի բեռնատար ավտոմեքենաներով տանում էր 1500 փ. ալյուր, շաքար, խտացրած կաթ և այլ մթերքներ³: Պատվիրակությունը, որի կազմում էին նաև Ալի-խան Մակինսկին և մի քանի այլ անձինք, նաև խնդիր ուներ ազատել գերության մեջ գտնվող հայերին և բերել Ջուլֆա, որտեղից հնարավորության դեպքում պետք է ուղարկվեին Երևան, իսկ եթե ոչ՝ անցկացվեին Պարսկաստան: Ըստ որում դա միակողմանի ակտ չէր լինելու. փետրվարի 5-ին կառավարության նիստում լսվել էր «գերի թուրքերին խանութխարի, թագաքենդի և Ազուլիսի հայ գերիների հետ փոխանակելու մասին»⁴ հարցը և հավանություն տրվել:

Սակայն գնդ. Շելլիի առաքելությունը ամբողջովին ձախող-

1. Նույն տեղում, թ. 147:

2. Նույն տեղում:

3. Տես «Աշխատավոր», Թիֆլիս, 28 փետրվարի 1920 թ.:

4. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, N 1-2, էջ 72:

վում է. ոչ նրան և ոչ էլ պատվիրակության որևէ անդամի թույլ չեն տալիս Նախիջևանից այն կողմ անցնել, իսկ տարած մթերքն էլ բռնագրավում են: Մարտին Երևան վերադարձած Խան Մակինսկին հայտնում է, որ «հայերին չթողեցին բերելու..., մթերքները բաժանված են տեղական թուրքերին¹...: Օրդուբադից հայ աղջկերանց և երիտասարդ կանանց տանում են Ջուլֆա և վաճառում պարսկաստանցի թուրքերին»²: Բայց եթե խանը իր տարած մեքենան կարողացել էր հետ բերել, ապա բոլորովին այլ վիճակում էր հայտնվել գնդ. Շելլին. Շարուրի թուրքերը նրան կողոպտել էին, խլել Գողթանի հայերի համար Հայաստանի կառավարության տված գումարը, զինաթափել նրա թիկնապահներին: Այնպես որ ամերիկացի գնդապետը լրիվ հնարավորություն էր ունեցել փորձով հանդգնելու, թե ինչ է թուրք խուժանը և այդ մասին զեկուցելու Հասկելին: Երևան է, վերջինս, ինչպես արդեն նշել ենք, մահմեդականության վրա ներագդելու որևէ լծակ չուներ, բայց զոհե կհասկանար, թե ում հետ զործ ունի հայ ժողովուրդը և կդադարեր միակողմանի մեղադրանքներ ներկայացնելուց:

* * *

1920 թ. առաջին ամիսները էական փոփոխություններ չմտցրեցին Անդրկովկասի քաղաքական կացության մեջ: Ադրբեջանը նախկինի պես շարունակում էր հակահայկական ակտիվ քաղաքականություն վարել ու միաժամանակ փորձում Հայաստանի Հանրապետությանը ներքաշել կոնֆեդերացիայի մեջ, որի նպատակը հյուսիսից եկող վտանգի դեմ պայքարը պիտի լիներ (սկզբում Դեմիկինի, իսկ հետո՝ բոլշևիկների): Այս անգամ արդեն նպատակակետ էր ընտրված Ջանգիբասարը (ներկայիս Մասիսի շրջանը): Երևանից ընդամենը մի քանի կմ. հեռավորության վրա գտնվող թուրքաբնակ այդ գյուղերը ստեղծել էին այսպես կոչված «միլլի-շուրա» և չէին ճանաչում Հայաստանի կառավարությունը:

1. «Հառաջ»-ի 1920 թ. մարտի 23-ի համարում գնդ. Շելլին մի քիչ այլ կերպ է ներկայացնում մթերքների բռնագրավման հարցը (իբրև միայն մի մասն է հանձնել Նախիջևանի իշխանություններին, մնացածը բաժանել է թագաքենդի, Ջահրիի, խանութխարի հայերին):

2. «Աշխատավոր», 25 մարտի 1920 թ.:

Ապստամբությունը նախապատրաստելու նպատակով հունվարի 8-15-ին Բաշ-Նորաշենում և 31-ին Ջանգիբասարի Ձինջիրլու գյուղում գումարվեցին խորհրդակցություններ, որոնց ապստամբության ղեկավարներից բացի մասնակցում էին նաև ներկայացուցիչներ Ադրբեջանից և Անատոլիայից: Փետրվարի 14-ին Ջանգիբասարում մինչև 45 տ-րի զորակոչ հայտարարվեց ու հրաման արձակվեց բոլոր մուսուլմաններին զինվել մինչև փետրվար 23-ը¹: Մարտին Հայաստանի հետախուզական ծառայությունները հաղորդում են, որ Ջանգիբասարում ամենօրյա ռազմական վարժանքներ են կատարվում և խրամատներ են փորվում: Այս ամենին զուգընթաց հարձակումներ են կատարվում հայ գյուղացիների վրա այս կամ այն վայրում (օր. մարտի 6-ին Ուլուխանլու կայարանում կատարված հարձակման հետևանքով անհայտ կորան 20 հայ)²: Մարտի 26-ին գաղտնի գործակալը (ազգությամբ թուրք) տեղեկացնում է, որ Վեդիից Ջանգիբասար է բերվել 4 զնդացիր և որ այստեղ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ որոշվել է մոտ օրերս հարձակում սկսել Իգդիրի ուղղությամբ³:

Ուշագրավ մի հանգամանք. նախապատրաստվելով ապստամբության, զանգիբասարցիները միաժամանակ Ադրբեջանից պահանջում էին վարձատրել դրա համար: Ապրիլի 4-ին երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության չորս աշխատակիցներ ներկայացուցչության մեքենայով սլանում են դեպի Ջանգիբասար՝ իրենց հետ տանելով շուրջ կես միլիոն ադրբեջանական բոներ, 11 հազարից ավելի կովկասյան և 11000 հայկական չեկեր: Սակայն այս անգամ այն նպատակին չի հասնում. Ուչթափալարի պահակակետում մեքենան կանգնեցվում է և գումարը բռնագրավվում⁴:

1920 թ. մարտին խոշոր իրադարձություններ են ծավալվում նաև Վեդիբասարում, Գողթանում և Ղարաբաղում:

Վեդիբասարի իսլամական ուժերը (շուրջ 5000) Ջանգիբասարի ապստամբներին խրախուսելու և նրանց համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով մարտի 19-ին հարձակման են անցնում Ղամարլուի ռազմաճակատի ծախ թևում ու հանկար-

ծակիության և ուժերի գերազանցության շնորհիվ գրավում են Բոզբուրունի բարձունքները: Հաջորդ օրը հարձակվում են նաև Նախիջևանի խճուղու ու երկաթգծի վրա Յուվա և Շիրազլու գյուղերի միջև ընկած հատվածում: Հաջողությունը կարող էր նրանց համար ճանապարհ բացել դեպի Ջանգիբասար: Սակայն հայկական ուժերը զրահագնացքի օգնությամբ հակահարձակման են անցնում և հետ շարտում թշնամուն դեպի իրենց նախկին դիրքերը¹: Մարտի 24-ով թվագրված մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ հաջորդ օրերին հայկական ուժերը, թեև դժվարությամբ, բայց և այնպես աստիճանաբար առաջ են շարժվում՝ կորցրած դիրքերը վերականգնելու նպատակով:

Հանգիստ չէր վիճակը նաև Շարուր-Նախիջևանում և Գողթանում: Հարձակումները Ղարալազյազի սահմանամերձ հայկական գյուղերի վրա Շարուրից և Նախիջևանից սիստեմատիկ բնույթ էին կրում: Իսկ Գողթանի մահմեդականության «աչքի փուշը» լեռնային մասի այն չորս-հինգ հայկական գյուղերն էին, որոնց այդպես էլ չկարողացան ընկճել ոչ 1918, ոչ 1919 և ոչ էլ 1920 թ. առաջին ամիսներին, թեև հարձակումները հետևում էին մեկը մյուսին: 1920 թ. սկզբին էլ եղիֆ-բեյը իր օսմանցի սպաներով և տեղական մահմեդականներից հավաքագրած բաշիբոզուկներով բազմիցս փորձեց լեռնային այդ արծիվներին դուրս քշել իրենց բներից, բայց հաջողություն չունեցավ: Ասենք Գողթանի լեռնաբնակ հայերն էլ պարտքի տակ չէին մնում և քաջամարտիկ Մովսես Գյուլնազարյանի² գլխավորությամբ երբեմն-երբեմն հակահարձակման անցնելով ավերում էին այս կամ այն թուրքական գյուղը, թշնամուն պատճառում մարդկային և նյութական մեծ կորուստներ: Առանձնապես հիշատակության է արժանի 1920թ. մարտին ձեռնարկված հակահարձակումը, երբ Գ. Նժդեհի գլխավորությամբ Ղափանից օգնության եկած ջոկատի հետ մեկտեղ Գողթանի հայկական ուժերը մեկը մյուսի հետևից գրավելով մի շարք գյուղեր, մոտեցան Օրդուբադին: Խուճապի մատնված թշնամին հուսահատ դիմադրություն էր ցույց տալիս, օգնության կանչում Ղարադաղի և Մակվի խաներին, բնակչության մի զգալի մասը

1. Տես նույն տեղում, թ. 13:

2. Բարձրահասակ ու առնական այդ մարդու մասին թե՛ արխիվային փաստաթղթերում, թե՛ հուշագրություններում խոսվում է որպես անվախ ու քաջակրող մարտիկի, որը միշտ կռվի էր գնում աներկյուղ, նույնիսկ թշնամու տեղատարափ կրակի տակ ամբողջ հասակով կանգնած:

1. Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 461, թ. 16:

2. Տես նույն տեղում:

3. Տես նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 67, թ. 4:

4. Տես նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 461, թ. 28:

խուճապահար անցել էր Արաքսի մյուս ափը: Սակայն Ղարաբաղում սկիզբ առած կռիվները¹ Ջանգեզուրի հրամանատարությանը հարկադրեցին հետ կանչել Նժդեհի ջոկատը Գողթանից: Ղափանցիների հեռանալուց հետո Գողթանի հայկական ուժերը հետ քաշվեցին դեպի լեռնային գյուղերը և ամրացան իրենց նախկին դիրքերում:

Անդրկովկասյան երեք հանրապետությունների կոնֆեդերացիան, որի մասին այդքան շատ խոսում էին քաղաքական շրջանակներում 1919 թ. վերջին և 1920-ի սկզբին, պայմանավորված էր ոչ թե տնտեսական, այլ քաղաքական գործոնով: Ավելի պարզ, դա ուղղակի հյուսիսից եկող վտանգի դեմ պայքարի հարցն էր, վտանգ, որը ինչպես արդեն նշել ենք, 1919 թ. վերջին և 1920-ի սկզբին բխում էր Դեմիկիսից, իսկ գարնանը՝ Խորհրդային Ռուսաստանից: Ըստ որում առավել շահագրգռվածը Վրաստանը և Ադրբեջանն էին, որոնք արդեն հասցրել էին այդ ոգով մի համաձայնագիր ստորագրել 1919 թ.: Մինչդեռ Հայաստանը Դեմիկիսի դեմ պայքարի հարցում շահագրգռություն ցուցաբերել չէր կարող, քանի որ նախ նա սերտ կապերի մեջ էր Դեմիկիսյան կառավարության հետ (քաղաքական շրջանակներում նույնիսկ համարում էին նրա դաշնակիցը) և հետո, դա դուր չէր գա ոչ Անգլիային, ոչ Ֆրանսիային, ոչ նույնիսկ Ամերիկային: «Տփղիսում Հասկելը նախազգուշացրել է մեր պատվիրակներին քաղաքական կոնֆեդերացիայից, - ասված 1919 թ. դեկտեմբերին Բաքվում գումարված հայ-ադրբեջանական կոնֆերանսին մասնակցած հայկական պատվիրակության մի հաղորդման մեջ, - առաջարկելով սահմանների ժամանակավոր որոշում, առևտրական և այլ տեսակի պայմանագրեր: **Ոչ մի դեպքում չմիանալ նոցա հետ Դեմիկիսի դեմ**»² (ընդգծումը մերն է - Ե. Ջ.):

Հասկանալի է, որ Հասկելի կարծիքի հետ հաշվի չնստել Հայաստանի կառավարությունը չէր կարող: Մինչդեռ Ադրբեջանին հետաքրքրողը հյուսիսից եկող վտանգն էր: Ուշագրավ մի փաստ. դեկտեմբերի 9-ին ընդունելով Բաքու ժամանած հայ պատվիրակներին, վարչապետ Ուսուբբեկովը իսկույն ևեթ հարցրել էր. «Կոնֆեդերացիայի մասին պատասխան բերե՞լ եք, թե չե՞ք»³: Այդ է

1. Ադրբեջանի դեմ Լեռնային Ղարաբաղում 1920թ. մարտի 23-ին ծագած ապստամբությունը անհաջող ընթացք ստացավ և զանգեզուրցիները ստիպված եղան օգնության գնալ Ղարաբաղին (1920 թ. ապրիլին):

2. **ՀՀ ՊԿՊԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 365, ք. 25.

3. Նույն տեղում.

պատճառը, որ կոնֆերանսն իր երկու պաշտոնական նիստերի և չորս մասնավոր խորհրդակցությունների ընթացքում ոչ մի առաջընթաց չարձանագրեց և ի վերջո որոշվեց կոնֆերանսը փոխադրել Թիֆլիս (հավանաբար Ադրբեջանը հույս ուներ այստեղ ստանալ իր դաշնակից Վրաստանի աջակցությունը): Հայկական պատվիրակության առաջ քաշած և ոչ մի հարց (սահմանային հարցում ժամանակավոր դեմարկացիոն գծի հաստատում, գաղթականների ընդունում և տեղավորում, առևտրական և երկաթուղային պայմանագրերի կնքում) Ադրբեջանի կողմից ընդունելություն չգտավ: Անպատասխան էր մնում նաև հայերի առաջ քաշած այն հարցը, թե միայն հյուսիսի դեմ պետք է պայքարել, թե նաև հարավի:

Այստեղ ավելորդ չենք համարում նշելու, որ չնայած քեմալականների հետ կնքած դաշինքին¹, Ադրբեջանի ղեկավար շրջանները որոշակի դժգոհություն ունեին իրենց դաշնակիցների գործունեությունից Բաքվում և հատկապես Նախիջևանում: Բանն այն է, որ թեև Շարուր-Նախիջևանը չէր մտնում թուրքական Ազգային ուխտով² գծված սահմանների մեջ, բայց նայնպես Անատոլիական Թուրքիայի ղեկավարները Շարուր-Նախիջևանի շրջանին տիրանալը համարում էին իրենց կենսական խնդիրներից մեկը: Հենց նրանց ցուցումով Խալիլ-բեյը պայքար սկսեց Բաքվի կողմից նշանակված նահանգապետ Ջամալիսկու դեմ, ինչի մասին նախորդ շարադրանքում արդեն նշել ենք: Փետրվարին Խալիլ-բեյը որոշակի հաջողության հասավ. իր կողմը գրավելով Նախիջևանում մեծ ազդեցություն վայելող Քերբալայ-խանին, նա կարողացավ Ջամալիսկուն և նրա վարչակազմին վտարել երկրամասից: Հին Բայազեդում տեղաբաշխված թուրքական դիվիզիայի հրամանատար Ջավիդ-բեյին ուղարկած նամակում հայտնելով այս մասին, Խալիլ-բեյը ավելացնում է, թե Քերբալայ-խանի հաջորդ քայլը պիտի լինի Ադրբեջանի ենթակայությունից Նախիջևանի դուրս գալու մասին հայտարարությունը, որից հետո վերջինիս միացումը Թուրքիային կդառնա անխուսափելի³: Ջավիդ-բեյն էլ, հարցի

1. Ստորագրվել էր Ստամբուլում 1919 թ. նոյեմբերի 29-ին (մանրամասն տես է. **Ձոհրաբյան**, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Եր., 1979, էջ 27):

2. Ընդունվել է հիմնականում քեմալականներից բաղկացած օսմանյան պառլամենտի կողմից Ստամբուլում 1920 թ. հունվարի 28-ին (մանրամասն տես է. **Ձոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 22-23):

3. Տես **Г. Мадатов**, Победа Советской власти в Нахичеване и образование Нахичеванской АССР, Баку, 1968, стр. 71-72.

լուծումը արագացնելու նպատակով շուտով (մարտ ամսին) Ալի Թեմուր-բեյի գլխավորությամբ մի նոր ջոկատ ուղարկեց Նախիջևան¹: Սակայն դեպքերն այնուհետև այլ ուղղությամբ ընթացան. Խալիլ-բեյը հրաման ստացավ անցնել Ղարաբաղ՝ օգնելու ադրբեջանական զորքերին հայ ապստամբների դեմ պայքարում, իսկ ապրիլի 28-ին կարմիր բանակը մտավ Բաքու և Ադրբեջանը հայտարարվեց խորհրդային հանրապետություն: Հասկանալի է, որ այսպիսի պայմաններում Ջավիդ-բեյը և մյուսները հարկադրված պետք է լինեին առժամանակ ձեռնպահ մնալ և հետևել դեպքերի հետագա զարգացմանը: Չէ՞ որ այժմ Ադրբեջանը դառնում էր Խորհրդային Ռուսաստանի բարեկամ և դաշնակից: Ուրեմն վերջինս անտարբեր չէր կարող լինել Նախիջևանի հարցում:

Վերադառնալով հայ-ադրբեջանական նոր կոնֆերանս գումարելու խնդրին, ինչի վրա հատկապես պնդում էր Ադրբեջանը, հարկ ենք համարում շեշտելու, որ Հայաստանի կառավարությունը՝ դեմ չլինելով հանդերձ կոնֆերանս գումարելու գաղափարին, միաժամանակ գտնում էր, որ որպեսզի այն չարժանանա նախորդների ճակատագրին, անհրաժեշտ է նախապես որոշել հարցերի այն շրջանակը, որոնք կդրվեն կոնֆերանսի աշխատանքների հիմքում: Այս ուղղությամբ մի շարք հեռագրեր փոխանակվեցին: Մարտի 8-ին, պատասխանելով Ադրբեջանի արտգործնախարար Խան-Խոյսկու մարտի 4-ի հեռագրին, ՀՀ արտգործնախարարը ընդգծում է նման մոտեցման կարևորությունը, Ադրբեջանի կառավարությանը առաջարկում նախապես ներկայացնել իրեն հետաքրքրող հարցերը, միաժամանակ առաջադրում հարցերի այն շարքը, որ հետաքրքրում էր հայկական կողմին: Դրանք են. 1. Ղարաբաղում ստատուս քվոյի պահպանում: Ըստ որում Ադրբեջանը պետք է խստագույնս պահպանի Ղարաբաղի հայոց ազգային խորհրդի հետ կնքած պայմանագրի պայմանները: 2. Ստատուս քվոյի պահպանում Ձանգեզուրում: 3. Երևան-Ջուլֆա երկաթուղու բացում: 4. Շարուր-Նախիջևանի շրջանի ճանաչում որպես Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս²:

Հեռագրում նաև համոզմունք էր հայտնվում, որ այս հարցերի լուծումը կայուն վիճակ կստեղծի տարածաշրջանում ու կնպաստի խաղաղության ամրապնդմանը, ինչը և երաշխիք կլինի կոնֆեդերացիայի հարցի դրական լուծման համար: Բայց բանն էլ

հենց այն է, որ Ադրբեջանին հետաքրքրում էր միայն կոնֆեդերացիան, իսկ վերը թվարկած երկրամասերը նա համարում էր իր սեփականությունը և հրաժարվում այդ հարցերի հրապարակային քննարկումից: Նա խուսափում էր նաև առևտրական, տրանզիտային, փոստ-հեռագրական և նման կարգի մյուս հարցերի քննարկումից:

Սակայն կողմերի միջև հարցերի հեռագրական քննարկումները շուտով վերջ գտան և հայ-ադրբեջանական կոնֆերանսի գումարման գաղափարն էլ հետին պլան մղվեց, քանի որ մարտյան այդ նույն օրերին առաջ էր քաշվել երեք հանրապետությունների միասնական կոնֆերանս գումարելու և «տնտեսական ու քաղաքական ամենաբարեկամական հարաբերություններ» հաստատելու խնդիրը: Առավել հետաքրքրականն այն է, որ այդ առաջարկը այս անգամ գալիս էր բրիտանական կառավարությունից, այնտեղից, որտեղ ընդամենը մեկ-երկու ամիս առաջ լսել անգամ չէին ուզում հարավկովկասյան հանրապետությունների ինչ-որ միության մասին: Ի՞նչն էր պատճառը. անշուշտ, Դենիկինի անսպասելի պարտությունը և կարմիր բանակի արագ առաջխաղացումը Հյուսիսային Կովկասում: Ո՞վ պետք է կանգնեցնի կարմիրների առաջխաղացումը, իրար հետ փաստական պատերազմի մեջ գտնվող Ադրբեջանն ու Հայաստանը, թե՞ թույլ Վրաստանը: Այո՛, շուրջ մեկ և կես տարի հանգիստ ու անխռով դիտելով, թե ինչպես են մեկը մյուսին բզկտում այդ հանրապետությունները՝ հաճախ հենց իրենց վարած քաղաքականության հետևանքով, բրիտանական իշխանությունները հանկարծ խելքի եկան, հենց որ բուլշևիկյան վտանգը իրական դարձավ: Այդ վտանգը կանգ չէր առնի Կովկասում, այլ այստեղից կթափանցեր նաև Իրան: Ուրեմն ինչո՞ւ չփորձել հաշտեցնել այդ երեք հանրապետություններին, միավորել նրանց ուժերը հյուսիսի դեմ: Եվ մարտի 5-ին Հայաստանի կառավարությունը Ուորդրոպից ստանում է հետևյալ շտապ գրությունը. «Նորին մեծություն Բրիտանիայի թագավորի կառավարությունը հավատում է, որ Անդրկովկասի երեք կառավարությունների շահերը պահանջում են **վիճելի հարցերի անհապաղ լուծում՝ ներառյալ տարածքային**, և հայտնում, որ այդ երեք Անդրկովկասյան հանրապետությունները սեփական շահե-

1. Տես նույն տեղում:

2. Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 411, ք. 28:

րից ելնելով իրար միջև **կհաստատեն ամենաբարեկամական ու քաղաքական հարաբերություններ**: Այդ հարցի լուծման նպատակով ինձնից շտապ պահանջում են Ձեր կառավարության զեկուցումը **իր տարածքային պահանջների մասին՝ հիմնված ազգագրական, պատմական և այլ ծանրակշիռ փաստարկների վրա**, որոնք կարող են ներկայացվել գումարվելիք կոնֆերանսին սահմանների որոշման համար և որում Անդրկովկասյան բոլոր երեք հանրապետությունները կունենան պատվիրակներ՝ լիազորված ներկայացնելու իրենց կառավարության պահանջները և **ստորագրելու վերջնականորեն կայացրած համաձայնությունը...**»¹ (ընդգծումը մերն է - է. Ջ.):

Յրաշալի նախաձեռնություն է, խոսք չկա, դժբախտաբար խիստ ուշացած: Այ, եթե բրիտանական կառավարությունն այդ բանն աներ ոչ թե 1920, այլ 1919 թ-ի գարնանը, ապա չէին լինի այն կործանարար կռիվները, բռնություններն ու գաղթը, որ այդ ժամանակամիջոցում բռնկվում էին մեկ այստեղ, մեկ այնտեղ, և որ առավել կարևոր է, հանրապետություններն այդքան թույլ ու խոցելի չէին լինի արտաքին ուժերի հանդեպ: Այդ նույն մարտապրիլ ամիսներին, երբ Անգլիան վերջապես ձեռնարկեց վիճելի հարցերի լուծմանը, ադրբեջանական բանակն ամբողջությամբ կենտրոնացած էր Ղարաբաղում և ոչ մի զորամաս չուներ հյուսիսում: Դրա համար էլ երբ ապրիլի 28-ին 11-րդ կարմիր բանակը Դերբենդից առաջ անցավ, ընդամենը մի քանի ժամ հետո հայտնվեց Բաքվում առանց մի կրակոց արձակելու:

Ինչևէ. վերադառնալով Ուորդրոպի գրությանը, ասենք, որ վերջում նա կրկին անգամ խնդրում էր չուշացնել պահանջված զեկուցումը, ցանկություն հայտնում, որ այն լինի անգլերեն լեզվով և խորհուրդ տալիս, որ հանրապետությունները նախապես գումարեն խորհրդակցություն, համաձայնության գան հնարավորինս շատ կետերի շուրջ, որպեսզի կոնֆերանսի աշխատանքները չծանրաբեռնվեն մանրուքներով:

Հասկանալի է, որ ճիշտ նույնաման գրություններ ուղարկվել էին նաև Ադրբեջանի և Վրաստանի կառավարություններին: Հայաստանը, բնականաբար, իսկույն հայտնում է իր համաձայնությունը, բայց երկու հարց նրան շատ էր հետաքրքրում, որոնց պար-

1. Նույն տեղում, գ. 556, I մաս, ք. 44:

զումն էլ հանձնարարում է Թիֆլիսի իր դիվանագիտական ներկայացուցչին, այն է. 1. Վերաբերում է արդյոք առաջարկությունը նաև Թուրքահայաստանին. 2. Արդյո՞ք առաջարկությունը բխում է միայն Անգլիայից և տեղեկացված են արդյոք մյուս տերություններն այդ մասին:

Մարտի 9-ին Եվանգուլյանը հեռագրում է Երևան, թե տեսնվել է Ուորդրոպի հետ, որը և հայտնել է իրեն, որ «առաջարկությունը բոլորովին չի վերաբերում Թուրքահայաստանին..., որ ներկա պահին դրված է միայն Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև սահմանների որոշման հարցը», և որ «դատելով գրագրությունից, առաջարկությունը բխում է միմիայն Անգլիայից»¹: Դրանից ելնելով, շտապ կազմվում է «Գրություն Անդրկովկասում Հայաստանի տարածքային պահանջների մասին» և ուղարկվում Ուորդրոպին: Վեց էջանոց այդ փաստաթղթում պատմական և ազգագրական տեսանկյունից հիմնավորված էին Հայաստանի իրավունքը Ախալքալաքի, Ծալկայի, Բորչալուի (Լոռու հետ միասին մինչև Խրամ գետը), Ղարաբաղի, Ջանգեզուրի և Շարուր-Նախիջևանի վրա²: Մեզ հետաքրքրող Շարուր-Նախիջևանի վերաբերյալ փաստաթղթում ասված էր. «Անդրադառնալով Արաքսի հովտին հարկ է նշել, որ Շարուրը և Նախիջևանը Ջանգեզուրի հետ միասին միշտ էլ հայկական նահանգներ են եղել՝ հայկական հնադարյան հուշարձաններով լեցուն և ունեցել են հայ բնակչություն, բայց պարսից շահ Աբբասը XVI I դարում դուրս տարավ այստեղից հայերին, նրանց տեղը մուսուլմաններ բնակեցրեց՝ Ղարաբաղը Արարատյան հարթավայրից կտրելու և հայկական տարածք ստեղծելուն խանգարելու նպատակով: Այդ է պատճառը, որ այս հովտում մուսուլմանները ավելին եղան (160 հազար), քան հայերը (120 հազար), բայց այդ հովիտը բացարձակապես անհրաժեշտ է Ղարաբաղի, Վանի և Պարսկաստանի հետ Հայաստանի կապի համար: Ղարաբաղը իր 350000 հայ ազգաբնակչությամբ այլ կերպ հնարավոր չէ կապել մնացյալ Հայաստանի հետ»³:

Կարծում ենք, ընթերցողն էլ կընդունի, որ հիմնավորումը թեև փայլուն չէ, բայցևայնպես բավարար է Հայաստանի իրավունքը այդ տարածքների վրա փաստելու առումով: Ավելորդ չենք համարում նշելու, որ փաստաթղթում ավելի շատ խոսվում է Ախալքա-

1. Նույն տեղում, ք. 35:

2. Տես նույն տեղում, ք. 86-89:

3. Նույն տեղում, ք. 89:

լաքի, Բորչալուի և Ղարաբաղի մասին: Վերջինիս հարցում նույնիսկ սպառնալիք կա, որ եթե հարցը չլուծվի Հայաստանի օգտին, ապա միևնույն է, Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը կապստամբի և կմիանա մայր հայրենիքին:

Փաստաթղթում մի պահանջ էլ կա, որի վրա կանգ չառնել չենք կարող. խոսքը Բաթումի մարզի մի մասը՝ Բաթումի նավահանգստով հանդերձ և ճորոխ գետի հովիտը Հայաստանին հանձնելու պահանջի մասին է: Այստեղ, անշուշտ, խոսք չկա ոչ պատմական և ոչ էլ ազգագրական իրավունքի մասին, թեև պահանջված մասում հայերի թիվը քիչ չէր¹: Այստեղ խոսվում է դեպի ծով ելք ունենալու Հայաստանի համար կենսական անհրաժեշտության մասին, իսկ Բաթումը և՛ մոտիկ էր, և՛ հարմար: Ապրիլի 5-ին Հայաստանի պատվիրակությունը ժամանեց Թիֆլիս (նախագահ՝ արտգործնախարար Յ. Օհանջանյան, անդամներ՝ Տ. Բեկզադյան, Ս. Խաչատրյան և Ս. Մամիկոնյան: Վերջինս հիվանդության պատճառով ուշ ժամանեց)²: Այդ նույն օրը կոնֆերանսը պետք է սկսեր աշխատանքը, բայց ադրբեջանական պատվիրակության ուշացման պատճառով հետաձգվեց մի քանի օրով (Ադրբեջանի պատվիրակությունը Թիֆլիս հասավ միայն ապրիլի 8-ին և այն էլ առանց պատվիրակության նախագահ Խան-Խոյսկու): Անշուշտ, մեր խնդիրը չէ վերլուծել կոնֆերանսի աշխատանքներն ամբողջությամբ, ուստի կանգ կառնենք կոնֆլիկտային հարցերի նկատմամբ կոնֆերանսի վերաբերմունքի վրա միայն:

Կոնֆերանսի աշխատանքները սկսելուն պես, երբ նախագահող Ե. Գեգեչկորին առաջարկեց սահմանել օրակարգ, Հայաստանի և Վրաստանի պատվիրակները հայտարարեցին, թե չեն կարող մասնակցել առաձին հարցերի քննարկման այնպիսի պայմաններում, երբ Ղարաբաղում փաստական պատերազմ է ընթանում հայերի և ադրբեջանցիների միջև, երբ օրական հարյուրավոր մարդիկ են զոհվում: Մինչև որ չդադարեցվի արյունահեղությունը, կոնֆերանսը չի կարող հանգիստ և արգասաբեր աշխատել, - հայտարարում են պատվիրակները:

Ադրբեջանական պատվիրակությունը՝ հայտնելով իր սկզբունքային համաձայնությունը նման հարցադրման հետ, միաժամա-

1. Ըստ փաստաթղթի Բաթումի մարզի պահանջված հատվածում բնակվում էին 15000 հայ, 25000 թուրք և մահմեդական-վրացի և 5000 քրիստոնյա վրացի:
2. Տես ԳԳ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 1, գ. 411, ք. 52:

նակ փորձում էր խուսափել և ձգձգել խնդրի լուծումը մեկ հայտարարելով, թե դա պետք է տարածվի ոչ միայն Ղարաբաղի, այլև բոլոր այն վայրերի վրա, որտեղ կոնֆլիկտներ կան (օրինակ՝ Օրդուբադ, Նախիջևան, Վեդի, Ղազախ և այլն), մեկ էլ ասելով, թե իր կառավարությունից նման լիազորություն չի ստացել: Սակայն հայ պատվիրակները՝ նման պատասխանը համարելով ձևական, պնդում էին, որ կոնֆերանսը նախ և առաջ որոշում ընդունի զինված կոնֆլիկտների դադարեցման մասին: Այս հարցում վրաց պատվիրակները պաշտպանում էին հայերին: Արդյունքում որոշվեց, որ ադրբեջանցի պատվիրակները պետք է իրենց կառավարությունից համապատասխան լիազորություն ստանան կամ նույն օրը՝ զիջերը, կամ գոնե մինչև հաջորդ միստը, որը պետք է գումարվեր ապրիլի 10-ին¹: Սակայն այս որոշումն էլ չկատարվեց և կոնֆլիկտների դադարեցման մասին որոշումներ ընդունվեցին միայն ապրիլի 11-ի և 12-ի նիստերում: Դրանից առաջինում, որ ընդունվել էր ամսի 11-ի նիստում, ասված է.

«Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների կոնֆերանսը՝ սկսելով իր աշխատանքները, որոշում է.

Առաջին. անհապաղ դադարեցնել բոլոր արյունալի ընդհարումները, որ տեղի ունեն Ղազախում, Նախիջևանում, Օրդուբադում և Ղարաբաղում:

Երկրորդ. դրա հետ մեկտեղ կոնֆերանսը պնդում է, որ Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները անհապաղ ամենավճռական միջոցներ ձեռնարկեն, որպեսզի բացառվի հայ և մուսուլմանական բնակչության միջև ընդհարումների ամեն մի հնարավորություն համապատասխան հանրապետությունների սահմաններում:

Երրորդ. Այս որոշման մասին շտապ հայտնել Ադրբեջանի և Հայաստանի կառավարություններին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար»²:

Ստանալով այս որոշումը, Հայաստանի կառավարությունը իսկույն համապատասխան քայլեր է ձեռնարկում: Ապրիլի 14-ին Բաքու՝ դիվանագիտական ներկայացուցիչ Հարությունյանին ուղարկած վարչապետի հեռագրում ասված է. «Թշնամական

1. Տես նույն տեղում, ք. 57:
2. Նույն տեղում, ք. 58:

գործողությունների դադարեցման մասին Անդրկովկասյան կոնֆերանսի որոշումը Հայաստանի կառավարությունը իր համար պարտադիր է համարում: Կառավարությունը ամենաշտապ միջոցներ է ձեռնարկել թշնամական գործողություններով բռնկած շրջանների ազգաբնակչությանը և իշխանություններին տեղեկացնելու դրանց անհապաղ դադարեցման անհրաժեշտությունը: Խնդրում են հայտնեք, արե՞լ է Ադրբեջանի կառավարությունը այդպիսի կարգադրություն»¹:

Ադրբեջանի կառավարությունը այդպիսի կարգադրություն կամ չէր արել, կամ անգամ եթե արել էր, ապա անպայման ձևական: Այլապես չէին շարունակվի ադրբեջանական բանակի «պատժիչ» գործողությունները Ղարաբաղում, և Դրոն էլ հարկադրված չէր լինի զանգեզուրյան ջոկատներով անցնել Ղարաբաղ (ապրիլի 17-ին)՝ պաշտպանելու անգն հայ գյուղացիներին «քաջ ասկյարներից»:

Ապրիլի 12-ին ընդունված որոշումներից առաջինում ասված է. «Անհապաղ ամբողջովին վերականգնել այն իրավական կարգավիճակը, որ գոյություն է ունեցել մինչև ընդհարումները և հիմնվել է հայ-ադրբեջանական և Անդրկովկասյան կոնֆերանսներում ձեռք բերված համաձայնությունների, ինչպես և համապատասխան կառավարությունների հետ ազգային խորհուրդների կնքած պայմանագրերի վրա»: Դժվար չէ գուշակել, որ այս որոշումը ևս վերաբերում էր Ղարաբաղին, քանի որ Ադրբեջանը խախտել էր Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի հետ 1919 թ. օգոստոսի 22-ին կնքած համաձայնագիրը և փորձում էր երկրամասը ամբողջովին ենթարկել իրեն: Ինչ վերաբերում է կոնֆերանսի ընդունած երրորդ որոշմանը, ապա այն ուղղված էր առաջին երկու որոշումների կատարումը վերահսկելուն: Այդ նպատակով կոնֆերանսը ընտրել էր 6 հոգուց բաղկացած հանձնաժողով, որը պետք է.

«1. Տեղերում իրականացնի և վերահսկի կենսագործումը արյունալի ընդհարումների դադարեցման և իրավական կարգավիճակի վերականգնման մասին կոնֆերանսի որոշումները:

2. Ուսումնասիրի տեղի ունեցող ընդհարումների պատճառները և պատկերը»²:

Այսքանը միայն, կոնֆլիկտների վերաբերյալ կոնֆերանսն այլ որոշումներ չընդունեց, ընդունածներն էլ մնացին թղթի

1. Նույն տեղում, թ. 77:

2. Նույն տեղում, թ. 59:

վրա, քանի որ մինչև վերահսկող հանձնաժողովը պատրաստվում էր ընդհարումների տարածաշրջան մեկնել, մինչ պատվիրակությունները վիճաբանում էին հյուսիսից եկող վտանգի մասին, ինչպես վերը նշել ենք, կարմիր բանակը ապրիլի 28-ին հայտնվեց Բաքվում, իսկ շուտով նաև՝ Հայաստանի ու Վրաստանի սահմանների վրա: Դա արմատապես փոխեց ռազմաքաղաքական իրադրությունը հարավկովկասյան տարածաշրջանում: Խորհրդայնացած Ադրբեջանը՝ թիկունքում ունենալով մեծ Ռուսաստանը, այժմ արդեն իր հարևանների հետ սկսեց խոսել վերջնագրերի լեզվով՝ փորձելով տարածքային վիճելի հարցերը լուծել բացառապես իր օգտին: Իսկ Դաշնակցային տերությունների ներկայացուցիչները, որ դեռ երեկ չափչփում էին Անդրկովկասում և կարգադրություններ անում, կենտրոնացան Թիֆլիսում ու կապեցին ճամպուրկները: Ազդել դեպքերի հետագա զարգացման վրա նրանք այլևս ի վիճակի չէին, թեև երբեմն-երբեմն իրենց գոյության մասին դեռևս զգացնել էին տալիս:

Կատարված ուսումնասիրությունը հանգեցնում է հետևյալին.

1. Մեծ Բրիտանիան և մյուս տերությունները փաստորեն ոչինչ չարեցին դժբախտության մեջ հայտնված Հայաստանի Հանրապետությանը ռազմական ու նյութական օգնություն ցույց տալու ուղղությամբ: Ռազմական գործողությունները դադարեցնելու ուղղությամբ Անդրկովկասի բրիտանական հրամանատարության միջամտությունն արդյունք չտվեց: Օգոստոսի կեսերին դրությունը ռազմաճակատներում ավելի սրվեց: Իսկ օգնության վերաբերյալ վարչապետի դիմումը Փարիզի վեհաժողովին և խորհրդարանի դիմումը աշխարհի պառլամենտներին մնաց որպես «ձայն բարբառոյ յանապատի»:

2. Փարիզի վեհաժողովի կողմից Հայաստանի գերագույն կոմիսար նշանակված ամերիկյան գնդապետ Հասկելը թեև երևանում խոստացավ ստիպել Ադրբեջանին վերջ տալու Հա-

յաստանի նկատմամբ ոտնձգություններին, բայց ժամանելով Բաքու, փոխեց մտադրությունը և որոշեց Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառները հռչակել չեզոք գոտի և այնտեղ հաստատել ամերիկյան զեներալ-նահանգապետություն: Թիֆլիսում Յասկելի հետ վարած երկար բանակցությունների արդյունքում միայն Ալ. Խատիսյանին հաջողվեց Դարալագյազը դուրս բերել չեզոք գոտուց և պայմանագրում կատարել նաև այլ կարգի փոփոխություններ: Սակայն Յասկելը ծախողվեց զեներալ-նահանգապետություն ստեղծելու հարցում: Ադրբեջանի հրահրանքով Նախիջևանի մուսուլմանական վերնախավը չճանաչեց ամերիկացի նահանգապետի իշխանությունը, և վերջինս՝ մնալով Նախիջևանում, փաստորեն կատարում էր կապի սպայի և ներկայացուցչի պարտականություններ:

3. Հաջողության հասնելով Շարուր-Նախիջևանի հարցում և Դարաբաղին պարտադրելով իր գերիշխանությունը ճանաչող ժամանակավոր համաձայնագիր, Ադրբեջանն այնուհետև մեծ եռանդով ձեռնամուխ եղավ զենքի ուժով Ջանգեզուրը նվաճելու գործին նպատակ ունենալով վերացնել Ադրբեջանի և Նախիջևանի միջև ընկած այդ սեպը: Հաջողությունը նաև ուղի կհարթեր դեպի Թուրքիա և հնարավորություն կտար Հայաստանի Հանրապետությունն օղակել երեք կողմից: Սակայն արևելքից (Ադրբեջանից) և արևմուտքից (Նախիջևանից) ձեռնարկած նյեմբերյան ընդհանուր գրոհն ավարտվեց խայտառակ պարտությամբ: Ջանգեզուրի հաղթանակը համահայկական նշանակություն ունեցավ և նաև հարկադրեց Ադրբեջանին Հայաստանի կառավարության հետ կնքել համաձայնագիր՝ վիճելի հարցերը խաղաղորեն լուծելու վերաբերյալ:

4.1919թ. ամռան և աշնան ամիսներին Շարուրում, Նախիջևանում և Գողթանում ծավալված իրադարձությունները ավարտին հասցրին երկրամասի մաքրումը հայերից. Նախիջևանի հայկական վարչության գոյության երկու ամիսների ընթացքում հայրենի օջախ վերադարձած հայ գաղթականության մի մասը բնաջնջվեց, մի մասը դարձյալ բռնեց գաղթի ճանապարհը՝ այս անգամ արդեն մեկընդմիջտ, իսկ տեղում մնացածները ստիպված եղան քարշ տալ իրենց խզճուկ գոյությունը կրելով զերության բոլոր սարսափները և հալվելով ու սպառվելով օրեցօր:

Էլ ավելի բարբարոսական էր վերաբերմունքը Վերին ու Ներքին Ազուլիսների նկատմամբ, որոնց բնակչությունը ընդունել էր Ադրբեջանի հպատակությունը, նրա դեմ երբեք զենք չէր վերցրել, անհրաժեշտության դեպքում նույնիսկ օգնության էր հասել իր դրացիներին՝ փրկելով նրանց հայերի վրեժխնդրությունից: Եթե Ադրբեջանը մարդկության դեմ ուրիշ հանցանք գործած չլիներ, Ազուլիսների անգն ու հպատակ բնակչության կոտորածը բավական է, որպեսզի նրա ճակատին հավերժ խարանված մնա «մարդասպան» պիտակը:

5.1920թ. առաջին ամիսները էական փոփոխություններ չմտցրեցին հայ-ադրբեջանական հարաբերություններում: Չնայած վիճելի հարցերը խաղաղորեն լուծելու մասին կնքված համաձայնագրերին և կոնֆերանսներում հնչեցրած հայտարարություններին, Ադրբեջանը նախկինի պես շարունակում էր հակահայկական գործունեությունը, նախապատրաստում ապստամբություն Ջանգիբասարում, կազմակերպում պարբերական հարձակումներ հայկական գյուղերի վրա Գողթանում, Դարալագյազում, Ջանգիբասարում: Դրա հետ մեկտեղ Ադրբեջանը և Վրաստանը փորձում են Հայաստանը ներքաշել կոնֆեդերացիայի մեջ, որի նպատակը հյուսիսից եկող վտանգի դեմ պայքարը պետք է լիներ: Այդ նպատակով Անգլիայի հովանավորությամբ 1920թ. ապրիլին Թիֆլիսում գումարվում է երեք հանրապետությունների կոնֆեդերանս, որը, սակայն, մնում է անավարտ Ադրբեջանի խորհրդայնացման պատճառով:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Արևելյան հին առածն ասում է, որ իմաստուն է նա, ով անծնական փորձով է սովորում, իսկ երջանիկ է նա, ով ուրիշների փորձով է սովորում:

Դա հավասարապես վերաբերում է նաև ժողովուրդներին: Հայ ժողովուրդը և նրա քաղաքական ու պետական գործիչները ուրիշների փորձով սովորելու երջանկությունը չունեցան, բայց սեփական փորձը ուսումնասիրելու և նրանից դասեր առնելու հնարավորություն չատ են ունեցել: Այդ առումով առանձնահատուկ է Անդրկովկասում Դաշնակցային տերությունների տիրապետության ժամանակաշրջանը և հատկապես տարածքային վիճելի հարցերում նրանց որդեգրած քաղաքականությունը: Դյուրահավատ և դիվանագիտության մեջ անփորձ մեր ազգը մի անգամ ևս առիթ ունեցավ համոզվելու, որ մեծ տերությունները, որոնք շուրջ կես դար շահարկել էին հայկական հարցը, իսկ առաջին աշխարհամարտի տարիներին մեծամեծ խոստումներ տվել, ոչ միայն մտահոգ չեն իրենց փոքր դաշնակցի հայ ժողովրդի ճակատագրով, այլև կարող են թքել արդարության, վեճերի կարգավորման ընդունված ու հանրահայտ սկզբունքների (պատմական, ազգագրական, տնտեսական) վրա և դեկավարվել միայն սեփական շահերով ու նպատակահարմարությամբ: Այլապես ինչո՞վ բացատրել Հայաստանի Հանրապետության իրավունքների ոտնահարումը Ջավախքի, Լոռու, Լեռնային Ղարաբաղի, Ջանգեզուրի (պատմական և ազգագրական իրավունք) և Շարուր-Նախիջևանի (պատմական ու տնտեսական) հարցերում: Հոգ տանելով միայն իրենց տնտեսական շահի մասին (Հայաստանը խիստ աղքատիկ երկիր էր) և ձգտելով նպաստել տարածաշրջանի հակառուսական ուժերի ամրապնդմանը (հայերին համարում էին անուղղելի ռուսասեր), նրանք իրենց կամայական լուծումներով դուռ բացեցին անվերջանալի ազգամիջյան ընդհարումների և արտաքին միջամտությունների համար: Այդ քաղաքականությունը կործանարար հետևանքներ ունեցավ. ազգամիջյան հակամարտությունները, տարածքային չլուծված հարցերը, կենարար հող էին բուլշևիզմի տարածման համար և ռազմական մի-

ջամտությունների հարմար պատրվակ:

Ադրբեջանի խորհրդայնացումը հենց նման պայմաններում կատարվեց: Ըստ որում այն այնքան արագ կատարվեց, այնքան անսպասելի, որ հանկարծակիի բերեց ոչ միայն տեղական իշխողներին, այլև արևմտյան դիվանատներին: Մինչդեռ բրիտանական դիվանագիտության ուժը, ինչպես պատմությունն է վկայում, կայանում էր հենց նրանում, որ երբևիցե թույլ չէր տվել իրեն հանկարծակիի բերել:

Ադրբեջանի խորհրդայնացմանը շուտով հետևեց Հայաստանի խորհրդայնացումը, իսկ այնուհետև՝ նաև Վրաստանի: Ուրեմն վստահությամբ կարող ենք ասել, որ տարածքային վեճերի կարգավորման խնդրում Դաշնակցային տերությունների վարած քաղաքականությունը բուժերանգի պես հարվածեց հենց իրենց ու դարձավ հարավկովկասյան տարածաշրջանի խորհրդայնացմանը նպաստող գործոններից մեկը: Անտարակույս է նաև, որ եթե այսօր՝ 21-րդ դարի սկզբին, մեր տարածաշրջանում դեռ կան չլուծված հարցեր, տարածքային վեճեր, ապա դրա համար մեղավոր են նաև Դաշնակցային տերությունները, որոնք երկրամասում իրենց տիրապետության ժամանակաշրջանում ծառայած հիմնահարցերի լուծման հիմքում դրեցին ոչ թե արդարության սկզբունքը, այլ շահն ու նպատակահարմարությունը:

Դժբախտաբար, Դաշնակցային տերությունների որդեգրած քաղաքականությունը ունեցավ շարունակություն: Տարածաշրջանում նրանց փոխարինելու եկած խորհրդային Ռուսաստանը զերծ չմնաց այդ արատավոր պրակտիկայից, թեև ազգերի ինքնորոշման և ազգային հարցերի արդարացի լուծման խնդիրները հռչակվել էին իբրև հիմնական նպատակ, թմբկահարվում էին ամենուրեք, օգտագործվում որպես հաղթաթուղթ: Ինչպիսի՞ն էր նրա դիրքորոշումը նախիջևանյան հիմնահարցում, ի՞նչ ընթացք ունեցավ և ինչպիսի՞ լուծում ստացավ այն խորհրդային համակարգի պայմաններում, դա արդեն առանձին ուսումնասիրության խնդիր է:

The Nakhijevan Issue and „Allies” of Armenia (1918-1920) Resume

This paper is devoted to the issue of Nakhijevan during the reign of the Allied powers in the Transcaucasus, from December 1918 to April 1920. The paper shows how the enthusiasm of the Armenian people inspired by the victory in World War I of its allies, the Entente powers, did not last. Armenian hopes for establishing a durable peace in the region and addressing the disputable issues in a fair way were not realized. In a short time, the Armenian Government was able to see that the Western powers pursued their own interests in the Transcaucasus and forgot their “smaller ally”, the Armenian people, who had actively participated in the War and who had suffered so much from it. The Western powers considered the Armenians to be extremely pro-Russian and thus assisted the non-Armenian anti-Russian forces in the region in every way they could. This policy was specifically manifested by the giving of the Akhalkalak region (which was fully inhabited by Armenians) to Georgia, by the creation of a neutral zone in Lori, and by the attempts to subordinate Nagorno Karabagh and Zangezur under Azerbaijani authority. Originally the British command in the Transcaucasus did not even intend to give the Kars region or Sharur-Nakhijevan to the Republic of Armenia.

Having been defeated in World War I and compelled to leave the Transcaucasus, the Turkish invaders had not only left a great number of military men, weapons, and ammunition in the regions of Armenia inhabited by Muslims, but had also created the so-called “Arax Republic” in Sharur-Nakhijevan to prevent the integration of this area with Armenia, a goal of crucial importance for Pan-Turkish plans. Not recognizing the supremacy of Armenia, the Muslims of Sharur-Nakhijevan created obstacles for the Armenian immigrants returning to their motherland. And when Armenian troops moved towards Sharur in January 1919 to “clear” the path for the immigrants, the British command immediately interfered and decided to set up another neutral zone there, under the leadership of a British

general-governor. This was the second neutral zone in the land of Armenia.

Thus, having placed Nagorno Karabagh, which was inhabited only by Armenians, under the authority of Azerbaijan, the British command did not think it proper to give Nakhijevan, which had a mixed population, to Armenia. Moreover, worrying about the security of the British general-governorship, the British forced the Armenian government to withdraw its troops from Gail to Khamarlu, thus creating a vast demilitarized zone in the regions of Vedibasara and Davalu. However, the power of the British governor was of a formal character; the Muslim top leadership neglected him, his orders and regulations were not carried out, and the anti-Armenian violence and robbery would not stop. This undermined British authority. The complaints and dissatisfaction of the British troops and, ultimately, the resolution of the Paris Conference to withdraw these troops from the Transcaucasus, compelled the British command to revise the policy in Sharur-Nakhijevan; Armenia was authorized to govern this area (May of 1919).

The unification of Sharur-Nakhijevan with Armenia was carried out in a rush, without serious preparatory work. At the same time, the British command did not allow the introduction of an adequate number of Armenian troops into the area. Moreover, it did not allow the disarming of the population, though this law was valid in the Republic of Armenia. The Muslim military groups continued their semi-legitimate existence. The Armenian administration of the area, which functioned under these conditions, could be neither strong nor steady, even though it was concerned about both the Armenian and the Muslim population. In the creation of local government, the composition of the population was taken into account, and Muslims were incorporated into both the police force and the court system. Furthermore, the Muslim immigrants shared the benefit of the food originally received for the Armenian immigrants.

Taking advantage of the favorable conditions that had emerged, the anti-Armenian forces of Sharur-Nakhijevan, the Khandbeg regions, and the Turk-Azerbaijani agents formed armed detachments, trained them, and prepared for an uprising. The movement was headed by several hundred Turkish officers and askars, who had come to Nakhijevan from Anatolia. The British command of the

Transcaucasus and its representation in Nakhijevan also had a share of guilt in spreading the anti-Armenian movement, not only by doing nothing to prevent it, but also by interfering improperly in favor of the Muslims, thus undermining the Armenian administration of Nakhijevan.

In 1919, the uprising started in Sharur-Nakhijevan, and soon thereafter turned into an all-Islamic movement threatening Armenia from the East, South, and West. Great Britain and the other powers did nothing to render military or material help to the Republic of Armenia, which was encircled from three sides. The attempt of the British command to halt the military actions did not produce any results. The American Colonel Haskel, appointed by the Paris Conference as the Supreme Commissioner for Armenia, said that Sharur and Nakhijevan were an inseparable part of Armenia, but he could not put his words into action because he had no military forces at hand. Haskel's attempt to set up an American general-governorship in Sharur-Nakhijevan failed as well (October of 1919). The top Muslim leadership of Nakhijevan did not recognize the administration of the American governor; the latter ended up performing the duties of a communications officer and a representative.

Following the success in Sharur-Nakhijevan, and having imposed on Karabagh a temporary agreement recognizing its supremacy (October 22 of 1919), Azerbaijan became enthusiastic about conquering Zangezur, with the aim of removing this "wedge" between Azerbaijan and Nakhijevan. The success would have also paved a way to Turkey. However, the attack from the East (Azerbaijan) and from the West (Nakhijevan) had a shameful ending. The victory of Zangezur was of importance for all Armenians and Armenia, forcing Azerbaijan to conclude an agreement with the Government of Armenia (November 23, 1919) on peaceful settlement of disputes. Nevertheless, a month had hardly gone by before the authorities of Nakhijevan started a slaughter of peaceful and unarmed inhabitants of Nerkin and Verin Agulis, as well as neighboring Armenian villages. Even if Azerbaijan never commits another crime, the slaughter of the population of Agulises would be enough to label them a "murderer" forever.

The events in Sharur-Nakhijevan and Goghtan during the sum-

mer and fall of 1919 ended with the cleansing of Armenians from the area. During the months of the Armenian administration (May-July), a portion of the immigrants, who had returned to their homes, were slaughtered, and the other portion migrated again, this time for good. The slaughter of the Armenians of Nakhijevan, which had started during the Ottoman occupation in 1918, thus ended, as described in a previous paper on the first phase of the Nakhijevan cause (see "The Intestine War in the Province of Yerevan, 1918. Yerevan, 2000).

**Нахичеванская проблема и «союзники»
Армении (1918-1920)
Резюме**

Работа посвящена Нахичеванской проблеме в период господства Союзных держав в Закавказье. Хронологически она охватывает период с декабря 1918г. по апрель 1920г. В работе показывается, что воодушевление армянского народа, связанное с победой союзников-держав Антанты, длилось недолго. Его надежды на установление в регионе прочного мира и справедливое разрешение спорных территориальных вопросов не оправдалось. Вскоре правительство Армении убедилось в том, что Западные державы в Закавказье преследуют собственные цели, а интересы «младшего союзника», армянского народа, преданы забвению. Считая армян убежденными приверженцами русской ориентации, они всячески содействовали антирусским силам региона. Конкретными проявлениями этой политики являлись передача полностью населенного армянами Ахалкалаки Грузии и создания нейтральной зоны в Лори, а также деятельность, направленная на подчинение Нагорного Карабаха и Зангезура Азербайджану. Британское командование Закавказья первоначально не имело намерения передать Республике Армения даже Карскую область и Шарур-Нахичевань.

Потерпев поражение в первой мировой войне и будучи вынужденными уйти из Закавказья, турецкие захватчики в населенных мусульманами районах Армении оставили большое количество аскеров, оружия и боеприпасов, а в Шарур-Нахичеване создали так называемую „Араксскую республику,, с целью воспрепятствования присоединения этой очень важной, с точки зрения пантюристских программ, территории к Армении. Не признавая власти Армении, мусульмане Шарур-Нахичевана всячески препятствовали возвращению

армянских беженцев к родным очагам. А когда армянские войска в январе 1919г., с целью открытия дороги для беженцев, двинулись на Шарур, то британское командование сразу же вмешалось и решило создать здесь нейтральную зону во главе с английским генерал-губернатором. Это уже была вторая нейтральная зона на территории Армении.

Итак, британское командование признавшее претензии Азербайджана на Нагорный Карабах, полностью населенный армянами, не сочло удобным передать Республике Армения Нахичевань со смешанным населением. Более того, англичане, в целях обеспечения безопасности Нахичеванского английского генерал-губернаторства, заставили правительство Армении отвести войска из Волчих ворот в Камарлу (ныне Арташат) и таким образом создали обширную демилитаризованную зону в Ведибасарском и Давалинском районах. Однако власть английского губернатора носила номинальный характер. Мусульманская верхушка игнорировала губернатора, его приказы и распоряжения не выполнялись. Варварства по отношению к армянам, разбой и грабежи армянских селений не прекращались. Все это подрывало авторитет британской власти. С другой стороны недовольства и брожения в английских войсках, а также решение Парижской конференции о выводе этих войск из Закавказья вынудили британское командование пересмотреть политику в вопросах Шарур-Нахичевана и управления краем передать Армении (май 1919г.).

Присоединение Шарур-Нахичевана к Армении осуществлялось второпях, без серьезных подготовительных работ. Вместе с тем, британское командование не разрешило ввести в регион необходимое количество армянских войск. Не позволило также провести разоружение населения, в то время как в Республике Армения существовал закон о разоружении. Мусульманские вооруженные формирования продолжали свое полулегальное существование. Действовавшее в этих условиях армянское правление области не могло быть действенным и

стабильным, хотя в равной мере защищало интересы как армянского, так и мусульманского населения: при формировании органов местной власти обязательно учитывался состав народонаселения, в полицию и судебные органы в основном были вовлечены мусульмане, пунктами питания для беженцев пользовались и армяне и мусульмане. Были и другие факторы.

Пользуясь создавшимися благоприятными условиями, антиармянские силы Шарур-Нахичевана, -ханско-бекские слои, турецко - азербайджанские агенты, - создавали и обучали вооруженные отряды, готовили восстание. Движение возглавили перешедшие из Анатолии в Нахичевань турецкие офицеры и аскеры, численность которых достигала нескольких сотен. В развертывании антиармянского движения были виновны как британское командование, так и его представители в Нахичеване, которые не только ничего не предпринимали для его предотвращения, но и своим неоднократным неуместным вмешательством (как правило, в пользу мусульман) подорвали авторитет армянского правления.

Начавшееся в июле 1919г. в Шарур-Нахичеване восстание вскоре перешло в общеисламское движение, которое угрожало Армении с востока, юга и запада. Великобритания и другие державы фактически ничего не предпринимали для оказания военной и материальной помощи окруженной с трех сторон Республике Армения. Вмешательство британского командования, с целью приостановить военные действия, не имело успеха. А назначенный Парижской конференцией комиссаром Армении американский полковник Гаскель, хотя и на словах признавал, что Шарур и Нахичевань являются неотъемлемой частью Армении, но, не располагая необходимой военной силой, не смог подкрепить слово делом. Потерпела неудачу также попытка Гаскеля создать в Шарур-Нахичеване американское генерал-губернаторство (октябрь 1919г.). Мусульманская верхушка Нахичевана не признала власти американского губернатора. Он фактически выполнял функции офицера связи и

представителя Гескеля.

Добившись успеха и Шарур-Нахичеване и навязав Карабаху временное соглашение о признании своей власти (22 августа 1919г.), Азербайджан далее с большим воодушевлением предпринял попытки насильственного захвата Зангезура, являвшегося своеобразным клином между ним и Нахичеваном. В случае удачи открылась бы дорога в Турцию. Однако предпринятое с востока (с территории Азербайджана) и с запада (с Нахичевана) всеобщее ноябрьское наступление закончилось позорным поражением. Победа Зангезура имела общеармянское значение и заставила Азербайджан подписать с правительством Армении соглашение о решении спорных вопросов мирным путем (23 ноября 1919 г.). Но не прошло и месяца, как власти Нахичевана организовали резню мирного безоружного населения Нижнего и Верхнего Агулиса и близлежащих армянских сел. Если бы Азербайджан не совершил других преступлений, одной лишь резни подвластного ему населения Верхнего и Нижнего Агулиса достаточно, чтобы его навеки заклеить как организатора геноцида.

В результате событий развернувшихся летом и осенью 1919г. в Шаруре, Нахичеване и Гохтане, край был полностью очищен от армян. Часть беженцев-армян возвратившихся к родным очагам за месяцы армянского правления краем (с мая по июль), была уничтожена, другая часть вынуждена была покинуть родные места, на этот раз уже навсегда. Так был завершен геноцид нахичеванских армян, начало которому было положено во время османской оккупации 1918г., что описано в нашей предыдущей работе, посвященной первому этапу Нахичеванской проблемы (см. «Международные столкновения в Ереванской губернии 1918г.», Ереван, 2000).

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

| | |
|--|-----|
| Ներածություն | 3 |
| Գլուխ I | |
| Նախիջևանյան հիմնահարցը հետպատերազմյան առաջին ամիսներին: Անգլիական գեներալ-նահանգապետության ստեղծումը | 11 |
| Գլուխ II | |
| Բրիտանական քաղաքականության ծախողումը Շարուր- Նախիջևանի հարցում: Երկրամասի միացումը Հայաստանին | 72 |
| Գլուխ III | |
| Թուրք-ադրբեջանյան հակահայկական գործունեության ուժեղացումը: Ապստամբական շարժումները Շորուր- Նախիջևանում | 112 |
| Գլուխ IV | |
| Շարուր-Նախիջևանում ամերիկյան գեներալ-նահան- գապետություն հաստատելու փորձը: Գողթանի ողբերգությունը | 185 |
| Վերջաբանի փոխարեն | 257 |



պատվեր N 399, տպաքանակ՝ 500

Տպագրվել է «Տիգրան Սեֆ» հրատարակչության տպարանում: